

Յուլյա Վոզնեսենսկայա

ԻՄ ՆԵՏԱԳՆՈՒ
ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Գիրք ճանապարհի

Յուլյա Վոզնեսենսկայա

ԻՄ ՀԵՏՄԱՀՈՒ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանեց

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԱԳՅԱՆԸ

«Գթություն» հրատարակչություն

Երևան 2010

Հրատարակվում է տեր և տիկին
Աշոտ և Շուշանիկ Սուքիասյանների ծախքով՝
ի հիշատակ Շուշանիկի ծնողներ Դավթյան Եղիշարի
և Հարությունյան Եպրաքսյայի:
Ձեր աղոթքներում հիշեք նրանց:

ԱՌԱՋԱԲԱՆ

Յուլյա Վոզնեսենկայայի «Իմ հետմահու ճամփորդությունը» վեպի թարգմանությունն ու տպագրությունը հայ ընթերցողի, մանավանդ բարեպաշտ հավատացյալների համար բավական օգտակար կլինեն: Ցավոք սրտի հայ մատենագրության մեջ շատ քիչ տեղեկություններ ունենք անդրշիրիմյան կյանքի վերաբերյալ. միայն կցկտուր ակնարկներ են: Բայց կան աղոթքներ, որոնցում աղերսվում, խնդրանք է ներկայացվում, որ աղոթողի հոգին հեշտությամբ անցնի օդային տարածքը, անվախ կտրի օդակյաց չարքերի պատնեշը՝ հոգիների կայանները: Այս նյութի մասին ավելի շատ գրականություն ունեն կաթոլիկները և, հատկապես, օրթոդոքսները՝ հույներն ու ռուսները:

Սույն վեպը հիշեցնում է «Երանելի Թեոդորայի վարքը», որը թարգմանվեց հայերեն, ինչի համար պիտի մեր երախտագիտությունը հայտնենք:

Իսկ այս նոր թարգմանությունը, վստահ եմ, շատ օգտակար կլինի մեր հավատացյալ ժողովրդի համար, քանզի ուղղակի կոչ և հրամայական է՝ զգոն և սթափ կյանքով ապրելու Երկրի վրա, միշտ պատրաստ լինել ընդունելու մարմնական մահը, որովհետև ոչ ոք չգիտե իր մահվան ժամը:

Յուլյա Վոզնեսենկայայի վեպը գալիս հստակ կերպով մատնանշելու այն հանգամանքը, թե որքան թանկ է ամեն վայրկյանը, արած ամեն մի փոքր ողորմությունը, քանզի դրանք կարող են վճռական դեր ունենալ փրկության համար: Այս գիրքը կօգնի հղկելու քրիստոնեական գիտակցությունն ու կենցաղը: Մի խոսքով՝ շտապեք ձեզ զարդարելու առաքինի գործերով, որովհետև ոչ ոք չի կարող խուսափել Ահեղ դատաստանից: Ամեն օր պետք է դրան պատրաստ լինել մեր աղոթքներով, բարությանը, բարյացակամությանը, գթությանը ու ողորմածությանը:

Ողջունում ենք սույն թարգմանությունն ու տպագրությունը և մեր երախտագիտությունը հայտնում այս հոգևոր օգտաշատ գործի նախաձեռնողներին ու աջակիցներին:

ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՄԻ ՀԱՅՈՅ ԱՐՅԱԽԱՅ

Թարգմանչից

Քանի՜ քանի չարիքից ու փորձանքից, ցավից ու տառապանքից զերծ կլինեինք այս կյանքում, եթե իմանայինք ու հավատայինք թե ինչ է մեզ սպասում մյուսում՝ դժոխքում ու դրախտում, որոնց գոյությունը շատերը, ավաղ չեն հավատում: Եվ ինչպիսի՜ մշտնջենական տանջանքից կփրկվենք և հավիտենական երջանկության կարժանանանք, եթե սպրեմք Տիրոջ պատվիրաններով:

Մեղազանցանքներով անցած և դրախտն ու դժոխքը տեսած Աննան ասում է. «Նա լաց եղավ այն բոլոր մարդկանց համար, որոնք, ինչպես որ ես մինչև վերջերս, ոչ միայն բացարձակապես անտեղյակ եմ, թե ինչ է իրենից սպասում մեռնելուց հետո, այլև չեն էլ փորձում որևէ բան իմանալ մահից հետո գլխներին դալիքների մասին»:

Հայերեն թարգմանության մեջ գետեղված Աստվածածնի այս պատկերի «Կազանյան» կոչվելու պատմությունը հետևյալն է: (Գրքի հերոսուհին դեռևս ձեռքից փրկվում է այս պատկերի գործնականը): Թուրքիայի ենթակա թաթարական խանությունը (1483-1552) շարունակաբար ասպատում՝ կողոպտում էր ռուսաց երկիրը: Ռուսիայի առաջին ցար Իվան Ահեղը մի քանի անգամ արշավում է խանության վրա, սակայն չի կարողանում հաղթել: 1552 թ. նրան է միանում Գրիգոր Լուսավորչի անունը կրող հայկական մի գորգունդ: Պաշարում են խանության մայրաքաղաք Կազանը (Լազանը): Քաղաքի հրետանավորները և հրետապետը հայեր են լինում: Երբ սկսում են պաշարողներին գնդակոծել, ռուսական զորքի հայերը բողբոջում են. «Մենք էլ ենք հայ, մեզ մի՛ խփեք»: Այս լսելով՝ հրետապետը կարգադրում է այնպես կրակել, որ արկերը հարձակվողների գլխավերևով անցնեն: Սա ցարի գորականներին հնարավորություն է տալիս բարձրանելու քաղաքի պարսպի վրա: Թաթարները, գլխի ընկնելով հայ հրետանավորների արածը, նրանց սպանում են և հրկիզում հրետապետի տունը: Կազանը գրավվում է, գտնում են հրետապետի մոխրացած տունը, որտեղ հայտնաբերում են միակ անվնաս մնացած իրը՝ Աստվածածնի պատկերը: Համարելով, որ նրա օգնությամբ են քաղաքը գրավել՝ պատկերը կոչում են «Պոկրով» (Հովանի՝ հովանավոր՝ պաշտպան), իսկ հետո «Կազանյան»:

Կազանի գրավման գործում հայերի մատուցած մեծ ծառայության համար Մոսկվայի Կարմիր Հրապարակում 1555-60 թթ. կառուցված Պակրովսկի տաճարի (հետագայում վերանվանվեց Վասիլի Երանելու տաճար) 9 եկեղեցիներից մեկը կոչում են Գրիգոր Լուսավորչի անունով՝ «Մեծ Հայքի եպիսկոպոս Գրիգորի եկեղեցի (Ցերկով Գրիգորիյա եպիսկոպոս Վելիկոյ Արմենիի)»: Հիմա էլ է այդպես կոչվում:

Կազանի հրետապետի նախնիները անեցիներ են եղել, որոնք Անիի անկումից հետո, գաղթելիս հետներն են վերցրել Աստվածածնի այս պատկերը: Ամեն սուգ յուրովի՝ ըստ իր հասկացածի և ըստ իր տեսքի է պատկերում Աստծուն, Աստվածամորը, առաքյալներին ու սրբերին. ռուսը ռուսի պես, չինացին չինացու, հայը՝ հայի: Տիրամոր տեսածս պատկերներից ոչ մեկում նա քեզ չի նայում, իսկ այստեղ և մեր եկեղեցիների խորաններում դրված պատկերներից Աստվածածինը նայում է, այսինքն խոսում է հետո...

ԻՄ ՅԵՏՄԱՅՈՒ ԾԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

1 –ին գլուխ

Հետմահու ճամփորդությունս սկսվեց այն պահից, երբ ընկա չորրորդ հարկից և ջախջախվեցի:

Ոստիկանությունում, ինչպես հետո իմացա, ծագել է երկու մեկնակերպ՝ պարզապես ինքնասպանություն և ինքնասպանություն ձևացրած սպանություն: Երկու մեկնակերպն էլ իրողություն հետ ոչ մի ընդհանուր բան չունենին և իբրև ենթադրություն էլ շատ բան չարժեին, քանի որ կառուցվել էին բացառապես վտարանդի ընկերուհիներիս ցուցմունքների վրա: Ինքնասպանության մեկնակերպը կնոջական սիրավեպի պես պարզ ու հասարակ էր և երկու խոսքով հանգում էր այն բանին, որ ամուսինս ինձ լքել է, ես էլ ի պատասխան՝ ինձ զցել եմ պատշգամբից: Եթե իրոք այդպես արձագանքի Գեորգիի դավաճանություններին, ապա մեր բազմաբնակարան շենքի պատշգամբները չէին հերիքի:

Երկրորդ մեկնակերպը՝ ինքնասպանություն ձևացրած սպանությունը, չէր բռնում այն պարզ պատճառով, որ Գեորգին պիտանի չէր մարդասպանի դերի համար: Ինչպես որ գրեթե բոլոր անառակներն ու կանանց սիրելիներն են լինում, նա ինքնահաճոտեն հիացմունք ու փաղաքշանք փնտրող մեծահասակ երեխա էր, թույլ և մի քիչ հուզագար՝ հիստերիկ, իսկ ըստ էության՝ անօգնական ու բարի: Իր կյանքի ճանապարհին հանդիպող վտանգներից նա խույս էր տալիս, խոչընդոտները շրջանցում էր և երբեք ծայրահեղ քայլի չէր դիմում:

Եղելությունը շատ հասարակ էր: Զմերուկ անունով մեր կատուն բնական արտաքնոց էր սիրում, իսկ այդպիսին նրա համար պատշգամբի ճաղաչարին վերևից ու ներքևից ամրացրած ծաղկաթաղարներս էին:

Բավական էր պատշգամբի դուռը մի րոպե բաց թողնել, որ նա իսկույն սողոսկեր ծխածաղկի փարթամ թփերի մեջ և այնտեղ հաճույքով կղկղեր: Սա չարիքի դեռ կեսն էր: Աղտեղությունն անելով և պատժի հոտն առնելով՝ անմեղ ծաղիկների գարշելի ապականիչը վախկոտաբար ջանում էր ծածկել հանցանքի հետքերը, ինչի ընթացքում հողի գուղձերն ու ծխածաղկի անարգված շիվերը դեհուղեն էին թռչում: Դաստիարակչական ոչ

մի միջոց, ներառյալ չորստակ ծալած «Ռուսսկայա միսլ» պարբերականում գլխին թխկացնելը, գորու չէին կատվին բուժելու սիրած արատից:

Այդ չարաբաստիկ առավոտյան մի քանի անգամ պատշգամբ ելա, որպեսզի հանկարծ ձեռքից բաց չթողնեմ երեկոյան պատվիրածս տաքսին, և վերջին անգամ պարզապես մոռացա հետևիցս ծածկել պատշգամբի դուռը: Անառակ ամուսինս վերցրեց ինձ անհայտ մոսկովյան ընկերուհու համար գնած արտասահմանյան նվերներ պարունակող ուղեպայուսակը, իսկ ես նրան ճամփու գրի «ողջերթի» սովորական խոսքերով. «Մտքովդ չանցկացնես հետ գալ և չմոռանաս ինքնաթիռ նստելուց առաջ տաք սվիտեր հագնել. ուղիոն ասաց, որ Մոսկվայում ցուրտ ու անձրևոտ է»: Նա ևս սովորականի պես պատասխանեց, որ ամեն ինչ լավ կլինի, որ սվիտեր կհագնի և կգանգահարի, թե իրեն երբ դիմավորեմ: Հետո գնացի ննջարան, մի քիչ զուսցի ու քուն մտա, որովհետև համարյա ողջ գիշերն անցկացրել էի հարբերություններս պարզելով:

Արթնացա Ձմերուկի աղեկտուր մլավոցից: Անկողնից վեր ցատկեցի ու նետվեցի պատշգամբ, որտեղից թռչում էին հարայ կանչելու նրա ճղավոցները: Անաբուռ կատուն, օգտվելով դուռը բաց լինելու և տանը լուսթյուն տիրելու հանգամանքից, այս անգամ իջել էր ներքևի թաղարի մեջ և արել իր մուռտառությունը, իսկ հետ գալ չէր կարողացել. տոգած զոլավոր փորը (ինչի համար էլ Ձմերուկ էր կոչվել) չէր թողնում սողոսկել վանդակի ճաղերի արանքից, իսկ վեր մագլցելուն խանգարում էին սաղարթախիտ ծխածաղիկները:

Բազրիքի վրայից կուացա և ճանկեցի կատվի ծոծրակը, իսկ նա այնպես էր սարսափահար եղել, որ ապահովության համար շրջվեց և բոլոր քսան ճիրաններով կառչեց ձեռքիցս: Յավից ջղաճգվեցի և, փորձելով մյուս ձեռքով նրան բռնել տակից, կեսիցս ավելի կախվեցի բազրիքից դուրս: Ոտքերս համարյա կտրվեցին հատակից, իսկ լեղաճաք եղած Ձմերուկը՝ ոչ ու փուչը, այդ վճռական պահին իրեն չկորցրեց և, ուսերիս ու մեջքիս վրայով վեր սուրալով, փրկեց իր զոլավոր մորթին, իսկ ինձ հրեց ներքև: Հավասարակշռությունս վերջնականապես խախտվեց, և ես չորրորդ հարկից գլխիվայր ցած ընկա:

Շտապեմ հանգստացնել տնային կենդանիների բարեկեցություն

նախանձախնդիրներին. երբ շտապօգնության ոռնացող մեքենայով ինձ հիվանդանոց են տանում, իսկ ոստիկանները կնքում են բնակարանը, որբացած խեղճ կատվիկին իր հարկի ու խնամքի տակ է առնում մեր հարևանուհի Ֆրաու (տիկին) Հոֆմանը: Եվ կատվի համար շարունակվում է լավ, իսկ Ֆրաուի խորդենիների համար սկսվում է վատ կյանքը:

Յասամանի թուփը, որի վրա բարեբախտաբար ընկել եմ, ծեր ու ճյուղատարած է եղել, ինչը գուցե մի քիչ մեղմացրել է հարվածը: Չէ՞ որ չէի փխլվել, այլ միայն կոտրվել էր ոսկորներիս կեսը և ընկույզի պես ջարդվել էր գլուխս:

Երբ ուշքի եկա վերակենդանացման հիվանդասենյակում և հայելառաստաղի մեջ ներքևում տեսա բժիշկներով շրջապատված իմ հողեղեն աճյունը, արդեն որերորդ անգամ հիացա գերմանական բժշկագիտության հաջողություններով. մի ամբողջ բուժանձնակազմ շտկոտում էր թշվառ անդամներս: Ոմանք կցմցում և կրծքավանդակիս մեջ էին տեղավորում կոտրված ու դուրս պրծած կողոսկրերս, մյուսները ոտքերիս ցրիվ եկած ոսկորները իրար էին ամրացնում պտուտակներով ու ագույցներով, երրորդները պրպտում էին հերձած որովայնս և այնտեղ ինչ-որ բան էին կարում: Իսկ ես այս ամենին հետևում էի վերևիս հայելու միջից և ո՛չ ցավ էի զգում, ո՛չ էլ վախ. միայն լիակատար ու բացարձակ հանգիստ:

Նայեցի դեմքիս արտացոլմանը, երբ այն երևաց վրաս կուացած բժիշկների կանաչ թասակների արանքում: Ուզեցա տեսնել, թե պատկերս որքանով է համապատասխանում բուժական երանությունս: Ահա այդ պահին էլ ամեն ինչ սկսվեց իսկապես: Տեսա դեմքս, բայց այն դիակի դեմք էր. ճերմակել էի կապտախտավորի պես, քիթս սրվել էր, կապտած շուրթերս փակչել էին ատամներիս, որոնց միջև մի թափանցիկ փողակ էր տնկված, որից խզխզոցի ու կլկլոցի ձայն էր գալիս: Իմ հանդեպ զզվանք զգացի. ինձ միշտ վախեցրել են մեռելների դեմքերը, իսկ այստեղ իմ սեփականն էր... Բայց ամենասարսափելին այն էր, որ աչքերս փակ էին, իսկ ես ամեն ինչ տեսնում էի:

Վախից մի կողմ թռա և ... տեսա, որ կախ եմ ընկել առաստաղի տակի երկու լամպերի միջև: Մի ակնթարթում ամեն բան շուռ եկավ: Վերևումս ոչ մի հայելի չկար, ինքս էի գտնվում վերևում և այնտեղից նայում էի

ներքևում փուված սեփական մարմնիս: Մարսափահար չեղա, որովհետև մահվան մասին միտքն ինձ դեռ չէր «այցելել», այլ մի փոքր հիասթափություն զգացի. դուրս էր գալիս, որ գերմանական բժշկագիտությունն այդտեղ ոչ մի դեր չուներ, իսկ ցավից ազատվելու համար պետք է շնորհակալ լինեի բնությանը և իմ պաշտպանական ներքին լծակներին: Եվ հիմա ամեն ինչ պարզ է. սա երազ է, ցնորք է, ես թոչում եմ երազումս: Այդ դեպքում ինչո՞ւ չթուչեմ հաճելի վայրում: Այսպես մտածեցի և իսկույն արեցի՝ բաց թողնված դռնից թուչելով հիվանդանոցի միջանցք:

Միջանցքի առաստաղի տակ հայտնվելով (չգիտեմ ինչու ինձ շարունակ վեր էր քաշում)՝ նկատեցի, որ վերակենդանացման սենյակի դռան միջով մի բավական հաստ լուսարձակող քուղ էր ձգվում: Կարծեցի թե անզգուշաբար հետս ինչ-որ ճկափող եմ քաշ տվել վերակենդանացման սարքից:

Հետաքրքիր է, իսկ ես ընդհանրապես ի՞նչ տեսք ունեմ: Փորձեցի դիտել ինձ, ու թեև տեսողություն ունեի, ընդ որում այն ավելի սուր էր, քան արթուն ժամանակ, աչքերիս գոյությունը չէի զգում, բայց բավական էր ցանկանայի, որ ինձ տեսնեի կողքից: Այդ ես էի, սակայն՝ կիսաթափանցիկ, մարմնաձևս առած փուչիկի պես մի բան: Միտքս եկած համեմատությունը դիպուկ էր դարձում այդ քուղը (ինչպես փուչիկի վիզը կապող թելը), որը դուրս էր գալիս ցցված կողոսկրեր և այլ վնասվածքներ չունեցող կրծքավանդակիս մեջտեղից: Ինձ զգում էի բացարձակապես առողջ ու առույգությունը լեցուն:

Միջանցքի հեռավոր ծայրին մեծ պատուհան կար: Որոշեցի դրա մոտ թուչել: Առաստաղի տակ սավառնելը ինքնին հաճույք էր, սակայն չկարողացա միջանցքի մեջտեղից այն կողմ գնալ: Ինձ կապող քուղը ձգվեց, և ես այրող ցավ զգացի, երբ փորձեցի պոկել վրայիցս: Ստիպված հնազանդվեցի և հետ դարձա:

Թռա վերակենդանացման սենյակի մոտով և թեքվեցի միջանցքի անկյունի հետևը: Այդտեղ այցելուների անկյունն էր. ամսագրասեղանիկ, բազմոց ու երկու բազկաթոռ: Նստած էր իմ ընկերուհի Նատաշան և առձեռն հեռախոսով ինչ-որ մեկի հետ էր խոսում՝ առատ արցունք թափելով և ազահորեն ծխելով: Իհարկե խոսակցությունն իմ մասին էր.

— Բժիշկներն ասացին, որ իրապես հույս չկա: Խնճ Այնկա: Միշտ էլ գիտեի, որ այդ ամուսնությունն աղետով է ավարտվելու...

— Նատաշկա, վե՛րջ տուր լեզվիդ տալուն, ավելի լավ է ծխելիք տաս, — աշխուժորեն գոռացի առաստաղի տակից: Ոչ մի ուշադրություն չդարձնելով վրաս՝ նա շարունակեց խոսակցությունը: Ներքև իջա, ձեռքս թափահարեցի նրա քթի առաջ, հետո շոշափեցի ուսը, և ձեռքս նրա միջով անցավ՝ ինչպես արևի ճառագայթը ջրի միջով: Շատ զարմանալով՝ դադարեցրի փորձերս և սկսեցի ականջ դնել Նատաշկայի դատարկախոսությունը:

— Դե, իհարկե, նա պառկած է վերակենդանացման բաժանմունքում, և մոտը մտնել չեն թողնում: Անգիտակից վիճակում է: Գեորգին այստեղ չէ, և ոչ մեկը տեղը չգիտե: Երևի թաքնվել է սրիկան: Ոստիկանությունն ինձ գտավ Աննայի հեռախոսագրքույկով, ես էլ ամեն ինչ պատմեցի նրանց ընտանեկան կյանքի մասին, և հիմա Գեորգին փնտրում են որպես հնարավոր մարդասպանի: Իսկ ես համարում եմ, որ նա է սպանողը նույնիսկ այն դեպքում, եթե Աննան ինքն է իր կյանքին վերջ տվել: Ահա թե ինչ կասեմ քեզ, սիրելիս...

Տաղտուկ ու խորշանք զգացի: Ա՛յս էլ իմ ամենալավ ընկերուհին: Դատելով մոխրամանի միջի շրթներկոտ ծխուկների քանակից՝ երկուերեք ժամ կլինի, որ նստած է այստեղ, ողբում է ինձ, բայց մեկ է՝ բամբասում է: Չդիմացա ու թռա:

Սկսեցի նեղվել. առաստաղի տակ թրև գալն արդեն ձանձրացրել էր, այդ երազն էլ՝ հոգնեցրել, բայց չգիտեի ինչպես արթնանամ: Միայնություն մի աննախադեպ զգացում համակեց ինձ: Որոշեցի վերադառնալ վերակենդանացման սենյակ, որ մոտ լինեմ մարմնիս, և այդ հաջողվեց առանց ջանք թափելու:

Հիվանդասրահում բժիշկներ արդեն չկային, միայն հերթապահ քույրն էր անկյունի սեղանիկի մոտ նստած: Մարմինս պառկած էր շատ հանգիստ, կուրծքս հավասարաչափ բարձրանում—իջնում էր, բայց երբ նայեցի այն պարուրող լարերին ու փողկներին, հասկացա, որ այդ մարմնում կյանքն առկայծում է միայն բուժասարքավորանքի շնորհիվ: Լուսարձակ քուղն ինձ միացնում էր ներքևում պառկած անշարժ մարմնիս հետ:

Եվ միայն հիմա հասկացա, որ սա ո՛չ երազ է, ո՛չ էլ զառացանք, և այս ամենը տեղի է ունենում իսկապես:

Ինձ համար պարզ դարձավ, որ ես փաստորեն մեռել եմ, և մարմնումս

արհեստական կյանք է պահպանվում, իսկ հոգին, այսինքն՝ իմ թանկագին ես—ը, արդել լքել է մարմինս, և այդ լուսարձակ լարն է ինձ դրա հետ կապում: Այնպե՛ս խղճացի ներքևում պառկած՝ ոտքից գլուխ վիրակապված և ասեղներով ու փողակներով խոցոտված Աննային: Բայց ինձ ոչ մի բանով չէի կարող օգնել և նորից ուզեցի հեռու մնալ ինձնից: Դարձյալ թռա միջանցք, որպեսզի ավելի սաստիկ զգամ ինձ համակած անլույս խավարը:

...Նրանք հայտնվեցին միջանցքի հեռավոր ծայրին, որտեղ լուսամուտն էր: Սկզբում լսեցի նրանց ձայները, շատ տարօրինակ ձայները. ասես մի խումբ հասուն մարդիկ շատ կարևոր բանի մասին խոսելիս լինեին մանկական ծվծվան ձայներով: Այդ կողմը նայեցի և լուսամուտի առաջ նախ տեսա ինչ—որ էակների մուգ ուրվագծեր՝ մեկ մետրից ոչ բարձր հասակով, գետնաքարչ ու սապատավոր: Դրանք շարժվեցին դեպի իմ կողմը և ընկան միջանցքի լամպերի լույսի տակ: Այդտեղ գննեցի նրանց և իսկույն որոշեցի՝ այլմոլորակաբնակներ են:

Մինչ այդ հանդիպումը թուշող ափսեների գոյությունը հավատո՞ւմ էի, թե՞ ոչ, չգիտեմ: Ուղղակի այդ մասին առանձնապես չեմ խորհել, բայց սովյալ նյութի վերաբերյալ գլխումս բավականաչափ տեղեկություններ էին կուտակվել, ինչպես որ ժամանակակից ամեն ընթերցողի ու հեռուստադիտողի մեջ: Համենայն դեպս այդ էակները մեջս վախ չառաջացրին, այլ փոքր—ինչ տազնապախառն հետաքրքրասիրություն հարուցեցին:

Դիցուք այդպիսի հանդիպումներ լինում են, ուրեմն ինչո՞ւ մի անգամ էլ ինձ չպատահի:

Այլմոլորակաբնակների ամրակազմ, մերկ մարմինները պատված էին բավական տհաճ, գորշ վարդագույն ծալքավոր մաշկով, գոնչո գլուխները թաղված էին ուսերի մեջ, դեմքերը երկարածիզ էին, որոնք ճշգրիտ կլիներ բնորոշել «դունչ» բառով: Առաջին հայացքից նրանք հիշեցնում էին տարաշխարհիկ՝ արտասովոր կենդանիներ, խոզերի ու գայլերի խառնուրդի պես մի բան, սակայն մաշկի մուգ ծալքերով շրջանակված և թարթիչներից զուրկ խոշոր ու կլոր աչքերի մեջ որոշակիորեն փայլատակում էր սուր միտքը:

Եկվորները կանգնել էին իմ տակ և շարունակում էին խորհրդակցել՝ ինչ—որ բան բլբլացնելով իրենց ծղրտան—խզխզան լեզվով, որը հեռավոր իսկ կերպով նման չէր լսածս երկրային լեզուներից որևէ մեկին: Խոսակցու-

թյունն ակնհայտորեն իմ մասին էր, քանի որ նրանք ոչ միայն իմ կողմն էին նայում, այլև ինձ էին ցույց տալիս վերին վերջույթներով, որոնք նման էին բավական ահազուռ դիմակահանդեսային դայլաճանկ ձեռնոցներով մանկան թաթիկների: Որոշակի զզվանք զգալով՝ ինձ խստորեն պապանձեցրի. «Դե՛-դե՛, միայն թե առանց տիեզերական ցեղախտուածյան՝ ռասիզմի, հա՞՞»: Ձե՞՞ որ ինձ հայտնի չէ, թե ինքս ինչ տեսք ունեմ՝ նրանց տեսակետով, բայց մարդկային տեսակետից էլ ես հիմա, պետք է ենթադրել, որ ավելի շատ նման եմ մարդակերպ մեդուզայի, քան բավական լավ պահպանված քառասունից քիչ մեծ կին անհատի:

Եկվորներից մեկը, որը մի գլխաչափ բարձր էր մյուսներից, առաջ եկավ և ինձ ուսերեն ասաց՝ բառերը ուրբոտի պես մեքենաբար արտասանելով.

— Մենք քեզ համար ենք եկել: Դու պետք է անհասպող ուղևորվես հետներս:

Ես լուռում էի՝ չիմանալով ինչ պատասխանել: Նա ևս լուեց, ապա արտասանեց առանց որևիցե շեշտադրման.

— Մենք շատ ուրախ ենք քեզ հետ հանդիպելու համար: Մենք լի ենք բարյացակամությամբ:

Ինչպիսի՞ սիրալիրություն: Նախ հրաման՝ իրենց հետ ուղևորվել չգիտես թե ուր, իսկ հետո արդեն՝ ողջույն: Որոշեցի անկախություն ցույց տալ.

— Մինչև չիմանամ, թե ովքեր եք և ուր եք ինձ հրավիրում, տեղիցս չեմ շարժվի: Բացի դրանից, ես կապված եմ տեղիս: Ոչ թե տեղիս, այլ մարմնիս:

Նրանց արձագանքումը ինձ մի քիչ հարձակողական թվաց. ինձ հասկացան, բայց ասածս դուրները չեկավ, ինչն արտահայտվեց կտրուկ վժվժոցով: Նրանք խորհրդակցեցին, այնուհետև ավազն սկսեց պարզաբանումներ տալ.

— Քեզ տանելու ենք եկել հեռավոր մոլորակից: Հասել է Երկիրը թողնելու ժամանակը: Դրա համար չես ափսոսի: Անհրաժեշտ է կտրել մարմնի հետ կապը: Դու պետք է այդ անես: Ինքդ և հիմա: Հիմա և այստեղ: Արա՛ և թո՛ւր հետներս: Մեռի՛ր ու ազատվի՛ր:

Ո՞նց չէ, թռա՛նք: Նույնիսկ այդպիսի աստեղային ինքնասպանության իմ կամքով չեմ դիմի: Ինչպե՞ս կարող եմ կապը խզել իմ խեղճ, ինձ համար

ընտել, այդպիսի հարազատ մարմնից, լքել նրան տառապանքների մեջ, դավաճանել անօգնական ու անխոս վիճակում: Ձէ՛ մի, ինչքան դիմացել ենք միասին, էլի կդիմանանք: Հետո կերևա...

— Իսկ դուք, մեկն ասող լինի, ովքե՞ր եք, որ իմ փոխարեն որոշեք մեռնելու ժամանակը: Եվ այդ ի՞նչ մոլորակ է, որտեղից հայտնվել եք:

Եկվորների գլխավորը աստղագիտական ինչ—որ գիտաբանների հեղեղ տեղաց վրաս, այնպիսի անվանումներ շաղ տվեց, որոնցից միայն մեկն էր ուղեղումս մնացել երեսա ժամանակից, այն է՝ խորհրդային Ֆանտաստագիրների ավետյաց մոլորակ Ալֆա Էրիդանան: Բայց մեկ էլ մտքովս անցավ. իզուր եմ հեգնում, միանգամայն հնարավոր է, որ Ալֆայի բնակիչները մեր Ֆանտաստագիրներին հուշած լինեն իրենց մոլորակի անունը:

Այս մտքերը շատ հստակորեն, արագ, գրեթե միաժամանակ առկայծեցին, ինչն անսովոր էր: Արդեն վաղուց տարավարժվել, մոռացել էի երիտասարդի պես մի քանի բանի մասին միաժամանակ մտածելը՝ ընդամին չկորցնելով դատողութայն պարզությունը:

— Մենք հասկանում ենք քո կասկածներն ու տագնապը, — շարունակեց այլմոլորակցին, — բայց դու պարտավոր չես հավատալու խոսքերին: Հիմա ամեն ինչ կտեսնես սեփական աչքովդ, — և նա ճանկավոր թաթը տնկեց լուսամուտի կողմը:

Միակտուր ապակուց շինած լուսամուտը սկզբում բռնկվեց կանաչ լույսով, հետո վրայով կեռագծվեցին ալիքները՝ ինչպես անսարք հեռուստացույցի պաստառին՝ էկրանին է լինում, այնուհետև այդ լուսամուտ—պաստառին հայտնվեց զարմանալի հստակություն և պայծառություն ունեցող ոչ երկրային բնապատկեր. նախ՝ մեկը, ապա՝ մյուսը, երրորդը... Ամեն ինչ շատ էր ու բազմատեսակ. ծիածանի բոլոր գույների բուսականութուն՝ երկնագույն արեգակով կանաչ երկնքի խորապատկերի վրա, մանուշակագույն անտառներ ու վարդագույն օվկիանոսներ, թևավոր մեջքերին այլմոլորակցիներ դրած թռչող կենդանիներ, նրբակերտ և փխրուն տեսքով շենքեր, որոնք ավելի շատ նման էին տաճարի, քան բնակարանի: Սակայն ժամանակակից մարդուն աստղային բնանկարներով չես կարող զարմացնել. երևակայական ու գերբնական բաներ պատկերողները, կինոգործիչներն ու «տիեզերական նկարիչները» դրանց տվել—անցել են:

Պատկերները լողում էին օվկիանոսում՝ մեկը մյուսին փոխարինելով, իսկ հետո ամեն ինչ կանգ առավ շատ սիրուն տեղանքում. ոսկեգույն բլրի վրա մի սպիտակ առանձնատուն կար, որի աստիճաններն իջնում էին վարդագույն լճակի մոտ, որտեղ վեհաբար սահում էին նրբակերտ գլխիկներին թագ դրած ջրային զմրուխտե կենդանիներ: Բայց հետո՞ ինչ: Եթե ես կարող եմ հիմա անվճար և առանց անձնագրի ու թուղթովության թռչել ուզածս տեղը, ապա, ինքնին հասկանալի է, կթռչեմ ոչ թե ինչ—որ անհայտ մոլորակ՝ հիանալու կանաչ կարապներով, այլ, օրինակ, Ավստրալիա կամ Բերմուդյան կղզիներ: Սակայն նախ կթռչեմ Մոսկվա և կնայեմ, թե այնտեղ ի՞նչ բանի է «հավատարիմ» կողակիցս: Հետաքրքիր է, ինչպե՞ս կընդունի մահվանս լուրը:

— Եթե հետներս մեկնես, կարող ես բնակվել այդ տանը, — հայտարարեց այլմոլորակցին:

— Իսկ ինչի՞ս է պետք: Մարդկանց համար ես հիմա անտեսանելի ու անլսելի եմ: Ի՞նչն է ինձ խանգարում բնակվելու հենց թեկուզ կրեմլի ցարական պալատում: Կարծում եմ, որ ինձ բնակարանային խնդիր չի սպառնում:

Եկվորները սպառնալիորեն ծղրտացին, սակայն ավագը նրանց կասեցրեց ձեռքի շարժումով և լրջագույնս հայտարարեց.

— Ցարական պալատն արդեն զբաղեցրել են այլ հոգիներ, որոնց տրված է բարձրանալու Մեծ Երկինք:

— Իսկ ինչո՞ւ է ինձ տրվում ձեռք Մեծ Երկինքը: Ինձ միանգամայն բավարարում է իմ Փոքր Երկիրը:

— Դա հումոր է: Այն մեզ համար անհասկանալի է, բայց ընդունում ենք որպես քո անվախություն ապացույց: Դու մեզնից չես վախենում: Լավ է:

Իզուր նա այդ ասաց: Իսկույն հասկացա, որ վախենում եմ, չա՛տ եմ վախենում, արդեն վաղուց այդպես չեմ վախեցել որևէ մեկից կամ բանից: Սակայն մեջս արթնացան այլախոհական՝ դիսիդենտական բնազդներս. վախից պաշտպանվելու լավագույն միջոցը ծիծաղելն է հենց նրանց վրա, որոնցից վախենում ես: Որոշեցի զգաստ լինել: Նախկինում պակասաները՝ պետանվտանգութայն կոմիտեի աշխատակիցները, կարող էին

առաջին հերթին խորտակել բարեկեցութիւնը, հետո՝ կյանքը ու մարմինը, իսկ արդեն վերջում՝ բանականութիւնը և հոգիդ: Այստեղ խոսակցութիւնն իսկույն հոգու մասին եղավ. չէ՞ որ այլևս ուրիշ ոչինչ չունեի...

— Այնտեղ քեզ անդորր է սպասում, այնտեղ շա՛տ գեղեցիկ է:

— Գայթակղիչ է հնչում: Է՞լ ինչ կա:

— Մեր տիրութիւնում դու կարող ես հանդիպել ու զրուցել մեծազույն խելքերի, մարդկութեան պատմութեան հերոսների հետ:

— Դա ոգեհարցութեամբ զբաղվելու պես բա՞ն է: Երբեք առանձնապես չեմ հետաքրքրվել:

— Մեզ մոտ դու կհանդիպես նրանց, ում սիրել ես Երկրի վրա, և ով այստեղից հեռացել է քեզանից առաջ: Հիշի՛ր նրանց:

Այդ ուժեղ հարված էր: Հորս ու մորս կորցրել էի մի քանի տարի առաջ, իսկ միակ եղբայրս՝ Ալյոշան, երկվորյակս, դեռ մանուկ ժամանակ մահացել էր քութեղից: Ես ու նա շատ մոտիկ էինք իրար հետ, և հաճախ եմ մտածել, թե ի՞նչ ընկերութիւն կանեինք հասուն տարիքում:

Հենց որ միտս եկան իմ սիրելի ննջեցյալները, նրանք, ասես թե դրան սպասելիս լինեին, հայտնվեցին առանձնանկարում՝ կադրում. երեքով դուրս եկան սպիտակ շքեղ ամառանոցի դռնից և կանգնեցին աստիճանի վերին հարթակին՝ մայրս, հայրս և Ալյոշան:

Ի՞նչ երիտասարդ էր մայրս. ավելի երիտասարդ, քան հիմա ես եմ: Հայրս փոքր ինչ մեծացած էր երևում, բայց մահացել էր ընդամենը հինգ տարի առաջ: Իսկ ահա Ալյոշենկան ճիշտ այնպիսին էր, ինչպիսին միտս էր մնացել. նույնիսկ հագին այն նույն դպրոցական զգեստն էր, որով նրան թաղեցինք: Ալյոշան աստիճանով ներքև վազեց՝ ձեռքով ինձ մոտը կանչելով, իսկ մայրս ու հայրս...

Բայց հենց այստեղ էլ այլմոլորակցիները փուստ տվին: Այդ հուզիչ առանձնանկարում մայրս ու հայրս կանգնած էին աստիճանի վերին մասում՝ քնքշորեն գրկվելով, և ժպտում էին՝ սիրով ու հրավիրող հայացքով ինձ նայելով: Այ հենց սա՛ չի կարող լինել անգամ ձեր Մեծ Երկնքում: Բանն այն է, որ Ալյոշայի մահից հետո ծերուկներս վշտից սփոփվելու ավելի լավ միջոց չկարողացան գտնել, քան միմյանց մեղադրելը նրա

մահվան համար: Այնպիսի թունդ ատելութիւնն էր բորբոքվել, որ դրա մեջ անմնացորդ հալվել—լուծվել էին թե՛ նախկին սերը, թե՛ հենց Ալյոշայի հիշատակը: Հազվադեպ հանդիպումների ժամանակ նրա մասին հիշում էին միայն այն նպատակով, որ ավելի ցավագին խոցեն միմյանց: Բզկտվելով երկուսի սիրուց՝ ես մեկից դեպի մյուսն էի նետվում, բայց չէի կարողանում հաշտեցնել իրար հետ: Նույնիսկ երբ բանտ էին գալիս տեսակցութեան, ուր ընկել էի այլախոհական գրականութեան համար, առանձին—առանձին էին ժամանում: Վտարանդվելիս էլ ինձ ճանապարհ դրին իրարից անջատ. վերջին երեկոն անցկացրի հորս հետ, հետո զնացի մորս մոտ, և գրեթե ողջ գիշերը զրուցեցինք: Իսկ առավոտյան տաքսիով եկավ Գեորգին և մեզ տարավ օդանավակայան:

— Չեմ հավատում ձեր գովազդային հոլովակին և հետներդ ոչ մի տեղ չեմ թռչի:

— Բայց դու պարտավո՛ր ես:

— Ինչպե՞ս կարող եմ ձեզ պարտք լինել, երբ մինչ այս վերջին ժամը ձեր գոյութեան մասին չեմ էլ իմացել:

— Մեր մասին բոլորն իմանում են իրենց վերջին ժամին:

— Բայց այդ դեռ պետք է ստուգել, թե իրո՞ք վերջին ժամս արդեն հասել է, — գոռացի ես համարձակաբար և նետվեցի դեպի ինձ միակ մատչելի ապաստանը՝ վերակենդանացման սենյակ, ընդորում նետվեցի ամբողջ թափով:

Եվ մեծ հիմարութիւն արեցի: Այդ կասկածելի այլմոլորակայիններից հարկավոր էր պոկվել սուսիկ—փուսիկ, ապա կամացուկ ու սահուն մտնել հիվանդասենյակ, և այնժամ բան չէր պատահի: Առժամանակ փուչիկի պես կտարուբերվեի եղծանելի մարմնիս վերևում, մինչև որ եկվորները կորչեին—զնային իրենց Ալֆան, իսկ ես կշարունակեի իմ վաղանցիկ գոյութիւնը հիվանդանոցի խաղող միջանցքներում՝ մինչև մի լույս բացվելը: Բայց վախից շտապելով՝ բառիս բուն իմաստով խրվեցի փոված մարմնիս մեջ և հանկարծակի հայտնվեցի լիակատար խավարի ու խլութեան գրկում: Սոսկալի, անտանելի ցավը շամփրեց ինձ, և սրտիս ամեն մի ծանր խփոց այդ ցավն ուժգնացնում ու ուժգնացնում էր: Բղավեցի և ամբողջ ուժով սկսեցի դուրս պրծնել այդ տանջարանից, և դա ինձ հաջողվեց: Հաջողվեց, ու

մի բան էլ ավելի. կտրուկ թափահարումից մարմնիս հետ կապող լարը պոկվեց, և ես նետի պես դուրս թռա այն նույն միջանցքը, որտեղ ինձ սպառում էին այլմոլորակայինները:

Նրանք ինձ միանգամից չճանկեցին, այլ իմ կողմը մեկնեցին իրենց սարսափելի թաթերը, և ես հեռվից զգացի նրանցից փչող սառցե շունչը: Այդ ցուրտն այնպես կաշկանդեց ինձ, որ չէի կարողանում ո՛չ շարժվել, ո՛չ գոռալ: Իսկ նրանք մոտենում էին ինձ՝ ցնծությամբ դժգոխում և իրենց նողկալի վերջավորություններն իրար շփելով: Ավազը թաթը մեկնեց, դիպավ կրծքիս... և, աղեկտուր կաղկանձելով ու ձեռքը թափ տալով, հետ թռավ: Փոքր-ինչ թեթևացա և կարողացա գոռալ. «Փրկե՛ք, որևէ մեկդ, փրկեցե՛ք ինձ»:

– Ոչ մեկը քեզ չի՛ փրկի մեզնից, – չարությունը ժպտաց ավազը: – Բո գարշելի հուռուժքը, մեկ է, վրայիցդ կհանեն թաղելիս, և այնժամ մերը կլինես: Ոչ ոք քեզ չի՛ փրկի: Ո՛չ ոք, – ճվացին մյուս այլմոլորակայինները:

– Չէ՛ մի, ոչ ոք, – թիկունքիցս հնչեց տղամարդու բարձր ու հանդարտ մի ձայն: Ես հետ նայեցի, և հույսի ուրախությունը բռնկվեց մեջս:

Չգիտես որտեղից հայտնված գեղադեմ պարոնը մի քանի դանդաղ լայն քայլ արեց և կանգնեց իմ ու եկվորների միջև: Բժիշկ չէր, ոչ էլ այցելու, որովհետև հագուստ-կապուստը շատ տարօրինակ էր. երկարաձիտք փայլուն կոշիկներ, սև-կարմիր թիկնոց, ինչի տակից երևում էր միջնադարյան ինչ-որ ոսկեկար զգեստ:

– Նա օգնություն էր կանչում, և ես նրան օգնելու եկա: Բոլորդ կորե՛ք այստեղից: Այս կինն իմն է:

Իրար հրմշտելով և աղիողորմ վնգստալով՝ եկվորները քաշվեցին պատի կողմը:

– Ասացի՛ կորե՛ք:

Նա ոչ մի շարժում չարեց և ձայնն անգամ չբարձրացրեց, բայց այնպիսի իշխանականություն էր հնչում դրա մեջ, որ նողկալի արարածները ճղավոցով մեկից կծիկ դարձան, որը գլորվեց լուսամուտի մոտ, վերցատկեց, դուրս վիժվեց ապակու միջով և հավից գորշ ու ամպամած երկնքում: Ինձ կաշկանդած ցուրտն ու սարսափը անհետ վերացան:

– Նայիր աչքերիս, զավա՛կս, – քնքշորեն արտասանեց գեղեցիկ ան-

ծանոթը:

Նրա աչքերը շողում էին իմաստություն և ըմբռնումով, դրանց մեջ ճառագայթում էր գորովանքը, և ուզում էի դրանց նայել ու նայել:

– Շա՞տ վախեցրին քեզ, – մեղմաձայն հարցրեց նա:

– Այո: Ուզում էին հրապուրելով ինչ-որ օտար մոլորակ տանել, որտեղ իբր թե ինձ սպասում են մեռած հարազատներս: Նույնիսկ տեսցրին նրանց, սակայն դա խաբեություն էր:

– Իհարկե խաբեություն է, կեղծիք, – հաստատեց գեղադեմ անծանոթը: Նրանք խաբելու մեծ վարպետներ են: Կուհսո՞ւմ ես, թե ով եմ:

– Տեսնում եմ, որ դուք բարի եք իմ հանդեպ, բայց թե ով եք, չգիտեմ: Ես այնպե՛ս վախեցած եմ, այնպե՛ս միայնակ... Այս կացությունը, որի մեջ ընկել եմ, անչափ տարօրինակ և անհասկանալի է: Ինձ մենակ մի՛ թողնեք, խնդրո՞ւմ եմ:

– Չեմ թողնի, – գլխով արեց նա: – Իսկ դու գլխի ընկնո՞ւմ ես, թե քեզ ինչ է պատահել:

– Այո, հասկանում եմ, որ մահացել եմ: Բայց մարմինս պառկած է այնտեղ, սեղանին, – ասացի ես՝ թափանցիկ ձեռքս մեկնելով վերակենդանացման սենյակի կողմը, – իսկ թե ինչն՞ է եմ այստեղ և ի՞նչ պիտի անեմ այսուհետև, չգիտեմ:

– Այդ ամենն այնքան էլ սարսափելի չէ, ինչպես թվում է սկզբում: Դու արդեն հասկացել ես, որ մահ չկա: Դու դուրս ես պրծել մարդկային փտած պատյանից...

– Իսկ ինչն՞ «փտած»: Ես այդքան չեմ ծերացել...

– Ինձ հետ չի կարելի վիճաբանել, մանկիկա: Դու, կրկնում եմ, թողել ես քո դյուրաբեկ, ծայրեծայր հիվանդ, իսկ հիմա էլ հարվածից վնասված մարմինդ, որպեսզի միանաս ոգիների կատարյալ աշխարհին: Այժմ քո առջև բացվում են այնպիսի հնարավորություններ, որոնց մասին կենդանի ժամանակ մտքովդ իսկ չի անցել: Դրախտի վերաբերյալ տերտերական հիմար հեքիաթները չեն պատկերում ա՛յն աշխարհների շքեղության ստվերն իսկ, որոնք դու կտեսնես: Մենք կմեկնենք իմ սքանչելի, հոգսերից ազատ և խնդությունից շողացող թագավորությունը: Այնտեղ դու կճաշակես այնպիսի ուրախություն և վայելք, որոնք անհասանելի

են մարմնավոր արարածներին: Իմ թագավորությունից առատորեն բաժին եմ տալիս յուրաքանչյուրին, ով սիրում է ինձ, և ում ես եմ սիրում: Բայց ես ամեն մարդու չէ, որ մոտս եմ վերցնում, այլ միայն իմ ընտրածներին.

– Ուրեմն ես...

– Այո՛: Ծնվածը օրից աչքիս տակ եմ առել քեզ: Սիրով ու տաղնապով հետևել եմ քո զարգացմանը, հոգացել եմ քո մասին, թեև դա չէիր կարող նկատած լինել: Այդ ես եմ քեզ օգնել, որ աճեցնես քո ամենահիանալի հատկությունները՝ հպարտություն, սեփական արժանապատվության զգացում և դատողությունների անկախություն, այլև հեղինակություն չճանաչելը: Ես հիանում էի այն բանով, թե ինչպես ես համարձակորեն ջարդում յուրաքանչյուր շրջանակ, եթե այն պարտադրված էր լինում: Ես քեզ մղում էի կատարելու ամենահամարձակ արարքներ: Այդ ես չեմ թողել, որ թթվես քաղքենիական ճահճի գաղջություն մեջ: Այդ ես էի քեզ փրկում, երբ հոգուդ սպառնում էր այն Ուժին ենթարկվելու վտանգը, Որը բեկել ու խոնարհեցրել է բազում հպարտ հոգիների:

– Դուք խոսում եք խորհրդային ամբողջատիրական՝ տոտալիտար վարչակարգի՞ մասին:

– Ոչ, ես խոսում եմ տիեզերական ամբողջատիրության մասին: Բարեբախտաբար դու խոսասիել ես դրա կործանարար ազդեցությունից, ուստի իմն ես: Դու մեկն ես բազում և բազում միլիոնավոր իմ սիրելի դուստրերից. դուք շատ եք, բայց ես բոլորիդ սիրում եմ հավասարապես:

– Հիմա ո՞վ եք դուք, ասացեք վերջապես: Ի՞նչ է ձեր անունը:

– Կարող ես ինձ պարզապես «Հայր» անվանել:

– Հայր...

– Այո: Ինձ տուր ձեռքդ: Հետո արի և այլևս երբեք միայնություն չես զգա: Դու կունենաս ուժեղ, անկախ, հպարտ բազմաթիվ եղբայրներ ու քույրեր: Երկրի երեսին ապրած մարդկանց մեծ մասը բնակվում է իմ իշխանության տակ գտնվող ոլորտներում: Իսկ հիմա կռահեցի՞ր, թե ով եմ, զավակս: Այստեղ գլխի ընկա և ուրախացած բացականչեցի.

– Գիտե՛մ: Դուք Հիսուս Քրիստոսն եք:

Գեղեցիկ դեմքը ծամածուվեց: Զարկ ստացածի պես նա մի կողմ թեք-

վեց և թիկնոցի քղանցքը վեր քաշելով՝ ծածկվեց: Ես անհարմար զգացի. հասկացա, որ ասածս բնավ էլ այն չէր, ինչ նա սպասում էր ինձանից: Նաև վախեցա, որ հիմա կգնա, և ես մենակ կմնամ: Սակայն նա մի քիչ լռելուց հետո նորից բացեց դեմքը և մեղմ կշտամբանքով ասաց.

– Այլևս երբեք այդ անունը չտաս մոտս: Անշուշտ, ես այն ծիծաղելի անձը չեմ, որ ներկայացվում է եկեղեցական հնացած առասպելներում: Ես միակ իսկական տիրակալն եմ մարդկանց աշխարհի. այդպես եղել է և կա Երկրի երեսին մարդու հայտնվելու ժամանակից սկսած: Բայց ես նաև ԱՄՔՈՂՋ աշխարհի ապագա տիրակալն եմ: Արդեն հիմա ինձ են պատկանում նրա ամենագեղեցիկ անկյունները, իսկ շուտով կպատկանի ամենը:

Այժմ նա խոսում էր գրեթե թատերական կրքոտությամբ, և այդ ինձ մի քիչ զգաստացրեց: Կյանքում երբեք չեմ սիրել հուզագրգռությունը՝ պաթետիկան, և պարզվեց, որ մեռնելուց հետո էլ եմ դրանից խորշում: Գեղատես անծանոթիս պատկերից սկսեց թատրոնի նավթալինի հոտ գալ: Այո, նա ինձ ազատեց նենգամիտ այլմոլորակայիններից, ինչի համար շնորհակալ եմ նրանից: Բայց ինքն արդյո՞ք նրանց միջից չէ: Այդ ինչն՞ ու դրանք առանց հակաճառելու ենթարկվեցին սրան, ուղղակի այնպես, ինչպես մանկավիճիկները՝ թագավորին: Սրանք ինձ լրիվ խճճել են: Տե՛ր, ողորմի՛ր...

Նա ցնցվեց: Շփոթահարի պես լռեց: Ապա սթափվելով՝ խոսքը շարունակեց նույն կրքոտ ոգևորությամբ.

– Դեհ, ձեռքդ ինձ տուր, զավակս, և գնանք իմ լայն ու արձակ աշխարհը: Միայն թե նախ վրայիցդ հանիր այդ մետաղակտորը, որը չգիտես ինչու կրել ես կենդանի ժամանակ, ընդորում՝ դրան առանձին նշանակություն չտալով: Եվ դա լավ է: Սակայն դրա ստվերը մնացել է հոգումդ: Հանի՛ր այն:

– Բայց ինչպե՞ս կարող եմ այդ անել, չէ՞ որ վրաս իմ փոքրիկ խաչի լուկ ստվերն է մնացել, իսկ խաչը մարմնիս վրա է, հիվանդասենյակում:

– Դե, այդ արվում է շատ հասարակ ձևով, զավական է ասել. «Ես հրաժարվում եմ իմ խաչից և այն հանում եմ վրայիցս»:

Եվ նա, հիպնոսող հայացքը վրաս հառելով, սպասեց, թե երբ կկատարեմ իր հրամանը: Բայց չգիտեմ, որ այդ փոքրիկ խաչը ինձ համար բնավ

էլ հոռուութե՝ չարխափան՝ թալիսման չէ, և ոչ էլ մողայական գարդ:

Ոսկե պստիկ խաչը ինձ նվիրել էր մայրս՝ վտարանդիութեան ճանապարհներս: Նա այն վիզս զցեցե՝ ասելով. «Այս խաչը ինձ է հասել պապիցս, և այն կրել եմ մանուկ ժամանակ, երբ դեռ Աստծուն չէի հավատում: Հետո դրեցի զարդատուփի մեջ: Դու շատ փոքր էիր, երբ ծանր հիվանդացար, և բժիշկները քեզնից ձեռք շահեցին: Հավատացյալ հարեանուհիս խորհուրդ տվեց քեզ եկեղեցի տանել և մկրտել տալ: Այդ ժամ միտս ընկավ խաչը, դուստր քեզ տվեցի: Դրանով էլ քեզ մկրտեցին: Այնպես որ դա հասարակ խաչ չէ: Կրիբ այն որպես հիշատակ պապիդ (որին չես հիշում) և իմ: Ո՞վ գիտես, գուցե սա քեզ կպահպանի օտարութեան մեջ, ինչպես որ պահել է անցյալում: Մկրտվելուց հետո դու իսկույն սկսեցիր առողջանալ»: Եվ ես այն կրել եմ՝ վրայիցս չհանելով:

Ես հապաղում էի՝ ձեռքս կրծքիս սեղմելով:

– Դե, շուտ հանի՛ր, – հիմա նրա ձայնի մեջ հազրիվ զսպված ջղայնութիւն էր հնչում:

– Չանե՛ս, Աննչկա, – կողքիս հնչեց մի ուրիշ ձայն՝ այնպե՛ս ծանոթ ու հարազատ, բայց վաղո՛ւց չլսված:

– Մայրի՛կ:

Դիմացս կանգնել էր հանգուցյալ մայրս: Նա ևս ինձ պես պղտորավուն թափանցիկ էր, գուցե մի քիչ մուգ: Մահացել էր առանց ինձ: Ձթողեցին հայրենիք գնալ՝ խնամելու ծանր հիվանդ մորս, հուղարկավորելու նրան: Եվ միայն հիմա տեսա, թե քաղցկեղն ինչպես էր կրծել նրան՝ հասցնելով այդ աստիճանի նիհարութեան և հյուսվածութեան:

– Լուե՛լ: Կորի՛ր այստեղից, – կատաղութիւնից այլանդակված ձայնով բղավեց գեղեցիկ անծանոթս, միայն թե վրան հիմա քիչ բան էր մնացել գեղեցիկութիւնից: Նրա դեմքը միանգամից դարձավ գորշ ու կնճռոտ, բարեկազմ իրանը կուզացավ և մի տեսակ ծռմովեց, նույնիսկ շքեղ թիկնոցը վաղուց մոռացված դիմակահանդեսի ճմովված ու խուճապած փալաս էր թվում:

Նետվեցի մորս մոտ ու գրկեցի: Նրա օղեղեն մարմնին հպվելը միանգամայն զգալի ու հաճելի էր. ասես տաք օդի ուժեղ շիթի դիպչեցի: Իհարկե, անծանոթիս զայրույթն ինձ վախեցրեց, բայց մա՛յրս ...այս

ավելի կարևոր էր: Մտքովս անցավ. «Գուցե այժմ կկարողանանք նորից միասին լինել և այլևս երբեք չբաժանվե՞լ»:

– Մայրիկ, գիտե՞ս, ես էլ եմ մեռել:

– Այո, աղջիկս, գիտեմ: Եվ պապիկիդ հետ եկել եմ քեզ դիմավորելու:

Մորս թիկունքից մի բարձրահասակ երիտասարդ հայտնվեց՝ փոքր մորուքով, երկար մազերով և քահանայական զգեստով: Նրան կյանքում երբեք չէի տեսել, պապիս լուսանկարներն էլ ինչ–որ պատճառով ընտանիքում չէին պահպանվել: Բայց մորս նմանութիւնից հասկացա, որ իրոք իմ պապն է. մեր ժառանգական բարակ ու կոր քիթն ուներ, մազերը բայց խարտյաչ էին, աչքերը՝ երկնագույն, ինչպիսիք մայրիկինս էին երիտասարդ ժամանակ:

– Բարև, թոռնիկս, – գլխով անելով ասաց նա: – Դու ճիշտ վարվեցիր, որ խաչը չուրացար: Եթե այդ անելիր, մենք արդեն չէինք կարող քեզ օգնել: Հիմա աղոթիր Տիրոջը, որ քեզ փրկի սատանայից, Քրիստոսի անունով խփիր դրան: Հին ստախոսը հայտնվել է, որ քեզ հրապուրելով իր հետեից տանի ու կործանի հոգիդ:

– Ի՞նչ է սուտը, – ուսերը թոթվեց արդեն զգաստացած անծանոթը:

– Դժո՛խք, սատանա՞: Ո՞վ է հիմա հավատում այդ հեքիաթներին:

Հասկանալի է, որ աշխարհում գոյութիւն ունի չարը, բայց ոչ այս աստիճան անձնավորված: Նա, ում գոյութեանը կասկածում էի, ասես կարգաց մտքերս:

– Դու ճիշտ ես, գանձ իմ, ո՞վ է հիմա հավատում, որ պոչավոր ու պոչավոր սատանա կա: Միայն պապիդ պես տխմարները: Նա նույնիսկ գլուխը հիմարական, ծաղրանկարանային մահու տվեց իր մոլորութիւնների համար: Ես սատանա չեմ, ես Դեմիոլոգ* եմ, արարիչ և մարդկանց հովանավորը:

– Ստո՛ւմ ես, աստվածանարգ, – բացականչեց երիտասարդ պապս, և նրա ձայնի մեջ ուժ հնչեց: – Դո՛ւ չես ստեղծել մարդկանց, դու միայն ազգավաղել ես Աստծո ստեղծածը: Իսկ թոռնուհուս փորձում եմ փրկել հենց իմ խաչի մահով, այլև Աստծո ողորմութեամբ:

– Մի՛ հավատա այդ կեղծ բարեպաշտին ու խավարամիտին, Աննա: Մի՞թե ինձնից փրկվել է պետք: Մի՞թե չհասկացար, թե ինչպես եմ քեզ

* Ստեղծագործ, կազմակերպող ուժ՝ գորութիւն (թարգմանչի ծանոթագրութիւնը):

սիրում, և որքան թանկ ես ինձ համար:

– Դու նրան սիրում ես ինչպես գայլը գառանը: Աղոթիր Տիրոջը, Աննչկա, աղոթիր հենց հիմա: Աստված ողորմած է:

– Ես աղոթել չգիտեմ, պապիկ:

– Մեկ անգամ դու աղաղակել ես Նրան. «Տե՛ր, ողորմի՛ր», – և այդ քեզ օգնել է վրայիցդ թոթափելու սատանայի դյուլթանքները:

Սատանան ծաղրանքով քրքջաց.

– Փչո՛ւմ ես, սուրբիկ: Արդի մարդը ձեր աղոթքը վաղուց վերածել է հասարակ ասացվածքի. այդ խոսքը ոչ մի բան չի նշանակել ինչպես Աննայի, այնպես էլ Նրա համար, Ում, իբր, ուղղված է եղել:

– Դարձյա՛լ սուտ է: Տերը լսում է անգամ պատահական աղոթքը, որովհետև Նա գիտե, որ մարդու հոգուց ոչ մի պատահական բան չի բխում: Աննան քրիստոնեուհի է և վտանգի պահին վարվել է քրիստոնեավարի՝ Աստուծոն օգնության կանչելով:

– Նա քրիստոնեուհի՞ է: Ի՛նչ անհեթեթություն...

– Այո, վատն է, մեղսավոր է, բայց մեկ է՝ քրիստոնեուհի է: Ինքս եմ ներկա եղել Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով նրա մկրտությունը:

– Եվ ի՛նչ են կոչում ստի հայր, երբ սուրբիկի՞դ ամեն խոսքը փչոց է: Ինչպե՞ս կարող էիր թոռնուհուդ մկրտությունը ներկա լինել, եթե քո դուստրը դեռ աղջնակ էր, երբ դու այդպես անզգուշաբար ու հիմարաբար վեճի բռնկեցիր հարբած նավաստյակների հետ:

– Ես Աննա և Ալեքսեյ մանուկների մկրտությունը ներկա եմ եղել անտեսանելի կերպով: Նրանց մկրտող քահանան անարժան և ծուլ հովիվ էր: Խորհուրդը կատարելիս նա վախվխելով շտապում էր, իսկ ես անտեսանելիորեն լրացնում էի այն: Նա բաց թողեց սատանայից «Հրաժարիմքի» պարագան, իսկ ես (և դու՛ չարդ, այդ հիշում ես) մկրտվող մանուկներ Ալեքսեյի ու Աննայի հետ կատարեցի քեզինց հրաժարվելու գործողությունը: Դա եղել է 1955 թվականի Չարչարանաց շաբաթվա չորեքշաբթի օրը:

– Այո՛, այո՛ Աննչկային և Ալյոշային մկրտել են այդ ժամանակ, ուրեմն այդպես էլ եղել է, – բացականչեց մայրս՝ ավելի պինդ գրկելով ինձ:

– Նրանց մկրտելն էլ ուրիշի տատիկն էր զուտ անապաշտությունից մղված մտահղացել, որ մանկիկը չմահանա, – տեղի չէր տալիս սատա-

նան: – Իսկ նրա եղբայրիկին հետներն էին վերցրել կնունքը պարզապես ընկերովի դարձնելու համար:

Չարքը գնալով ավելի շատ էր սեթևեթում և այլանդակվում: Արդեն չքացել էր օպերային Մեֆիստոֆելի* շողշողուն զգեստը, և դրա տեղը կախվել էին սև ցնցոտիներ, որոնց արանքից երևում էր թաց ասֆալտի գույն ունեցող մաշկը, մատների ծայրերից, պատուելով կարմիր ձեռնոցների կաշին, դուրս էին պրծել սև ճանկերը:

– Իսկ այն քահանայի վերաբերյալ դու ճշմարիտ ասացիր. նա շուտով հրաժարվեց իր հոգևոր աստիճանից և ինձ հավատարմորեն ծառայեց մինչև մեռնելու օրը: Եվ մահից հետո էլ, բնականաբար, ինձ մոտ ընկավ: Այնպես որ՝ թոռնուհուդ մկրտությունը հագիվ թե վավերական լինի:

– Ամեն մկրտություն վավերական է, եթե կատարվել է ըստ կանոնների, անկախ մկրտողի արժանիքից կամ անարժանությունից:

– Այդ առթիվ ես իմ կարծիքն ունեմ, և այն աներեր է: Ես չեմ ընդունում նրա մկրտությունը:

– Ուրեմն ինչո՞ւ ես վախենում մկրտության պատիկ խաչից:

– Վախենո՞ւմ: Ես պարզապես նողկում եմ, երբ ողջ կյանքում իմ հուշումներով ապրած մարդիկ (չէ՞ որ այդ արարածիկները միշտ ենթարկվում են կա՛մ ինձ, կա՛մ էլ քո Տիրոջը, իսկ իրենք ունակ չեն ինքնուրույնաբար նույնիսկ մի կարգին մեղք գործելու), մեկ էլ առանց խորհելու վզներից կախկխում են ձեր խաղալիքները, իրենք էլ չհիմանալով, թե ինչ են կրում:

– Խաղալի՞ք ես ասում: Ա՛յ հիմա կստուգենք: – Պապս երկու ձեռքով բռնեց կրծքին կախված խաչը և գլխից վեր բարձրացրեց՝ հետևյալ խոսքն արտասանելով.

– Թող ելնի Աստված, և Նրա թշնամիները թող ցրվեն*...

Սատանան ցնցվեց, սկսեց այս ու այն կողմ խփվել և շարժվեց միջանցքի ծայրը՝ լուսամուտի կողմը: Հատակին ընկած կուռնուհուդ անելով և դողդողալով՝ նա խուլոռոցով ասաց.

* Եվրոպայի ժողովրդների բանահյուսության և գեղավեստական ստեղծագործության մեջ չար ոգու սատանայի կերպար: Գյոթեի «Փառուստ»-ում դոկտոր Փառուստի փորձիչը, որը նրան իշխանություն, գիտելիքներ ու երկրային բարիքներ է առաջարկում՝ հետագայում հոգուն տիրանալու պայմանով (թարգմ. ծան.):

* Սաղմոս 67.1 (թարգմ. ծան.):

– Երբցս անիծյալ լինես, խղճուկ սուրբիկ: Աննա, դավաճա՛ն: Մենք դեռ կհանդիպենք, դու ինձնից ոչ մի տեղ չես կարող թաքնվել: – Եվ այս ասելով նա չքվեց:

Ես ուժասպառությունից հատակին նստեցի: Մայրիկս խոնարհվեց վրաս և շոյեց գլուխս:

– Ներիր ինձ, աղջիկս: Ես եմ ամեն բանում մեղավորը. քեզ եկեղեցի չեմ տարել, ո՛չ աղոթք եմ սովորեցրել, ո՛չ էլ Տիրոջ պատվիրանները:

– Ինքդ էլ չես գնացել, ինքդ էլ չես աղոթել, – խստուկթյամբ ասաց պապս:

– Այո, եթե դու չլինեիր, ես դժոխքում տանջվելու էի: Չէ՞ որ մեռնելուց առաջ էլ չէի ուզում ապաշխարել, և հուղարկավորումս էլ քրիստոնեակալել չկատարվեց: Եթե նահատակութունդ չլինեիր, հայր...

– Հայրիկ, – ուղղեց նրան պապս: – Ես քեզ համար առաջին հերթին պարզապես հայրիկ եմ. հետո են գալիս իմ հոգևոր աստիճանն ու նահատակութունը:

– Մայրի՛կ, պապի՛կ: Ի՞նչ նահատակության մասին եք խոսում: Պապ, մի՞ թե դու քաղցից չես մահացել քաղաքացիական կռիվների ժամանակ, – հարցրի ես:

– Աննա, այդ ինչպե՞ս ես խոսում պապիդ ... այսինքն՝ պապիկիդ հետ: Ի՞նչ է, մոռացե՞լ ես իմ հայրանունը:

– Չէ, ինչո՞ւ: Հիշում եմ՝ Եվգենենա: Բայց մի տեսակ անհարմար է պապիկ կոչել ինձնից կրկնակի փոքր երիտասարդին. իսկ պա՛պ՝ հնչում է միանգամայն արդիական:

Կարելի՞ է ձեզ այդպես ասել:

– Ասա ինչպես ասվում է:

– Պապիկիդ անունը հայր Եվգենի է. ահա այսպես բարեհաճիր դիմել նրան:

Վաղո՛ւց, շա՛տ վաղուց չէի լսել մայրիկիս խրատները, ինչպե՛ս էի կարոտել դրանց:

Իսկ մայրիկս շարունակում էր խոսել այն նույն խիստ արտահայտու՜թյամբ.

– Քո պապիկը սուրբ է: Եկեղեցու «Ցարական» կոչված դռան վրա

նրան խաչել են բուլչեիկ նավաստիները: Այդ եղել է 1919 թվականին: Պապիկդ փորձել է նրանց արգելել, որ բեմ խուժեն պատարագի ժամանակ: Նրանք էլ պապիկիդ սվիններով բարձրացրել ու վարսել են դռանը՝ ծաղրելով. «Կախված մնա, ինչպես Քրիստոսդ է կախվել»: Եվ ոչ ոքի մոտ գալ չեն թողել, մինչև որ մեռել է: Այդպես կախված է մնացել մինչև երեկո՝ աղոթելով խաչողների համար, իսկ ծխականները կանգնել են առջևը, լաց են եղել, բայց որևէ բանով չեն կարողացել օգնել նրան:

– Իսկ ինչո՞ւ դու առաջ չես պատմել այդ, մայրիկ:

– Սկզբում վախենում էի, իսկ հետո... Ինքդ գիտես, թե ինչպես ենք ապրել՝ առանց Աստծու, առանց եկեղեցու: Անգամ ամաչո՛ւմ էի հորս համար: Հիմա եմ հասկանում, որ մեղավոր եմ նույնիսկ ոչ այնքան քո առաջ, հայրիկ, որքան Ալյոշայի և Աննայի:

– Մայրիկ, իսկ Ալյոշան հիմա որտե՞ղ է:

– Պապիկի հետ է:

– Նրա հետ տեսնվե՞լ ես:

– Այո, բայց շատ կարճատև: Իսկ հիմա արդեն, հավանաբար, մինչև Ահեղ դատաստանը այլևս երևի չեմ տեսնվի...

– Ասա, նրա համար այնտեղ լա՞վ է:

– Շատ լավ: Այնքան լավ, որ ասել չի լինի: Պարզվում է, աղջիկս, երբ Ալյոշան լրիվ վատացած է լինում, մեր հարևանուհի Դարյա Իվանովնան նրա մոտ թաքուն քահանա է կանչում, որն էլ Ալյոշենկային խոստովանեցնում և հաղորդութուն է տալիս: Դու այդ ժամանակ դպրոցում ես եղել, իսկ ես ու հայրդ՝ աշխատավայրում: Եվ հիմա մեր Ալյոշենկան դրախտում է:

– Իսկ դո՞ւ, մայրիկ:

– Պապիկիդ աղոթքներով և Աստծո մեծ ողորմությամբ գտնվում եմ մի հանգիստ վայրում, որի վրա սատանան իշխանութուն չունի, և որտեղ կարելի է աղոթել:

Բայց այնպե՛ս եմ ուզում քայլել խոտի վրա, լսել ծտերին: Այնտեղ այդպիսի բաներ չկան, միայն քարեր ու քարեր են... Հայրիկ, քանի դեռ ժամանակ կա, Անյային սովորեցրու ամենակարևոր աղոթքները:

– Ուշ է, Մաչենկա: Դու հո մանկուց իմացել ես դրանք. երեխա ժա-

մանակ առանց աղոթելու վեր չես կացել ու անկողին չես մտել, սեղան չես նստել: Եվ ահա հարկավոր պահին դրանք միտքդ են եկել:

– Գոնե օրհնիր քահանայական օրհնությամբ:

Պապիկս ընդհուպ մոտեցավ և խաչակնքեց ինձ:

– Համբուրիր քեզ օրհնած ձեռքը, – ասաց մայրիկս:

Չհասկացա, թե ինչու համար պետք է այդ անեմ, բայց հնազանդորեն համբուրեցի Պապիս ձեռքը, որն ասես առածգական լույսից կերտված լիներ:

– Տեսնո՞ւմ ես, մայրիկս, թե որքան հնազանդ եմ եկեղեցական դաստիարակության մեջ: Ինձ կարելի է կիրակնօրյա դպրոց տալ, – ծիծաղեցի ես:

– Ինչի՞ դ վրա ես ուրախանում, հարցրեց Պապս: – Թուչնակը ժամանակից շուտ չսկսե՞ց երգել:

– Ինքս էլ չգիտեմ: Այնպես թեթև ու ազատ եմ զգում առանց սովորական մարմնի, որ... Հետո՞ դու և մայրիկս հայտնվեցիք, ապա Ալյոշայի մասին այդպիսի լավ նորութուններ իմացա: Իսկ ձեզ հետ՝ լավից լավ է: Նույնիսկ այն սոսկալի հանդիպումները մոռացա:

– Բացի սատանայից ուրիշ մեկին հասցրե՞լ ես հանդիպել, – անհանգստացավ պապս:

– Այո, այստեղ ինչ – որ կեղծ այլմոլորակայիններ ինձ հրավիրում էին թոչեղու Ալֆա էրիդանա:

– Տե՛ր, փրկիր և ողորմիր, – բացականչեց մայրս:

– Հապա պատմիր, – պահանջեց պապս: – Պատմեցի:

– Դեևրն են եղել, – ասաց նա: – Ժամանակակից մարդկանց նրանք հիմարացնում են ժամանակակից միջոցներով: Բայց նրանք քեզ, մեկ է, տանելու էին սատանայի մոտ:

– Պա՛պ: Իսկ ինչո՞ւ էր ինձ այդպիսի պատիվ արվել, որ նա ինքը ինձ տանելու գա:

– Նահատակությանս համար Աստուծոց ինձ շնորհ է տրվել իմ սերունդների համար Իր առաջ բարեխոսելու մինչև ժամանակների վերջը: Ահա սատանան էլ հոգս է քաշում. նրա համար վիրավորական է, որ այդքան մարդ կարող է փրկվել առանց սխրանք գործելու:

– Բայց մի՞թե ես քո վերջին սերունդը չեմ: Ես երեխա չեմ ունեցել, ինքս էլ մեռել եմ:

– Ես ունեմ և կունենամ սերունդներ, հանգիստ եղիր:

– Եվ բոլորը կփրկվե՞ն:

– Եթե իրենք այդ ձգտեն: Աստված չի կարող մարդուն փրկել նրա կամքին հակառակ: Ա՛խ, իմ անուշիկ հիմարուկներ, եթե դուք ապրած լինեիք թեկուզ մի տկար, թուլիկ քրիստոնեական կյանքով, որքա՛ն հեշտ կլինեի ձեզ ուղիղ Դրախտ ուղեկցել: Իսկ հիմա հարկավոր են ոչ միայն իմ, այլև Երկրի ու Երկնքի համայն Եկեղեցու և բոլոր սրբերի աղոթքները:

– Իսկ դու չե՞ս կարող այնպես անել, որ ինձ ու մայրիկիս համար համայն Եկեղեցին աղոթի:

– Դու կարծում ես այդ հե՞շտ է: Ինքդ մտածիր, ձեր ազգականներից ու ընկերներից ո՞վ կաղոթի ձեզ համար: Երկրի վրա ձեզ չըջապատել են հավատի հանդեպ նույնպիսի անտարբեր մարդիկ, ինչպիսիք դուք եք:

– Ես շատ էի հույս տածում, որ դու հավատի կգաս, – տխրությամբ ինձ ասաց մայրիկս:

– Եթե իմանայի՛:

– Իմացութունն ու հավատը տարբեր բաներ են: Սակայն մի՛ վհատվեք. կան նաև համայն Եկեղեցու աղոթքները՝ առաջներում ննջած քրիստոնյաների, այդ թվում նաև մոլորվածների, առանց ապաշխարելու մեռած, ուստի քրիստոնեական ծեսով թաղվելու հնարավորությունից զրկված մարդկանց համար: Ահա հենց այդ աղոթքներին, մեկ էլ Աստծո մեծ ողորմածությանը պետք է ապավինենք:

– Եվ հիմա ի՞նչ է ինձ սպասում:

– Ամեն, ամեն ինչ Աստծո ձեռքում է: Բայց հավատա, որ քեզ համար Նրան խնդրելու եմ հանդգնություն հասնող համառությամբ: Պահպան Հրեշտակը էլ է խոստացել քեզից ձեռք չքաշել Աստծո մոտ, թեպետև մեղավոր ես քո Հրեշտակի առաջ: Բայց ինչո՞ւ է նա հապաղում: Հանկարծ դեևրը նորից չհավաքվեն:

– Ես վաղուց այստեղ կանգնած լսում եմ, – լսվեց հնչեղ և շատ ախորժալուր մի ձայն: Շուրջս նայեցի: Մեզանից քիչ հեռու կանգնել էր մի լուսատու էակ, որը ոտքից գլուխ փաթաթված էր ասես բոցեղեն շիթերից գործված ծածկոցով:

– Ահա և նա՛, քո պահպան Հրեշտակը, – ուրախացավ պապս:

Ծածկոցը լայն բացվեց և վերածվեց կրակե թևերի կամ շողացող ճառագայթների երկճյուղ հոսանքի նմանվող բանի, որը Հրեշտակի ուսերից իջնում էր մինչև ոտքերը: Նրա ճաճանչափայլ դեմքը գեղեցիկ էր ու լուրջ, և նրանում նշույլ իսկ չկար այն օպերետային, շեշտված երկրային գեղեցկությունից, որով ինձ, ինչպես հետին հիմարի, սկզբում հմայել էր սատանան: Ստի հայրն ուզում էր ինձ դուր գալ, ջանում էր դուր գալ, և այդ նրան հաջողվել էր: Հրեշտակն օժտված էր կատարյալ, բայց երկրային չափանիշերից անչափ հեռու գեղեցկությամբ: Այդ գեղեցկությանն անհարիր էին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են շուքը, հրապույրը, հմայքն ու թովչանքը: Նրա վրա չկար ակնհայտորեն արական կամ իգական սեռին պատկանելի ցույց տվող որևիցե նշան: Լինելով ավելի շատ պատանու, քան աղջկա պես՝ նա այնպիսի կատարյալ մաքրություն ուներ, որ նրա գեղեցկությամբ հիանալը անպարկեշտություն կլիներ: Նրանից բխում էին ուժ, հանդարտություն և կրտսերի, այսինքն՝ իմ ու մայրիկիս հանդեպ ավագի սեր: Իսկ ահա Պապիս (այդ իսկույն նկատեցի) հետ վերաբերվում էր մեծագույն հարգանքով, ինչպես ավագի: Ահա թե ինչ է նշանակում սուրբ: Ըստ նրանց երկնային աստիճանի՝ սուրբը հրեշտակներից գերադաս է: Եվ նա, ինչքան չլինի, իմ ազգականն է: Հաճելի բան է:

Ինչպես որ ավագն է անում, Պապս Հրեշտակին ներկայացրեց ինձ.

– Ահա քո պահապան Հրեշտակը: Նա քեզ է տրվել սուրբ մկրտությունից և անտեսանելիորեն ուղեկցել է քեզ ողջ կյանքիդ ընթացքում:

– Այդպես է, – լրջորեն հաստատեց Հրեշտակը: Նա նույնիսկ չժպտաց ինձ. այնինչ նրա ժպտը սքանչելի պիտի լիներ: Վիրավորական է:

– Դուք իմ պահապան Հրեշտակն եք: Ուրեմն ինչո՞ւ իմ կյանքում այդքան շատ դժբախտություններ, փորձանքներ ու սխալներ են եղել: Ներեցեք, բայց ամենևին չեմ հիշում, որ մեկը, թեկուզ անտեսանելի կերպով, ինձ դրանցից զգուշացրած լինի:

– Շատ անգամ եմ փորձել հետդ խոսել, բայց դու ինձ չես լսել: Երբեմն հաջողվում էր, որ քեզ օգնեի ուրիշ մարդկանց, հրեշտակների և նույնիսկ տարերքի միջոցով: Բայց գիտակցված կամքիդ հակառակ չէի կարող քեզ վրա ներգործել:

– Ինչո՞ւ չէիր կարող, եթե իմ օգտին էր:

– Որովհետև կամքի ազատությունը մարդուն տրված է Աստծո ցանկությունամբ, և հրեշտակը չի կարող խախտել այդ ազատության սահմանները:

– Նաև մեղքերդ են նրան ստիպել, որ իրեն հեռու պահի, – ավելացրեց Պապս: – Եվ այդ ամենը, ավագ, անհետևանք չմնաց: Շուտով դու կհասկանաս ու կգնահատես ապրածդ կյանքի էությունը, և այդժամ ինքդ կգտնես պատասխանները շատ հարցերի, որոնք, տեսնում եմ, ուզում են միջիցդ դուրս ցատկել: Իսկ այժմ պետք է շտապենք:

– Երևում է, որ ես այսօր մոռա եմ. ինձ շարունակ շտապ և համառորեն ինչ – որ տեղ են հրավիրում: Այս անգամ ո՞ւր:

– Աստծուն երկրպագելու, – ասաց պահապան Հրեշտակս իր հնչեղ ձայնով:

Իսկույն լեզուս կծեցի: Այդ լավ է, թե վատ չգիտեի, բայց շատ կարևոր լինելը կուհեցի:

Այնուհետև իրադրությունն սկսեց պարզաբանել Պապս.

– Մենք պետք է քեզ անցկացնենք երկրի մթնոլորտի միջով, որտեղ վխտում են դեերը: Հուսով եմ, որ այդ կհաջողվի Աստծո օգնությամբ: Իսկ հիմա հրաժեշտ տուր մորդ: Մենք քեզ կսպասենք:

Պապս և պահապան Հրեշտակը մի կողմ քաշվեցին ու սկսեցին ինչ–որ բանի մասին խոսել, իսկ ես ու մայրիկս պինդ գրկախառնվեցինք:

– Մայրիկ, դու ոչ մի կերպ չե՞ս կարող մեզ հետ ճանապարհվել: Հեչ չեմ ուզում քեզնից բաժանվել:

– Ես էլ, աղջիկս...

– Այլևս չե՞նք տեսնվի, մայրիկ:

– Կտեսնվենք, եթե զնաս այնտեղ, որտեղ ե՛ս կլինեմ:

– Ես կջանամ, մայրիկ:

– Հիմարիկս... Իմ համբույրը փոխանցիր Ալյոշենիկային, եթե տեսնես: Մայրս վերջին անգամ գրկեց ինձ, ձեռքերն իջեցրեց, հետ զնաց՝ աչքն ինձնից չկտրելով, և ապա անհետացավ:

2 –րդ գլուխ

Մեղքերի կայաններով անցնելու ճանապարհը դժվար ու վտանգավոր է, – ասաց պահապան Հրեշտակը, – դու պետք է լիովին վստահես մեզ, որ փորձանքի մեջ չընկնես:

Հոժարությամբ խոստացա: Պապս ու Հրեշտակս թևանցուկ արին ինձ, և մենք սկսեցինք սրբնթաց բարձրանալ: Մի քանի ակնթարթում երևացին ու չքացան հիվանդասեյակները, որոնք անցանք թափանց թռչելով: Հիվանդներից ոչ մեկը մեզ չնկատեց: Անցանք հիվանդանոցի տանիքի միջով և սլացանք՝ բարձրանալով հիվանդանոցի կանաչ այգու վերևը, հետո տեսա Մյունխենը՝ հավքի թռիչքի, ապա՝ օդանավի թռիչքի բարձրությունից, այնուհետև մտանք ամպի մեջ, որովհետև օրն ամպամած էր:

Առանց խոսելու երկար թռչում էինք փայլող ամպի դատարկություն միջով: Երբ ուզեցի բան հարցնել Պապիս, նա կասեցրեց.

– Կամայ՛ց: Այստեղ չորս կողմը դեներ կան. սա նրանց միջավայրն է: Մեղսակայանները չենք կարող շրջանցել, բայց կարիք չկա ժամանակից առաջ գրավել դեների ուշադրությունը: Ես լռեցի:

Մեզը առջևում հանկարծ թանձրացավ ու մզացավ: Կարծեցի ամպրոպաբեր ամպ է և, չգիտես ինչու, հիշեցի, որ ինքնաթիռների համար շատ վտանգավոր է ամպրոպի հանդիպելը: Պահապանը սեղմեց ձեռքս և գլխիս վրայով Պապիս ասաց.

– Նրա՛նք են: Պատրաստվե՛ր:

Մուժ ամպը թափով վրա էր գալիս, և շուտով մեզ պարուրեց հոծ ու դարչահոտ ծխամշուշը: Այդ կիսախավարի մեջ գեռում՝ խլրտում էին կիսաթափանցիկ նողկալի էակներ, որոնք բաղկացած էին զազրահոտ թանձր լորձուների պես բանից: Դրանցից ոմանք նման էին նորածանոթ «այլմոլորակացիներին», մյուսները՝ հսկա չղիկների, և այդ ամբողջ աղտեղությունը պտտվում ու շուռուժուռ էր գալիս մեր շուրջը՝ վեր սլանալով և սրբնթացորեն ներքև սուզվելով, սպառնաբար մոնչալով ու ճղավելով: Դեների քառասյին թռիչքն ուղեկցվում էր ամպրոպի որոտի և թմբուկների թնդյունի խառնաձայնով: Աղմուկը սաստիկ էր, անհամեմատ խժալուր, քան երիտասարդական նվազասրահում՝ դիսկոտեկում է լինում, և այդ գմբիզմիփոցի միջից լսվում էին. «Մե՛րն է: Այս հոգին մե՛րն է: Այստե՛ղ տվեք դրան»:

– Ուզենք–չուզենք պիտի կանգ առնենք, – ասաց Պահապանը: – Դրանց հետ դո՛ւ խոսիր, սուրբ: Իսկ դու, Աննա, ուշադիր լսիր,բայց խոսակցություն մեջ մի՛ մտիր:

Օդում կանգ առանք: Պահապանն ինձ ծածկեց թևով: Սրտապնդվեցի, այնքան էլ վախենալու չէր:

– Ի՞նչ եք հարուցում այս հոգու դեմ, ծառանե՛րդ սատանայի, – հարցրեց Պապս:

Դեների պարսի միջից առաջ եկավ մեկը, որը հեռավոր կերպով հիշեցնում էր պետական պաշտոնյայի: Դեը մի բայց թղթապանակ էր բռնել և միջի թղթերն էր թերթատում:

– Այ այստեղ ամեն ինչ արձանագրված է. դատարկաբանություն, հայհոյանք, պղծախոսություն, աստվածանարգ խոսքեր և լեզվի այլ մեղքեր, – ճոճուց նա, ապա շրխկոցով փակելով թղթապանակը՝ թափահարեց այլանդակ գլխի վերևում:

– Բոլորը միանգամից չի կարելի, – կասեցրեց նրան Պապս: – Եթե հայտնվել ես մեղադրելու համար, ապա մեղադրանքներդ ներկայացրու մեկ առ մեկ:

– Չէ՛, միանգամից: Բոլորը միանգամից, – չորս կողմից ճչացին դեները: – Ինչո՞ւ ժամանակ վատենք, այդպես էլ ամեն ինչ պարզ է: Ժամանակ չունենք: Այդ շատախոսներին կույտերով ենք դժոխք ուղարկում, չենք հասցնում բռնել. երամներով են թռչում: Դրան մեզ տվեք, և պրծավ–գնաց:

– Մեղադրանքները՝ մեկ առ մեկ, առանձին–առանձին, – համառորեն պահանջեց Պապս:

– Լավ: Ավելի վատ նրա համար:

Պետական պաշտոնյայի տեսք ունեցող դեը նորից բացեց թղթապանակը և սկսեց միալար կրկնել այն բոլոր հիմարությունները, հայհոյանքները, անպարկեշտ անեկդոտները, որոնք ասել եմ կյանքումս: Ընդորում սկսեց մանկական այնպիսի հայհոյանքներից, ինչպիսիք են՝ «ապուշ», «ախմախ», «վարակ», և ծաղրանքներից, ինչպես օրինակ՝ «Ախմախ Կուկան ծխախոտ է ծխում, լուցկի է թռցնում, տանը չի շնթուում» և նման անհեթեթություններ: Գլխի ընկա, որ սրանք մահանա՝ սուտ պատճառ են

գտնում մեղադրելու համար:

Դեերի ամբոխից հանկարծակի մեկն էլ առաջ եկավ՝ տկլոր, բայց պիտոնրական փողկապով, և սկսեց ծղրտալ:

– Պիտոնները պատանի անաստվածներ են. «Օղաչուն դես թռավ, դեն թռավ, Աստծուն մի տեղ չտեսավ»: Այս կինը մանկուց աստվածանարդ է եղել՝ հայհոյել է Աստծուն: Այստե՛ղ տվեք դրան:

Ես, իհարկե, պիտոներ եմ եղել, ինչպես որ մեր ողջ սերունդը, սակայն այդ խոսքը երբեք չեմ ասել: Պապիս թեից քաշեցի, և նա հասկացավ, թե բանն ինչ է:

– Հապա սպասիր. նա այդ ե՞րբ է ասել:

Պաշտոնավոր դեմ իրար անցավ, սկսեց թղթերը քրքրել:

– Հիմա, հիմա... Մոտս ամեն ինչ գրված է, մի ըոպե... Սա չէ, այն չէ... Դե լավ: Ենթադրենք նա ինքը չի ասել այդ խոսքը, սակայն լսել է պիտոնրական հավաքույթներում և չի առարկել: Առարկե՞լ է, թե՛ ոչ: Ըհը: Հանցագործություն՝ մասնակից լինելով, ինչպես ասվում է նրանց քրեական օրենսգրքում:

– Թողնենք մարդկային օրենքները, մենք Երկրի վրա չենք: Դու ավելի լավ է ասես, դե, դուք այս մեղադրանքները մի՞թե արդեն չեք առաջադրել նրանց դեմ, ովքեր աստվածամերժական խավարամտությամբ մոլորեցրել են մանկական անմեղ հոգիները: Վստահ եմ, որ այդ բարբառանքի համար արդեն պատասխան են տվել նրա դժբախտ դաստիարակները:

– Ենթադրենք: Բայց մենք մանրուքների հետևից չենք ընկնի, մեզանում ուրիշ փաստեր էլ կճարվեն հենց նույն նյութի վերաբերյալ: Պետք է խորամանկություն անել. չէ՞ որ ոչ թե մենք, այլ դուք եք Աստծուն հայհոյելը ծանրագույն մեղք համարում, իսկ մենք հետևում ենք մեղսակայանների ավանդույթներին: Մենք որ, անշուշտ, միայն հաճույքով ենք լսում մանկական այդ անուշիկ անմիջական թոթովանքները: Մանկանց շուրթերով, ինչպես ասվում է, հըմ...

– Իսկ ես ստուգապես գիտեմ, որ նա որևէ առանձնահատուկ հոգևոր մեղք չունի: Այդ ամենը, ինչի համար, որ նրան ամբաստանում եք, վատ դաստիարակության արդյունք է, և ոչ թե՛ հոգու փչացածություն: Շատ բաներ նա դուրս է տվել անգիտակցաբար, պարզապես շատախոսել է: Իսկ դրա փոխարեն ինձ, ինչպես որ ձեզ, հայտնի է, որ ճշմարիտ ու ազնիվ

խոսքի համար նա, չափահաս դառնալով, վճարել է իր ազատությունը: Եվ այս արդեն արել է բացարձակապես գիտակցաբար:

– Գիտե՛մ, գիտե՛մ, լսել ենք նրանց այդ այլախոհությունն մասին. զուտ ճամարտակույթուն է, շատախոսություն: Ըհը, ի դեպ շատախոսություն մասին: Այս կինը մեղավոր է դատարկաբանելու, շաղկրատելու և ունայն բաներ խոսելու համար: Ընկերուհիների հետ միայն հեռախոսային փուչ խոսակցությունների համար վատնվել է չորս տարի, տասնմեկ ամիս, հինգ օր, վեց ժամ և երեսունվեց ըոպե: Մեր հաշիվը ճշգրիտ է, ինչպես որ բանկում է լինում:

– Ձեք էլ ամաչում, – միջամտեց Հրեշտակս: Ինքներդ գրված լինելով Աստծուց եռանդ ստանալու հնարավորությունից՝ լկտիաբար կցվում եք հեռախոսալարերին և դրանցով եռանդ ծծում շատախոսներից:

Բայց դեերը, ըստ երևույթին, նրան չէին լսում: Մեզ վրա տեղաց հայհոյանքների, անպարկեշտ անեկդոտների, մտավորականների շրջանում գործածվող ժարգոնային բառերի և արտահայտությունների նոր հեղեղ: Պապս չէր հասցնում բառ անգամ ասել: Պաշտոնավոր դեի թղթապանակից, ինչպես աճաբարարի կապուկից բաց թողնված խաղաթղթեր, հանկարծակի դուրս թռան ամբաստանագրերը և սլացան իմ կողմը: Ձեռքերով փակեցի դեմքս, իսկ Պապս բարձրացրեց իր խաչը և գոռաց:

– Փրկչի խաչով թող մոխիր դառնան այս կնոջ խոսքային մեղքերը:

Թղթի ու բրդի այրվելու հոտ եկավ. ամբաստանագրերը մոխիր դարձած շաղ եկան, իսկ դեը ճղավելով դեն նետեց վառվող թղթապանակը և սկսեց փչել այրված թաթերի վրա:

– Դե՛ն քաշվեք, – սպառնաբար ասաց Հրեշտակս, և դեերի ամբողջ ոհմակը դեսուդեն ցրվեց՝ ազատելով մեր ճանապարհը: Մենք դուրս թռանք գարշահոտ ամպից և նոսրացող մառախուղի միջով սուրացինք դեպի մաքուր երկինք:

– Դո՞ւրս պրծանք, – հարցրի ես:

– Այս մեղսակայանից՝ այո: Բայց առջևում բավականաչափ այլ կայաններ կան, – ասաց պապս: Ուստի զգուշ եղիր և միտդ պահիր. ՉՎԱԽԵՆԱ՛Ն, ՉՎԻՃԱԲԱՆԵ՛Ն և ԱՂՈԹԵ՛Ն:

Եվ թռիչքը շարունակվեց տազնապով լի լուռության մեջ: Չգիտեմ՝ որ-

քան էինք բարձրացել, բայց մեր մոտով թռչուններ չէին թռչում, ինքնաթիռ էլ չէի տեսնում կամ դրա ձայնը չէի լսում: Մտքովս անցավ, թե մեր անցած տարածությունը ոչ թե մթնոլորտում կամ վերնոլորտում է, այլ մի ուրիշ չափման մեջ: Երբեմն ինձ թվում էր, թե մենք անշարժ կախված ենք կապույտ տարածության մեջ: Օդի դիմադրություն չէի զգում, միայն տհաճ մառախուղի ցանցառ պատառիկներ էին սլանում մեր մոտով, մեկ էլ Հրեշտակի հրեղեն թևերն էին շրշում՝ ալիքվելով ուսերի ետևում:

Եվ այդժամ պարզ դարձավ, որ թռչում ենք աներևակայելի արագությամբ:

Շուտով կրկին հայտնվեցին դեերը, բայց այս անգամ իրենց այնքան էլ լիտիորեն չէին պահում և շատ չէին աղմկում: Կրկին դրանցից մեկը տնկվեց մեր առաջ և սկսեց ստախոսություն մեղադրանքներ ներկայացնել ինձ:

– Այս կիրն ստել է չնչին առիթներով, սակայն՝ մշտապես: Երբ մայրն անհանգստացել է իր համար, սուտ է ասել նրան, թե՛ ամեն ինչ լավ է. այնինչ ինքը ձերբակալության է սպասելիս եղել: Եվ դատվել է զրպարտչական հերյուրանքների համար: Բայց սրա վրայով անցնենք... Ընկերուհիներին սուտ է ասել, որ ամուսնու հետ երջանիկ է զգում, և որ նա իրեն հավատարիմ է:

Նման մեղադրանքներ դեռ շատ ունեն, բայց դրանք թվարկում էր արագ-արագ՝ պատասխան չպահանջելով և զգուշությունը ծուռ նայելով Պապիս ձեռքի խաչին: Մենք նրան չէինք պատասխանում և շարունակում ենք մեր երթը, իսկ նա թռչում էր կողքից, վերովար էր անում և միանգամայն անկապ ու անհեթեթ բաներ գոռում:

– Այդ կիրն ոտանավորներ է գրել, իսկ բարբառած միտքը սուտ է: Եվ ընդհանրապես ամեն մարդ ստախոս է:

Մեզինք հետ մնալով՝ բղավեց.

– Այդ կիրն սուտ խոսել էի սիրելի հպարտության պատճառով: Շուտով կտեսնենք, թե իր հպարտության համար ինչ պատասխան է տալու:

Ապա, երբ այդ դեռ վերջնականապես հետ մնաց, հայտնվեց մի ուրիշը՝ միանգամայն աննշան և նույնիսկ չվախեցնող տեսքով, և սկսեց գարշաձայն ծղրտալ.

– Բամբասկո՛տ, բամբասա՛ն: Բոլոր կանայք բամբասան են: Քանի՛քանի անգամ են այս կնոջ մոտ իր ընկերուհիների միսը ծամել: Թող պատասխանի՛:

Հրեշտակը, թռիչքը չընդհատելով, հրեղեն ուսի վրայից անփութորեն ասաց.

– Հանգի՛ստ թող մեզ, դժոխքի բզեզ: Ինքդ գիտես, թե քանի անգամ են նրա ասածով դադարեցվել բամբասանքները, և որքան հաճախ է նա մարդկանց մասին միայն լավը խոսել, երբ իր մոտ նրանց վատաբանել են: Ուզում ես, որ հաշիվդ տեսնե՞մ:

– Ո՛հ, ո՛հ: Երկնքի ճամփան դեմներդ է, հեռացե՛ք և դրան հետներդ տարեք: Միայն թե նկատի ունեցեք, որ նա այդ բանն արել է ոչ թե ըստ ձեր կեղծ բարեպաշտական ուսմունքի, այլ ըստ իր հպարտության:

Ու մենք շարունակեցինք մեր ուղին:

Որոշ ժամանակ անց Պահապանն զգուշացրեց.

– Առջևում որկրամոլության մեղսակայանն է:

– Ա՛յ այստեղ մեղք չունեմ:

Պահապանը թևի տակից նայեց, և ես ձայնս կտրեցի՝ հանդիպելով նրա լրջորեն նախազգուշացնող հայացքին:

Ունացող ամբոխով մեզ շրջապատեցին դեերը, որոնք նման էին բոված խոզամայրերի, սակայն նրանց մեջ կային նաև լղար նմուշներ: Սրանք նիհարություններ հիշեցնում էին գորբաչովյան վերակառուցման (պերեստրոյկայի) վաղ շրջանի բակային կատուններին, բայց այն տարբերությամբ, որ ոմանց տանձի պոչ վզերին կապված էին օսլայած սպիտակ անձեռոցիկներ, իսկ թաթերի մեջ կային դանակ ու պատառաքաղ: Գրեթե բոլորը, և՛ լղարները, և՛ չաղերը, անդադար ինչ–որ բան էին ծամում՝ թքերը թափելով ու երախներից կերակրի պատառներ թափթփելով:

– Կանգնե՛ք, տեղ եք հասել, – հայտարարեց ջոջի տեսքով մի հաստամարմին դե և, թաթերը տարածելով, փակեց ճանապարհը:

– Այս հոգին փորը չի տոզեցրել և համեզ պատառի հետևից չի ընկել: Պատճառը, պետք է կարծել, հիմարությունն ու աղքատությունն են եղել: Բայց կյանքում ոչ մի օր պաս էլ չի պահել:

Ա՛յ քեզ բան: Քրիստոնեական պասեր... Սրան պատասխանելիք իրոք

չունենմ: Սակայն խնդիրը լուծվեց շատ անսպասելի կերպով:

– Պաս չի՞ պահել, – ասում ես: Իսկ ո՞վ է երեք տարի ապրել լոկ բանտային ու գաղութային վճիռով: Ո՞վ էր իր մթերաբաժինը քաղցած բանտակիցներին տալիս ուրիշ կալանավայր տարվելու ժամանակ: Իսկ գաղութից ազատվելուց հետո նա՞ չէր, որ բողոքի հացադուլներ էր անում ի պաշտպանություն խղճի ազատության համար բանտարկվածների: Քրիստոնեական քանի՞ պաս կպարունակի ճշմարտության համար այսքան զրկանք կրելը: Դե ասա՛:

Ուխտա՛յ: Ապրե՛ս, Պաս, այս ամենը մտքովս էլ չէր անցնի:

– Հաշվի չի՛ առնվում, – սկսեցին հիասթափված փնթփնթալ դեերը, բայց Պասս նրանց բազմությունը խաչով դեսուդեն քչեց այնպես, ինչպես սառցահաստ նավն է ջարդում ու ցրում թույլ սառույցը:

Ու մենք առաջ շարժվեցինք:

Ազատագրկման երեք տարիներն ինձ ազատեցին նաև հաջորդ՝ ծուլություն մեղսակայանից: Այստեղ ամեն ինչ անսպասելիորեն շրջվում է: Կարծում էի, թե ծուլերի մեջ առաջինը կլինեմ. ինչ սիրած կամ կարևոր գործով էլ զբաղված լինեի, միշտ պատրաստ էի առաջին իսկ հնարավորություն դեպքում այն թողնել և, հերթական գիրքը ձեռքս առնելով, բազմոցին պառկել: Բայց այդ ամենը թաղվել էր այն ցեմենտի լեռան տակ, որ կրել էի... Իսկի չէի սպասում:

Սակայն գաղութն ինձ սաստիկ ամոթով արեց հաջորդ՝ գողություն մեղսակայանում: Դեերն ինձ ուղղակի թաղեցին վրաս նետած գազարներով, կարտոֆիլների ու սոխերի տակ: Դա այն գողացած բանջարեղենն էր, որը վերցնում էի բանջարեղենի պահեստում աշխատող մեր կալանավորողներին՝ դիմացը մախրկա* տալով:

Գողոնի գնո՞ւմ: Այս մեղադրանքից պաշտպանվեցինք՝ հիշեցնելով քաղցն ու ավիտամինոզ** , որոնց հետևանքներն իրենց զգալ էին տալիս նաև տարիներ անց:

Ինձ ամոթով արեց նաև ինքնահրատը***: Դեերը վրաս թափեցին մաքուր գրելաթղթեր, գրամեքենայի ժապավեններ, գլխիս շուռ տվին

* Ցածր տեսակի ծխախոտ՝ մանրացրած տերևների ու ցողունի ձևով:

** Վիտամինների պակասից առաջացող հիվանդություններ:

*** Ինքնահրատ (սամիզոտ) - ՆՍՀՄ պետական գրաքնության կոմիտեի արգելված հրատա-

պատճենահան թղթի մի ամբողջ բլուր:

– Տեսե՛ք: Այս ամենը հափշտակվել է աշխատավայրից: Հարազատ պետությունից է գողացել. Գո՛ղ, թուցնո՛ղ, իրավապաշտպան կոչվածիս տեսեք:

Ամաչեցի. թուցները՝ թաքուն վերցնելը, գողություն է... Բայց ես հո մեղավոր չեմ, որ ինքնահրատի տարածման պատճառով ընդհանրապես դադարեցրել էին խանութներում պատճենաթուղթ վաճառելը, իսկ գրասենյակային ապրանքներ վաճառողներին ՊԱԿ–ը (պետական անվտանգության կոմիտեն) լիազորել էր հետևելու, թե ովքե՞ր են հաճախ փաթեթներով գրամեքենայի թուղթ գնում: Եվ ոմանք հետևում էին ու մատնում: Եվ քանի՞–քանիսն այսպիսով բռնվեցին: Բայց Պասս ու Հրեշտակա չթողեցին, որ գոնե մի խոսք ասեմ պաշտպանվելու համար: Պասս փարաջայի գրպանից մի բարակ ձեռագիր հանեց ու դեերին ցույց տվեց.

– Այ սա մեքենագրվել է գողացած թղթի վրա և գողացած պատճենաթղթով: Ուզո՞ւմ եք մոտիկից ծանոթանալ այս բնագրին, – ասաց նա և ձեռագիրը բռնած նրանց մոտեցավ:

Գորչավուն նուրբ թերթերը հանկարծ երկնագույն բոցի լույս արձակեցին, և դեերը ցիրուցան եղան.

– Պե՛տք չէ, պե՛տք չէ: Ձեզ բռնող չկա, հեռացե՛ք:

Վա՛յ, հիշեցի այդ բնագիրը: Սուլվեցիկի* բանտի կալանավոր եպիսկոպոսի նամակներն էին՝ ուղղված իր հոգևոր զավակներին: Այն ժամանակ շատ չարչարվեցի Աստվածաշնչից արված մեջբերումներն ստուգելու, եկեղեցական անձանոթ բառերը ճիշտ գրելու համար: Բնագիրը մեքենագրելն ավարտեցի և թեթևացած հոգով հանձնեցի հավատացյալների՝ ընդհատակյա «Մեր համայնքը» հանդեսին: Նույնիսկ մի օրինակ չպահեցի ինձ համար, թեև սովորաբար վերցնում էի վերջին պատճենը:

րակություն 1970-ական թթ.: Արգելված գրականություն տպելու, արտագրելու և տարածելու համար բանտարկում էին (Թարգմ. ծան.):

* Սպիտակ ծովի Սուլվեցիկի կղզում 15-րդ դարում կառուցված վանքային համալիր էր, հոգևոր կենտրոն, բերդ: Խորհրդային իշխանությունն այն դարձրեց բանտ: Նախկին վանականներն իսկույն դարձան կալանավորներ և բերդը կոչեցին «(փեղ) հապավելով» «ЭД» «а» «б» «в» (հատուկ նշանակության Սուլվեցիկի ճամբար) բառակապակցությունը: Սուլվեցիկի հեշտացրեց բոլշևիկների գործը. այլևս կարիք չկար այստեղից-այնտեղից հոգևորականներ բռնել ու մի տեղ բանտարկել: Պատրաստի կային թե՛ բերդը, թե՛ կալանավորները (Թարգմ. ծան.):

Եվ ա՛յ դարմանք, հենց այդ պատիկ էջե՛րը հիմա ինձ օգնեցին: Այդպես է, չես իմանա՞ որտեղ կչահես, որտեղ կկորցնես:

Բարեհաճող կերպով պոկվեցինք հուսախաբւթած սև ոհմակից, ապա, գրեթե կանգ չառնելով, իրար հետևից անցանք մի քանի մեղսակայաններ, որոնցում մանր-մուկեր դեկերը ինչ-որ բաներ էին բղավում նախանձի, ժխտություն, ազահուլթյան, վաշխառություն և ինձ միանգամայն անծանոթ հնոտիահավաքման մասին: Դրանք իմ սիրած մեղքերը չէին, ինչպես ասաց Պապս:

Երբ համարյա հանգստացել էի՝ տեսնելով այդ հաջողությունները, առջևում երևաց ոչ թե մութ ամպ, այլ կարմիր փայլակներ արձակող մի սև հոծ պատ, որը նման էր աշնան վերահաս ամպրոպային գիշերվա: Շրջապատը դարձավ ցուրտ և զարհուրելի:

– Այդ ի՞նչ է գալիս մեզ վրա:

– Հպարտության մեղսակայանը: Ահա այստեղ մեզ համար դժվար կլինի, – մտահոգ ասաց Պահապանը:

Խնդրները գնում է հպարտության համար, գլխներիդ կպչի, հա՛, – մտածեցի ես, – իսկ ամպը գալիս ու գալիս էր դեպի մեզ և հետզհետե ավելի սևանում: Արդեն նկատելի էին դեկերի չարաթուլն ու ռեկերը, արագորեն մոտենում էին նրանց պապղացող գայլային աչքերը, և այնպիսի դղրդոց էր բարձրացել, ասես բարձր տեղից քարեր էին թափվում թիթեղյա տանիքի վրա:

Մենք հայտնվեցինք լորձուկներու ու կապտասև մարմիններից ծեփած մի նեղ միջանցքում, և այստեղ մեզ ընդառաջ ելավ ինքը՝ սատանան: Նա կրկին գեղեցիկ էր և զուգված, բայց հիմա նրա գեղեցկությունը, այսպես ասած, դիվական բնույթ ուներ, և դեմքի արտահայտությունն էլ ոչ մի լավ բան չէր խոստանում. այն դարձել էր գոռոզ ու չարագույժ:

– Ահա և մենք հանդիպեցինք, ինչպես որ խոստացել էի քեզ, Աննա: Տերտերական խղճուկ ծնունդ, այդ քե՞զ չէր, որ ես, բանի տեղ չդնելով ստորին ծագումը, օգնություն ձեռք մեկնեցի: Այդ քե՞զ չէր, որ, ինչպես կորած երեխայի, սիրով հրավիրեցի ինձ մոտ՝ խոստանալով իմ բարձր հովանավորությունը: Սակայն դու մերժեցիր ինձ: Երկրի և օդի տարերքի իշխանի՛ս: Այժմ քեզ վերցնում եմ արդեն ոչ թե որպես դատեր, այլ որպես

խղճուկ ստրկուհու, իբրև դատապարտված կալանավորուհու, և քո գաղտնիք քեզ դրախտ կթվա այն բանի համեմատությամբ, ինչ քեզ սպասում է իմ ԳՈՒԼԱԳ* – ում:

– Ինչի՞ համար ես մտադիր դատել նրան, – հարցրեց Պապս:

– Կարծես թե չգիտես, սուրբիկ: Հպարտության համար, իհարկե:

– Այսինքն՝ այն նույն բանի համար, ինչի համար ի՞նքուք ես երկնքից գահավիժվել:

– Ես հարգում և սիրում եմ հպարտությունը, բայց միայն՝ իմը: Մարդուկների՛ այդ մտածող երկրային բորբոսի հպարտությունից ես պակաս չեմ զգվում, քան քո Տերը, և գոհ եմ, որ կարող եմ դրա համար նրանց պարսավել ու դատել:

– Եթե դատ է լինելու, ապա հարկավոր կլինեն վկաներ, – ասաց Պապս:

– Դատարկ ձևականություն է: Բայց քեզ՝ խաչված ոչնչությունը, տհաճություն պատճառելու համար այնպիսի վկա կներկայացնեմ, որպիսին չեք սպասում: Իմ դատարանում Աննայի դեմ վկայություն կտա... Աննան ինքը:

Այնուամենայնիվ սատանան սիրում էր թատերական տեսարաններ սարքել և դերասանություն անել: Նա կարմիր ձեռնոցավոր ձեռքը թափով վեր պարզեց. խավարի միջից դուրս եկան դեկերը՝ գլուխներին վահանի նման բան դրված, որի վրա ձեռքերը կանթած, կարճից էլ կարճ շրջագրեստով, երկարասրունք և գզգզված մազերով մի պուճուր-մուճուր էակ էր կանգնել: Ես միանգամից չճանաչեցի ինձ. ախր շա՛տ ժամանակ էր անցել: Եվ այդ ծիծաղելի արարածը հանկարծ բարբառում է իմ ձայնով.

– Չեմ հասկանում, ինչպե՞ս կարելի է առհասարակ հաշվի առնել ծնողների կարծիքը: Ես արդեն տասներկու տարեկան եմ, և ինքս կարող եմ լավն ու վատը ջոկել: Իսկ նրանք հետամնաց սերունդ են, քաղքենիներ են և հարմարվողականներ: Նրանց խելքումիտքը միայն աշխատանքն է, ընտանիքը, կենցաղային պահանջմունքները: Ինչի՞ մասին կարելի է նրանց հետ ընդհանրապես խոսել:

Չկարողացա ինձ զսպել և փոթկացի:

* ԳՈՒԼԱԳ (^ , ^) – ուղևորներն տառա-վանկային հապավումն է *° ° Է ° * ° անվանման. լրիվը՝ ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ճամբարների [գաղութների՝ բանտների] գլխավոր վարչություն (թարգմ. ծան.):

– Տեսնո՞ւմ ես, սատանա, այսօր նա ինքն է այն ժամանակվա իր վրա ծիծաղում, – ասաց Պապա: Այնքան էլ մեծ չէ մեղադրանքի պաշարդ, եթե դու մանրանում և երեխաների մեղքիկներն ես հավաքում:

– Այն ժամանակ նա իր վրա ծիծաղել, փա՛ռք ինձ, դեռ չէր կարողանում, – փնթփնթաց իմ ծիծաղից մի քիչ շփոթված սատանան: – Սակայն շարունակենք: Հարգելի պաշտպանին հիշեցնում եմ, որ ըստ այն հիմնարկի կանոնների, որը նա ներկայացնում է այստեղ, երեխաներն իրենց մեղքերի համար պատասխանատու են յոթ տարեկանից սկսած: Բայց ուղղումն ընդունում եմ և անցնում ավելի ուշ ժամանակներ:

Նա նորից վեր տնկեց ձեռքը, և ես լաստակի վրա դարձա գեղեցիկ ու ճաշակով հագնված չափահաս աղջիկ: Մտախոհ նայելով դեպ հեռուն՝ նա բազմանշանակ ու լուրջ կերպով դատողություններ էր անում այն մասին, որ հավատում է մարդու բանականության անսահման լինելուն, ինքնագնահատման իրավացիությունը, և որ մարդու համար բարոյական օրենքը պիտի լինի միայն սեփական խիղճը, իսկ առաջնագույն պահանջումն էր՝ ինքնահարգումն ու ինքնարտահայտումը:

Սատանան ձեռքը կրկին տնկեց, և աղջիկը դարձավ հասուն կին, ճառն էլ՝ ավելի հաստատուն. «Ես վստահ եմ միայն իմ սկզբունքներին... գլխավորը սեփական արժանապատվության զգացումը չկորցնելն է... Այո, ես հպարտանում եմ այլախոհների* շարքին պատկանելու համար, քանի որ նրանց Ռուսաստանի խիղճն եմ համարում...»:

Բարձունքում կանգնած Աննան հասակ էր առնում՝ խոսելը չդադարեցնելով, և, քանի որ նրա ճառերն ինձ լավ ծանոթ էին, ես հիմա էլ պատրաստ էի ստորագրել նրա յուրաքանչյուր խոսքը: Ես ավելի շատ նայում, քան լսում էի նրան. այնուամենայնիվ զվարճալի էր տեսնելը, թե ինչպես եմ մի քանի ըոպեում մեծանալով՝ աղջնակից դառնում հասուն կին:

Լաստակի վրայի Աննան վերջապես լռեց ու անշարժացավ լարվածքը սպառված տիկնիկի պես:

– Դու այս ամենին պատասխանելու բան ունե՞ս, – կամաց հարցրեց պահապան Հրեշտակս:

* Այլախոհ, այլադավան (*Ересь* լատ. անհամաձայն, հակասող) – խորհրդային գաղափարախոսությունը խորթ, օտար մտածողություն ունեցող: 1970-80-ական թթ. այլախոհներին բանտարկում և ԽՍՀՄ-ից վտարում էին իշխանությանը քննադատելու համար (թարգմ. ծան.):

– Իսկ պե՞տք է պատասխանել: Ձե՞ որ նա հպարտություն ոչ մի մեղադրանք դեռ չի ներկայացրել, ինչպես որ խոստացել էր:

– Ի՞նչ է, ոչ մի բան չե՞ս հասկանում: Այդ բոլոր դատողություններդ, – նա գլխով ցույց տվեց լաստակի վրա անշարժացած կերպարանքը, – հենց քո հպարտության ապացույցներն են:

Նայեցի Պահապանին. տխուր էր և դեմքն իմ կողմը չէր դարձնում: Իսկ սատանան ցնծում էր: Տարօրինակ է, մի՞թե երեքն էլ հպարտություն են տեսնում ժամանակակից հասարակ մտավորականի այդ հայացքների մեջ: Ի՞նչ մի արտասովոր բան լսեցին:

Մինչ այսպես տարակուսած մտածում էի, մութ միջանցքը երկու կողմից սկսեց նեղանալ, և ես զգացի, որ դեկերի իրաններից կոպտորեն ծեփված այդ պատերից ինձ վրա մի դաժան ցուրտ է փչում: Սկսեցի փայտանալ, Հրեշտակից ու Պապից բռնած մատներս ցրտից իրենք իրենց բացվեցին: Ապա մի բիրտ թաթ հետևից ճանկեց ծոծրակս և ինձ Հրեշտակից ու Պապիցս հեռու քարշ տվեց: Փորձեցի օգնություն կանչել նրանց, բայց ձայնս չլսվեց, և Հիարողացա ծպտուն իսկ հանել:

Հենց որ անողորմ ուժն ինձ պոկեց իմ պաշտպաններից, բոլոր կողմերից իսկույնեթ վրաս փակչեցին առաձգական սև մարմիններ: Դրանք գլուխս փաթաթեցին բամբակե թաց վերմակի պես բանով, և ես այլևս չէի կարողանում՝ ո՛չ տեսնել, ո՛չ լսել, ո՛չ ասել: Սարսափով զգացի, թե ցուրտն ինչպես է թափանցում գիտակցությանս մեջ և սառեցնում այն: Ինձ փակչած բաբախող զանգվածը գնալով խտանում էր, և խտանալու հետ աղոտանում էր գիտակցությունս:

Եվ այս պահին հիշեցի Պապիս խոսքը. «Մի՛ վախեցիր, աղոթի՛ր»: Փորձեցի աղոթել, բայց Հիարողացա հիշել, թե ինչպես և ում պետք է աղոթեմ: Այդժամ ամբողջ ուժով լարեցի մարդ գիտակցությունս և ջանացի հիշել Մոսկվայի մեր բնակարանում փակցված Աստվածամոր «Կազանյան» պատկերը: Մի ժամանակ ամուսինս պատահաբար այն գնել էր ինչ–որ ծայրագավառում, ուր կինոնկարահանելու էր գնացել, և կախել էր պարզապես սենյակին տեսք տալու համար: Ոչ մեկս այդ պատկերի առաջ չէր աղոթում: Ես ջանացի հիշողությանս մեջ արթնացնել Աստվածամոր դեմքը և մտովի աղաղակեցի առ նա. «Օգնի՛ր ինձ, խնդրո՛ւմ եմ, Աստծո Մայր»:

Նույն վայրկյանին գլուխս ազատվեց, թեպետ մարմինս առաջվա պես պատված էր դեւերով: Հիմա կարողացա աղոթքս կրկնել նախ՝ խեղդված շշուռնով, հաղթահարելով կոկորդիս, լեզվիս ու շուրթերիս շրջանի սոսկալի ձգվածութունը, և ապա՝ լսելի ձայնով մի կերպ դուրս մղելով վանկերը. «Օգնիր...»:

Նողկալի սառն արարածները թուլացրին մարմինների օղակը և վրայիցս ցած սողացին: Աղոթքս շարունակեցի կրկնել առանց դադարելու: Նրանք հետ քաշվեցին, բայց չէին հեռանում, այլ կողքիս սպասողաբար շարժվում էին: Հիմա կախվել էի դրանց մարմիններից ծեփված կենդանի գլանի կենտրոնում, որի պատերը պատրաստ էին ամեն ակնթարթ սեղմվելու և ինձ վերջնականապես կլանելու:

Այդժամ որոշեցի անել կյանքում ոչ մի անգամ չարածս բանը՝ խաչակնքվել: Աջ ձեռքիս մատներն իրար միացնելով՝ ուզեցի ճակատիս մոտեցնել, բայց ձեռքս չենթարկվեց: Այդժամ ձախ ձեռքով աջիս արմուկը բռնեցի և երկու ձեռքերիս ուժերով մատներս մի կերպ հասցրի ճակատիս մեջտեղին, իսկ հետո իջեցրի փորիս մեջտեղը: Աջ ձեռքս դեպի աջ ուսս բարձրացնելը ավելի դժվար էր, սակայն դեպի ձախ տանելն արդեն այդքան դժվար չէր, և ես դա արեցի: Ինձ հաջողվեց խաչակնքվել:

Գլանի պատերը մուգ կարմիր բոցեր արձակեցին և իրարից հեռացան, գլխավերևումս հայտնվեց երկնքի գորշ շրջանակը: Գլուխս վեր բարձրացրի և, շարունակելով անկանգ խաչակնքվելը, անընդհատ աղաղակում էի. «Աստծո Մայր, փրկի՛ր ինձ, փրկի՛ր, փրկի՛ր...»:

Չգիտեմ, թե որքան ժամանակ էի այդպես գոռում՝ սիրտ չանելով թեկուզ մի ակնթարթ լուել, երբ սարսափելի օղակը հանկարծակի սկսեց պտտվել շուրջս՝ մի զարհուրելի ոռնոց հանելով, որն ուժեղանում էր պտույտն արագանալու հետ: Ոռնոցը ոչ միայն խլացնում էր ձայնս, այլև թափանցում էր ներսս և սաստիկ ցավ առաջացնում: Այդուհանդերձ շարունակում էի գոռալ և վախից խաչակնքվել արդեն երկու ձեռքով: Ինձ թվում էր, թե ժամեր են անցել այն պահից, երբ սկսել էի աղոթքս աղաղակել...

Եվ հանկարծ հեռվից, շատ հեռվից ականջիս հասավ մի երկար ու զուլալ հնչյուն, ընդամենը մի նոտա՝ երգված անծանոթ քրանջելի ձայնով:

Դեւերի ոռնոցն իսկույն կտրվեց, իսկ նրանց մարմիններից կազմված

պտտվող գլանը սկսեց հալվել՝ ցրիվ գալով ու վերածվելով առանձին-առանձին արարածների: Մի վայրկյան անց զարմանահրաշ ձայնը նորից հնչեց, և ես թեթևացած տեսա, որ դեւերը սկսեցին հեռանալ և զատ-զատ հալվել մառախուղի մեջ: Այնուհետև ձայնը հեռվում լուեց:

Չէի հասցրել շուրջս նայել, երբ կողքիս հայտնվեցին Պապս ու Պահապանս: — Խեղճքս, — բացականչեց Պապս՝ ինձ սեղմելով կրծքին: Նրա դեմքն արցունքոտ էր:

— Դու ինձ համար աղոթում էիր, Պապ, — հարցրի ես: — Ինձ քիչ է վիճակվել այդպես աղոթել մեկի համար: Դու հասկացա՞ր, որ քո հպարտութունը քիչ էր մնացել քեզ կործանի: — Պետք է հիմա նրան տանջել, — ասաց Պահապանը, — փրկեց իրեն, և գոհ լինենք:

— Չփրկեց, այլ փրկվեց Աստծո Մոր միջոցով, — ուղղեց Պապս: — Մե՛ծ է Աստվածամոր ողորմածութունը թշվառ մարդկանց հանդեպ, — բացականչեց Հրեշտակը և խաչակնքվեց:

Ես ուշադրությամբ նայում էի, թե ինչպես է ճիշտ արվում այդ: Մեկ էլ տեսար նորից պետք եկավ:

— Մեզ այլևս դեւերի հարձակումներ չե՞ն սպառնում, — հուսով հարցրի ես: — Առջևում էլի՞ մեղսակալաններ կան:

— Բավականաչա՛փ: Եվ ոչ մի հողի դրանցից չի ազատվի, մինչև չանցնի բոլորի միջով՝ առաջինից մինչև վերջինը, եթե, իհարկե, ճանապարհին դժոխք չզգցվի: Միայն սրբերն են դրանց միջով անկանգ թռչելով անցնում: Իսկ մենք միայն կեսն ենք անցել, — ասաց Պապս: — Մենք դեռ կռիվ ենք տալու դեւերի հետ:

Նա ճիշտ դուրս եկավ: Ապրած սարսափից դեռ ուշքի չէի եկել, երբ դեւերը նորից վրա տվին՝ ինձ մեղադրելով բարկություն, ցասման, հիշաչարություն մեղքերի համար: Սակայն այստեղ նրանք չկարողացան վրաս գործ սարքել, որովհետև կենդանությունս ժամանակ չափազանց թեթևամիտ անձնավորություն էի, հեշտությամբ ներում էի վերավորանքները և շուտ մոռանում դրանք, իսկ հուժմորի զգացումն ինձ օգնում էր բոլոր վեճերի մեջ նախ և առաջ տեսնել իմ մեղքը:

Ընդորո՞ւմ ինձ շատ օգնեց պահապան Հրեշտակս. նա դեւերին ներկա-

յացրեց մի ամբողջ կույտ դատարկ «բարի գործեր», օրինակ՝ վախճան-ված պաշտոնակցիս ընտանիքին աշխատավարձս տալը, աղքատի բուռը վերջին ուղբիս խցկելը: Որքան էլ տարօրինակ է, այդպիսի մանրուքները այդտեղ հարգի էին: Ինձ օգնեց նույնիսկ ամուսնյակիս անհավատարմութունը ներելը. հո չէի՞ բաժանվելու: Հրեշտակն այդ բանը կարծես թե խոնարհություն կոչեց:

Ապա հրամայեցին հիշել ինձ վիրավորած մարդկանց անունները. փորձեցի, բայց հետո ձեռքս թափ տվի՝ չեմ հիշում և վերջ, ինչ ուզում եք ինձ արեք: Էլ չխոսեցին և բաց թողեցին:

Իսկ այն բանի մասին, թե ինձ ինչ էր սպասում հաջորդ մեղսակայանում, մինչև այսօր էլ սարսափում եմ հիշել:

– Առջևում սպանության մեղսակայանն է, – հայտարարեց Հրեշտակը:

– Թուչելով կանցնենք, – վստահեցրի նրան՝ նախորդ հաջողություններից թեև ավորված: – Հավատա՛, կյանքում ոչ մեկին չեմ սպանել՝ չհաշված ճանճերն ու մոծակները:

– Կարող են ճանճասպանության գործ էլ վրադ սարքել, կատակ մի անիր, այդպիսի բան էլ է պատահել, – խոթողեց Պապս: – Սա իրո՞ք մեղք չունի, – հարցրեց նա Հրեշտակին:

– Ունի՛ – կարճ պատասխանեց Պահապանը: Պապս կշտամբանքով ինձ նայեց և աջ ձեռքով բռնեց վզի խաչը:

Մեզ արդեն ընդառաջ էր սողում հերթական դարչահոտ ամպը: Մուսլորեն քմծիծաղող դեերը զգեստավորված էին ծաղրանկարային բժշկական խալաթներով ու մոմլաթե արյունոտ գոգնոցներով:

– Մեղադրվում է իր ուստր Ալեքսանդրին և երկու դուստրեր Տատյանային ու Անաստասյային սպանելու համար, – հանդիսավորապես արտասանեց գլխավոր դեեր և վեր բարձրացրեց արյունոտ թաթերը:

– Այս ի՞նչ բարբառանք է, – ճչացի ես: – Երբեք երեխաներ չեմ ունեցել: Ես չսկսեցի նրանց բացատրել, որ տասնութ տարեկանում հղիացել եմ իմ տարիքի փսյնքոտ սիրեկանիցս և արհեստական վիժում եմ արել, ինչի պատճառով այլևս չեմ կարողացել երեխա ունենալ:

– Ալեքսանդրին հիմա քեզ կներկայացնենք, իսկ Տատյանան ու Անաստասյան պետք է աշխարհ գային ըստ քո Տիրոջ մտահղացման,

բայց դու ըստ քեզ տնօրինեցիր:

Արյունոտ խալաթներ հագած դեերը ինձ խեցին Հրեշտակիս ու Պապիս ձեռքից և միգամած միջանցքներով ինչ–որ տեղ քարշ տվին՝ ծաղրաբար մոթմոթալով. «Հիմա որդյակի՛դ կտեսնես, սիրող մայրիկ: Ա՛յ թե կուրախանաս»:

Հայտնվեցինք հախճասալապատ մի մեծ դահլիճում, որի կենտրոնում բետոնե ավազան կար: Դրանից գոլորշի էր բարձրանում՝ սիրտ խառնող քաղցրավուն հոտ արձակելով: Ես չեմ կարող և չեմ սկսի նկարագրել աչքիս առաջ բացված այն զարհուրանքը, երբ դեերն ինձ քաշելով մոտեցրին ավազանի եզրին և ստիպեցին մեջը նայել:

... Երբ ուշքի եկա, տեսա վրաս կռացած Պապիս դեմքը: Պահապանս լուռ կանգնած էր կողքին:

– Պետք է էլի համբերենք ու դիմանանք, Աննուչկա, – շշնջաց Պապս:

Այո, այդ դեռ վերջը չէր:

– Թույլ տվեք ձեզ հրավիրել, տիկին, դիտելու ձեր չկայացած կյանքը, – ծաղրանքով բարբառեց դեեր և վեր տնկեց արյունաթաթախ թաթը:

Մեր առաջ մի սպիտակ պաստառ հառնեց՝ վրան Պիտերի (Պետրոգրադի–թարգմ.) Իգմայլովյան պողոտայում գտնվող ծանոթ հինավուրց գեղեցիկ տունը: Մի ժամանակ դա Կադետական դպրոցն էր, որտեղ սովորել է Լերմոնտովը, իսկ խորհրդային վարչակարգի օրոք այդտեղ բացեցին ծննդատուն՝ վիժարանով (աբորտարիում) հանդերձ: Պատկերը մոտենում էր, և ես տեսա մի վախեցած երիտասարդուհու, որը սեղմվել էր իրենից մեծ մի կնոջ: Հա, հիշում եմ մայրիկս էր ինձ տարել վիժում կատարելու: Տատանվում էի, բայց ինքս ինձ սիրտ տվի և վճռականորեն բարձրացա աստիճաններով ու անցա լայնաբաց դռան միջով:

Սակայն այս ֆիլմում այլ կերպ էր ներկայացված. «Ես իմ երեխային չեմ սպանի», – բղավեց աղջիկը, որը ես էի, և հեռու փախավ սոսկալի առանձնատնից: Մայրս ողբալով ու լալով վազում էր հետևիցս. «Դու կյանքդ կխորտակես: Խեղքի արի, դատրիկա: Պիտի մի քիչ դիմանաս, որ ազատ լինես»: Բայց ես համառորեն հեռու էի գնում:

Եվ ահա պաստառի վրա սկսեց հոսել իմ միանգամայն ուրիշ կյանքը: Ես տղա ունեցա: Անունը Ալեքսանդր դրեցի: Անպատասխանատու սիրե-

կանս անսպասելիորեն ուրախացավ, որ տղա ունի, և խելքի եկավ: Մենք ամուսնացանք, երկուսս էլ ավարտեցինք մանկավարժական ինստիտուտը: Մեզ ուղարկեցին դասավանդելու դավառական զինչերթիկ դպրոցում: Մի մեծ գետի ափին գտնվող փոքրիկ քաղաքում ունենք Հարմարավետ տուն, այգի ու բանջարանոց, շուն ու կատու: Ապրում ենք խաղաղ ու երջանիկ: Ծնվեցին ևս երկու երեխաներ՝ Տանեչկան և Նաստենկան: Տղաս Հավատաց Աստծուն և դարձավ քահանա՝ հայր Ալեքսանդր: Այս մյուս կյանքում մայրիկս ապրում էր մեզ հետ, պահում էր երեխաներիս, իսկ հետո՝ թոռներիս: Սաշան՝ Ալեքսանդրը, ամուսնացավ մի սուսիկ-փուսիկ ու անուշիկ աղջկա հետ: Ունեցան չորս երեխա՝ երկու տղա ու երկու աղջիկ: Սաշենկայի ազդեցությամբ բոլորս, մայրիկս էլ, հետզհետե հավատացյալ դարձանք: Մայրիկս առողջ էր:

Ֆիլմը կանգ առավ այն դրվագում, որտեղ մեր ողջ ընտանիքը երեկոյան թեյ է խմում կլոր մեծ սեղանի շուրջը, իսկ մեր հետևի պատից կախված է պոկոպի օրացույցը, որի վրայի տարեթիվն է՝ 1990 թվականի հուլիսի 21. Իրական կյանքում մեռնելուս օրն է:

— Շարունակություն չի՞ք, — ծաղրանքով հայտարարեց դուրս:

Եթե իմ կիսաթափանցիկ կրծքում բաբախելիս լինեք կենդանի սիրտ, կպայթեք հուսահատությունից և խորտակված կյանքի, ավելի ճիշտ՝ կյանքերի համար հուսահատական ափսոսանքներից: Տե՛ր իմ: Եվ այս բանը մեր միջավայրում կոչվո՞ւմ էր՝ «մի քիչ դիմանալ և ազատվել»:

— Նա բավականաչափ պատժվել է, — ասաց Պահապանս: — Դու տեսնում ես նրա արցունքները:

— Դժոխքը արցունքներին չի՞ հավատում, — հուհուց դուրս: — Լացն էլ իր համար է, ինքն իրեն՝ թշվառին է խղճում ու ափսոսում...

— Ծիշտ չէ, — պաշտպան կանգնեց նաև Պապս, — նա ողջ կյանքում զղջացել է արածի համար:

— Նա զղջացե՞լ է: Այդ ե՞րբ և ո՞ր եկեղեցում:

— Զղջացել է, — հաստատեց Հրեշտակը: — Նայի՛ր, դու: — Պահապանը ձեռքը բարձրացրեց, և պաստառը կրկին հայտնվեց մեր առաջ: Ես ճանաչեցի իմ ու Գեորգիի ապրած տան մոտի մանկապարտեզը: Դրա հրապարակում խայտում, թռչկոտում են մանուկները, իսկ ցանկապատի

հետևում, թիերի ստվերի մեջ կանգնել եմ ես ու թաքուն նայում եմ նրանց և լուռ ու հուսալիտուր արցունք թափում:

Տեսարանը փոխվեց: Ես կանգնած եմ ամուսնուս առաջ և զայրույթով հանդիմանում եմ հերթական դավաճանություն համար: «Նա հայտնեց, որ ինձնից երեսայով է մնացել», — ասաց Գեորգին՝ աչքերը կախելով: Ես սմքեցի և փլվեցի բազմոցի վրա: Փոքր-ինչ լուրջ հետո ասացի. «Գնա ու երջանիկ եղիր: Երեխան ամեն ինչից կարևոր է»: Պաստառը մարեց:

Այդպես էլ եղել էր: Գեորգին մի քիչ վազվզեց ու հետ վազեց: Լինելիք երեխայի մասին այդ անգամ այլևս չխոսեցինք: Չգիտեի նույնիսկ՝ ինչն՞ է ավարտվել նրանց հանդիպումը, ծնվե՞լ է երեխան, թե ոչ: Գեորգին կտրականապես հրաժարվում էր հետո այդ մասին խոսելուց: Սակայն, աչքս վախեցած լինելով, այդուհետև սարսափով էի թողնում, որ կինոարձափի դնա: Նրա նկարահանած յուրաքանչյուր ֆիլմ (Գեորգին կինոնկարիչ էր) ինձ համար ողբերգություն էր. իսկ եթե հանկարծ նոր սիրավեպ սկսի, և իրոք երեսա ծնվի: Մի՞թե այդ երջանկությունից նրան զրկելու իրավունք ունեմ: Չէ՞ որ հաստատ որոշել եմ. երեխա լինի՝ բաց կլթողնեմ:

Վտարանդություն մեջ մի քիչ խաղաղվեցի. ոռոսալեզու ծայրագավառում սիրարկածներ չես ծավալի, եթե մտադիր ես դրանք թաքցնել: Բայց ահա վտարանդիներին սկսեցին հայրենիք թողնել, Գեորգին էլ սկսեց հաճախ Մոսկվա գնալ՝ իբր թե ոռոսաստանյան կինոյի հետ կապերը նորոգելու և վերականգնելու նպատակով: Կապեր նորոգելը հասկանալի բան է, բայց արդյո՞ք դրանք «կինոյական» են...

— Սրա մարդը զգուշ էր քայլում, բայց ոտը մեկ-մեկ սոթ էր տալիս, — քմծիծաղեց դուրս: — Լա՛վ: Առեք ձեր դմբոյին ու չքվեք: Ներկայացված մեղքի համար այս կինոն արդեն պատժվել է: Սակայն առջևում նրան մի բան էլ է սպասում: Այ դրանից չի պրծնի:

Առաջ ընթացանք: Ես շարունակում էի ափսոսալ ու ողբալ իմ չկայացած գեղեցիկ կյանքի համար, որտեղ ո՛չ բանտ կար, ո՛չ տարագրություն, ո՛չ էլ իրավապաշտպանական գործունեություն, այլ կար անհամեմատ ավելի կարևոր ու հարկավոր բան՝ երեխաներ և եկեղեցի: Ո՛չ Պապս, ո՛չ Հրեշտակս ինձ չէին մխիթարում: Դե ինչն՞ վայստեղ կմխիթարես...

Առջևում մառախուղը թանձրացավ, և դրա մեջ նշմարվեց, ինչպես որ ինձ թվաց, վարդագույն քարից շինված մի բարձր կամար, որը զարդարված էր քանդակներով: Կամարի ճակատին գույնզգույն կրակներով գրված էր՝ «Բարի գալուստ», իսկ խորքից նողկալի երաժշտություն էր լսվում:

Մոտեցանք կամարին: Ամոթից կարկամեցի. այն կազմված էր սեռական գործողություններ կատարող տղամարդկանց ու կանանց կենդանի մարմիններից: Բայց սիրեկանների դեմքերը աղճատված էին տառապանքից ու ցավից, բերանները բացուխուժի էին անում անձայն ճիչով, աչքերը դուրս էին պրծել անտանելի ցավից: Իսկ կամարի պատերից արցունքի վտակներ էին հոսում:

– Պոռնկություն մեղսակայանն է, – հայտարարեց Պապս:

– Այ այս մեղքը չունեմ, – փորձեցի հանգստացնել նրան: – Ես, իհարկե, մերձավոր հարաբերություններ ունեցել եմ տղամարդկանց հետ, բայց դա անկեղծ ու մաքուր զգացմունք է եղել:

Պապս չգիտես ինչու չուրախացավ:

– Ահա թե ինչ, – ասաց նա՝ վզից հանելով խաչը, – ես ավելի լավ է մնամ դարպասի այս կողմում և աղոթեմ քո ազատվելու համար: Խաչը կպահեմ ձեռքումս, իսկ դու բռնիր խաչի շղթայի ծայրից և ջանա ձեռքիցդ բաց չթողնել: Ես կփորձեմ քեզ այնտեղից դուրս քաշել, եթե պահպանը չկարողանա քեզ դեբրից խլել:

– Բայց շղթան կարճ է, – տարակուսեցի ես:

– Հոուսանք, որ քո մաքուր սիրտ մեջ շատ հեռու չես գնացել, այլպես շղթան իրոք կարող է կարճ լինել:

Կամարի տակից պարելով դուրս թափվեց լրիվ տկուր դեբրի ու դեռուհիների մի ընկերախումբ: Մինչ այդ իզական սեռի պիղծեր չէի տեսել: Թերևս էգերը արուններից ավելի գարշելի էին:

– Համեցիր, ջանիկս, մեր տաքուկ տեղը: Մտի՛ր, մի՛ ամաչիր: Այստեղ չես ձանձրանա, այնպիսի՛ բաներ կտեսնես որ...

Պահապանի հետ մտա կամարի տակ: Աներևակայելի ժխոր էր: Փնթի ներկոտած տոնավաճառային տաղավարներ, վայրենի երաժշտություն, լկտի մակագրություններով ցուցանակների վետիտացող կրակներ: Տղա-

մարդկանց ու կանանց խառնագոչ ամբոխը փոխառփոխ պարում էր դեբրի հետ, խմում էր, խժուում, անընդմեջ գոռգոռում և բուրբի աչքի առաջ խառնակվում էր ամենասանձարձակ կերպով: Ընդհանուր մեղքի մեջ թավավող նողկալի գույգերն ու խմբերը սրտխառնուք էին առաջացնում, բայց առավել զզվելի էին դեբրի ու դեռուհիների հետ խառնակվողները: Գլորվելով մոտ վազեց մի ճարպակալած տկուր դեռուհի՝ նման՝ շնաձկան երախով դողոշի, հագին (ոտքերի՞ն, թե՞ թաթերին)՝ ահուելի հաստ ներբաններով երկարածիտ ոտնամաններ: Իր թաղանթավոր թաթով նա շրմփացրեց հետույքիս և ուրախությունը գոռաց:

– Նո՛ր ապրանք է ստացվել: Լավիկն է... Դե ինչ, մեզ մոտ կամավո՞ր ես մնում, թե՛ ոնց:

– Թե՛ ո՞նց:

– Ի՞նչ խնդիր ունեք այս կնոջ հետ, – հարցրեց Պապս Դողոշին:

– Այդ ե՞ս: Ոչ մի: Թճած ունեմ վրան: Կսպասարկեմ և ցտեսություն:

Նա մեզ մոտ է ընկել որպես պոռնկուհի, իսկ իմ մասնագիտացումը լեսբոսուհիների* գծով է: Բայց այդ քնքուշիկներն այսօր քիչ են, իսկ շարքային պոռնկուհիներն այնքան շատ են լցվել, որ մեզանում լարված վիճակ է ստեղծվել կադրերի քչություն պատճառով: Եվ ահա ինձ նետել են, որ թերակատարումը վերացնեմ: Այսպես, հիմա արագորեն կհաշվենք սրա մարդկանց, իրեն էլ կդարսենք հետները և կուղարկենք ուր որ պետք է:

– Այստեղ հաշվելու և դարսելու բան չկա, – ասացի ես, սիրտ առնելով այն բանից, որ դեռուհին նման էր գաղութային որձ լեսբոսուհիներին, որոնց ներկայությունը տանել չէի կարողանում, սակայն չէի էլ վախենում: – Ես մի մարդ եմ ունեցել:

– Հա՛ էլի՛ մի: Շատ ենք տեսել քեզ պես սուտ միանգամիկների: Իսկական միամուսինները օղաքարի պես են մեր մոտով թռչում: Հիմա

* Լեսբոսուհի՝ սոցիոմական զգրելի ակտի՝ համասեռամոլական (հոմոսեքսուալիզմի) կնոջական տեսակով բռնված: Այն է, երբ կինը սեռական հարաբերություն է ունենում կնոջ հետ: Բառը ծագել է հեբրեական ծովում գտնվող Լեսբոս կղզու անունից: Այստեղ հույն հուշակալոր բանաստեղծուհի Սաֆոն (Ք.ա. 7-6-րդ դդ.) ազնվագրամ աղջիկների խմբակ է ունեցել, որոնց սովորեցրել է երաժշտություն, երգ ու պար, իրար հետ սեռական հարաբերություն ունենալ: Գրել է կանանց նվիրված սիրային բանաստեղծություններ (թարգմ. ծան.):

մենք քո մարդերին կհաշվենք, կհամրենք ու կդարսենք...

Նա հովհարի պես բացեց մի կապուկ պոռնկագրական բացիկներ, որոնց վրա նկարված էի սիրեցյալներին հետ: Ամոթից ուզում էի երկնքի տակն անցնեմ: Պահապան Հրեշտակս կանգնել էր երեսը շրջած:

– Ահա՛ իմ մարդը, – բացականչեցի ես՝ ցույց տալով այն լուսանկարը, որտեղ նկարվել էի Գեորգիի հետ:

– Իսկ մնացածները, ինչ է, քո՞նր չեն:

– Դրանք սիրաբանություններ էին, հրապուրանքներ:

– Ուրեմն դու դրան էդպես ես ասում, հա՞: Բայց դա բանը չի փոխում: Թող քեզ հայտնի դառնա, որ տղամարդու և կնոջ ամեն մարմնական միությունն արդեն ամուսնություն է, այսինքն՝ մարմնի ու հոգու միաձուլություն*՝ եվ ընդորո՞ւմ՝ ընդմիշտ: Տե՛ս:

Դողդոջը քթիս դեմ արեց կանաչ թաթը, ու ես դրա վրա մի սպիտակ վարդագույն տկլոր մատնաչափիկ տեսա:

– Ծանաչո՞ւմ ես:

Ուշադիր նայեցի. մատնաչափիկը ես էի երիտասարդ ժամանակ:


– Իսկ հիմա այստե՛ղ նայիր: – Դողդոջի մյուս ափին կանգնած էր առաջին սիրեցյալիս մատնաչափ կերպարանքը: – Այժմիկ որոշեցիր գու՛գավորվել, հոպպա՛, – նա ափերը շրխկացնելով իրար միացրեց, և մատնաչափիկները միավորվեցին սիրո գործողությունը:

Դա նույնիսկ գեղեցիկ էր. չէ՞ որ երիտասարդ էինք և քնքշությամբ լեցուն:

– Հիմա, երբ հագեցել ու իրարից կշտացել են, կարծում են, թե կարող են ցվրվել ու նորից իրենց համար առանձին մարդ դառնալ: Բայց տես որ այդպես չէ՛: – Նա ափերն իրարից հեռացրեց, սակայն ամեն մեկի վրա կանգնած մնաց սերտաճած կրկնակ մարմնիկը:

– Վա՛յ, – բացականչեցի ես:

* Ինչպես որ չի կարելի հավատալ չարքի որևէ խոսքին, այնպես էլ սրան: Նա ստում է անգամ այն ժամանակ, երբ ճիշտ բան է ասում, որպեսզի մոլորեցնի ու համոզի: Խաբելու պես հնարքը բանեցնող մարդիկ էլ կան: Ըստ Ուղղափառ եկեղեցու՝ ամուսնությունը տղամարդու և կնոջ սիրով միավորվելն է ընտանիք ստեղծելու նպատակով: Սոսկ ցանկատարությունը բավարարելու համար կապը ինքնին պոռնկություն է: Մարմնի և հոգու ոչ մի ինքնաբերական՝ մեքենական միաձուլում չի կատարվում: Մեկ մարմին լինելը հոգևոր գործընթաց է, ինչի համար հարկավոր են աստվածային շնորհի աջակցությունը և ամուսինների հոգեկան ուժերի գործադրումը ողջ կյանքի ընթացքում (թարգմ. ծան.):



– Սիրունիկիդ առայժմ դեն քշենք աչքներին առաջից, թող միառժամանակ Ֆոֆոա, – Դողդոջը մի ափից զզվանքով թափ տվեց կրկնակ մարմնիկը: – Իսկ հիմա երկրորդ արարը:

Դատարիկ ափի վրա հայտնվեց երկրորդ տղամարդուս՝ այն ժամանակ հայտնի երիտասարդ բանաստեղծի մարմնիկը: Դա ուսմանտիկական կարճատև կապ էր: Նա ինձ նվիրված մի քանի բանաստեղծություններ գրեց, որոնք հետագայում մտան իր բոլոր ժողովածուների մեջ: Բայց այն, ինչ հիմա կատարվում էր դեռևս թաթի վրա, անտանելի գարշանք էր. իմ առաջին տղամարդուն սերտաճած մարմինս կենակցում էր երկրորդի հետ: Ապա դեռևս նորից շրխկացրեց ափերը, և ես սերտաճած դուրս եկա արդեն երկու տղամարդու հետ:

– Եվ այսպես է ամեն անգամ. միանում եք ժամանակավորապես, իսկ հոգով, ուզեք թե չուզեք, սերտաճում եք ընդմիշտ: Ա՛խ, մեկ էլ, մի անգամ էլ, շատ ու շատ անգամ էլ (« 1, , 0 ! 0 a - a ! »)*: Դե, ահա ամուսնյակիդ էլ հասանք...

Ընդհանուր իրանով բազմազուլուս, բազմաձեռն ու բազմոտն փոքրիկ հրեշը սողում էր նրա ափի վրայով, գլուխներն ինչ-որ բան էին գոռում իրար վրա, ձեռքերը ծվատում էին միմյանց մարմինները՝ փորձելով անջատել իրենցից:

– Բայց... չէ՞ որ սա պատկերավոր, խորհրդանշանային բան է. այո՞, – սարսափից կմկմացի ես:

– Ոչ մի խորհրդանշան էլ չկա, մեզանում ամեն ինչ արվում է առանց խաբեություն: Բայց նախքան այն պատկերը ստանալը, որը վաստակել ես անառակ կյանք վարելով, քեզ կընդունի մեր իշխանը: Շնորհ արեք, ձերդ խավար բարձրություն, նա պատրաստ է օգտագործման համար:

Դողդոջը չուվեց՝ երախը խոնարհելով չարագուժորեն փայլատակող կայծակներով պատված արնագույն ամպի առաջ: Ամպը բացվեց, և միջից հայտնվեց ժպտացող սատանան: Նա մերկ էր, և նրա մուգագուրջ մարմինը ներկայացնում էր ամենաայլանդակ ցանկատարություն մի պատկեր:

– Դե, արի մոտս, իմ փոքրիկ կամակոր: Արի միաձուլվենք հիազմայ-

* Խոսքը վերցված է գնչուական երգից: Իր երգերից մեկում այս ուսուրեն կրկնում է Շարլ Ագնավուրը (թարգմ. ծան.):

լանքի՝ էքստազի մեջ և քո երկու սուրբիկներին ցույց տանք մեր առա-
վելութունը:

– Պահապան, – գոռացի սարսափահար:

– Մի՛ չարչարվիր, նա քեզ արդեն չի լսում: Նորին մաքրութունը
բարեհաճել է ծլկել այստեղից, նրա հրեշտակային քթիկը չի դիմացել
այստեղի զգայագրգիռ բույրին: Դե, արի քո սիրող հայրիկի մոտ:

Ես հետ քաշվեցի նրա մեկնած թաթերից և զգացի, թե ձեռքիս մեջ
ինչպես ձգվեց Պապիս խաչի շղթան:

– Բա՛ց թող խաղալիքդ, – գոռաց սատանան և մի քայլ արեց դեպի
ինձ:

Վայրկյան իսկ չհասպաղելով՝ ձախ ձեռքով շղթան ճանկեցի աջովս
բռնած հանգույցից հեռու և շղթայի ազատ ծայրով խփեցի սատանային:
Շուրջս մոռնաց դեկերի մի ողջ «երգչախումբ», բայց շղթան էլ միաժամա-
նակ այնպես թափով ձիգ տվեց, որ ինձ մի ակնթարթում քաշեց ամպի մի-
ջից, ձգեց կամարի տակով և դուրս շարտեց: Վերստին հայտնված Պահա-
պանս սրընթաց թռավ հետևիցս՝ հրեղեն թևերով ինձ պատսպարելով
հնարավոր հետապնդողներին:

Պապս, ոտքերը դատարկութանը հենած, կանգնել էր կամարի դիմաց
և ամբողջ ուժով քաշում էր շղթան՝ երկու ձեռքով սեղմելով շողշողուն
խաչը: Հենց որ հայտնվեցի նրա կողքին, փրկարար շղթան դարձավ սովո-
րական ոսկե շղթայիկ, և Պապս այն իսկույն հագցրեց պարանոցին: Երկու
կողմից բարձրացնելով ինձ՝ Պապս ու Պահապանս հեռու տարան պիղծ
դարպասից:

Երբ շատ թե քիչ ուշքի եկա, նրանք ինձ նախազգուշացրին, որ
առջևում մնացել է վերջին մեղսակայանը՝ անգթութան կայանը: Ինքս
ինձ խորհեցի, թե դրա միջով սրընթաց կանցնե՞նք, բայց բարձրաձայն
ոչինչ չասացի: Եվ ճիշտ արեցի:

Երբեք մոլորացիկի մոտով չեմ անցել առանց դրամ տալու, միշտ պատ-
րաստ եմ եղել ընկերներիս օգնելու դժբախտության ժամանակ, հեշտու-
թյամբ տվել եմ ամեն բան, եթե մեկը դրա կարիքն ունեցել է: Զբաղվել եմ
նաև գթութան ուղղակի գործերով. քաղաքական ահաբեկչության ժամա-
նակներում օժանդակել եմ քաղբանտարկյալների ընտանիքներին, օգնել

եմ չեռնոբիլյան փախստականներին և Հայաստանի երկրաշարժի զոհերին,
իսկ վերակառուցման տարիներին զբաղվել եմ Ռուսաստանի կենսաթոշա-
կառուներին մարդասիրական օգնութուն ցույց տալու գործով: Ուստի
զարմանքից ափիբերան մնացի, երբ այս մեղսակայանում վրաս մեղադ-
րանքներ տեղացին «մարդակերության հասնող անգթութան» համար:

Տեխնիկացված պղծութունը կրկին տեսարաններ ցուցադրեց իր բան-
սարկու Ֆիլմերից: Ահա հորս հետ վիճաբանում եմ քաղաքականության
շուրջը: Նրան խփում եմ մարքսիզմ–լենինիզմի դասականներից առնված
քաղվածքներով, որոնք, խեղճը, ինձնից վատ գիտեր, կարդում եմ
Մարդու իրավունքների հռչակագիրը և բացատրում, որ դա ԽՍՀՄ-ի
ստորագրած միջազգային փաստաթուղթ է, այլ ոչ թե հակախորհրդային
ինքնահրատ (սամիզդատ), ինչպես որ ինքն էր կարծում: Մինչ մենք
վիճաբանում ենք, մեր թիկունքում հայտնվում են երկու սովերեններ՝ նրա-
նը և իմը: Եվ իմ չարաշուք սովերը՝ երկար ու սուր ատամները ցցած՝
կրծելով մխրձվում է հորս սրտի մեջ: Ես, իրոք, վշտացնելով կերել եմ
հորս սիրտը:

Գրեթե նույնպիսի տեսարաններ էի սարքում ամուսնուս գլխին: Մի
անգամ նա մրսած, հիվանդ ու դժբախտ պառկել էր լոգնոցում, իսկ ես,
օգտվելով նրա անօգնականությունից, կանգնել էի դռան մեջ և կրծում,
կրծում, կրծում էի նրան՝ թվարկելով իր իրական ու ենթադրյալ մեղքե-
րը: «Գնա՛, գնա՛, գնա՛ ի սեր Աստծո», – գոռում էր իմ դժբախտ ամու-
սինը, սակայն ես չէի հանդարտվում: Պաստառին լոգնոցի ջուրը իմ
խոսքերից սկսեց վարդագունել, հետո՝ կարմրել և ի վերջո եզրից թափվեց
արյան հոսանք դարձած:

Կյանքիս այսպիսի դրվագները կբավականացնեին մի ամբողջ տասն-
յակ արյունալի կարճամետրաժ ֆիլմեր հանելու համար: Կանգնել եմ և
չգիտեմ ինչ պատասխան տամ այդ ամենի դեմ: Մնում էր հույսս դնել
Պահապանիս ու Պապիս վրա:

Եվ նրանք ինձ ազատեցին: Դեկերին ներկայացվեցին Գերմանիայից
Ռուսաստան ուղարկված ծանրոցները և հիշատակածս մարդասիրական
օգնութունը, թեև դեկերն արդարացիորեն նկատեցին, որ դրա կեսը թուցել
են նորօրյա գողերը: Ինձ փրկեց քառասուն տարվա կոմունիստուհուհու

ստատ ունեցող թոշակառու մորաքրոջս դրապե վերարկուն:

Դա զվարճալի պատմություն էր: Կուսակցական մորաքույրս երկար տարիներ մեզ հյուր չէր գալիս, որ չհանդիպի ընտանիքի այլանդակի և մինչև վերջ չջախջախված հակասովետական տարրի, այսինքն՝ ինձ հետ: Մայրիկս, իհարկե, գնում էր նրա մոտ և օգնում ինչով կարող էր:

... Եվ ահա ես վտարանդվում եմ:

Մորաքույրս իմացավ այդ մասին և հայտնվեց Պուլկովոյի օդանավակայանում, որպեսզի հրապարակավ ինձ նզովի կուսակցական ու ընտանեկան անեծքով: Նա, դատավորի կեցվածք առած, կանգնեց ինձ ճանապարհորդ ընկերներիս բազմությունից առաջ և սկսեց որոտաձայն հրաժարվել ինձնից և պահանջել, որ մայրիկս էլ նույն բանն անի՝ հիմա՛ և անհապա՛ղ: Խայտառակությունն անասելի անհեթեթ էր, չգիտեի ուր կորչեմ, իսկ ուղեկցող պակահանները (պետանվտանգության կոմիտեի աշխատակիցները) դուրս սողացին իրենց անկյուններից և մեր շուրջը կանգնեցին՝ խրախուսաբար քթների տակ ծիծաղելով: Մորաքույրս այնքան գոռոգուց, որ սրտի նոպան բռնեց: Ես, Գեորգին ու մայրիկս նրան քաշ տվինք բուժկետ: Մորաքրոջս շորերը հանեցին, ճնշումը չափեցին ու սրսկեցին: Կոփված կուսակցուհին շուտ ուշքի եկավ ու ոտքի ելավ, որպեսզի առանց հաշտվելու հեռանա: Բազմոցից վերցրի նրա վերարկուն, որ հագցնեմ, և զգացի վատինի ու դրապի չափից դուրս ծանրությունը: Իսկ իմ հագինը ջրաքիսենու նոփ—նոր մուշտակ էր, որը վերջերս ընկերուհիս էր ուղարկել Նյու Յորքից: Ի՞նչ անեմ, որ մորաքույրս այն վերցնի իր հնադարյան դրապի փոխարեն: Ժամանակ չկար, հագիվ հասցնեի ինքնաթիռ նստել: Ուստի վերդիբ չանելով ասացի.

— Մորաքույր, սիրելիս, ներիբ ինձ: Ես ամեն ինչ հասկացա, այստեղ կմնամ և կուղղվեմ: Ես ու Գեորգին կգնանք տոմսը հետ տալու, իսկ դու մայրիկի հետ տուն գնա: Հագիբ իմ մուշտակը, քո այդ ծանրությունը վրադ չառնես, թե չէ ճանապարհին վայր կընկնես: Հետո կգամ քեզ մոտ, և նորից կփոխանակենք:

Ապուշ կտրած մորաքույրս թողեց իրեն հագցնել ջրաքիսենու մանտոն, մայրիկս նրան տարավ տաքսիով, իսկ ես ու Գեորգին սլացանք մաքսային զննություն: Բայց պատկերացնել է պետք ընկերներին և

այնտեղի զանազան թղթակիցների դեմքերը, երբ Վիեննայի օդանավակայանում հայտնվեցի՝ վրաս փալանած մազաթափ ճագարենու օձիքով մորքուրական դրապե վերարկուն: Հիմա մորաքույրս իր կոմունիստական հանրահավաքներին գնում է ջրաքիսենու մանտոյով և չի մրսում:

Պահպանը մի տեղից հանկարծակի հանեց մորաքրոջս այդ զարհուրելի վերարկուն, ինձ գլխովին ծածկեց դրանով և այդ կերպ ինձ դուրս բերեց վերջին մեղսակայանից: Հետո վերարկուն բնականաբար չքվեց:

— Իսկապե՞ս այս է բոլորը: Պա՛պ, սիրելիս: Հրեշտակ իմ: Ասե՛ք ինձ, ամեն ինչ արդեն վերջացա՞վ, — հարցրի, երբ հեռացանք վերջին դեկերից:

Նրանք ինձ հանգստացրին, սակայն չցանկացան հետս խոսակցությունը շարունակել:

Մեղսակայաններով անցնելու ընթացքում Պապս ծերացել էր և այժմ հիսունն անց մարդու տեսք ուներ: Նույնիսկ հրեշտակի գեղեցիկ դեմքը հոգնած էր երևում: Հարկ էր, որ մտածեի, իմաստավորեի տեսածս ու ապրածս, ջանայի ինչ—ինչ բաներ հասկանալ, բայց դրա համար ուժ չկար: Վախս անցել էր, սակայն մնացել էր մի վիթխարի դատարկություն. չէի ուզում ո՛չ մտածել, ո՛չ խոսել, ո՛չ էլ հարցնել:

3 – րդ գլուխ

Երկար ժամանակ լուռ թռչում էինք: Հետո շրջապատող դատար-
կուծյան մեջ ինչ–որ բան փոխվեց: Տարածությունը քիչ–քիչ սկսեց լցվել
ոսկեգույն մշուշով: Հրեշտակիս ու Պապիս խոնացած զգեստները սկսեցին
պայծառանալ և շուտով դարձան կուրացուցիչ սպիտակ, դեմքերը փոխա-
կերպվեցին. Պապս երիտասարդացավ, իսկ Պահապանս վերստացավ իր
վսեմափայլ անխոռովությունը: Առջևում աղոտ կերպով մի հսկայական ու
պսպղացող բան էր երևում. սա՞ր էր... ս՞մպ...

– Աստծո Թագավորությունը մոտենում է, – հանդիսավորությամբ
ասաց Հրեշտակը:

– Փա՛ռք Աստծուն, – ուրախությամբ արձագանքեց Պապս:

Լուսափայլ տարածությունը հեռվից բազմաձայն արձագանքեց.
«Փա՛ռք Աստծուն... Աստծո՛ւն... փա՛ռք...»:

Այնուհետև առջևում մշուշի միջից դուրս եկավ ոսկերիզ սպիտակ ամ-
պերի մի վիթխարի կույտ, իսկ դրանց հետևում տեսանելի ամբողջ տա-
րածություն մեջ հովհարաձև սփռվեցին արեգակի ճառագայթները:

– Աստված իմ, ինչքան շատ լույս կա, ինչպիսի՞ գեղեցկություն է, – բա-
ցականչեցի ես:

– Այո, սա Աստծո գեղեցկությունն է, որն էլ կփրկի աշխարհը, – ա-
սաց Պապս:

Երբ մոտեցանք ամպերին, դրանք մեր առաջ հետ քաշվեցին՝ թեթև
մշուշաքող թողնելով: Մեր տակ փուլած էր մի լայն մարգագետին, որի
վրա էլ իջանք:

– Ահա տեղ հասանք, – ասաց Պապս: – Ի՛նչ լավ է տուն վերադառնալը:

– Այո, շատ լավ է, – գլխով արեց Պահապանս: – Շնորհակալ լինենք
Աստծուց:

Պապս ու Հրեշտակս ծնրադրեցին և սկսեցին աղոթել, իսկ ես պարզա-
պես կանգնել էի կողքներին՝ արդարացիորեն խորհելով, որ տուն վերա-
դառնալու խոսքը ինձ չի վերաբերում:

Նրանք երկար աղոթում էին, իսկ ես այդ ժամանակ շուրջս էի նայում:
Այդ ընթացքում ամպոտ մշուշն արդեն ցրվել էր: Մարգագետնում մի ոլո-

րապտույտ դեղին շավիղ էր ձգվում: Չգիտեմ ինչ տեսք ունի ոսկու ավա-
զը, բայց մտածեցի, որ շավիղը հենց դրանով է ծածկված: Վրան բոբիկ
կանգնելը հաճելի էր, ավազահատիկները թեթևակի ծակծկում էին ներբան-
ներս այնպես, ասես ավազից առույգացնող ու բուժարար հոսանքներ էին
գալիս:

Շավիղը տանում էր դեպի հորիզոնում կանգնած կանաչ ծառերի
պատը, որի հավասար ուրվագծերից կարելի էր ենթադրել, որ այն զբոսայ-
գի էր, այլ ոչ թե անտառ: Կանաչ պատի վերևում նշմարվում էին հսկա
բյուրեղների պես կուտակներ, որոնք նման էին կավճաժայռերի կամ
ապարանքների: Մի րոտս այդտեղ քաշեց, ինչպես մարդուն հովտից սովո-
րաբար դեպ լեռներն է քաշում... Բայց ես համբերությունս սպասեցի ու-
ղեկիցներես:

Նրանք ավարտեցին աղոթելը և ոտքի ելան:

– Գնալու ժամանակն է, – ասաց Պահապանը:

– Իսկ հիմա ո՞ւր ենք գնում, – հարցրի:

– Տիրոջը երկրպագելու:

– Նա այնտե՞ղ է ապրում, – ցույց տվի զբոսայգու կողմը:

– Ինչ անմիտ ես: Նա ամեն տեղ է բնակվում, իսկ այնտեղ այն վայրն
է, որտեղ երկրային գերությունից ազատված հոգիները պիտի հայտնվեն,
որպեսզի Տերն իր վճիռն արձակի նրանց մասին: Պատրա՞ստ ես ճամփա
եղնելու:

– Անշուշտ:

Քայլեցինք ոսկեղեն շավղով: Գնալը հեշտ էր ու հաճելի. ինձ շնչելու
օդ պետք չէր, սակայն ողջ էությունս վայելում էի խոտի ու ծաղկի բույ-
րով հագեցած դրա թարմությունը: Բավական շուտ հասանք զատ-զատ
կանգնած առաջին ծառերին: Երկրի վրա այդպիսի ծառերի երեքը չեմ
հանդիպել, թեև աշխարհում քիչ չեմ ճամփորդել: Սրանց բնքը սլացիկ
ու բարձր էին, ավելի բարձր, քան ավստրալիական ամենահսկա նվենինե-
րը՝ էվկալիպտոսները, իսկ տերևներն ապշեցնում էին մեծությունս, գունե-
ղությունս ու ձևով: Անցանք մի մեծ կեչու մոտով. սրա կեղևն ասես մե-
տաքսե կերպաս լիներ, սև նիշերը կարծես ածխով էին գծված, իսկ պսա-
կը նման էր նրբականաչ ժանյակի: Երկրային համեստ կեչիները վերհիշ-

վում էին որպես այս կատարյալ կեչու վատ պատճեններ:

Վերևից մի տերև պոկվեց և, պտտվելով, նստեց ժամանակին դեմ արած ձեռքերիս մեջ: Այն քիչ փոքր էր ավիցս, երեսը պատված էր ադամանդի նրբագույն փոշով: Տերևիկը մոտեցրի դեմքիս և սքանչելի հոտ առա՝ կեչու և հետն էլ արտասովոր թարմ ու մի քիչ արբեցնող հոտ:

– Հենց այդպես էլ Երկրի երեսին պիտի բուրբուր իսկական կեչին, – ասաց Պապս, նկատելով, որ հաճույքով շնչում, վայելում եմ ձեռքիս թառած կանաչ նվերի հոտը:

– Իսկ ինչո՞ւ է երկրային կեչին կորցրել այս հոտը:

– Մարդու մեղքերի պատճառով:

– Ինչպե՞ս:

– Շատ հասարակ ձևով. չարությունը մարդու միջոցով թափանցել է Երկիր և աղավաղել այն ու նրանում եղած ամեն բան:

– Թափանցող ճառագայթո՞ւմ՝ ուղիացիա՞:

– Դրա պես մի բան:

Թողեցի, որ կեչու տերևիկը թռչի ավիցս:

Շտապեցինք առաջ գնալ և շուտով մտանք նույնպիսի զարմանահրաշ ծառերով լի պուրակի շուքի տակ: Իսկույն նկատեցի, որ դրանցից ոչ մեկը հիվանդ չէր, իսկ պսակների մեջ ոչ մի չորացած կամ ջարդված ճյուղ չէր երևում: Որոշ ծառեր լրիվ ծաղկած էին, մյուսների վրա լիքը պտուղ կար:

Մեր շավիղը շուտով դարձավ բավական լայն ծառուղի, այնուհետև ծառերի արանքները լայնացան, և տեսա ուրիշ շավիղներ ու կածաններ, որոնք բոլոր կողմերից գալիս միանում էին սրան: Հրեշտակների ուղեկցությամբ այստեղով անցնում էին մարդիկ և ուղղվում դեպի այն կողմը, ուր մենք էինք գնում: Հեռվում տեսա ծառ տնկող մարդկանց:

Մոտեցանք մի գետակի, որի վրա սպիտակ կորնթարդ, ինչպես ինձ թվաց, փղոսկրաչեն կամուրջ էր գցված: Կանգ առա և, հենվելով նրբակերտ բազրիքին, ցած նայեցի: Հանդարտ ջրի երեսին օրորվում էին սպիտակ, վարդագույն ու երկնագույն շուշաններ, իսկ դրանց միջև դեսուդեն էին լողում... չէ, ոչ թե ոսկե, այլ գունագեղ փայլաքարի պես ձկնիկներ, և յուրաքանչյուրը նման էր թանկագին զարդի: Ես, երևի, դրանցով

զմայրված՝ հիմա էլ այդտեղ կանգնած կլինեի, բայց Հրեշտակը ձեռք տվեց ուսիս, և մենք առաջ գնացինք: Հասանք հոռմեականի նման մի քանի հարկանի շատրվանների, որոնք շինված էին իրար վրա շարած վիթխարի վարդագույն մարգարտախեցիներից: Դրանց մոտ դրված էին իրենց գերկը կանչող փայտե նստարաններ, բայց ինձ կրկին չթողեցին կանգ առնել, թեև շատ էի ուզում մի քիչ մնալ այստեղ և հիանալ վեր սլացող ու սադափե թասերի մեջ թափվող ջրի շիթերով, վայելել դրանց մեղմ ու հանգստաբեր խոխոջյունը:

– Այստեղ իսկական դրա՛խտ է, – բացականչեցի:

– Չէ, սիրելիս, – ասաց Պապս, սա դեռ Դրախտը չէ, սա նրա ամենահամեստ ծայրամասն է:

– Եթե այդպես է, ապա ինձ հարկավոր չէ ուրիշ Դրախտ, ծայրամասին էլ եմ համաձայն:

Պապս ու պահապան Հրեշտակս իրար նայեցին:

– Ի՞նչ է, նորի՞ց հիմարություն դուրս տվի:

– Դրա պես մի բան, – ասաց Պապս: – Ո՛չ դու, ո՛չ էլ մենք ենք որոշում, թե քեզ ինչ «ծայրամաս» է սպասում:

Սրան առարկելիք չունեի: Զբոսայգուն աստիճանաբար հաջորդեց փարթամ այգին, որտեղ տարածվել էին բազմազան ձևի ու չափի ծաղկանոցներ՝ լի մեծ մասամբ ինձ անծանոթ ծաղիկներով: Սակայն իմացածս ծաղիկներն էլ երկրայիններից ավելի շքեցուցիչ կերպով էին տարբերվում, քան ալպիական ծաղիկները՝ սովորականներից. օրինակ՝ հավամբուրդին, որ ցածրիկ թուփ է, հասակիս բարձրությունն ուներ և պատված էր շամպայնի միջին չափի գավաթի մեծության զանգակածաղիկներով: Ապուշ կտրեցի գրկաչափ հաստությամբ բներով ու գլուխներին ծաղիկների ամպեր դրած վարդագույն ու յասամանագույն ծառերից: Գույնզգույն գլիցինիաների երկար ծաղկաշղթաները ծառից ծառ էին նետվել հենց ծառուղու վրայով, հսկայական բուրավետ ողկույզները կախվել էին ուղղակի մեր գլխավերևում, և Հրեշտակս, որն ինձնից ու Պապիցս շատ ավելի բարձրահասակ էր, ձեռքով դրանք երեսից դեն էր անում: Բյուրբյուր ծաղիկների բույրը թմրեցուցիչ կլթվար, եթե գով գեփյուղը այգին չհովհարեր:

Ծառերին թառած անհամար թռչուններն այստեղ տիրող լուռությոնը խախտում էին ակորթալուր կամաց երգեցողությունը: Երբեմն կողքովս թիթեռներ էին թռչում՝ սահունորեն թափահարելով ճապոնական հովհարների պես մեծ ու նախշուն թևերը: Հաճախակի կանգ էի առնում, որ ավելի լավ նայեմ մեկ՝ անսովոր ծագկին, մեկ՝ բյուրեղյա ճպուռին, իսկ Պապս ու Հրեշտակս ինձ շտապեցնում էին:

Ճանապարհը նոր կեռման տվեց և ավելի լայնացավ: Հիմա մարդիկ ու հրեշտակները գնում էին մեր կողքով, քայլում էին առջևից և մեր հետևից: Հրեշտակները մարմնով Պահապանիս հասակին էին, դեմքերը տարբեր, բայց բոլորն էլ միատեսակ գեղեցիկ էին: Շատերին հրեշտակները տանում էին ձեռքներից բռնած: Սա նման էր այն բանին, թե ինչպես են հայրերը երեխաներին առավոտյան մանկապարտեզ տանում: Մարդկանց և նրանց պահապանների հասակների բարձրության տարբերությունն էլ էր պատկերը նույնանման դարձնում: Ամենևին դժվար չէր կռահել, որ նրանց կապում էին նույն կապերը, ինչ որ ինձ ու իմ խնամակալին:

Ոմանք, ինչպես որ մենք, գնում էին երեքով՝ մարդը, հրեշտակը և սուրբը: Որոշ հոգիների ուղեկցում էր սրբերի մի ամբողջ խումբ. բայց հոգիներն այդ իրենք իսկ նման էին սրբերի: Նրանց մարմիններն իմի պես պղտորավուն թափանցիկ չէին, այլ լցված էին լույսով, ինչպես Պապինս էր:

Մարդկանց մեջ կային և՛ ծերեր, և՛ երեխաներ, և՛ չափահասներ: Դատելով հագուստներից ու դեմքերից՝ նրանք պատկանում էին Երկրի տարբեր ժողովուրդների: Սակայն հրեշտակների ու սրբերի կողքին նրանք տեսքով ավելի շատ հիշեցնում էին սև-սպիտակ լուսաթափալենից կտրած կերպարանքներ: Ինձ դիտեցի և համոզվեցի, որ ոչ մի բանով մյուսներից ավելի լավ տեսք չունեմ. գորշ էի, ինչպես շատ կեղտոտ ճենապակե արձանիկ: Վրաս առաջվա պես հագուստ չկար, բացի հիվանդանոցի սավանից և խաչից, որը հիմա փայլում էր իսկական, նյութական ոսկե խաչի պես: Այստեղ հագուստն ընդհանրապես առանձին նշանակություն չունեք, որովհետև բազմապես էր նույն նախահիմքից, ինչ որ մարմինը, և միաձուլվում էր դրան, ինչպես որ քանդակներինն է լինում: Մի քանի մարդ մերկ էին, բայց դա ո՛չ իրենց էր անհանգստացնում, ո՛չ էլ ուրիշներին:

– Պա՛պ: Իսկ ինչո՞ւ են հոգիներն այսքան տարբեր: Ոմանց լույսը շատ է, ոմանցը՝ քիչ:

– Բայց չէ՞ որ մարդիկ էլ են տարբեր: Այ դու լրիվ մուգ հոգի ես, – ժպտաց Պապս:

Կժպտա, բա ինչ կանի, ինքն ամբողջովին այնպես լուսավոր է, ասես մեջը հազար մոմանոց լամպ զրված լինի, իսկ դեմքն այնպես է ճառագում, որ նայել չի լինում: Որոշեցի ես էլ ինձ ցույց տամ:

– Իսկ դու, Պապ, այնպես ես շողում, որ տնից դուրս գալիս լավ կլինի գլխիդ լուսամտիով դնես, որպեսզի նայողները չկուրանան:

Մեկ էլ տեսա, որ գվվացող ծոծրակով փուփեղ եմ շափղի ոսկե ավազին. պահապան Հրեշտակս էր վզակոթիս տվել: Ապշած նստեցի և վճռեցի, որ տեղիցս վեր չեմ կենա, մինչև ներողություն չխնդրի: Հրեշտակն իսկույն կռացավ վրաս ու ասաց.

– Ներիր ինձ ի սեր Աստծո: Չդիմացա: Քանի անգամ եմ ուզել այդ անել կենդանությունդ ժամանակ, բայց հնարավոր չէր, ուստի արեցի այն, ինչ երազել եմ մոտ քառասուն տարի, – և նա ձեռքն ինձ մեկնեց:

Սկսեցի ծիծաղել և վեր կացա՝ շփելով ծոծրակս: Պապս ինձնից նեղացած չէր երևում, սակայն բացահայտորեն գոհ էր, որ իմ պահապան Հրեշտակը դասս տվել է:

Եվ Հրեշտակս շարունակեց.

– Դատարկաբանությունդ կարող է քեզ կործանել, Աննա: Պապիդ գլխին մարտիրոսական պսակ կա, ինչին հրեշտակներն անգամ նախանձում են: Մենք՝ երկնային ոգիներս, պատվում եք սրբերին, իսկ դու հանդգնում ես կատակի առարկա դարձնել սրբությունը: Այս ի՞նչ տեսակ աներկյուղություն է:

– Մի՞թե վատ բան է աներկյուղ լինելը:

– Վատ է Աստծո՛ երկյուղը չունենալը: Դա անամոթությունից էլ վատ է:

– Ինչպե՞ս կարելի է վախենալ Աստծուց, եթե Նա, ինչպես ինքներդ եք ասում, ողորմած է և սիրում է մարդկանց:

– Կարելի է: Կարելի է սիրել և սիրելու պատճառով վախենալ վշտացնելուց: Տերը ողորմած է, բայց նաև արդարադատ է: Նա տիեզերքը կառուցել է ներդաշնակության, սիրո և արդարության խստագույն օրենք-

ներով: Աշխարհը Աստծո հեղինակած համանվագն է՝ սիմֆոնիան, և քեզ համար նախանշվել էր, որ դրա մեջ դու պիտի հնչեցնես՝ երգես ընդամենը մեկ նոտա՝ քո սեփական, միակ կյանքը, ինչն այդքան կարճ և այդպես անփոխարինելի է: Աստված ողորմած է, բայց եթե կյանքդ կեղծելով երգես, ապա չես լսվի Աստծո նոտաներով հնչող այդ երաժշտություն մեջ և միջից պարզապես դուրս կընկնես: Ահա գնում ենք Արարչի մոտ, որպեսզի իմանաք քո մասին Նրա վճիռը, իսկ դու ո՛չ ահ ես զգում, ո՛չ դող: Ինչ պիտի՞ հոգևոր դատարկություն է մեջդ գոյացել: Քեզ հաշիվ տվե՞՞նք՝ ինչպե՞ս ես ապրել, ինչո՞վ ես ապրել:

Այս խոսքերն ինձ խոռովեցնում էին, և ես ուզում էի հայտարարել, որ խմբական երգեր չեմ սիրում, որ ուզում եմ «տոմսս հետ տալ» և, վերջապես, ուղղակի ապստամբել: Հոնքերս կիտած լուռ եմ էի, իսկ Պահապանս ժպտալով ինձ այնպես էր նայում, ինչպես մեծն է նայում պոռ առած երեխային: «Նա ինձ վրա ծիծաղում է», _ անցավ մտքովս:

– Հանգստացիր, քեզ վրա չեմ ծիծաղում: Մենք՝ հրեշտակներս, առհասարակ չենք ծիծաղում: Ծիծաղը մարդկանց է տրվել վախի դեմն առնելու, դրանից պաշտպանվելու համար, դա ընդամենը դեղ է: Իսկ մենք ո՛չ վախ ունենք, ո՛չ հիվանդություն:

– Դու մտքերս կարդում ես, _ վրդովվեցի ես: Ուզում էի իսկույննեթ կանգ առնել ու հետ դառնալ: Բայց ո՞ւր:

– Եվ մի՛ մթնիր, խնդրում եմ: Չեմ կարդում մտքերդ, դրա անհրաժեշտությունը չկա. տեսնում եմ, դրանք դեմքիդ վրա են: Բայց իզուր ես անհանգստանում անկախությունդ համար, քեզ ոչ ոք ոչ մի բան չի պարտադրում և չի պարտադրելու: Եթե չես ուզում բոլորի հետ գնալ Տիրոջը երկրպագելու, կարող ես Երկիր վերադառնալ: Հոգիներ կան, որոնք հազարամյակներ շարունակ թափառում են հողագնդով մեկ. դուք նրանց ուրվականներ եք կոչում և նրանց մասին հեքիաթներ հորինում: Բայց հաշիվի առ, որ հետո կկամենաս, բայց չես կարողանա Երկրից հեռանալ:

Ոչ թե վախը, այլ գեղեցկությունը պահեց ինձ: Այն այգին, որի միջով գնում էինք, ամեն քայլափոխին ավելի էր պերճանում, թռչուններն ավելի ուրախ էին երգում, և ես համոզված էի, որ առջևում է՛լ ավելի լավ

է լինելու... Ոտքդ երկնքին խփես ու չուզենա՞ս առաջ գնալ: Չէ՛, անելու բան չէ: Ձեացրի, թե տարվել եմ շավղի եզրի կակաչածառով, իսկ հետո գլուխս կախ տոտիկ–տոտիկ առաջ գնացի:

Եվս մի կեռաման, և մեր առաջ այնպիսի լայն ճանապարհ բացվեց, որ կողքերը չէին երևում ընթացող մարդկանց ու հրեշտակների բազմությունից:

– Նայի՛ր, Աննուշկա: Սրանք այն մարդկանց հոգիներն են, ովքեր վախճանվել են մոտավորապես քեզ հետ միաժամանակ:

– Այստեղ գտնվողները նրա՞նք են, ովքեր հաջողություններ անցել են մեղսակայաններով:

– Աստծուն երկրպագելու վայրն են ընկնում բոլոր նրանք, ովքեր հավատացել են Նրան, իսկ մեղսակայաններում բռնվածները այստեղ կարող են ընկնել հետո, եթե մարդիկ ու սրբերը աղոթելով հետ ստանան նրանց:

– Ուզում ես ասել, թե այս մարդկանց մեջ ոչ մի անհավատ չկա՞:

– Չկա:

– Իսկ ե՞ս:

– Դու էլ անհավատ չես եղել, դու անմիտ ես եղել:

– Ես հո անտառո՞ւմ չեմ բուսել, նույնիսկ Աստվածաշունչ եմ կարդացել: Եվ, իհարկե, հավատացել եմ եմ ինչ–որ միասնական Բանակա–նություն, հավատացել եմ, որ տեղեկություն իրազեկման տիեզերական ինչ–որ միասնական կենտրոն կա...

– Այ հենց քեզ պես հիմարուկ գլխիկների համար են հաշվարկվել ամեն տեսակ այլմոլորակաբնակների հայտնությունները:

Պատասխանելու բան չունեի, ուստի ստիպված եղա կրկին ինձ խոնարհ պահել:

– Ի՛նձ մտիկ արա, Աննուշկա: _ Պապս կանգ առավ ու թեքվեց վրաս: Սկսեցի շոգել ու նեղվել նրա գլխի վրայի հուրհրացող պսակից և մի քիչ հետ քաշվեցի: Բայց նա ձեռքս պինդ բռնած պահեց և չթողեց, որ ավելի հետ գնամ: _ Ականջ արա ինձ, խեղճ զավակա: Այն, ինչ հիմա զգում ես, ընդամենը մեղավոր հոգու անձկություն, կարոտ է Արարչին հանդիպելուց առաջ: Եվ դրանում ոչ մի զարմանալի կամ վատ բան չկա: Սակայն դու պետք է քեզ ստիպես ու ջանաս վանել, դեմ նետել անհեթեթ մտքերդ

ու վախդ, ձեռք քաշես քո մարդկային փուչ մեծամտությունից: Հապա նայիր առջևդ:

Նայեցի նրա ցուլց տված տեղը: Մեր ճանապարհը հանգում էր բարձր լեռան ստորոտին, որի գագաթը ծածկված էր շողուն ամպով: Ուղիղ սրա մոտ էր տանում մի լայն սպիտակ աստիճան, որով հրեշտակների ուղեկցությամբ բարձրանում էին մարդիկ: Ամպի միջից ճառագում էր հսկայական խաչը:

– Գնում ենք այդտեղ. Աստված այնտեղ է, – շարունակեց Պապս: Նա կտեսնի քեզ ամբողջապես՝ ինչպես որ կաս: Նա կգնահատի քո հոգին և քո մտքերը, կքննի քո ապրած ամեն օրը և կորոշի ճակատագիրդ՝ մինչև Ահեղ դատաստանը: Թող իմաստակութուններդ և միտքդ բեռնիր ասվածի վրա: Ժողովիր հոգեկան բոլոր ուժերդ, Աննա: Սա շատ ավելի լուրջ բան է, քան դու ի վիճակի ես պատկերացնելու: Եթե կարող ես, աղոթիր: Եվ չխանդարես, որ ես և Հրեշտակը աղոթենք քեզ համար:

– Լավ, Պապ, կջանամ:

Ես իսկապես ջանացի դեն նետել բոլոր մտածումներս և փորձեցի աղոթել այս խոսքերով. «Ներիր ինձ, Աստված, բայց ես ոչ մի վատ բան չեմ ուզել: Չգիտեմ ինչ^օ պիտի Քեզնից վախենամ, և չեմ էլ վախենում: Ընդունիր ինձ Քո գեղեցիկ Դրախտի մեջ, միայն թե թող, խնդրում եմ, որ ես ե՛ս մնամ»:

Շատ զարմացա, երբ մոտեցանք լեռանը. նրա տեսքը բացարձակապես չէր համապատասխանում շրջակա պերճությանը, նույնիսկ հակասում էր սրան: Եթե մի կողմ թողնենք լայն սանդուղքը, լեռան լանջը մերկ էր ու վայրի և ամբողջովին ծածկված էր դեղնավուն քարաբեկորներով: Տեղտեղ դրանց կառչել էին այլանդակ տատասկներ, որոնց օձակերպ հաստ ցողունները լիովին պատված էին երկար փշերով, իսկ սրանց մեջ երևում էին մուգ կարմիր փոքրիկ ծաղիկներ՝ ասես արյան կաթիլներ: Լեռը թվում էր շիկացած ու անկենդան, և ակնհայտ էր, որ անհնար է վրան բարձրանալ առանց այդ սանդուղքի: Մի քանի հարթակների բաժանված լայն ու խիստ թեք սանդուղքը շինված էր սալաքարերով, որոնք մասամբ չհեռուվել էին հնությունից: Մոտենալով սանդուղքի առաջին աստիճանին՝ շատ մարդիկ ծունր էին դնում և երկյուղածությամբ համբուրում

քարը: Ոմանք էլ այդպես, ոտքի չկանգնելով, ծունկ առ ծունկ բարձրանում էին սանդուղքով:

Պապս ու Պահապանս նույնպես երկյուղածորեն շուրթերը հպեցին դեղնավուն սալաքարին և պատվիրեցին, որ ես էլ նույնն անեմ:

– Գողգոթա՛ն է, – ասաց Պապս:

Նորի՞ց խորհրդանշան՝ անցավ մտքովս, որովհետև գիտեի, որ իսկական Գողգոթան Երուսաղեմում է գտնվում, սակայն հնազանդորեն համբուրեցի տաք քարը, և սկսեցինք բարձրանալ լայն աստիճաններով:

Որքան վեր էինք ելնում, այնքան ավելի շոգ էր դառնում. աստիճանների տակից շիկացած օդ էր ծորում, իսկ լեռան գագաթից այնպիսի կուրացուցիչ լույս էր հորդում, որ շուտով այլևս չէի կարողանում աչքերս աստիճաններից վեր բարձրացնել:

Դժվարությամբ հասա առաջին հարթակին, որտեղ սանդուղքով բարձրացողներից շատերը կանգ էին առել հանգստանալու համար:

– Հոգնե՞լ ես, Աննուշկա, – հարցրեց Պապս:

– Շատ շոգ է, և աչքերս ցավում են այդ պայծառությունից: Մի քիչ նստեմ...

Նկատեցի, որ մի քանի մարդ նստել են սանդուղքի քարե պատին հենված՝ ասես սովերոտ տեղ փնտրելով, թեև այստեղ սովեր չէր ընկնում: Քիչ անց վեր կացա և ասացի, որ պատրաստ եմ բարձրանալու, բայց հագիվ էի ոտքս դրել հաջորդ սանդղաբազուկի առաջին աստիճանին, երբ սաստիկ գլխապտույտ զգացի և ստիպված եղա կանգ առնել:

– Այլևս չե՞ս կարող գնալ, – անհանգստացած հարցրեց Պահապանս:

– Ոնց որ թե չեմ կարող: Վերևից այնպիսի տոթ է փչում, որ դիմանալու ուժ չունեմ:

Պապս մոտ քաշեց ինձ և գլուխս ծածկեց պարեգոտի սպիտակ լայն թևքով: Քայլերը մի քիչ հեշտացավ: Մեծ դժվարությամբ, համարյա ամեն աստիճանի վրա կանգ առնելով, հասանք երկրորդ սանդղահարթակին, և այստեղ ուժասպառ նստեցի այրող սալին:

– Ինչ ուղում եք արեք, բայց էլ չեմ կարող գնալ...

Պապս ու Պահապանս շվարած դեմքերով կանգնեցին գլխավերևումս: Ապա Հրեշտակս ասաց.

– Աղաչելուց բացի ուրիշ բան չենք կարող անել:

Նրանք կանգնեցին կողքիս և սկսեցին աղոթել՝ աչքերը հառած կուրացնող ամպի միջի խաչին: Ականջս զնգում էր, և ես բառերը չէի կարողանում ջուղել, միայն ինչ–որ բան լսեցի «խաբված ու մոլորյալ հոգու», այսինք՝ իմ մասին:

Նրանց միացան ուրիշ հրեշտակներ, որոնց խնամարկյալները անխմաստ կերպով խլվում էին կամ ինձ նման փռվել էին այդ հարթակին: Հրեշտակները սքանչելի էին երգում, սակայն մեր վիճակը դրանից չէր լավանում: Միչդեռ մյուս հրեշտակները մեր կողքով առաջնորդում էին աշխուժորեն քայլող իրենց սաներին և անկեղծ կարեկցանքով մեզ նայում: Վերևում մի սանդղահարթակ էլ կար. այնտեղ ևս վեր բարձրանալ չկարողացողներ էին կուտակվել:

Երբ հրեշտակների երգչախումբը լռեց, վերևից բարձր ու հանդիսավոր մի ձայն հնչեց, որ նման էր շեփորականչի: Ապա լիակատար լուռություն տիրեց, և այդ լուռության մեջ մեկի հանդարտ ձայնն ասաց երեք բառ. «ՆՐԱՆՔ ՊԱՏՐԱՍ ՁԵՆ»: Այս խոսքում հանդիմանություն չկար, այն նման չէր դատավճռի, այլ միայն արտահայտում էր հստակություն և ափսոսանք: Կրկին հնչեց երկնային շեփորների ներդաշնակ ու հաստատող ձայնը, իսկ հետո մի երիտասարդ ու հնչեղ ձայն որոշ բառեր ավելացրեց, որոնց իմաստը չհասկացա, բայց հասկացան ուղեկիցներս: Նրանք ոտքի ելան, և նույն բանն արին ծնրադրած մյուս հրեշտակներն ու հոգիները:

– Գնա՛նք, Աննա, – ասաց Պահապանս, – քո մասին Աստծո վճիռը կայացավ: Քեզ տարկետում կտրվի: Փա՛նք Նրա գլխով:

Իմ ժամանակը հետաձգվում է... Բայց ինչի՞ց: Այս ամենը աղոտ ու անհասկանալի էր, բայց ես գոհ էի թեկուզ այն բանի համար, որ իջնելու էի սարսափելի սանդղակից:

Ներքև իջանք, հետո կողքի շավղով շրջանցեցինք Գողգոթան և մտանք բարձրապսակ մայրիկների շուքի տակ: Հրեշտակներն ու մարդիկ անհետացան դրանց մոզք բների հետևում՝ ցրվելով զբոսայգու ծառուղիներով:

Գնալով մայրիկների պուրակի միջով՝ ընկանք ծաղկուն մրտավարդերի մացառուտների մեջ, ապա անցանք դրանք, և այդտեղ կաձանը սուզվեց

պտերների մեղմականաչ ծածկի տակ, որտեղ օդը թարմ էր ու խոնավ, և զգացվում էր ջրի մոտ լինելը: Շուտով հայտնվեցինք մի փոքրիկ կիրճում, որի միջով ջինջ ու կարկաչուն գետակ էր հոսում: Նստեցինք մոտը:

– Կարող ես կուշտ խմել ու լվացվել, – ասաց Պահապանս: – Սա սուրբ ջուր է:

– Կուշտ խմե՞լ: Մի՞թե կարող եմ խմել, – զարմացա ես:

– Փորձիր, – ասաց Պապս: Բռով վերցրի սառը ջուրը և զգուշությամբ մոտեցրի շուրթերիս: Մի կու՞մ արի, հետո՞ մյուսը, և անուշ զովությունը տարածվեց տանջված մարմնովս մեկ: Իսկույն հանգիստ ու լավ զգացի, սակայն թուլությունս ու թեթևակի գլխապտույտս չանցան:

– Ես կարող եմ խմե՛լ, – կանչեցի ուրախացած:

– Դու կարող ես նաև կուշտ ուտել, – ասաց Հրեշտակս և գետակի ափի վրա թեքված թփից պուկեց մեծ կարմիր հատապտուղներով բեռնված մի ճյուղ: Վերցրի մեկնած ճյուղը և մի հատը համտեսեցի. անտառի գետնամորու համ ունեք, իսկ ձևով նման էր խոշոր բալի: Անասելի համեղ էր, և ես երկրորդն էլ կերա...

– Կարո՞ղ եմ մնացածը հետս վերցնել, – հարցրի:

– Կարիք չկա: Առջևում կան զարմանազան մրգեր ու հատապտուղներ, իսկ դրանք ջրին տուր, թող ձկնիկներն ուրախանան:

Պապս ճյուղը ձեռքիցս վերցրեց ու բաց թողեց հոսանքն ի վայր:

Ձկնիկների փոքրիկ վտառը նետվեց դրա հետևից, իսկ ես նստեցի ջրի մոտ հանգստանալու:

Պապս ու Պահապանս իրար հետ ինչ–որ բան էին անբառ խոսում: Առաջ էլ էի նկատել, որ նրանք լսելի խոսում են միայն այն ժամանակ, երբ ուզում էին, որ իրենց ասածները լսեմ, իսկ ուրիշ ժամանակ հաղորդակցվում էին անձայն եղանակով: Սակայն հասկանում էի, որ խոսքը միշտ իմ մասին է, և այդ ինձ հանգստացնում էր: Թող մտածեն, մտածեն և մի բան հնարեն, իսկ ես մի քիչ կննջեմ...

Ինձ թողեցին, որ հանգստանամ, բայց այդ երկար չտևեց: Պապս ասաց, որ ուզում է մի կողմ գնալ և աղոթել մենակ, իսկ Պահապանս ինձ վեր կացրեց, մի անգամ էլ լվացվել տվեց սուրբ ջրով, ապա նստեցրեց թփի տակ և սկսեց խեղճիս դաստիարակել:

Նրա ասածներից դուրս էր գալիս, որ ողջ կյանքումս ապրել եմ սխալ և ընդհանրապես բանի պետք չեմ: Ինձ համար վիրավորական այդ խոսքերը նրա տեսակետից միանգամայն ճիշտ էին. Աստծուն հավատում էի անորոշ, աղոտ կերպով, Հիսուս Քրիստոսին համարում էի Հին ժամանակների մեծ լուսավորիչ, իսկ Եկեղեցին՝ մի կազմակերպություն, որը պարտավոր է պահպանել բարոյականության ավանդական արժեքները: Հրեշտակա հայտարարեց, որ առանց անկեղծ հավատի ու եկեղեցական լիարժեք կյանքի, իսկ գլխավորը՝ առանց ապաշխարություն իմ բոլոր լավ արարքները և բարի սիրտը (նա՛ այսպես ասաց) չեն կարող ինձ փրկել Աստծո հետ հավիտենական կյանք ունենալու համար: Ընդամին հասկացրեց նաև, որ ոչ թե Աստված է ինձ մերժել, այլ ես եմ Նրան մերժել: Բայց ինչպե՞ս կարող էի մերժել մի բան, որի մասին նվազագույն իսկ պատկերացում չունեի...

– Բացատրիր ինձ, Աստված ինչո՞ւ է իմ հանդեպ դաժան: Մեղսակալաններով անցել եմ, մյուսներից ավելի վատ տեսք չունեմ: Այն սանդուղքի վրա ինձնից մոզգ ինչքա՛ն հոգիներ կային:

– Դու նրանցից ավելի բաց գույն ունես միայն այն պատճառով, որ քեզ լուսավորում է Պապիզ մարտիրոսությունը՝ նահատակությունը: Իսկ Հիմա քեզ սպասում է մի մխիթարություն, ինչը չես վաստակել: Քեզ կտանենք Դրախտի մի օթևան, ուր կընկնեիր, եթե արժանավայել կյանք վարած լինեիր: Այդտեղ կմնաս համարյա մեկ շաբաթ՝ ուղիղ վեց օր, իսկ հետո կգնաս դժոխքում քեզ համար պատրաստված տեղը, ուր քեզ նմանները, որոնք պրծել են դժոխքի սոսկալի կրակից կամ գեհենից, բայց արժանի չեն Դրախտին, սպասում են Ահեղ դատաստանին կամ ներման:

– Դա շա՞տ վատ տեղ է: Այդտեղ ինձ տանջելու են դևե՞րը:

– Աննախանձելի տեղ է, սակայն դևերի իշխանությունն այդտեղ անսահմանափակ չէ: Դու կարող ես այդտեղ աղոթել, եթե ունակ լինես: Բայց հույսը չկորցնես. քեզ համար կաղոթի համայն Եկեղեցին:

– Պապս ասել է, որ ինձ ու մայրիկիս համար Երկրի վրա աղոթող չկա:

– Ես ասացի «Համայն Եկեղեցին», այսինքն՝ ինչպես նրա երկրային, այնպես էլ երկնային մասը: Երկրի վրայի և Երկնքի միջի Եկեղեցին մի է, մեկ է, հասկանո՞ւմ ես: Քեզ օգնելու համար ամեն հարկավոր բան

Փրկիչն արդեն արել և շարունակում է անել, իսկ մենք միայն օգնում ենք Նրան մեր փոքր ուժերով:

Հետո սկսեցի մտածել, որ զնալիք տեղս գուցե այնքան էլ վատ չէ, եթե այդտեղ ընկնում եմ ինձ պես հոգիները: Այստեղ մեր ընկերախումբը կունենանք, որևէ հանրային կյանք կկազմակերպենք. օրինակ, կրոնափոխոփայական սեմինար կստեղծենք մեր առջև բացված նոր իրականությունը քննարկելու համար: Եվ առանձնապես վախենալու բան չկա, եթե դևերն այդ վայրում վայրագություններ չեն անում: Հո ապրել եմ բանտում ու գաղութում, ապրել եմ նույնիսկ ընդհանուր՝ կոմունալ բնակարանում...

Պապս աղոթքն ավարտեց ու մեզ մոտեցավ, և մենք իսկույն ճամփա ընկանք գետակի կողքով ձգվող կածանով: Ծանապարհին հանդիպում էին փոքրիկ ջրվեժներ, որոնք խշշում ու փայլվում էին պտերների, չմշկածաղիկների, ուլունքահատիկների պես կարմիր պտուղներով ժայռականման ծնեբեկի փարթամ բուսականության և զանազանակերպ ու բազմերանգ մամուռների մեջ: Անտառը շատ մոտ էր գետակի ափերին, և կածանը տեղ—տեղ մտնում էր դրա մեջ, իսկ հետո վերադառնում ջրի կողքը: Ծառերի տերևների միջից աչքով էին անում լիանների ու մակաբույսերի ծաղիկները, իսկ արմատների արանքներում փռված խոնավ մամուռի գորգի վրա երանություն էին վայելում ծիրանեգույն ծաղիկներով խորըձենքը՝ օրիսիդեյները:

Կածանը, որ երկար ժամանակ ոլորվում էր կիրճի խորքում, միանգամից ու անսպասելիորեն մեզ դուրս բերեց ձյունագագաթ սարերի միջև փռված մի լայն հովիտ: Շունչս կտրվեց (եթե կարելի է այսպես ասել այժմյան բնույթս հաշվի առնելով) իմ առջև տարածված պատկերի պերճությունից:

Հենց մեր առաջ դանդաղ հոսում էր լայնահուն մի գետ, որն իր մեջ էր առնում այն նեղ գետակը, որի կողքով մտանք հովիտ, բազմաթիվ այլ գետեր, առուներ, առվակներ ու ջրվեժներ, որոնք հոսում, վազում ու թափվում էին լեռների կանաչ լանջերից: Լայնահուն գետի մեջ լիքը կղզյակներ կային. մի քանիսը բարձր էին, ապառաժոտ, պատված՝ փաթաթվող ծաղկուն բույսերով, մյուսները գառիկող էին, վրաները՝

արծաթագույն ու ոսկեգույն ուռենիներ, որոնք փայլում էին մուգ դմրուխտե խոտածածկի մեջ, իսկ եղևնիներով ու մայրիկներով ծածկված մի քանի կղզյակներ ասես մետաքսե կապույտ սփռոցին դրված բոքոններ լինեին:

Հովտում ծառերն աճել էին՝ մերթ խուճմբ—խուճմբ, մերթ շարք կազմած եզերել էին ճանապարհներն ու շավիղները, մերթ խմբվել էին որպես պուրակներ: Մենավոր ծառերը մյուսներից շատ բարձր էին և ապշեցնում էին ձևով ու մեծությամբ: Առանց չափազանցելու ասեմ, որ դրանցից շատերը հեռուստաշտարակի չափ էին:

Բազմաթիվ ճանապարհներից ոչ մեկը ասֆալտապատ կամ բետոնապատ չէր: Դրանք հողից էին կամ ծածկված էին սպիտակ կրասալերով և գույնզգույն գրանիտի չորսվակներով, իսկ այդ գրանիտը գույնի հագեցվածությամբ ավելի նման էր հասպիսի ու ազաթի, քան Նևայի առափնյա լավագույն գրանիտներին:

Հովտի հեռավոր ծայրին գետը թափվում էր մեծ կապույտ լճի մեջ, որի բլրաշատ ափերին տարածվել էր մի բնակավայր: Այն կամ մեծ գյուղ էր, կամ փոքր քաղաք, որն ամբողջովին պայծառացած էր ոսկեգույն լույսով, իսկ ինքը սիպ—սպիտակ էր և կենտրոնում ուներ բարձր զանգակատուն:

- Այդտեղ ենք գնում, — ձեռքով Պապս ցույց տվեց քաղաքի կողմը:
- Այ երևում է այն եկեղեցու զանգակատունը, որտեղ սպասավորում եմ: Դրա կողքին մեր ընտանիքի տունն է:
- Մեր ընտանիքը:
- Այո: Մայրիկս է և նրա քույրը: Նրանց չես տեսել, որովհետև ննջել էին նախքան ծնվելը: Դե հիմա կձանոթանաս: Եվ այնտեղ քեզ մեկն էլ է սպասում, ումով շատ կուրախանաս:
- Ալյոշա եղբա՞յրս է:
- Այո:
- Գնա՛նք, շու՛տ գնանք մոտը, Պապ, ջանիկս:
- Շուտով հասանք լճին, և այդտեղ Պահապանս ասաց.
- Հետներդ չեմ գալիս, ձեզ համար ավելի լավ կլինի, որ առաջին օրն անց կացնեք ձեր ընտանեկան շրջանում: Իսկ դու ինչի՞ց ես վախենում, հի-

մարիկ: Այստեղ լրիվ ապահով վիճակում ես, և քեզ պահապան պետք չէ:

- Ամենևին էլ չեմ վախենում, պարզապես սովորել եմ քեզ:
- Վաղը կգամ մոտդ:

Շրշացին նրա բաց բոցագույն գեղասքանչ թևերը, և նա, հով փչելով վրաներս, վեր սլացավ, դարձավ հրաշագեղ սպիտակ թռչուն, պտույտ գործեց մեր գլխավերևում ու անհետացավ լազուր կամարում: Իսկ ես ու Պապս, իրար ձեռք բռնած, արագաքայլ ընթացանք քաղաք տանող ճանապարհով:

Առաջին տների մոտ ճյուղատարած ծփենու տակ մի աղջիկ ու երիտասարդ էին նստել: Մեզ տեսնելով՝ նրանք վեր կացան և ընդառաջ շտապեցին: Բերկրալի հույսից նվաղած՝ կանգ առա:

- Բարև, քույրիկս, — ասաց երիտասարդը և ինձ պարզեց ձեռքերը:
- Մի՞թե Ալյոշան է: Երեսին շատ ծանոթ մի բան կար, բայց դժվարանում էի ի դեմս այդ վայելչակազմ ու գեղեցիկ տղամարդու՝ տեսնել առաջվա փոքր ու կլորագեմ եղբայրիկիս: Երեխա ժամանակներս մենք ջրի երկու կաթիլի պես նման էինք իրար, ճակատներս միատեսակ մագափունջ էինք թողնում, և նրան միայն ծամերն էին պակասում: Իսկ հիմա իմ առաջ կանգնել էր բաց գույնի կարծ մորուքով ու երկար գանգուրներով մի երիտասարդ՝ իմ երկվորյակը, բայց ինձնից շատ ջահել եղբայրս: Նա հագնված էր համարյա Պապի պես, միայն թե կրճեին խաչ չկար:

- Ալյո՞շա:
- Գրկվեցինք և երկար մնացինք լուռ ու հուզված:
- Դու այստեղ ընդմի՞շտ ես եկել, Աննա:
- Գլուխս տարուբերեցի:
- Ամեն ինչ հետո կպատմենք, — մեջ մտավ Պապը: — Ալեքսեյ, Աննային ծանոթացրու տատիկի հետ:
- Տատի՞կ: Թեև տատիս չէի տեսել, բայց գիտեի, որ վախճանվել է հիսունն անց տարիքում: Ուրեմն ինչպե՞ս կարող է այս ծաղկուն երիտասարդուհին տատիկս լինել:
- Քեզ զարմացնում է, որ այսպիսի երիտասարդ տատի՞կ ունես այստեղ, — ժպտաց Պապս: — Վարժվիր: Այստեղ բոլոր մարդիկ նույն տարի-

քին են. ամենքս երեսուններեք տարեկան ենք: Երեխաները մեծանում են, իսկ մեծերը երիտասարդանում և դառնում են Քրիստոսի տարիքին: Տատիկիդ անունը Եկատերինա է:

– Կարող ես ուղակի Կատյա ասել, – ավելացրեց Ջահել տատս ու երեք անգամ համբուրեց ինձ: – Բարի գալու՛ստ, Աննուշկա:

– Իսկ ինչո՞ւ Նինան չի եկել մեզ դիմավորելու, – հարցրեց Պապս:

– Կարկանդակ է թխում, – ասաց Կատյան, և բոլորը չգիտես ինչու ծիծաղեցին:

Գնացինք քաղաքի գլխավոր փողոցով, անցանք մամուկալած հինավուրց շատրվանով հրապարակը և մոտեցանք եկեղեցուն: Պապս ասաց, որ ուզում է տաճար մտնել, իսկ մեզ պատվիրեց տուն գնալ առանց իրեն:

Ես, Կատյան ու Ալյոշան ուղղվեցինք դեպի եկեղեցամերձ այգու խորքում երևացող եռանկյունի ճակոտնով կանաչատանիք երկհարկանի սպիտակ տունը: Ճակատի երկայնքով շարված վեց սյուները այգուց բաժանում էին ծածկապատշգամբը և պահում էին երկրորդ հարկի կարկառամասը՝ հրկերը:

Երբ զրուցելով մոտեցանք տանը, ծածկապատշգամբ ելավ սպիտակ գոգնոցով և երկնագույն զգեստի թևքերը քշտած մի գեղեցիկ երիտասարդուհի: Կուահեցի, որ տատիկիս քույր Նինան է: Իմ կողմը պարզելով լայնաթաթախ ձեռքերը՝ բացականչեց.

– Թոռնուհի՛ս, Աննուշկա՛ն: Վերջապես, – և, կայտառորեն ցած վազելով աստիճաններով, գրկեց ինձ:

Եվ այս տատիկիս ուզած–չուզած պիտի ուղղակի Նինա ասեի:

Ինձ տուն տարան և ծանոթացրին ներսակողմին. ներքին կահավորանքով այն հիշեցնում էր ռուսական հին դաստակերտները: Երկրորդ հարկում սենյակ հատկացրին, որի լուսամուտները, ինչպես որ այդ տան բոլոր սենյակներինը, բացվում էին պարտեզի վրա:

Հետո եկավ Պապս, և Նինան հայտարարեց, որ կարկանդակները պատրաստ են, ու բոլորիս սեղանի մոտ հրավիրեց: Նստեցինք ծածկապատշգամբի մեծ ու կլոր սեղանի շուրջը, սկսեցինք ուտել բալով կարկանդակ և թեյ խմել: Այդ բանն արտասովոր էր, և ես մերթ ընդ մերթ թաքուն նայում էի, թե բալերը չե՞ն երևում մարմնաթաղանթիս միջից: Բայց ամեն ինչ

կարգին էր. դրանք պարզապես անմնացորդ լուծվում էին մարմնիս մեջ:

Թեյելիս Պապը կարճառոտ բացատրեց վիճակս, և բոլորը, բնականաբար, շատ վշտացան ինձ համար: Կողքիս նստած Ալյոշան Պապի պատմելու ընթացքում ձեռքս բաց չէր թողնում:

Թեյելուց հետո ինձ առաջարկեցին հանգստանալ, ինչի կարիքն իրոք զգում էի: Ինչպես հետագայում իմացա, Դրախտում ոչ ոք չէր քնում, որովհետև դրա անհրաժեշտությունը չկար, ուստի տանը անկողիններ էլ չկային, սակայն թե՛ իմ, թե՛ մյուս սենյակներում դրված էին թախտեր ու բազմոցներ, որոնց վրա կարելի էր պառկել հանգստանալու համար:

Երբ ինձ մենակ թողեցին, մի քիչ պառկեցի բազմոցին, հետո վեր կացա ու նստեցի լուսամուտի մոտ՝ ձեռքերս ու գլուխս դնելով դրա գոգին, և սկսեցի նայել հեռվում երևացող լճին, որի մեջ կարապներ ու բազեր էին լողում, դրա կղզիներին, հեռու ափի մոտ կանգնած միայնակ առազաստանավին: Այնքան լավ ու խաղաղ էի զգում, որ ոչ մի բանի մասին չէի մտածում, ոչինչ չէի ուզում և նույնիսկ ոչինչ համար չէի ամսոսում:

4 –րդ գլուխ

Դուռս թակեցին, և մտավ Ալյոշան:

– Հանգստացա՞ր, քույրիկս:

– Այո, լա՛վ: Ասա, այստեղ ժամ, ժամանակ չկա՞: Հիմա ամսվա կամ շաբաթվա ո՞ր օրն է, ժամը քանի՞սն է:

– Գիտե՞ս ինչ, Աննուշկա, այստեղ ժամանակ արդեն չկա, դու մտել ես Հավիտենություն մեջ: Սակայն Աշակերտների հովտում սովորության համաձայն շարունակվում է օրերի ու ժամերի հաշիվն ըստ երկրային ժամանակի: Այդպես ավելի հարմար է վերջերս Հավիտենություն եկածների համար: Համարում ենք, որ հիմա առավոտվա ժամը վեցն է. շուտով կսկսվի պատարագը: Իսկ ինչո՞ւ հարցրիր ժամանակի մասին:

– Դե ո՞նց չէի հարցնի, ախր ինձ ասացին, որ ընդամենը վեց օր ունեմ: Ես էլ ահա ուզում եմ իմանալ, թե հետներդ մնալու ինչքան ժամանակ է ինձ մնացել: Կարո՞ղ ես ինձ մի ժամացույց տալ:

– Ինչ տեսակի կուզես: Հավանաբար քեզ այ սա դուր կգա:

Ցածրածայն խզզոց լսվեց, ապա հնչեց ծանոթ հին նվագը: Կուրանտներն* էր: Հետ նայեցի ու պատի տակ տեսա քանդականախշ աշտարակով, հնությունից դեղնած կլոր թվացույցով, վրան ոսկե վարդեր նկարած հատակադիր ժամացույցը: Ձևավոր սլաքները կանգնել էին ուղղահայաց: Կուրանտներն իր նրբալար մեղեդին նվագեց, և ժամացույցը քաղցրածայն հնչեց վեց անգամ:

– Սքանչելի՛ է: Ո՞նց առաջ չեմ նկատել:

– Առաջ այն չկար էլ, ես հենց նոր միտքս բերի: Այս ժամացույցը կանգնած էր մանկական գրադարանում, ուր ես ու դու գնում էինք գիրք վերցնելու: Հիշո՞ւմ ես, Գերցենի փողոցում էր:

– Հիշում եմ: Գրադարանի առաստաղը կաղնեփայտե մուգ հեծաններով բաժանված էր քառակուսիների և դրանցից յուրաքանչյուրի մեջ մանկական հեքիաթի մի դրվագ էր նկարած: Իսկ այս ժամացույցը դրված էր փոքր դահլիճում, որտեղ մեզ համար հանդիպումներ էին կազմակեր-

* Աշտարակային կամ սենյակային նվագավոր մեծ ժամացույց, այլև դրա երաժշտական սարքը: Անեզական՝ եզակի թիվ չունեցող գոյական է, ուստի օժանդակ բայը եզակի թվով է (թարգմ. ծան.):

պում մանկական գրողների հետ: Բայց այդ ժամացույցն ինչպե՞ս է այստեղ ընկել:

– Հիշողությունս միջից: Խորհեցի, որ քեզ համար հաճելի կլինի ժամանակն իմանալ հենց այս ժամացույցով: Սա ցույց կտա ժամը և միաժամանակ կհիշեցնի, որ իրականում ժամանակ գոյություն չունի, որ մեր մանկությունը չի անհետացել, որ մենք իշխանություն ունենք մեր անցյալի վրա:

– Հիմա հասկանում եմ, թե տանը որտեղից են այսքան գեղեցիկ հին իրեր հայտնվել:

– Ճիշտ կուհեցիր. մեզ շրջապատում ենք այնպիսի իրերով, որոնք սիրելի են եղել այն կյանքում: Դրանց անհրաժեշտությունն ամենևին չկա, սակայն դրանք հաճելի են սրտին:

– Բայց դուք դրանք հո հրթիռներով չեք փոխադրում Երկրից:

– Իհարկե՞ ո՛չ: Բավական է միայն վերհիշել դրանք: Եթե ուզում ես, ինքդ փորձիր:

– Դրա համար ի՞նչ պետք է անեմ:

– Հիշիր քեզ հարկավոր որևէ իր, այն պատկերացրու բոլոր մանրամասներով և կենտրոնացիր քո առաջ այն տեսնելու ցանկության վրա:

Ես հավատացի, որ այդ ինձ կհաջողվի: Աչքերս փակեցի, կենտրոնացա և համարյա նույն պահին ձեռքերիս մեջ զգացի հին փայտի տաք ծանրությունը. մատներիս մեջ էր Մոսկվայի մեր նախկին բնակարանի Աստվածամոր «Կազանյան» պատկերը: Չգիտեմ և համբուրեցի պատկերի ծայրը, բայց իսկույն վախեցած նայեցի Ալյոշային՝ իսկ կարելի՞ է:

– Խելոքս: Իսկ հիմա հետս կրկնիր. «Սրբասուրբ Աստվածածին, փրկիր մեզ»:

– Սրբասուրբ Աստվածածին, փրկիր մեզ ...

Այնքան լա՛վ զգացի այս ասելուց հետո:

Ալյոշան ձեռքիցս վերցրեց պատկերը և կախեց սենյակիս անկյունում, հենց լուսամուտների դիմաց:

– Իսկ հիմա՝ լվացվե՛լ:

– Սպասիր, ինձ համար էլի մի բան հորինեմ: – Շատ էի ուզում արժա-

նանալ Ալյոշայի ևս մի գովասանքին, և հիշեցի Փաթիմայի* Աստվածամոր արձանիկը, որը տեսել էի Գերմանիայի Հարևանուհուս՝ Ֆրաու Վագների մոտ: Բայց որքան էլ ճակատս կնճռոտեցի՝ մերթ աչքերս պինդ փակելով, մերթ ողջ ուժով չռելով, ոչ մի բան դուրս չեկավ:

– Ի՞նչ ես տնքտնքում, – հարցրեց Ալյոշան:

Ստիպված հայտնեցի մտահղացումս:

– Ասում ես արձանիկը պլաստմասայի՞ց էր: Այդ դեպքում իզուր ես տնքում ու տքնում: Դրախտում ոչ մի արհեստական բան չի կարող գոյություն ունենալ, այստեղ ոչ մի սինթետիկա չկա: Գնանք, քեզ կտանեն իմ սիրած ջրվեժի մոտ, որ լվացվես:

Նա ձեռքս բռնեց ու սենյակից դուրս քաշեց: Ելնելիս ես արագ պատկերացրի վտարանդուլթյան ժամանակ գնաժս առաջին իրը՝ վիեննական ճոճաթուղ: Հասցրի հետ նայել և տեսա, որ այն հնազանդ ճոճվում է լուսամուտի մոտ: Նույնիսկ բարձրիկ՝ դմփիկը, որին սիրում էր բազմել Ձմերուկը, դրված էր նստոցին: Երևի հարցնեմ, թե չի՞ կարելի պատկերացնելով այստեղ բերել իրեն՝ Ձմերուկին:

Պարտեզ մտանք և գնացինք բարձրուղեղ լորենիների ծառուղով: Ծանապարհին ամենուրեք, որտեղ հնարավոր էր, հնարում և մեզ հանդիպեցնում էի բրոնզափառից կանաչած պոչերով սիրամարգերի, եղնիկների, իսկ թփերի մեջ՝ հովազների ու վագրերի բրոնզե արձաններին:

– Երեխա ես, Աննուչկա, – ասաց Ալյոշան: Ինչի՞ դ ես պետք բրոնզե վագրերը, երբ կարելի է կանչել իսկականներին:

Ալյոշան սուլեց, և ես ճշալով կպա նրան. թփերի միջից մեկ ուսայունով ճանապարհի մեջտեղը ցատկեց մի հսկա վագր և նետվեց մեր կողմը: Այն ինձ զգուշությամբ շրջանցեց, իսկ եղբորս մոտենալով՝ վիթխարի գլուխը դեմ տվեց նրա ծնկներին և սկսեց բասաձայն մոռալ՝ փողաքշանք պահանջելով: Ալյոշան քորեց վագրի ականջի հետևը և շպրտացնելով հետ ուղարկեց թփերի մեջ: Դրախտ կասեն, է՛:

Պարտեզի միջով դուրս եկանք մի լեռնային գետակի մոտ, որը սկիզբ էր առնում ժայռից թափվող ջրվեժից: Ջուրը թափվում էր ոչ թե համա-

* Փաթիման պորտուգալական բնակավայր է, որտեղ հաճախ հայտնվում՝ երևում էր Աստվածածինը: Այդ պատճառով այժմ սրբատեղի է (թարգմ. ծան.):

տարած պատի պես, այլ բազմաթիվ առանձին շիթերով: Կողքին հարթակ կար, որից ջրի տակ էր տանում մի լայն աստիճան: Ուրքս սրան դրի և հայտնվեցի զով ցնցուղի ներքո: Թարմանալուց հետո կանգնեցի արևից ջերմացած հարթակի վրա, որ չորանամ: Այստեղ ծագեց հագուստի հարցը. մինչև հիմա վրայինս հիվանդանոցի սավանն էր, որը հանգուցել էի թևատակիս տակ:

– Ալյոշա, չի՞ կարելի մի քիչ գուգվեմ:

– Խնդրեմ, դրանից էլ հեշտ բա՞ն: – Եվ Ալյոշան կենտրոնացած դիտեց կազմվածքս:

Բարձրաձայն քրքջացի՝ տեսնելով մինչև կոճերս հասնող անդրկելի լայնությունամբ փրուզագազույն մետաքսե շրջագգեստը և հետևիցս ձգվող դրա երեքմետրանոց քղանցատուտը: Կուրծքս և գոտկամասս պիրկ գրկել էր կապույտ թավշե սեղմիրանը: Լավ է, որ չնչելու կարիք չունեի, թե չէ չնչահեղձ կլինեի դրա նեղությունից: Գլուխս էլ էր նեղվում: Շոշափելով տեսա, որ այդ չարածձին մագերս հարելով գանգրացրել և հարսանեկան տորտի պես բան է դարձրել, վրան էլ մի ծանր թագ է տնկել:

– Վրայիցս վռագ հանի՛ր այս այլանդակությունը:

– Չեմ հանի, քեզ շատ է սազում արքայադստեր զգեստը:

– Ուրեմն այդպես, հա՛:

Նույն վայրկյանին Ալյոշան տեղում արձանացավ՝ ոտքից գլուխ ամփոփվելով ասպետական արծաթե գրահների մեջ:

– Բը՛–բը՛–բու՛, – հնչեց սաղավարտի իջեցրած երեսկալի տակից:

– Լա՛վ: Այս ամենից ինձ ազատիր և օգնիր հագնվելու ձեր տարագին համապատասխան:

Իսկույնեթ վրաս հայտնվեցին ծնկներիս հասնող թեթև տունիկա*՝ գոտեռոված ոսկե շղթայով, փոկավոր սանդալներ, ձեռքիս՝ հինգկիրոգրամանոց փոքրիկ տավիղ:

– Երկնաբնակի նորաձևություն վերջին ծղրտոցը, – հայտարարեց ախպերիկս:

– Ալյոշա, վերջ տուր գժուլթյուն անելուդ:

– Ուրեմն ինքդ հագնվիր, փոքր չես:

* Տունիկա – հին հռոմեական զգեստ, խավթ՝ կարճ թևերով կամ անթևք (թարգմ. ծան.):

Մի քիչ մտմտացի և ինձ համար հնարեցի կապույտ ժապավենով գոտեորված լայնաթևք ու երկար մոխրագույն զգեստ: Նույնանման ժապավեն հյուսեցի մինչև գոտկատեղ աճած մագերիս: Կոշիկ չհագա, ինչի՞ս էր պետք:

– Հերիք է կատակ անենք, – ասաց Ալյոշան: Հարկավոր է շտապել, ուր–որ է պատարագը կսկսվի:

Եթե Պապիս եկեղեցին Հովտի արտաքուստ ամենագեղեցիկ շինությունն էր, ապա ներքուստ ուղղակի ապշեցնում էր գեղեցկություններ ու բարեգարգություններ: Որմնանկարները հիշեցնում էին Դիոնիսիին, իսկ սրբերի պատկերները՝ Անդրեյ Ռուբլյովին և Ֆեոֆան Գրեկին*։ Դրանցից յուրաքանչյուրի համար ծնկաչոք կգային Ռուսական թանգարանի աշխատակիցները:

Եկեղեցու սեղանը երկրային ուղղափառ սեղաններից տարբերվում էր նախ և առաջ այն բանով, որ աղոթողներից անջրպետված չէր և բաց բարձրություն վրա էր: Սեղանի հետևի կոր պատի մեջ մի լայն բացվածք կար, որտեղից երևում էր խաչը գլխին Գողգոթան**։ Ֆիզիկայի օրենքներին հակառակ՝ բլրի գագաթն այնքան մոտ էր թվում, որ իսկույն քաշվեցի կողայուններից մեկի հետևը, որպեսզի ծածկվեմ նրա կուրացուցիչ փայլից:

Ալյոշան գնաց սեղանի մոտ՝ Պապին օգնելու, իսկ երիտասարդ տատիկներս՝ Կատյան ու Նինան ինձ մոտեցան: Նրանց ձեռքերին մեկական խրճիկ մոմեր կային, որոնցից մեղրի անուշ հոտ էր գալիս: Ինձ երկու մոմ տվին՝ պատվիրելով պատկերների առաջ դնել իմ կենդանի ու հանգուցյալ մերձավորների համար: Մինչ մտածում էի, թե ինչպես այդ անեմ, ձեռքիս երկու մոմերը հալվեցին ու հոսեցին հատակին: Ձեռքերս թաքուն սրբեցի զգեստիս փեշով և կանգնածս տեղում մնացի:

Եկեղեցական երգչախումբ չկար, և երբ արարողությունն սկսվեց, բոլորը միանգամից երգեցին, կանայք՝ ձախ, տղամարդիկ՝ աջ կողմից: Նրանք հրաշալի էին երգում, և ես որոշ բառեր տարբերակում ու հասկանում էի:

* Դիոնիսի (1440-1503), Անդրեյ Ռուբլյով (1360-1430) - ուսուցիչական գեղանկարիչներ: Ֆեոֆան Գրեկ (1340-1405-ից հետո) - բյուզանդացի գեղանկարիչ, ստեղծագործել է նաև Ռուսիայում (թարգմ. ծան.):

** Գողգոթան Երուսաղեմի այն բլուրն է, որտեղ խաչվեց Քրիստոսը: Գողգոթան եբրայերեն անուն է, որ նշանակում է գանգի տեղ, գագաթ (թարգմ. ծան.):

Իհարկե՝ միայն բառերը, բայց ոչ դրանց իմաստը: Սակայն երբ Ալյոշան առաջ եկավ և, ծխականներին ու Գողգոթան տեսնելու համար կիսադարձ կանգնելով, սկսեց Տիրոջը բարձրաձայն աղաչել Երկրի երեսի բոլոր ողջերին, Երկնքում ու դժոխքում գտնվողներին ողորմելու համար, ամբողջ հույսով միացա այդ աղոթքին: Ինչ–որ բան փլվեց մեջս, և աչքերիցս արցունքներ հորդեցին: Լալիս էի ինձ, մորս, նույնիսկ իմ թշվառ Գեորգիի համար: Տեսնես հիմարն ի՞նչ է անում առանց ինձ:

Նաև լաց եղա այն բոլոր մարդկանց համար, որոնք, ինչպես որ ես մինչև վերջերս, ոչ միայն բացարձակապես անտեղյակ եմ, թե ինչ է իրենց սպասում մեռնելուց հետո, այլև չեմ էլ փորձում որևէ բան իմանալ մահից հետո գլխներիս գալիքների մասին: Հետո մի անսպասելի բան պատահեց: Ալյոշան առաջ եկավ և երեք անգամ բարձրագույն արտասանեց. «Անկնունքներ, դու՛րս եկեք: Անկնունքներ, դու՛րս եկեք: Անկնունքներ, դուրս եկե՛ք».*

Նույն վայրկյանին պտտահողմի պես մի բան ինձ դուրս հանեց եկեղեցուց: Սա բնավ էլ այլաբանություն չէ: Ինձ մի պիրկ ու առածիք քամի բռնեց, որին անկարելի էր դիմադրել, բոլորի առաջ դեմքս շրջեց դուրս կողմը և եկեղեցուց դուրս շարտեց: Հայտնվեցի դրսում՝ աստիճանների վրա միայնակ կանգնած:

Շատ տարիներ առաջ մեր այն հարևանուհի տատիկը, որը մկրտել տվեց ինձ ու Ալյոշային, մեզ «անկնունքներ» էր ասում, երբ չարածճիւղություններ անելիս ձայներս գլուխներս էինք գցում մեր ընդհանուր բնակարանով մեկ: Մտքովս չէր անցնում, որ ժողովրդական այս բառի ու եկեղեցական բառապաշարի միջև ուղղակի կապ կա:

Դատարկ տունը գնալ ամենեկին չէի ուզում, ուստի ուղղվեցի լճի կողմը: Նստեցի ջրի վրա թեքված ոսկեգույն ուռենու տակի խոտին, մինչև որ զանգերի դողանջն ազդարարեց ժամերգության ավարտը: Վեր կացա և ընդառաջ գնացի եկեղեցուց ելնողներին:

Արարողությունից հետո բոլորը գնացին ընդհանուր հացկերույթի, որ պատրաստել էին պարտեզի ամենամեծ ծառի տակ: Հսկայական սեքվոյա-

* Սույն դրվագին համապատասխանում է Հայ Առաքելական եկեղեցու ս. Պատարագի կանոնի Վերաբերության առաջին հատվածը. «Ձմկրտվածներից (երախաներից), թերահավատներից, ապաշխարողներից, անմաքուրներից ոչ ոք թող չմոտենա աստվածային այս խորհրդին (հարողություններ)» (թարգմ. ծան.):

յի շուրջը սեղաններ էին բացել, վրաները՝ հաց, գինի ու միրգ: Ամենքի հետ ուտում ու խմում էի: Այնուհետև Պապա ու Ալյոշան աշակերտներին տա-
րան ուսումնական տաղավարներ, իսկ ինձ պատվիրեցին մնալ տան մոտ և սպասել Պահապանին:

Մ'նց ուրախացա, երբ վերևում թռչունների երամի մեջ նկատեցի մեկին, որն իջնելով խոշորանում էր, մինչև որ դարձավ իմ թանկագին, իմ սեփա-
կան Հրեշտակը: Նետվեցի մոտը, և նա ինձ գիրկն առավ ինչպես երեխայի:

- Հազի՛վ եկար: Աչքս ջուր կտրեց:
- Մի՞թե այստեղ ձանձրանում էիր:
- Ձէ, ինչ ես ասում:
- Իսկ ինչո՞ւ ես լաց եղել:

Պատմեցի «անկնունքների» մասին: Պահապանս իսկույն լրջացավ:

– Անկնունքներն այն մարդիկ են, որոնց մասին եկեղեցում հայտա-
րարվել է, որ նրանք պատրաստվում են մկրտվելու: Որպես պատիժ՝
անկնունքների շարքին են դասում նրանց, ովքեր եկեղեցի չեն գնում և
հաղորդություն չեն ընդունում՝ չեն ճաշակվում:

- Ուրեմն՝ այդ կերպ ինձ հասկացրել են, որ մերժա՞լ եմ: Այդպե՞ս է:
- Այնքան էլ չէ: Ձէ՞ որ քեզ թողել են մասնակցելու ժամերգության
առաջին մասին:

- Մի բան էլ. մոմերը ձեռքիս մեջ հավելեցին:
- Ինչպե՞ս եղավ:

Պատմեցի:

– Այդտեղ ոչ մի խորհրդավոր բան չկա: Կատյան ու Նինան արդեն
մոռացել են, թե որտեղից են գալիս այդ մոմերը, կամ, գուցե, ուղել են քեզ
բաժին հանել իրենց աղոթական պտուղներից: Գիտե՞ս, մոմերը մեզանում
աղոթելիս հայտնվում են իրենք իրենց՝ որպես աղոթքի նյութական խորհր-
դանիշեր: Դու քո ընծաների համար Աստծուն շնորհակալ չես եղել, իսկ
նվիրվածը չեն նվիրում: Ուրիշ ի՞նչ ես արել այսօր:

Հայտնեցի առավոտվա ուրախություններս, իսկ Պահապանս խոսեց
Պապին դպրոցի մասին: Իմացա, որ Հովտում, որը տեղադրված է Դրախ-
տի՝ Երկրին ամենամոտ մարզում, գտնվում է այն հոգիների նախապատ-
րաստական դպրոցը, ովքեր դեռ պատրաստ չեն ապրելու Երկնային

Թագավորության ավելի բարձր ոլորտներում: Նրանք այստեղ են անց-
կացնում այն ժամանակը, որն անհրաժեշտ է հոգևոր աճի, այսպես ասած,
հասունանալու համար, իսկ հետո սկսում են իրենց վերելքը հաջորդա-
կան՝ ըստ կարգի օթևաններով: Այս ինձ զարմացրեց.

– Դուրս է գալիս, որ Պապիս համար, թեև նա սուրբ է, անմատչելի՞
են Դրախտի ավելի բարձր օթևանները: Արդար բան չէ:

– Ի՞նչ ես ասում, լրիվ հակառակն է: Պապդ առանձնահատուկ սպա-
սավորություն ունի, ինչը Աստված է անմիջաբար նրան հանձնարարել
իրբև սրբի և հոգևորականի: Դա շատ բարձր պատիվ է: Եվ հավատա,
նրան անգամ Աստծո իսկ աթոռի մոտ ընդունում են մեծ հարգանքով:

Քանի որ ինձ գրախտական ուսանող լինելու հրավեր չէին արել,
Պահապանս զբոսնել առաջարկեց:

– Ուզո՞ւմ ես իրար հետ կողք-կողքի թռչենք: Հիշեցի հիվանդանոցի
առաստաղի ներքո սավառնելս. բայց այն ժամանակ փուչիկի նման էի:
Իսկ երբ հեռանում էինք Երկրից, դա այնպիսի շմեցուցիչ արագություն
կատարվեց, որ չհասցրի անգամ վախենալ, իսկ մեղսակայանից մեղսակա-
յան թռչելն ավելի շատ ընկալվում էր որպես տարածություն հանդիպա-
կաց շարժում: Այժմ թանձրացել էի, մարմինս դարձել էր նյութեղեն, թեև
սա մի ուրիշ տեսակ էր, քան էր երկրային կյանքում: Նկատել էի, որ ոտ-
քերս հետք չեն թողնում ավազի վրա, բայց խոտը դրանց տակ ծուլում էր:

- Հիմա կկարողանա՞մ թռչել:
- Փորձիր:

Վազելով թափ առա ու վեր ցատկեցի. մի ակնթարթ կախվեցի օդում,
բայց իսկույն ծանրորեն իջա գետին:

– Վարժվելու կարիք ունես:

Հրեշտակս ինձ ձեռքերի վրա առավ ու վեր սլացավ: Սկզբում նվաղեցի՝
ոտքերիս տակ տեսնելով ծառերի կատարները: Կողքիցս օրորվելով սահեց
խաչը գլխին զանգակատունը, և ապա ամբողջ Հովիտը երևաց մեր տակ:

Պահապանս ինձ գրկած սուրաց դեպի Հովտի ծայրի ժայռոտ պատը:
Սրբնթաց մոտենալով սպիտակ կավճաժայռերին՝ վեր խոյացավ, և մենք
հայտնվեցինք արլայան խոտաբույսով ծածկված մի բարձր սարահարթի
վրա: Այստեղից Հովիտն իր լճով, գետով ու քաղաքով հանդերձ մանկա-

կան սքանչելի խաղալիք էր թվում: Մեր տակից մի ամպիկ էր լողալով անցնում, իսկ դրա ստվերը ներքևում վազում էր կանաչ ձորով:

Եվ այստեղ Հրեշտակն արեց նույն բանը, ինչ մի ժամանակ հայրս էր արել ինձ ու Ալյոշային լողալ սովորեցնելիս: Նա ինձ երկու ձեռքով գլխից վեր բարձրացրեց և ժայռից նետեց: Ծչացի, ձեռքերս տարածեցի և ...սկսեցի թռչել:

– Թռչո՛ւմ եմ, թռչո՛ւմ: Տես, Պահապա՛ն, նայիր ինչպե՛ս եմ թռչում: Հրեշտակս արդեն օդում լողում էր կողքովս և ժպտում: Թռչելն արբեցուցիչ էր: Ես թռչում էի կանգնած, նստած, պռուկած, գլուխկոնձի տալով: Հրեշտակս վարժեցնում էր՝ ինձնից ոչ պակաս ուրախանալով: Շուտով սովորեցի նկատել ու «թամբել» վեր բարձրացող օդահոսանքները և սավառնել դրանցով: Յնծուխյամբ սուրացի միայնակ ամպիկի միջով և դուրս թռա լրիվ թրջված, բայց իսկույն չորացա քամուց:

Պարզվեց, որ ցածրից թռչելը զգալիորեն անհարմար է. ամեն վայրկյան կարող էի բխվել ծառի կամ խփվել գետնին, սակայն շուտով տիրապետեցի սավառնորդության այդ հմտություններին ևս: Ինչպիսի՞ աս* էր հանձին իմ գոհվել, երբ ցած էի թռել մյուսխենյան պատշգամբիցս:

Բայց ամենից շատ ինձ դուր եկավ լճի վերևում խաղալը. հետաքրքրասեր ձկները շարունակ դուրս էին ցայտում տեսնելու, թե այդ ի՞նչ հազվագյուտ թռչուն է իրենց այցելել: Աքանջելի բան էր թափ առնելով՝ ջրի մեջ սրաթուխ սուզվելը և իսկույն վեր լողալով՝ օդ սլանալը:

Ուզածիս չափ հովտում դես ու դեն թռչելուց հետո Հրեշտակիս խնդրեցի, որ ուրիշ տեղ էլ թռչեմ: Նա համաձայնեց, բայց ինձնից խոստում առավ, որ առանց իրեն կամ մերձավորներիցս որևէ մեկի՝ Հովտից դուրս չեմ գա:

– Կարող է մոլորվես կամ այնպիսի տեղ թռչես, ուր պետք չէ: Իսկ հիմա ո՞ւր ես ուզում:

Յուլյց տվի ձյունապսակ գազաթնները: Ընտրեցինք ամենաբարձրը և իրար ձեռք բռնած թռանք դրա կողմը: Մոտիկից այն նման էր պսպղուն հսկայական ձյունակուլտի: Պտտվեցինք շուրջը և, ամենաբարձր մասում մի տափարակ որոշելով, իջանք վրան:

Ոտքերիս տակի ձյունն ամենևին չէր պնդացել, ինչպես որ ամռանն

այդ լինում է երկրային սարերի սառցադաշտերում: Բոբիկ ոտքերս մինչև կոճերը խրվում էին մեջը, բայց չէի մրսում. ձյունը թարմ սավանից սառը չէր: Հրեշտակս առաջարկեց այն համտեսել. «Աշակերտներից շատերին դուր է գալիս»: Ձնագնդիկ շինեցի ու մի կտոր կծեցի. լիմոնի հյութով ու վանիլով պաղպաղակի պես համեղ էր:

– Դուրս է գալիս, որ եկեղեցական պառվուկների պատմած այն հեքիաթները, թե երկնքի բնակիչները ամպերին նստած պաղպաղակ են հուպ տալիս, իրակա՞ն հիմք ունեն:

– Դե իհարկե: Եթե հիմա Երկիր վերադառնայիր և տեսածներդ պատմեիր, մի՞թե հեքիաթի պես չէր լինի:

– Ավելի շուտ՝ առակի... Վա՛յ: Դե լա՛վ, Հրեշտակ:

Հրեշտակս... Այո, հենց իմ և ոչ թե ուրիշի հրեշտակը, ձնագնդիկ էր շինել ու վրաս նետել: Տակ չմնացի և սկսեցի նրան ձնագնդակոծել: Ու Հրեշտակիս նեղը գցեցի, որովհետև նրան ակնհայտորեն խորթ էր կովագանությունը, ուստի չէր կարող հաղթել ձնակուլի մեջ: Բայց երբ ձնագնդակներ տեղալով՝ նրան քչեցի մինչև տափարակի եզրը, նա, թեև թափահարելով, այնպիսի ձյունամրրիկ առաջացրեց, որ այլևս չէի կարողանում մոտենալ: Հրեշտակի բարձրացրած ձյունափոշին արևից այնպես էր կայծկլտում, որ թվում էր, թե ողջ աշխարհն է մեր շուրջը շողշողում ու ծիծաղում:

Երբ այս գոտանքից վերադարձանք, տանն արդեն սկսել էին անհանգստանալ ինձ համար: Օրամուտ էր, և ողջ ընտանիքը հավաքվել էր հյուրասենյակի բուխարու կրակի առաջ: Հրաշալի խաղաղ երեկո անցկացրինք՝ հիշողություններին անձնատուր լինելով: Մեր ընտանիքի անցյալի մասին անհայտ շատ բաներ ինձ պատմեցին Պապս ու երկու տատիկներս: Նրանք շատ էին ափսոսում, որ չեմ կարող այցելել հեռավոր օթևաններն ու ծանոթանալ իմ բոլոր նախնիների հետ: Հորս մասին ոչ ոք ոչ մի բան չգիտեր:

Լսելով իմ սենյակից ժամացույցի տասներկու անգամ խփելը, ողջագուրվեցի բոլորի հետ և բարձրացա հարկաբաժինս: Կանգնելով Աստծո Մոր «Կազանյան» պատկերի առաջ՝ ասացի. «Սրբասուրբ Աստվածածին, փրկիր մեզ: Եվ բարի գիշեր քեզ»: Այսպես ավարտվեց Հովտում իմ առաջին օրը:

* Աս - առաջնակարգ օբյեկտ (թարգմ. ծան.):

5 –րդ գլուխ

Մեղմասահ հոսում էին լուսավոր ու անվիշտ օրերը: Ընտանիքիս հետ առավոտները ճշտապահորեն գնում էի եկեղեցի, ջանում էի աղոթել, բայց «Անկնունքներ, դուրս եկեք» բացականչությունը լսելուն պես ինքս էի խոնարհաբար հեռանում:

Մինչև պատարագը վերջանալը ինձ հնարավորություն էր տրված անելու ուզածս: Սովորաբար մենակ էի գնում զբոսնելու և մի քանի օրում քայլելով ու թռչելով ուսումնասիրել էի ամբողջ Հովիտը: Ախ, ի՜նչ գեղեցիկ էր այն: Եթե նայեիր գետի հոսանքն ի վայր, Հովիտը ձախ կողմից եզերվում էր լեռնաշարով, իսկ աջից ձգվում էր բլուրների շղթան, որի վերևում միշտ երևում էր հեռավոր միայնակ բարձունքը՝ ոսկե խաչը գլխին: Դա այն նույն Գագաթն էր՝ Գողգոթան, ուր գնացել էինք Աստուծոն երկրպագելու: Մի անհասկանալի կերպով այդ խաչը տեսանելի էր Հովտի ամեն կետից և, ինչպես հետո իմացա եղբորիցս, տիեզերքի յուրաքանչյուր կետից, բացառությամբ Երկրի: Սակայն Ալյոշան ասաց, որ Երկրի վրա Փրկչի նոր գալուստից առաջ այն միաժամանակ տեսանելի կլինի նաև բոլոր երկրաբանակներին: Դա անհասկանալի էր (չէ՞ որ Երկիրը կլոր է), բայց ես հավատում էի Ալյոշային:

Հովտում ամենաքանչելի բանը այստեղի ազդեցությունն էր իմ նոր մարմնի վրա: Այն ամրապնդվում և երիտասարդանում էր ժամ առ ժամ: Ես բառացիորեն լցվում էի լույսով և ուժով: Մեռածս ժամանակ քառասունից քիչ անց էի, առանձնապես որևէ հիվանդություն չունեի, սակայն տարիքս սկսել էր զգացնել. չկար արդեն նախկին թեթևությունը, քաշս ավելացել էր, համակարգչի առաջ երկար նստելուց մեջքս մերթ ընդ մերթ ցավում էր, իսկ վզիս ողները երբեմն ճռճում էին: Ծերանալու այս բոլոր նշանների մասին հիմա կարելի էր մոռանալ: Ամեն շարժումից մարմինս ցնծում էր, տեսողությունս երիտասարդ ժամանակվա պես սուր էր դարձել, հոգնել չունեի:

Վայելելով այս գուտ մարմնական խնդությունները՝ հիշում էի անդրձիրիմյան կյանքին չհավատացող տկար ծերերին, թե ինչպե՛ս են նրանք, խեղճերը, վախենում մահից: Որքա՛ն ջանք ու փող են վատնվում ծերու-

նական տանջալի գոյատևումը երկարաձգելու վրա: Իսկ հորմոններ գործածելուց զժված և դիմահարդար վիրաբույժների դանակով կտրտված՝ ձևված «Չահելացող» թշվառ ծեր կանանց մասին խոսելն իսկ ցավալի է: Եթե նրանք իմանալի՛ն, որ մահը հավերժական երիտասարդության կենսահյուսված է... Բայց գուցե լավ է, որ այդ առժամանակ նրանցից ծածուկ է մնում, այլապես, ո՞վ գիտե, իրարից առաջ ընկնելով՝ ինքնասպան լինեին Չահելանալու համար:

Ընդհանուր հացկերույթից հետո, որին ջանում էի հասնել զբոսատեղից, Պապիս դարոցում սկսվում էին պարապմունքները: Տաղավարներում լուսարձակում էին գույնզգույն պաստառները, հնչում էր երաժշտություն, փորձասենյակներում ինչ–որ աշխատանքներ էին արվում: Բայց շատ հաճախ պարապմունքներն անցնում էին հենց պարտեզում՝ մարմարե մեծ զրուցարանում կամ պարզապես բացատում: Պապս կամ Ալյոշան «բազմում» էին նստարանին, իսկ ունկնդիրների աչք ու ախանջ դարձած երամը շրջապատում էր նրանց՝ ընկողմանելով ուղղակի խոտերի մեջ:

Սիրտս քաշում էր մոտները: Կամացուկ մոտենում էի, նստում ամենավերջում՝ մի կողմի վրա, և բարեխղճորեն փորձում էի խորամուկս լինել Աստծո և արարչության մասին նրանց դատողությունների մեջ: Բոլոր աշակերտները երիտասարդ էին ու գեղազեմ, իսկ մարմինները լույս էին տալիս: Սակայն Հրեշտակիս ու Պապիս չէին հասնի: Նույնիսկ Ալյոշան, Կատյան ու Նինան ավելի լիալույս էին, քան աշակերտներից որևէ մեկը:

Այդ երիտասարդները վրաս նայում էին հետաքրքրությամբ և, ինչպես ինձ թվում էր, թեթևակի կարեկցանքով: Այդ բանն ինձ բնավ չէր վիրավորում. նրանք ընտրվել են Դրախտի համար, թեև նախապատրաստական դասընթացներ պետք է անցնեին, իսկ ես խիստ ժամանակավոր ու պատահական մարդ էի... Բոլորն աչքի էին ընկնում պարապմունքների հանդեպ նախանձախնդրությամբ, ասես ձգտում էին գիտելիքներ կուտակել ողջ հավերժության համար:

Աշակերտներն ապրում էին մենակ և փոքր խմբերով՝ ով որտեղ ուզում էր: Նրանք իրենց համար տները ճարտարում էին ըստ իրենց երկրպիլն երազների և իդեալական ճարտարապետության մասին պատկերացումների: Այդ պատճառով հեռվից այքան գեղեցիկ երևացող քաղաքը մոտից

երբեմն Դիանեյենդե* էր թվում. օրինակ՝ փոքրակերտ Պարթենոնի** կողքին կանգնած էր հնդկացիական վիզվամը***, իսկ փորագրազարդ վերնատնակը**** միջնադարյան խաղալիքային դղյակի հարևանն էր: Բայց այս ամենը կառուցվել էր սկզբում, երբ նրանք նոր էին Երկրից եկել և խենթորեն օգտվում էին իրենց երևակայած բաները նյութականացնելու հնարավորությունից: Հետո այդ բոլոր խաղալիքները ձանձրացրին, աշակերտները տեղափոխվեցին խստաոճ տաղավարներ կամ գյուղական հասարակ տնակներ, իսկ Հովտի պարտեզները լցրած նրանց ճարտարապետական գեղանկար հորինվածքները հալչելով հետզհետե ավերակ էին դառնում և ի վերջո անհետանում:

Պարապմունքներից ու ժամերգություններից բացի աշակերտները շատ և հաճույքով աշխատում էին. խնամում էին սարերի անտառներն ու մարգագետինները, քաղաքի այգիները, պահպանում գետերի ու լճերի մաքրությունը: Կենդանիները նույնպես խնամքի ու հոգատարություն կարիք ունեին. գազանները, թռչունները, երկկենցաղները ուղղակի քսվում՝ մոտեմոտ էին անում մարդկանց: Հասկանալի է, որ մեջները վտանգավոր կենդանիներ չկային. գիշատիչները Դրախտում անցել էին բուսակերական սննդականոնի: Հիվանդ կենդանու չեմ հանդիպել:

Թռչելիս անզգուշաբար մի ճպուռի դիպա ու վնասեցի: Ես ու Հրեշտակս խոտերի մեջ գտանք զմրուխտե գեղեցկուհուն և տարանք միջատներով զբաղվող աղջկա մոտ: Նա ապրում էր կղզու ապակյա տաղավարում: Աղջիկը ճպուռին զգուշորեն դրեց ափի վրա և մեզ հրավիրեց իր արհեստանոցը: Նա մատներով, առանց գործիքների, ուղղեց ու բուժեց վնասված թևը: Մինչ աղջիկը ճպուռին էր գննում, ես նայում էի տաղավարի ապակիներին արված թիթեռների նկարներին: Սեղանին մի հսկայական սպիտակ թիթեռ էր պառկած, որը, ինչպես ինձ թվաց, թղթից էր պատրաստված: Կողքին վրձիններով ու ներկերով բաժակներ կային: Թիթեռի թևի ծայրին

* Դիանեյենդե - Կալիֆորնիայում գտնվող մանկական զբոսայգի՝ զվարճավայր, որն ստեղծել է ամերիկացի կինոռեժիսոր ու մուլտիպլիկատոր Ուոլտ Դիանեյը 1901-66 թթ.:

** Պարթենոն - Աթենաս Պարթենոն չաստվածուհու տաճարը Աթենքում: Հին հունական արվեստի նշանավոր հուշարձան: Կառուցվել է Ք.ա. 447-38-ին:

*** Վիզվամ - Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների ճյուղաչեն շրջանաձև կացարան:

**** Վերնատնակ (Ե) - ուռևական մի հեքիաթում նկարագրված տնակ, որտեղ միասին ապրում էին զանազան կենդանիներ (թարգմ. ծան.):

կապույտ ներկ էր քսված:

– Սա ի՞նչ է, – հարցրի:

– Թիթեռների նոր տարատեսակի տիպարը՝ մոդելը, – պատասխանեց աղջիկը: – Ես սրա համար երանգ եմ ընտրում:

Ահա այսպես, միանգամայն պատահաբար, բացվեց վարագույրը, և ես որոշ բաներ իմացա, թե աշակերտներին ինչ գործի համար են նախապատրաստում Պապիս դպրոցում: Ուրեմն նրանք կարող են թիթեռներ ճարտարել ու նախշել:

Դպրոցական պարապմունքների ժամերին Հրեշտակս հաճախ ինձ հրավիրում էր հեռավոր զբոսանքի: Հովտի սահմաններից դուրս ինքնուրույն թռչել չէր թույլատրվում, և Պահպանս ինձ գրկած էր տանում: Նրա թևերի ներքո, նրա մեծ ու ամուր ձեռքերի մեջ գրկված՝ թռիչքներ կատարելը ցնծալի երջանկություն էին հասցնում ինձ: Հրեշտակներին թռչունները սիրում են, և նրանց ուրախ ծվլլացող երամները հաճախ էին ուղեկցում մեզ: Մեր մոտով լողում էին թեթև ամպաքուլաները, իսկ ներքևում մի հրաշագեղ տեղանքը փոխարինվում էր մյուսով: Իջնում էինք այն տեղերը, որոնք ինձ դուր էին գալիս Հրեշտակի թռիչքի բարձրությունից, և նա մշտապես համբերատար էր իմ հանդեպ. կարող էր ժամերով հանգիստ սպասել, մինչև խեցիներ հավաքեի ծովափից, կապույտ ցինածաղիկներ ու նրբամոխրագույն առյուծաճանկեր՝ էդելվեյսներ քաղեի սառցադաշտերի եզրերից:

Մի անգամ նա ցույց տվեց միանձնուհիների օթևանը՝ վանքը: Վերևից այն նման էր պարտեզների մեջ թաղված հարավային մի սպիտակ քաղաքի, որը կառուցապատվել էր միայն եկեղեցիներով: Հազարավոր նախազարդ խաչերը մեծ ծառերի մուգ կանաչի վրա գցված ոսկե ժանյակ էին թվում:

Պտտվեցինք վանքաքաղաքի վրա, և ես նրա փողոցներում տեսա վանականի զգեստներ հագած շրացուցիչ գեղեցկության տեր հարավային աղջիկներին: Նրանք նկատեցին մեզ և սկսեցին ժպտալով մեկմեկու մեր կողմը ցույց տալ: Ոմանք մեզ ձեռքով էին անում: Շատ էի ուզում նրանց մոտ իջնել ու ծանոթանալ հետները, բայց պարզվեց, որ անհնար է: Հենց մի քիչ իջանք, ստիպված եղա աղիողորմ աղաչել:

– Հրեշտակս, տուն թռչենք: Այստեղ օդը երևի շատ նոսր է, գլուխս պտտվում է, աչքերս էլ ծակծկվում են:

– Դա օդից չէ, – ասաց Պահապանս, – Աստծո շնորհն այստեղ չափից առատ է քեզ համար, ուստի ուժիցդ վեր է այն կրելը:

Տեսա, որ անպիտանությունս տխրեցնում է իմ Հրեշտակին, բայց ի՞նչ կարող էի անել: Պահապանիս հետ զարմանահարաշ շատ տեղեր այցելեցի, սակայն գրեթե ամեն անգամ մեր երկնային զբոսանքներն ավարտվում էին այն բանով, որ բնության մի խաղաղ անկյուն էինք ընտրում և նստում զրուցելու: Մենք անվերջ քրքրում ու քննում էինք իմ կյանքը, և նա ջանում էր ինձ բացատրել, որ այսինչ բանը սխալ եմ արել, ինչ մեղքեր եմ գործել և ինչպես պիտի կյանքս կառուցեի, որպեսզի մեղքերից խուսափած ու հոգիս փրկած լինեի:

Մեծ մասամբ համաձայնում էի նրա ասածներին (դեռ չհամաձայնեի՞ էլ մեղսակայաններում քաշածիցս հետո): Սակայն մեր զրուցյները երբեմն վերածվում էին բանավեճերի:

– Այ, շարունակ կրկնում եք, որ Աստված գթասիրտ է մեղավորների հանդեպ, – սկսում էի ես, – նաև պնդում եք, որ Նա ոչ մի բանով չի սահմանափակում ազատությունս: Բայց չէ՞ որ Աստված չի ուզում, որ ես մեղք գործեմ. այդպե՞ս է: Եվ հենց դրանով Նա արդեն սահմանափակում է իմ ճակատագիրն ազատորեն տնօրինելու իրավունքս:

– Ո՛չ, Աստված իրոք ոչ մի բանով քեզ չի սահմանափակում: Նա կամենում է, որ ինքդ քեզ սահմանափակես: Նա սիրում է քեզ և սպասում, որ դու այդ կանես իր հանդեպ տածածդ սիրուց:

– Իսկ ինչո՞ւ Նա այդ ուղղակի չի ասում:

– Նա այդ ասել է առավելագույնս պարզ: Ձէ՞ որ Ավետարանը կարդացել ես:

– Իհարկե. և ցնցվել եմ:

– Ի՞նչն է քեզ ցնցել:

– Տների՝ համարների գեղեցկությունը: Այնպիսի՞ ազատ ոտանավորի պես է գրված:

– Օ՛հ, Աստված: – Հրեշտակս ծափ տվեց ձեռքերով ու թևերով: – Եվ ոչ մի ակնթարթ մտքովդ չի՞ անցել, որ Ավետարանը ուղղակի քեզ հղված

Բարի լուր է: Նրանում միանգամայն հստակորեն շարադրված են քո հոգու փրկության պայմանները. չէ՞ս նկատել:

– Ձէ: Իսկ այդ ի՞նչ պայմաններ են:

– Քրիստոսի պատգամները ամբողջովին պահելը:

– Նման մի բան գլխումս ծագել է, նույնիսկ փորձել եմ պատկերացնել, թե ինչ կլինեմ, եթե սկսեմ պատվիրաններով ապրել:

– Եվ ի՞նչ ես պատկերացրել:

– Որ ես կդադարեմ ե՛ս լինելուց, կկորցնեմ անհատականությունս և նույնիսկ կարող է դառնամ սուտ բարեպաշտ ու կեղծավոր: Ու ես իսկույն մարել եմ այդ միտքը և կորցրել փրկությանս գործն սկսելու հնարավորությունը: Դու գիտես, որ եթե կարողանայի վերագառնալ ապրածս կյանքին, շատ բան կվերանայեի: Բայց ի՞նչ օգուտ ուշացած ափսոսանքներից:

– Ջուր՝ անպտուղ ափսոսանքներից օգուտ չկա, այդպես է: Բայց Աստծո ողորմածությունը սահման չունի:

– Եթե այդպես է, ապա Աստված առավել ևս պետք է նկատի առնի մեղմացուցիչ հանգամանքները. մի՞թե Նա չգիտե, թե ինչ միջավայրում եմ աճել:

– Մարդիկը շատ եք մտահոգվում ձեր անձնական անկախության համար, բայց հենց որ բանը հասնում է անձնական պատասխանատվությանը, սկսվում է հետո–ն, թե՛ կանեմ չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ... Իսկ կարևորը միայն Կիրակին* է: Հասկացիր, որ նա քեզ, հենց քե՛զ փրկելու համար Երկիր իջավ, բոլոր մեղքերդ իր վրա վերցրեց, դրանց համար խաչվեց ու հարություն առավ: Այս է քո անձնական փրկությունը:

– Մի՞թե դու և Պապը չեք ինձ փրկել մեղսակայաններում:

– Պապը կարողացավ դրանց միջից քեզ դուրս քաշել լուկ այն պատճառով, որ իրեն հավատացիր և փրկվելու համար իր կողմը նետվեցիր: Եթե մեռնելուց մի վայրկյան առաջ դու նույնպիսի հավատով ու սիրով

* Կիրակի (կիրակ) հունարեն բառ է, որ նշանակում է տերունի՝ տերունական: Եբրայերեն այս առաջին օրը՝ միաշաբաթը, նվիրված է Քրիստոսի հարության հիշատակին, ուստի կոչվում է տերունական (օր): Ռուսները կիրակի օրվան ասում են չԷ չԷ՝ հարություն (թարգմ. ծան.):

նետված լինելի՞ր առ Աստված, ապա փրկված կլինելի՞ր հավիտենական կյանքի համար:

– Սակայն հիմա, երբ համարյա ամեն ինչ ինձ համար պարզ ու հասկանալի է դարձել, Աստված ինչո՞ւ է ուզում ինձ բաժանել մերձավորներիցս: Մի՞թե նա ափսոսում է ինձ մի պատիկ տեղ տալ Հովտում: Ախր, չեմ տենչում յոթերորդ երկինք ընկնել, չեմ ձգտում հասնել հոգևոր կատարելություն, իմ ուզածն այստեղ՝ Դրախտի ծայրին, սուսիկ–փուսիկ, խաղաղ ապրելն է:

– Հիմա՛ ես այսպես ասում: Դու սիրում ես քո ընտանիքին, այլ ոչ թե Աստծուն: Իսկ առանց Աստծուն սիրելու չես կարող ապրել Նրա սիրո աշխարհում: Այժմ քեզ սնուցում և Շնորհի մեջ են պահում թե՛ Պապի, թե՛ մեր ամբողջ ընտանիքի սերն ու աղոթքը: Բայց նրանք չեն կարող հավերժ քո արյունատուները՝ դոնորները լինել: Բավական է, որ իրենց ուշադրությունը շեղեն քեզանից, նախկին բոլոր կրթերդ, որոնք կենդանություն դ ժամանակ արմատախիլ չես արել, քեզանում գլուխ կբարձրացնեն ու կսկսեն գործել: Դրախտը քեզ կթվա անհամ ու ձանձրալի, իսկ դու չես կարողանա դրա դեմ պայքարել և կվհատվես: Դու կխամրես սեփական արմատ չունեցող բույսի պես, կթառամես պոկված և ջրի մեջ դրված ծաղկի նման. որքան էլ փայփայես, միևնույն է, դատապարտված են կորստյան:

Այս ամենը տխուր էր և համոզիչ: Տարօրինակ է, բայց Դրախտում էլ ես ու Հրեշտակս դեերից էինք խոսում: Մի անգամ հարցրի.

– Ասա, արար–աշխարհում կա՞ մի վայր, որտեղ կարելի է գոյատևել առանց Աստծո, հավերժ ապրել ուզածիդ պես:

– Դու ասացիր «արար–աշխարհ» և դրանով ամեն ինչ ասացիր, որովհետև Աստված է արարել աշխարհը: Սակայն արարչագործությունից հետո Նա աշխարհը չի թողել անկառավար, ինքն իր գլխի: Աշխարհը կանգուն է մնում միայն Աստծո միջոցով. թեկուզ մի ակնթարթ զրկված մնալով Նրա շնորհից՝ այն ցրիվ կգար ու կզազարեր լինելուց: Կարելի է ասել, որ կա միայն Աստված, իսկ ամենքս Նրա ստեղծածն ենք և կանք Նրա կամքով: Կարելի է լինել նրանից հեռու, կարելի է լինել Նրա մոտ, սակայն անհնար է լինել Նրանից դուրս:

– Իսկ սատանա՞ն ու դեև՞որը: Դրանք բացահայտորեն կառավարվում, գոյատևում են առանց Աստծո:

– Ո՛չ, դրանց ևս Աստված է ստեղծել:

– Ի՛նչ:

– Այո, և հիշում եմ, թե անցյալում ինչպիսին էր սատանան, երբ Արուսյակ էր կոչվում:

– Հիշում եմ, կարդացել եմ, որ սատանան նախկին գերագույն հրեշտակ է: Դուրս է գալիս, որ ստեղծելով Արուսյակին՝ ապագա սատանային, Աստված Ի՞նքն է ստեղծել համաշխարհային չարիքը՝ չարը: Կամ՝ չարիքը սատանա՞ն է ստեղծել: Բայց այդ դեպքում սատանան իրոք ստեղծիչ ու ստեղծագործ ուժ՝ դեմիուրգ է, ինչպես ինքն է իրեն հորջորջում:

– Դե նա միշտ ստում է. ոչ մի բան էլ իրականում նա չի ստեղծել: Հիշում եմ, թե ինչպես նա ու նրա ողջ զորքը հայտարարում էին, որ մինչև հիմքերը կքանդեն հին աշխարհը, իսկ հետո կկառուցեն նախկինից լավ նոր աշխարհ՝: Հիմա ո՞ւր է, որտե՞ղ է այդ նոր աշխարհը:

– Գուցե Երկի՞րն է՝ բոլոր մեղքերով ու մեղավոր մարդկությունը հանդերձ: Որքա՛ն բաներ է այնտեղ սարքել սատանան. պատերազմներ, ռազմափոխակ ու կենսաբանական զենքեր, բնության քայքայում, հանցագործություններ ու սպանություններ: Եվ առհասարակ, Երկրում եղած ամենայն զարչելի ու կործանարար բան սատանայի ու նրա զորքի գործն է:

– Ընդհանրապես ընտրելով «կործանարար» բառը: Այն ամենը, ինչ իբր թե ստեղծել է սատանան, իրականում ոչ թե նոր ստեղծված բան է, այլ Աստծո ստեղծածի ազավաղում ու քանդում: Սատանան ինքնուրույն կերպով փոշեհատիկ անգամ չի ստեղծել: Մահը կյանքի կործանումն է, ատելությունը՝ սիրո, մեղսագործությունը՝ մարդու անաղարտ բնության:

* Աշխարհը քանդելու մասին այս խոսքը կա «Ինտերնացիոնալ» կոչվող հիմնում՝ օրհներգում, այն է՝ «Այս հին աշխարհը կքանդենք մենք Մինչև հիմքերը և հետո Մի նոր աշխարհ կշինենք մենք, Ուր ոչ ստրուկ կա, ոչ դժգոհ»: Խոսքի հեղինակ՝ Էմիլ Գոտիե, երաժշտ. Պիեռ Դեգեյտերի, Ք.Վ. XIX դար: Այս խոսքը կա 137- րդ սաղմոսում. «Հիշի՛ր, Տեր, թե ինչ էին ասում Եդովմի (Կարմիրի) որդիները. Քանդեցի՛ք, քանդեցի՛ք, հիմնահատակ արեք» (Էջմիածնի Հրատ.), «Փլցուցեք, փլցուցեք մինչև անոր հիմքը» (Բեյբլուսի Հրատ.): Հեղինակ՝ Դավիթ Թագավոր, Ք.ա. XI դար: «Ինտերնացիոնալ» Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության և աշխարհի մյուս կոմկուսների հիմնն է: Եդովմ նշանակում է կարմիր: Հիշենք, որ աստվածընդհան, Քրիստոսի թշնամի Խորհրդային Միության պետական գրոշը ամբողջովին կարմիր էր: Կարմիր գրոշն առհասարակ հեղափոխության խորհրդանշանն է (թարգմ. ծան.):

Սատանան ստեղծագործելու հավակնություն ունի, բայց ստեղծելու ճար չունի, որովհետև ստեղծագործություն համար պահանջվում են Աստծո գործությունն ու բարեհաճությունը: Իսկ այդ գործի ընթացքում, իբր թե մրցակցելով Արարչի հետ, ընկած հրեշտակները ոչ միայն հնարել են ստեղծագործելու տիեզերական ծաղրանկարը, այլև, իրենք էլ այդ չցանկանալով, աղճատել են իրենք իրենց, կորցրել են հրեշտակային պատկերը և մնացել են առանց պատկերի, դարձել են անկերպարան՝ անճոռնի: Դու նկատե՞լ ես, թե որքան փոփոխական, հեղհեղուկ է նրանց արտաքինը:

– Այո: Նրանք կարծես թե չեն կարողանում իրենց պահել մի կերպարանքի շրջանակի մեջ և շարունակ փոխվում են աչքիդ առաջ: Սատանան՝ նույնպես:

– Դրա պատճառն այն է, որ նրանք իսկական կեցություն՝ գոյակերպ չունեն: Նրանց գոյությունը, որքան էլ այն երկար թվա մարդկային պատկերացմամբ, իրականում ժամանակի մեջ երկարաձգված ինքնակործանում՝ ինքնավերում է: Նրանց գոյակերպը աղետավոր է, նրանք ոչ թե ապրում, այլ փչանում, ոչնչանում են: Աստծուց երես դարձնելով՝ նրանք իրենց նետել են կործանման խորխորատը և ահա միլիոնավոր տարիներ է, ինչ թուշում ու թուշում են դեպի հատակը, մինչև որ ի վերջո հասնեն Աստծո որոշած սահմանին:

– Նրանք հավատո՞ւմ են Աստծուն:

– Ինչպե՞ս կարող են չհավատալ Մեկին, Ում դեմ փորձում են պատերազմել: Աստվածամերժությունը նրանք հնարել են մարդկանց գայթակղելու համար, իսկ իրենք այդ անհեթեթությունը բնականաբար չեն հավատում: Անգոր չարությունը համակված՝ նրանք ձգտում են իրենց հետ անէություն, չգոյություն սոսկալի ձագարապտույտի մեջ քաշել Աստծո ստեղծածի գոնե մի մասը, և առաջին հերթին՝ մարդկանցդ, որովհետև մարդը Աստծո սիրած ստեղծագործությունն է:

– Չգիտեմ, գուցե դեռևս չեմ կարողանում ինչպես հարկն է սիրել Աստծուն, բայց սատանային ու դևերին անշուշտ ատում եմ:

– Այդ քիչ է, սակայն արդեն լավ բան է: Ի դեպ, երբեկից մտքովդ չի՞ անցել, որ, պայքարելով խորհրդային վարչակարգի դեմ, դու, ըստ էության, պայքարել ես սատանայի դեմ, քանի որ այն սատանայական վարչակարգ էր:

– Շատերն էին այն այդպես կոչում, բայց ես կարծում էի, թե դա փոխաբերություն է:

– Ի՞նչ փոխաբերություն: Ռուսաստանը սատանայի իշխանությունն էր հանձնվել ունեցած մեղքերի պատճառով:

– Մենք կարծում էինք, թե այլախոհությունը քաղաքական գործոն է, սակայն պարզվեց, որ Աստծո գեներն է:

– Բավական մեծ կարծիք ունես քո մասին:

– Նորի՞ց հպարտություն է:

– Այդպես է : Սակայն մի բան էլ կա: Ճշմարտությունը պաշտպանելը հաճո է Աստծուն, բայց միայն այն պայմանով, որ դա արվի հանուն ճշմարտության, այլ ոչ թե անձիդ շահի կամ ինքնահաստատման համար:

Ես չփոփվեցի և ջանացի խոսակցությունը մտցնել նախկին հունի մեջ.

– Իսկ դու չե՞ս խղճում դևերին: Չէ՞ որ նրանք նախկին եղբայրակիցներդ են:

– Դու ի՞նչ վերաբերմունք ցույց կտայիր այն այլանդակին, որը սողոսկել է ծննդատուն և բոլոր մանուկներին մորթոտել, որպեսզի նրանք չմեծանան և առողջ ու գեղեցիկ մարդիկ չդառնան:

– Կջանայի կասեցնել նրան, իսկ եթե այդ հնարավոր չլիներ, կսպանել: Նա մեղքս կգար, բայց երեսնաներին ավելի կմեղքանայի:

– Այդպես էլ հրեշտակներս ենք: Մենք առաջին հերթին խղճում ու ափսոսում ենք մեզ հանձնված երեսնաներին՝ ձեզ՝ մարդկանց: Աստված ուզում է, որ լինեք հոգեպես առողջ ու գեղեցիկ, այսինքն՝ վերադառնաք բնական անմեղ վիճակին, իսկ սատանան նախանձից ուզում է ձեզ այլասերել ու կործանել:

– Մի՞թե Աստված չի կարող բոլոր մեղավորներին խլել դժոխքից, ներել նրանց և դնել Դրախտում:

– Եվ ի՞նչ կդառնա Դրախտը: Մեղավորներն այն կպատեն սուպերմարկետներով ու դիսկոտեկներով, նորաձևություն կհնարեն և կսկսեն նորատարազ իրեր արտադրել, կբաժանվեն կուսակցությունների, եկեղեցիները կվերածեն բանավիճային ակումբների, և խեղճ Դրախտը շատ շուտով կդառնա Երկրի վատթարացված տարբերակը: Կմնա միայն այստեղ հրավիրել դևերին:

– Իսկ ինչո՞ւ այդ տարբերակը կլինի «վատթարացված»:

– Որովհետև մեղավորները մեղանշելու՝ մեղք գործելու ավելի շատ հնարավորություններ կունենան: Այ, տեսար թիթեռներ ճարտարող աղջկան: Երկրային կյանքում նա եղել է բնակարչուհի, հավատացյալ, նույնիսկ փորձել է Աստծո և սրբերի պատկերներ նկարել: Նրա խելացի գլխիկում երբեք միտք չի կարող ծագել իր թեթևաթուիչ անմեղ էակների փոխարեն բազմազանություն համար որևիցե ճիվաղիկ ստեղծել: Բայց այդ աղջկա տեղը պատկերացրու ձեր սարսափազու գրվածքները կլանած մի պատանու: Ի՞նչը կարող է նրան հետ պահել հենց իր գվարճություն համար թևավոր վամպիրներ շինելու և տիեզերք թռցնելու փորձ անելուց: Կանի թեկուզև այն բանի համար, որպեսզի հետո ընկերներով դրանց հետևից ընկնի ու խփի: Ինչե՛ր ասես չես հնարի ձանձրանալու պատճառով:

– Ջբարկանաս, բայց ես չէի հրաժարվի Փարիզի Աստվածամոր տաճարի տանիքին ու քիվերին թառած բոբոների նման հրեշների որսից:

– Մինչև հիմա նրանք էին քո հետևից ընկել: Մոռացել ես, որ այդ նույն բոբոները, որոնց փարիզցիները իրենց քաղաքի պահապաններն են համարում, իրականում դեեր են: Ի դեպ, Երկրի վրա բազում մարդիկ այժմ դիվահար են՝ բռնված են դեերից: Ի՞նչ է, նրա՞նց էլ Դրախտ հրավիրենք մեջները բուն դրած մակաբույծներով հանդերձ:

– Իսկ ի՞նչ կլինի, եթե հանկարծ հրավիրեք:

Հրեշտակա ժպտաց.

– Գիտե՞ս, ոչ մի բան էլ չի լինի: Նրանք պարզապես անհետ կլուծվեն դրախտային լուսի մեջ. կոչնչանան թե՛ մակաբույծները, թե՛ սրանց կրողները:

– Ինչպե՞ս կարող են դեերն իբրև մակաբույծ ապրել մարդկանց մեջ:

– Եթե մարդու հոգին չունի Սուրբ Հոգու պաշտպանությունը, նրանք բուն են դնում հենց հոգու մեջ և մեղքի օգնությունը կրծում՝ քայքայում են այն ու այդպիսով կործանում:

– Իսկ Երկրում ապրելու ժամանակ իմ մեջ դեեր բնակվե՞լ են:

– Ներսուսե՞՜ ո՛չ: Քեզ նրանցից պահպանել են մկրտության խորհուրդը և Պապիզ աղոթքները: Դե, ես էլ եմ քեզ պահպանել կարողացա-

ծիս չափ: Իսկ դրսից նրանցով ամբողջովին պատված էիր՝ ինչպես տղրուկներով: Երբեմն քեզ մոտենալն անհնար էր նրանցից փչող գարշահոտություն պատճառով: Ի՞նչ ես երեսդ ծումում: Ասածս դուրդ չի՞՞ գալիս: Եթե կարողանայիր քեզ տեսնել նրանց բազմություն մեջ, սարսափից ու զգվանքից կխելագրվեիր: Աստծո մեծ ողորմածությունից է, որ երկրային կյանքում դեերին չեք տեսնում:

Սրան բացարձակապես համաձայն էի. երանի դրանց այլևս չտեսնեմ ո՛չ այն, ո՛չ էլ այս կյանքում: Բայց ահա դուրս էր գալիս, որ Դրախտի, կարելի է ասել, ծայրին նստած մի գլուխ խոսում էինք դեերից: Պահապանս ինձ շատ բաներ հայտնեց ոգիների աշխարհի, Դրախտի ու հավերժության մասին, սակայն այդ ժամանակ ես ամեն ինչ չէ, որ հասկանում և միտքս էի պահում, իսկ շատ բաներ էլ չեմ կարող պատմել, որովհետև Հրեշտակա արգելք է դրել և չեմ համարձակվի այն խախտել:

Հրեշտակիցս հետո ամենաշատ ժամանակը Ալյոշան էր ինձ նվիրում: Նրան սիրեցի ասես վերստին, նորովի: Երեսուս ժամանակ, որքան ինձ հիշել եմ, նա միշտ կողքիս էր: Պատիկներին ման էին տալիս մի մանկասայլակով, մինչև հինգ տարեկաններս պառկում էինք մի մահճակալի մեջ և միշտ քուն էինք մտնում իրար փաթաթված: Ինձ թվում էր, թե մենք նույն բանն էինք մտածում և զգում: Ախտահարվում էինք նույն հիվանդություններով, բացառյալ այն չարաբաստիկ քուլթեշը: Ալյոշան դրանով վարակվել էր ձմեռային արձակուրդների ժամանակ, որոնք ես անցկացնում էի անդրքաղաքային մանկական մարզաճամբարում: Երբ այդտեղից վերադարձա, բանը հասնում էր վախճանին...

Ալյոշայի համար մորմոքվելով՝ միշտ պատկերացնում էի, որ նա իմ տարեկիցն է: Բայց հիմա ինձնից տասը տարով փոքր էր երևում, իսկ խելքով և հոգևոր զարգացմամբ մեծ եղբայրս էր:

Նա ինձ անվերջ հարցեր էր տալիս իրենից հետո մեր ապրած կյանքի, մայրիկի հիվանդության ու մահվան, հայրիկի մասին: Նրան անկեղծորեն հետաքրքրում էին իմ ու Գեորգիի հարաբերությունները, սակայն հրաժարվում էր քաղաքականության կամ վերացական նյութերի շուրջը հետս խոսելուց: Ինչպես երևում էր, նրան չէին հուզում անգամ Ռուսաստանի իրադարձությունները, ինչը բացատրեց այն բանով, որ դրանք հոգևոր

գործընթացի գուտ արտաքին կողմն են:

Մի անգամ նրան հարցրի.

– Ձե՞ս ամսոսում, որ փոքր տարիքում ես մահացել:

– Ափսոսում եմ, որ ավելի շուտ չեմ մահացել: Ժամանակի ընթացքում կարող էի հրեշտակ դառնալ, եթե մահացած լինեի մինչև յոթ տարեկանս:

– Բոլոր փոքր երեխաները մահանալուց հետո հրեշտակնե՞ր են դառնում:

– Ո՛չ, միայն մկրտվածները: Բայց լավ է, որ Պապը Աստուծուց ինձ համար վաղաժամ մահ էր խնդրել: Եթե չմեռնեի, կկործանվեի:

– Ո՞նց թե: Ինչպե՞ս:

– Հենց այդպես: Անխուսափելիորեն ընկնելու էի հայրիկի ազդեցության տակ, և ես ու դու իրար թշնամի էինք դառնալու: Գիտե՞ս ով էի լինելու:

– Ո՞վ:

– Պետանվտանդության՝ այլախոհների դեմ պայքարի բաժնի աշխատակից:

– Հավատս չի գալիս:

– Ես դա ստույգ գիտեմ. տեսել եմ այն գծապատկերը, ըստ որի պետք է ընթանար իմ զարգացումը:

– Իսկ հիմա որտե՞ղ է մեր հայրը:

– Չգիտեմ: Սկզբում փորձել եմ այդ պարզել, բայց հետո հասկացա, որ անհույս բան է:

Ուզում էի եղբորս պատմել Ավստրալիայի, Հնդկաստանի ու Ճապոնիայի մասին, որոնցում եղել էի, բայց նա այստեղ էլ ինձ զարմացրեց:

– Ես այդ ամենը տեսել եմ և ամենուրեք եղել: Ճանապարհորդել եմ այն բոլոր երկրներում, որոնց մասին երազել եմ երեխա ժամանակ: Մեռնելուցս հետո ես և Պապը մի քանի օր շրջաբայել ենք Երկրի երեսին: Այդ ժամանակ դա ինձ զարմանալի ու սքանչելի էր թվում, բայց, այստեղ ընկնելով, ամեն ինչ շուտ մոռացա: Տղա երեխայի համար այստեղ շատ ավելի հետաքրքիր էր. կարելի էր հայտնվել մարդկության պատմության ուղածող պահի մեջ: Մի քանի տարի հափշտակված զբաղվել եմ դրանով, մինչև հասկացա, որ մարդկության պատմությունը, ըստ էության, շատ տխուր վեպ է:

– Իսկ պատմական ի՞նչ անցքեր ես տեսել:

– Տեսել եմ Ռուսիայի մկրտությունը, այլև զանազան նշանավոր կռիվներ: Քանի որ տղա էի, ինձ համար շատ հետաքրքիր էր աչքովս տեսնել Բորոդինոյի ու Վաթկոյի ճակատամարտերը: Հետագայում ինձ սկսեցին հետաքրքրել մարդկության համար ավելի կարևոր պատմական պահերը. շրջում էի առաքյալների հետ, երբ նրանք ուղեկցում էին Փրկչին, տեսել եմ հավատի համար նահատակվածների մահը, դիտել եմ, թե ինչպես են հիմնվում առաջին վանքերը:

Ալյոշան փորձում էր ինձ դաստիարակել և շատ էր վշտանում, որ չեմ կարողանում աղոթել:

– Իսկ ես չեմ հասկանում, թե Տիրոջ ինչին է պետք ձեր խմբերգությունը: Մի՞թե Նա առանց այդ էլ չգիտե, որ դուք սիրում ու երկրպագում եք Իրեն:

– Իհարկե, Տերն այդ գիտե: Իսկ դո՞ւ ինչու ես օրը տասն անգամ ինձ սիրելուդ մասին ասում:

– Որ իմանաս: Եվ հետո՝ չէ՞ որ քեզ շատ եմ կարոտել, Ալյոշենկա:

– Եթե իմանայիր, թե ինչպե՞ս են Աստուծոն սիրում ու կարոտում իսկական սրբերը... Բայց դու սիրուդ մասին ինձ ասում ես ոչ թե տեղյակ պահելու համար, այլ այն պատճառով, որ քեզ համար ուրախալի է այդ ասելը, իսկ ինձ համար՝ լսելը: Այսպես է նաև Աստծո հետ մարդու հաղորդակցվելը, այսինքն՝ աղոթելը. մեզ համար ուրախալի է Նրան փառաբանելը, իսկ Նրա համար՝ այդ լսելը:

– Բայց ի՞նչ կարիք կա աղոթելու համար խոնվել տաճարներում: Կարելի է աղոթել նաև մենակ:

– Իսկ դու հիշո՞ւմ ես, թե ինչպես էինք կախ ընկնում հայրիկից և, իրար ընդհատելով, գոռում, որ իրեն սիրում ենք. և որքան ուրախալի էր այդ մեզ համար, և ինչքան էր սիրում, երբ իրեն դիմավորում էինք աշխատանքից գալիս:

– Երեխա էինք:

– Աստծո մոտ մենք միշտ էլ երեխա ենք:

– Մի՞թե դու Աստծուն անկեղծորեն ավելի ես սիրում, քան հայրիկին ես սիրել: Ախր դու նրա սիրելին էիր:

– Իհարկե, ես Աստծուն անհամեմատ ավելի եմ սիրում:

– Ավելի, քան Պապի^ոն: Ավելի, քան ի^ոնձ:

Ալյոշան ծիծաղեց և գլուխը հաստատողաբար շարժեց: Ես նեղացա:

Երեկոները ողջ ընտանիքով հավաքվում էինք բուխարու առաջ: Վառում էինք ոչ թե տաքության, այլ հարմարավետության համար: Մերձավորներին խոսակցություններից ես շատ բաներ չէի հասկանում, բայց ինձ համար պարզապես լավ էր նրանց հետ նստել կրակի մոտ, հիշել օրվա ընթացքում տեսածներս և բոլորին հարցեր տալ ամեն ինչի մասին: Ամենքը շատ քնքշորեն էին վարվում հետս և գուրգուրում էին ինձ, ինչպես կարողանում էին: Ինձ մի գավաթ խմելիք էին լցնում, որը համով ու հոտով լավագույն բորդոյի՝ սիրածս գինու պես էր: Այն զվարթացնում էր, բայց չէր հարբեցնում: Փոքր կուճերով կամաց–կամաց խմում էի, նայում բուխարու ածուխներին, լսում սիրելի ձայները՝ հաճախ էլ ականջ չդնելով, թե ինչ են զրուցում: Իսկ զրույցը ոչ միայն դադարում էր, այլև սրբերի սխրանքների, աշխարհի ու Ռուսաստանի ապագայի և առավելապես, անշուշտ, Աստծո մասին:

Հետո հրաժեշտ էի տալիս, բարձրանում սենյակս, Աստվածածնի պատկերի առաջ անում իմ միակ աղոթքը և բարի գիշեր ասում նրան:

Հովտում գտնվելուս վեցերորդ օրն էր: Ավարտվում էր դրախտական արձակուրդիս ժամանակը. մնում էր մի օր՝ վերջին օրը: Առավոտվանից հոգիս անհանգիստ էր, խռովված: Ալյոշան հետաձգեց պարապմունքները, որպեսզի այդ օրը հետս անցկացնի:

– Ինչո՞վ եք զբաղվելու, – հարցրեց Պապը:

– Կարծում եմ՝ պարզապես կգբոսնենք, – պատասխանեց Ալյոշան:

– Ինձ ասացին, որ Աննուշկային ուզում է տեսնել Օլգան: Անյա, ուզո՞ւմ ես ծանոթանալ մեր տոհմի առաջին քրիստոնյայի հետ: Քո նախանախա, շատ–շատ անգամ նախա...տատն է: Մոտերքում է ապրում:

– Շա՞տ է պառավել:

– Այստեղ պառավներ չկան: Նախատատը բոլորի պես երեսուներեք տարեկան է :

– Ուզում էի հարցնել, թե վաղո՞ւց է այստեղ ապրում:

– Երկու հազար տարուց ավելի է:

– Իսկ ինձ ասում էին, թե ժամանակի ընթացքում հոգիները Աստծո Թագավորության այնպիսի խորքերն են գնում, որոնց մասին ես արժանի չեմ անգամ լսելու:

– Օլգան մնացել է այստեղ՝ Դրախտի ծայրին, և այդ բանն իր արտակարգ պատճառն ունի: Երևի այդ մասին քեզ պատմի: Ենթադրում եմ, որ դրա համար է քեզ մոտը կանչում: Թո՞ւք, սիրելիներս:

Ու մենք այցի թռանք իմ՝ չգիտեմ քանի անգամ նախա...տատին: Ճանապարհին Ալյոշան ասաց, որ տատիկի ապրած վայրը կոչվում է Բյուրեղյա հովիտ: Այդտեղ հասնելու համար հարկավոր էր թռչել հավերժական ձյունով պատված լեռնաշղթայի վրայով և անցնել մի քանի հովիտ:

Երբ սկսեցինք իջնել Բյուրեղյա հովտի վրա, զարմանքից ու հիացմունքից ճչացի: Ամբողջ հովիտը շողում ու կայծկլտում էր արևի տակ, և այդ փայլն անտանելի կլիներ, եթե չմեղմանար զով օդի մեջ ցրված մանրամանր ջրափոշուց: Սաղափե մշուշի մեջ հովտի տակը վերից չէր երևում. տեսանելի էին միայն բազմաթիվ ջրվեժներ ու ջրվիժակներ, որոնցից մի քանիսը բյուրեղապակե ուլունքների թելից հաստ չէին: Դրանք թափվում

էին թփերով ու ձարխոտերով պատված բազմաստիճան ժայռերից և ներքևում գոյացնում այսուայնկողմ վազող անհամար գետակներ ու առվակներ:

Իսկ երբ իջանք հովտի մեջտեղով հոսող լեռնային գետակի ափին, տեսա, որ հովիտն ամբողջովին՝ լեռնալանջերից մինչև ջրախորշերը, լեփլեցուն է ծաղիկներով: Այն էլ ինչպիսի՜ ծաղիկներով: Ո՛չ Երկրի վրա, ո՛չ էլ Դրախտի այլ վայրում նման բան չէի տեսել: Եթե այդ ծաղիկները գետնից բուսած չլինեին, կկարծեի, թե շինված են վանակնից՝ լեռնային բյուրեղից. դրանք թափանցիկ էին: Նետվեցի դեպի խոշոր զանգակածաղիկների ամենամոտ թուփը, ծնկի իջա և սկսեցի ակնածուլթյամբ գննել դրանք՝ շոյելով մատներիս ծայրերով: Նուրբ զանգակների եզրերի ու երակների վրայով ասես ծիածանի վրձինը սահած լինեք, իսկ դրանց պատերի միջից երևում էին արծաթագույն առէջներն ու ծաղիկներին դիպչող մատներս:

Մյուս հրաշքն արդեն ոչ թե աչքի համար էր, այլ ականջի. զանգակները մեղմորեն ծնդում էին գեփյուռուի ամենաթույլ իսկ շնչից: Ուշագիթը դիտելուց հետո հասկացա այդ ղողանջի պատճառը. առէջների գնդիկները, կախված լինելով նրբաթելերից, տատանվելիս խփվում էին ծաղկի պատերին և հազիվ լսելի ղողանջ հանում:

– Աննուչկա, մեզ սպասող կա: – Ալյոշան շարժեց ուսս:

Դժվարությամբ կտրվելով բյուրեղյա հրաշքից՝ վեր կացա ու շուրջս նայեցի: Ափից քիչ հեռու տեսա գերանակապ խրճիթանման մի տուն՝ եղեգնյա հաստ ու փռչող կտուրը մինչև լուսամուտները գլխին քաշած: Կտուրի կատարին թափանցիկ և ծխագույն շուշանի նրբերանգով հիրիկների երկար ծաղկաթուփ էր, որն ասես մեղեսիկե* թագով էր պսակել անշուք տնակը:

Խրճիթի շեմքին մի շրկահեր գեղեցկուհի էր կանգնել, հագին՝ երկնաթույր ու բաց մանուշակագույն լայն երիզներով զարդարված սպիտակ զգեստ, արձակ մազերին՝ արծաթե բարակ օղ հազցրած: Մտածեցի՝ Օլգան կլինի:

– Ուրեմն դո՞ւ ես իմ ամենավերջին ժառանգը: Ծնորհակալություն,

Ալյոշա, որ կատարեցիր խնդրանքս և իրեն բերեցիր: Ներս հրամմեցեք:

Խրճիթն ընդամենը մի սենյակ ուներ: Անկյուններից մեկում անտաշ քարերով կոպտորեն շինված օջախն էր, մյուսում ջուլհակի՝ տեսքից շատ հին փայտե հաստոց կար, որի վրա գույնզգույն գործվածք էր քաշված: Երկու փոքր լուսամուտների դիմաց դրված էին կաղնեփայտե մի սեղան, կողքերին՝ երկու լայն նստարան: Դիմացի պատի տակ նույնանման նստարան կար, վրան՝ հինավուրց մեծադիր գրքեր, կավե ու պղնձե անոթներ, իսկ դրանց վերևում, պատի լայնքով ձգվող պարանից չոր խոտերի փնջեր էին կախված:

Օլգան սեղանին դրեց մի կուժ կաթ ու գավաթներ, տափակ ամանով մեղրախորիսխի կտորներ և փորագրովի տախտակին դարսեց ախորժաբույր տաք հացի հաստ-հաստ կտրատած պատառներ:

– Անուշ արեք, սիրելի հյուրեր, թանկագին ծոռներ:

Ալյոշան աղոթքն ասաց և օրհնեց սեղանը: Մենք լուռ կաթ էինք խմում և մեղրով հաց ուտում՝ շուտ-շուտ նայելով Օլգային, իսկ նա, ձեռքերը ծնկներին դրած, մտախոհ մեզ էր դիտում: Երբ կշտացանք, Ալյոշան դրախտավարի շնորհակալություն հայտնեց.

– Ծնորհակալություն, Տեր և մեծ մամիկ:

Ուտելուց հետո Օլգան մեզ ցույց տվեց իր հովիտը և պատմեց բյուրեղյա ծաղիկների մասին, որոնք ինքն էր ճարտարում և բուծում:

– Մրանք կարող են աճել միայն օդում առատ խոնավություն լինելու դեպքում. արեգակի ուղղակի ճառագայթների տակ իսկույն թառամում ու չորանում են: Ծիշտ է, չորանալուց էլ չեն կորցնում գեղեցկութունն ու թափանցիկութունը, սակայն շատ փխրուն են դառնում: Երբեմն ինձնից ծաղիկ են վերցնում տոներին եկեղեցիները զարդարելու համար: Իսկ այս ծաղիկները հիմնականում ջրվեժներն ու լեռնային գետակները զարդարելու համար են:

Ջրի մոտ մամռապատ քարե նստարան կար: Նախամայրս առաջարկեց նստել վրան ու լսել:

– Ուզում եմ Աննային հայտնել իմ պատմությունը: Ալյոշա, դու էլ լսիր, քեզ էլ չեմ պատմել:

Ծնվել ու մեծացել եմ Բալթիկայի ափին՝ հեռավոր Հրեաստանում մեր

Փրկչի ծնվելուց շատ տարիներ առաջ: Իմ ամուսինը մի նշանավոր վարյազ* էր, որն ավար առնելու համար նավարկում էր շատ ծովերում: Հիմա նրա պանծալի գործը պարզապես ծովահենություն կանվանենք, իսկ այն ժամանակներում նրա սխրանքների մասին սագաներ՝ հերոսավեպեր էին հյուսում: Նա վաղ գոհվեց. սպանվեց ոչ թե ծովամարտում, այլ նախանձ հարևանի ծածուկ ուղարկած ստոր մարդասպանի ձեռքով: Մենք արդեն փոքր տղա ունեինք, սակայն նա չէր կարող ինձ հետ պահել որոշ ածիցս. համբուրեցի երեխայիս, նրան հանձնեցի ամուսնուս մորը և բարձր քարափից ծովը նետվեցի՝ ընդամենը մի քանի ժամով սիրելիիցս հետ մնալով անդրշիրիմյան աշխարհի ճանապարհին:

Նախամորս լսում էի խիստ կասկածանքով. մի՞թե խելահեղներն ապաստան են գտնում Դրախտում և այստեղ էլ պահպանում են իրենց խելահեղությունը: Դե լավ, մեր վարյազական արմատների շուրջը վիճաբանելու հարկ չկա. մեր տոհմում գերակշռող բաց գույնի մազերն ու կապույտ աչքերը նույնիսկ հաստատում են առանձին վերցրած ընտանիքի՝ վարյազական ծագման տեսությունը: Սակայն բացահայտորեն անհեթեթ՝ անմիտ բան էր դուրս գալիս: Որքան էլ քիչ գիտելիք ունենայի քրիստոնեություն մասին, մի բան պարզ հասկանում էի. Օլգան, ավելի ճիշտ՝ Հելգան, հեթանոս էր, ծնվել էր Քրիստոսից առաջ, այլև ինքնասպան էր եղել, ուստի չէր կարող Դրախտում լինել:

Մինչդեռ նախամայրս պատմությունն առաջ էր տանում.

– Հարյուր տարուց ավելի ես ու ամուսինս դժոխքի կիսախավարում թափառում էինք իրար ձեռք բռնած. այնտեղ էլ էինք շարունակում միմյանց սիրել: Նա կարծում էր, թե դժոխք է ընկել սոսկ այն պատճառով, որ գոհվել է ոչ թե կովի մեջ, այլ սպանվել է մեջքը խրած դանակով: Եթե գոհված լինեք մարտում, ինչպես որ վարյազին է վայել, ապա ինքը կռիվներում ընկած քաջարի ռազմիկների հետ կխրախուճաներ Վալհալայի**

երկնային ապարանքներում, այլ ոչ թե թրև կգար վշտի հովիտներում:

Դժոխքում տեսանք մեր աստվածներին, որոնց արձաններին երկրպագում էինք կենդանի ժամանակ: Կուհուս էք, որ դրանք դեռ էին: Մենք երիտասարդ հասակում էինք մահացել, սիրում էինք գեղեցկությունը, ուստի չէինք ուզում իբրև մեր աստվածներ ճանաչել չար ու նողկալի արարածներին, թեև ամբողջովին նրանց իշխանություն տակ էինք: Ամուսինս նույնիսկ փորձում էր մարտնչել ճիվաղների հետ, ինչպես այդ անում էին սագաների հերոսները, սակայն, խեղճ ստվեր դառնալով, կորցրել էր ուժը, բայց ոչ՝ արիությունը: Ընդվզելու համար մեզ պատժեցին՝ նետելով դժոխքի սև կրակի անթափանց խավարի մեջ, և մենք այնտեղ երկար տառապում ու չարչարվում էինք, սակայն առաջվա պես չէինք բաժանվում:

Սոսկալի տանջանքների երկար–երկար տարիներ անցան: Բայց մի օր խորխորատ գերեզմանի խավարը ցրվեց. հայտնվեց Հովհաննես Մկրտիչը և սկսեց քարոզել Քրիստոսի մասին: Նա պարսպված էր Աստծո շնորհով, և դեերը չէին համարձակվում նրան մոտենալ ու խանդարել: Հովհաննեսն ասում էր, որ Փրկիչ Քրիստոսը շուտով դժոխք կիջնի ու կփրկի բոլոր նրանց, ովքեր կհավատան Իրեն ու կգնան Իր հետևից: Բայց դրա համար հարկավոր է նախօրոք ապաշխարել՝ զղջալ գործած սխալների ու մեղքերի համար և խաչակնքվել: Մկրտիչը բացատրեց, թե ինչ է մեղքը և ինչու այն հաճելի չէ Աստծուն, իսկ իրենք իրենց սպանածներին սպառնանքով հայտարարեց, որ ինքնասպանությունը բնավ էլ արիություն ու քաջագործություն չէ, այլ հանցագործություն է Աստծո դեմ:

Շատերը նրան հավատացին և փրկվելու հույս առան, ես ևս: Մենք դառնապես զղջացինք մեր մեղքերի համար և Հովհաննես Մկրտչից թողություն ստացանք: Ապա նա մեզ մկրտեց, և մեր արցունքները ջրի տեղ եղան: Իսկ խեղճ ամուսինս ա՛խ էր քաշում անմատչելի Վալհալայի համար և ոչ մի կերպ չէր կարողանում հաղթահարել իր հուսահատությունը: Բայց մենք իրարից չէինք բաժանվում:

Եվ ահա եկավ Արարչի որոշած ժամանակը, և Փրկիչը դժոխք իջավ: Նա դեերին մթեղների պես քչեց և օրհնեց բոլոր մկրտվածներին, նույնիսկ նրանց, ովքեր չէին հասցրել մկրտվել, բայց նրան տեսնելով՝ հավատացին: Սակայն որոշ հոգիներ համառորեն երես էին դարձնում Քրիստոսից:

Նրանց մեջ էր նաև ամուսինս: Փրկիչը բոլորիս առաջնորդեց դեպի դժոխքի ելքը: Ստվերների ի՞նչ երկար խմբապար էր... Գնում ու գնում էինք, խավարը նահանջում էր, և վերջապես առջևում երևացին արեգակի առաջին շողերը: Ամուսնուս քաշում էի հետևիցս, բայց նա ձեռքը խլեց բռանս միջից ու մնաց դժոխքում: Նա չկարողացավ համակերպվել այն բանին, որ իրեն՝ փառապանծ մարտիկին, ուզում է փրկել մի կին, թեկուզ անգամ սիրելի կինը: Ու մենք բաժանվեցինք: Այդ օրվանից մոտ երկու հազար տարի է անցել:

Երբ Դրախտ ընկա, Փրկիչ Քրիստոսին հարցրի, թե կարո՞ղ է ամուսնուս էլ փրկել: Նա պատվիրեց սպասել վերջին Դատաստանին և հուսալ: Այդժամ Տիրոջը խնդրեցի թողնել, որ ամուսնուս սպասեմ Դրախտի սահմանագլխին, որպեսզի, եթե ներվի ու գա այստեղ, հանկարծ կողքովս չանցնի, և նորից իրար չկորցնենք: Եվ Տերը հավանություն տվեց այս հովտում ամուսնուս սպասելուն: Ես էլ ահա սպասում եմ:

Մենք Դրախտի առաջին բնակիչներն էինք Ադամի վռնդվելուց հետո: Դրախտը սքանչազեղ էր, բայց նման էր անխնամ պարտեզի: Ուրախ էի, որ այստեղ կարելի էր աշխատել՝ պահպանել ու մշակել Դրախտը, ինչպես Տերն էր մեզ պատվիրել: Աշխատանքի ու աղոթքի մեջ անցնում էր դարը դարի հետևից, իսկ ես ամեն օր սպասում էի, որ հանկարծ հրաշք կլինի, և իմ Օլաֆը կիջնի Բյուրեղյա հովիտն ու ինձ ձայն կտա. «Դիմավորի՛ր ինձ, իմ Հելգա: Ես եկել եմ ու հոգնած եմ: Հանի՛ր սունապաններս ու կոշիկներս», – ինչպես որ միշտ ասում էր՝ ավարառությունից վերադառնալով:

Անցավ այստեղ գտնվելուս առաջին հազարամյակը, և Երկրից սկսեցին գալ մեր առաջին քրիստոնյա սերունդները: Դրանք արդեն ոռու էին: Բոլորն արժանավոր մարդիկ էին, և մինչ այժմ մեր տոհմից ոչ մեկը չի նեավել դժոխքի խորքերը: Նրանք դժոխք էին այցելել միայն տեսնելու համար, թե ինչպիսի փորձանքներից են ազատվել, բայց Օլաֆիս չէին հանդիպել: Ըստ երևույթին նա այնպիսի խորը գուբերի մեջ է, որ մուտքը նրանց համար փակ է եղել:

Եվ հիմա, երկու հազար տարի անց, իմացա, որ հայտնվել ես դու, և այստեղից պիտի գնաս անդունդի խորքը: Ես եղա Աշակերտների հովտում, բայց քեզ չգտա. ինչ—որ տեղ էիր թռել: Իմ ժառանգին՝ պապիկիդ, խնդ-

րեցի քեզ հաղորդել, որ ուզում եմ հետդ հանդիպել: Կուահո՞ւմ ես՝ ինչու:

– Այո, հասկանում եմ, թե ինչու ես ինձ ընտրել: Բայց ինչպե՞ս եմ ճանաչելու ամուսնուդ և ի՞նչ եմ ասելու, եթե հանդիպեմ:

– Ասա, որ իրեն այնպես եմ սիրում, ինչպես սիրել եմ Երկրի երեսին ու Երկրի խորքում: Ասա, որ մենք անպատճառ կհանդիպենք, կտեսնվենք թեկուզև Ահեղ դատաստանի օրը: Նաև ասա՝ թող հավատա, որ մարդն ու կինը մի ամբողջություն են, և ամբողջի մի կեսը չի կարող մոռանալ մյուս կեսին:

Իսկ նրան ճանաչելը դժվար չի լինի. նրա աջ աչքը չկա, բայց փոխարենը՝ անվնաս աչքը երկնքից կապույտ է, պակասում են ձախ ձեռքի երկու մատները՝ ճկույթն ու մատանեմատը, մազերն ու մորուքը գգուզ՝ խառնակ և շիկակարմիր են, իսկ քիթը երկու տեղից ջարդված է: Երկու հազար տարի առաջ նա դեռևս հագնում էր այն կարմիր թիկնոցը, որի մեջքին երկար պատվածք էր մնացել դանակի հարվածից: Նրան Կարմրամորուս Օլաֆ են ասում: Որ տեսնես, իսկույն կճանաչես, միայն նա՛ այդպիսի տեսք ունի:

Ասելիքը վերջացնելով՝ Օլգան վեր կացավ:

– Ուզո՞ւմ ես, – ասաց նա, – քեզ ցույց տամ այն ծաղիկը, որը պատրաստել եմ Ամենաթագուհուն նվիրելու համար: Գուցե օգնես, որ ծաղիկն ավարտեմ՝ պակասը լրացնեմ:

– Բայց իմ ձեռքից բան չի գալիս: Կյանքումս ոչ մի պիտանի բան չեմ չինել: Ամբողջ կյանքս, ինչպես հիմա պարզվեց, ծախսվել է փուչ խոսակցությունների և փուչ գործերի վրա: Նույնիսկ սիրել չեմ սովորել... Իսկ ո՞վ է Ամենաթագուհին:

– Այս ի՞նչ տարօրինակ երեխա է լույս ընկել մեր ցեղի վերջում. Աստծո Մոր երկնավոր աստիճանը չգիտե:

– Դե այդպես էլ ասելի: Աստծո Մորը, անշուշտ, գիտեմ, բայց՝ առանց աստիճանների:

Նվերը բաց վարդագույն կվարցե թաղարում աճող բույս էր, որը երկրային հովտաշուշանի* նմանություն ուներ, բայց սրա ծաղիկները թափանցիկ էին, սադափափայլ ու ավելի խոշոր, ոչ թե ճերմակ էին, այլ

ճերմակաստվեր: Ծաղկի կոր կոթունը թեթևակի տատանվում էր, և զանգուլակները ծնգում էին:

– Հոտը դուրդ գալի՞ս է, – հարցրեց Օլգան, և նրա ձայնի մեջ մտահոգություն հնչեց:

Ծաղկի բույրը զմայլելիորեն նուրբ էր: Մայիսյան թարմ առավոտվա երկրային հովտաշուշանների հոտը կոպիտ օծանելիք կլթվար սրա մոտ:

– Հը, ի՞նչ կասես:

– Կասեմ՝ իսկը կատարելություն է:

– Քո ծաղիկը հրաշագեղ է, մեծ մամիկ, – կարծիքս հաստատեց Ալյոշան: Օլգան հոգոց հանեց.

– Լավ... Կուզե՞ք հետս երկնավոր թագուհու տիրույթները թռչել նվերը նրան տալու համար:

– Մե՛ծ մամիկ, – բացականչեցի: – Մի՞թե ինձ այնտեղ կթողնեն: Ես անարժան եմ, մերժյալ եմ...

– Երկնավոր թագուհին դեռ ոչ մեկին չի մերժել: Թռչենք: Էլ բան չեմ կարող անել այս ծաղկի համար:

Օլգան վերցրեց վարդագույն թաղարը, թեթևասահ օդ ելավ ու թռավ Բյուրեղյա հովտից դուրս գալու կողմը, ես ու Ալյոշան էլ՝ հետևից:

Բավական երկար թռչելուց հետո հայտնվեցինք մի հսկայական պուրակի գլխին, իջանք բարձրուղեչ ու ծաղկուն ծառերով եզերված բացատում: Իսկույն նկատեցի, որ այստեղ գերիշխող գույները սպիտակն ու կապույտն են: Օլգան ասաց, որ դրանք Աստվածածնի սիրած գույներն են:

Պուրակի սպիտակ շավիղներով հրեշտակներ ու մարդիկ էին գնում-գալիս: Գնացինք ծառուղիներից մեկով: Երբ դիմացի ոլորանն անցանք, մեր առջև հառնեց մարմարե ժանյակից կերտված մի շքեղաշուք պալատ: Ժանյակազարդ էին նաև պալատի ցանկապատը և կրնկի վրա բացված բարձր դարպասները:

Զրմացա ինչո՞ւ և ինչպե՞ս, բայց Ամենաթագուհու պալատին մոտենալու հետ ինձ սկսեց համակել և լցնել սիրո ու թախծի, մի սքանչելի ու թանկ անհայտ բանի հանդեպ սաստիկ կարոտի անհասկանալի զգացումը: Կանգ առա, որովհետև առաջ գնալու ոչ մի ճար չկար. ևս մի քիչ, ևս մի քանի քայլ, և իմ ողջ էությունը կպատառվեր ու կհալվեր այդ անհասկա-

նալի զգացումից: Հանկարծ հիշեցի Զյունանուշիկի «Սիրում եմ կամ հալվում...» երգը: Բայց սա ապրումիս սոսկ աղոտ նմանությունն էր: Զեռքերս կրճքիս սեղմեցի ու ծնկի եկա:

– Ի՞նչ ես լինում, գավակս, – բացականչեց Օլգան:

– Ի՞նչ եղավ, Աննուշկա: – Ալյոշան գրկեց ինձ՝ փորձելով վեր կացնել:

– Էլ չեմ կարող գնալ, այստեղս շա՛տ է ցավում: – Բռնեցի Ալյոշայի ձեռքն ու սեղմեցի կրճքիս: Մեծ մամիկը ևս վրաս կուացավ՝ իր ծաղիկը վայր չդնելով: Աքանջելի բույսն օրորվեց, ծաղիկները վախեցած ծնգծնգուցին ու մեկ էլ հստակորեն մի տխուր կարճ մեղեդի հնչեցրին: Նոր բույրի ամպիկը ցայտեց թրթռացող բոժոժների միջից ու պարուրեց երեքիս իրար վրա թեքած գլուխները:

– Ահա՛ այն, – բացականչեց Օլգան: – Ահա ի՛նչն էր պակասում ծաղկիս բուրմունքին: Զգո՞ւմ եք այդ նոր բույրերանգը:

– Դրա մեջ մի մեղմ մորմոք է հայտնվել, – ասաց Ալյոշան, – բայց սերն ավելի շատ է, թեև այժմ այդ վշտոտ սեր է*:

– Հենց այդ էլ փնտրում էի, բայց չէի կարողանում ճիշտ անունը տալ: Այ հիմա նվերս լրիվ պատրաստ է: Այս ծաղիկը միշտ կասի, որ Աստվածածինը սիրում է մարդկանց:

– Սա մի քիչ էլ իմ նվերն է, չէ՞, մեծ մամիկ, – հարցրի աղերսալի:

Հիմա գիտեմ, որ սիրում եմ Աստվածամորը, և շա՛տ եմ ուզում, որ նա այդ իմանա:

– Նրան այդ կասեմ: Հետս գալի՞ս ես:

Գլուխս տարուբերեցի.

– Սիրտ չեմ անի պալատ գնալ: Այստեղ իրար հրաժեշտ տանք, սիրելի

7 – րդ գլուխ

ամենամամս, իմ ու Ալյոշայի վերադառնալու ժամանակն է: Քեզ սիրում եմ և հանձնարարությունդ չեմ մոռանա:

– Ես էլ քեզ եմ սիրում, Աննուշկա, և աղոթելու եմ քեզ համար:

Այստեղ էլ բաժանվեցինք: Օլգան ուղիղ դեպի սպիտակ դարպասը գնաց, իսկ ես ու Ալյոշան հետ թռանք մեր Հովիտը: Մեզ արդեն սպասում էին ողջ ընտանիքս ու Հրեշտակս: Ինձ տեսնելով՝ նա Պապիս ասաց.

– Իզուր Աննային առանց ինձ գնալ թողեցիր: Ես չէ՛ի ուզում, որ նա այսօր տխրի:

– Կարծում եմ, որ այդ ծանոթությունն անհրաժեշտ էր, – ասաց Պապս: – Ալյոշա, պատմիր, թե ինչպես անցավ Աննայի և Օլգայի հանդիպումը:

Երբ Ալյոշան պատմեց հանդիպման և, մասնավորապես, Աստծո Մորը ձոնված ծաղկի մասին, Հրեշտակս ու Պապս, նրանց հետ էլ մյուսները ուրախացան ու զվարթացան: Կատյան ու Նինան բերեցին համեղագուլյն և անհայտ ծագում ունեցող մուրաբայով թխված կարկանդակը, Պապս հանեց գինին ու գավաթները, և այդ երեկո մենք այլևս չտխրեցինք:

Հաջորդ առավոտյան բոլորին հրաժեշտ տվի: Լաց էի լինում. չէ՞ որ բաժանվում էինք մինչև Ահեղ դատաստանի օրը: Մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ, սքանչագեղ Հովիտ, մնաք բարո՛վ, բոլոր հարազատներս:

Միայն Պահապանս հանձն առավ ինձ ուղեկցել սարսափելի ու անհայտ ճանապարհին: Նա գրկեց ինձ, և մենք օդ բարձրացանք. թռանք Պապիս եկեղեցու և մեր սիրելի տան կտուրի վրայով, հրաժեշտի շրջան արինք լճի ու Հովտի վրա և սկսեցինք ելնել ավելի ու ավելի վեր: Հետո թեքվեցինք դեպի արևմուտք և մտանք խիտ ամպերի մեջ: Հրեշտակս ինձ օրորում էր ձեռքերի վրա և մեղմորեն ինչ–որ աղոթք էր երգում, իսկ ես, նրա ուսին կպած, լաց էի լինում:

Հետևում մնացին Դրախտի ոսկերանգ ամպերը: Երկար ժամանակ թռչում էինք երկնագույն դատարկություն մեջ: Ապա առջևում սկսեցին քուլա–քուլա բարձրանալ ամպրոպաբեր ամպերը, և մենք մեջները մտանք վայրէջք կատարող ինքնաթիռի պես: Ինձ թվաց, թե մեր տակ Երկիրն է: Աջից ու ձախից արագորեն անցան եղևնու մուգ անտառներով պատված լեռների լերկ գագաթները, և մենք թռանք մի նեղ ու խոր կիրճ: Տեղը կիսախավար ու ցուրտ էր: Պահապանս զգուշորեն իջավ քարերի վրա, ինձ բաց թողեց գրկից, թևերը ծալեց, և ճանապարհը շարունակեցինք ոտքով: Քարքարոտ գետինը գնալով խորանում էր, շրջապատող խավարը՝ թանձրանում: Դիմացից սկսեցին մեր կողմը լողալ գարշահոտ դեղին մառախուղի քրջերը:

– Ու՞ր ենք գնում, – տազնապած հարցրի ես:

– Իջնում ենք գետնի տակ: Հարկավոր է անցնել դժոխքի անդունդներից տանող վիհերի կողքով: Պինդ բռնիր ինձանից, որ խորխորատը քեզ չքաշի: Պիտի քեզ հասցնեմ այն հոգիների համար առանձնացված վայրի սահմանին, որոնց դատաստանը՝ դատավճիռը դեռ չի որոշվել: Այստեղ ես ու դու կբաժանվենք, Աննուշկա:

Ես ավելի պինդ բռնեցի Հրեշտակիս ձեռքը: Մառախուղի միջից տեսա մի վիթխարի քարանձավի խորաբաց երախը. դրանից էր դուրս հոսում թունավոր դեղին մառախուղը: Երախի մոտ խոնվել էին հին ծանոթներս՝ դեները: Ինձ տեսնելով Հրեշտակի հետ՝ նրանք վայնասուն բարձրացրին, սկսեցին թաթերը թափահարել, բայց պահապանս ահեղորեն դուռաց չարքերի վրա, և սրանք հետ ցատկեցին:

Քարանձավ մտանք: Ականակիր մթուժյուն էր տիրում: Ուղին տեսցնում էր միայն Պահապանիցս ելնող լույսը: Մեր կողքով, աշխատանքի շտապողների պես, վազվզում էին չարքերը, դժգոհ խոնչում, բայց չէին համարձակվում մոտ գալ: Անձավն այնքան երկար էր, որ հրեշտակալույսը չէր հասնում վերջին, որը թաղված էր խավարի մեջ: Քարե խորդուբորդ առաստաղը ճնշող կերպով ցածր էր, և Հրեշտակիս գլուխը համարյա քսվում էր դրան: Աջ ու ձախ կողմերից մուռաթախոռոչներ կային,

որոնցից մի քանիսի խորքում արնագուլյն կրակ էր հուրհրում՝ հեղձուցիչ նողկալի խանձահատ արձակելով: Քարքարոտ դարուփոս հատակը զառիկող էր. տեղ–տեղ իջնում էինք ժայռի մեջ կոպտորեն փորված աստիճաններով: Գնալով ավելի շոգ, ավելի մութ, ավելի տխուր էր դառնում:

Պահապանս ինձ թեքեց դեպի կողային մուտքախոռոչներից մեկը: Շուտով թեթևացած նկատեցի, որ գետնուղին վեր է տանում, և օդը կարծես մաքրվում է: Քիչ անց առջևում երևացող գորշ լուսածվենից հասկացա, որ մոտենում ենք անձավի ելքին:

– Շուտով գետնի երե՞ս կելնենք:

– Այո, բայց դա գետնի երեսը չէ, այլ դժոխքի անապատներից մեկը: Հիշի՛ր. անապատով պիտի գնաս՝ մինչև որ հասնես ծովի, կանցնես ծովը ու կիմտրես այն հոգիների տեղը, որոնց արտոնված է երկրպագել Տիրոջը և աղոթել: Այդտեղ հույս կառնես: Բայց դրա համար պիտի գնաս ու գնաս և ոչ մի դեպքում չմատնվես հուսահատության ու անշարժության: Զանա՝ ձգնիր, որ չկորցնես մտածելու և գործելու ունակությունը:

– Ուրեմն իրո՞ք հույս ունենամ:

– Օլգային մոռացա՞ր: Մի՞թե նա քեզ հուսալ չսովորեցրեց:

– Հիմա բան չգիտեմ: Բայց կջանամ, միտքս կպահեմ ասածներդ:

– Շատ դժվար կլինի, Աննա, բայց դու պիտի պահպանես հիշողությունդ ու միտքդ և, առաջին հերթին, պիտի աղոթես: Դեռ հիշո՞ւմ ես, թե ինչպես էիր Աստվածածնին աղոթում:

– Ու՞մ, ո՞ւմ:

– Աստծո Մորը: Քո սենյակում կախած էր նրա պատկերը: Մի՞թե արդեն չես հիշում:

– Հիշում եմ: Նրան ասում էի՝ «Բարի գիշեր»:

– Իսկ դրանից առա՞ջ:

– Ոչ մի բան:

Շատ զարմացա Հրեշտակիս տված հարցի վրա: Ես իրոք ուրիշ բան չեմ ասել, երբ երեկոյան կանգնել եմ այն տախտակի դիմաց, որին մի գեղեցիկ Կին էր նկարված: Չեմ իմացել՝ ո՞վ է և ինչո՞ւ պիտի խոսած լինեի այդ տախտակի հետ:

Հրեշտակս լուեց և ինձ առաջ տարավ: Ստորանցքը գնալով լայնանում էր, և շուտով գետնի տակից դուրս եկանք մի գորշ աղոտալույս տեղ: Կանգ առանք անձավի ելքի մոտ: Նայեցի շուրջս:

Մեր դիմաց աղջամղջուտ ու բուսազուրկ անապատ էր տարածվում: Գլուխներիս վրա կախվել էին անշարժ ծանր ամպերը, գորշ լույսը հագիվ էր թափանցում դրանց միջով և ընկնում քարքարոտ հարթավայրի վրա: Տեղ–տեղ ցցվել էին փտած ատամների պես սև մերկ ժայռերը: Ոչ մի տեղ թուփ կամ խոտ չէր երևում: Քարերի արանքի հողը ծածկված էր ժանգագույն մոխրով: Թաց փոշու, մոխրի ու թթու խանձվածքի հոտ էր փչում: Մոծակի տզզոցի նման մի տրտում ձայն էր սավառնում այդ անապատի վրա:

Ուզեցի բան հարցնել Պահապանիս և հայացքս նրան դարձրի. Հրեշտակիս լուսաշող աչքերից խոշոր արցունքներ էին գլորվում: Իսկույն մոռացա հարցնելիքս և ուրիշ բան հարցրի.

– Ինձ համա՞ր ես լաց լինում:

– Այո, – պատասխանեց նա: – Հիմա պիտի մենակ թողնեմ քեզ ու գնամ:

– Դե ինչ, թող, գնա՛ ուր քեզ պետք է: Իսկ ես ո՞ւր գնամ: Այնտե՞ղ,

– ձեռքով ցույց տվի առջևում փոխած հարթավայրը:

... Հրեշտակս նորից խոսեց աղոթքն ու հույսը պահելու անհրաժեշտություն մասին: Գլուխս սկսեց ուժեղ ցավել: Նստեցի կողքիս քարին: Սպասում էի, թե երբ կլուի: Նրա խոսքերը ձանձրալիորեն զնգզնգում էին ականջներիս մեջ: Պարզ չէր խոսում, և ասածն ըմբռնելը գնալով դժվարանում էր: Գլուխս ափերիս մեջ առա՝ ջանալով չլսել նրան, և ինքս էլ չզգացի, թե ինչպես նիրհեցի:

Երբ զարթնեցի, այդ լողլող լուսարձակը դեռ կանգնած էր առաջս և ձեռքս բռնած՝ ինչ–որ բան էր ձուլում: Հիշեցի, որ երկուսով ենք այստեղ եկել, սակայն դիմացինս հաստատ իմ դուրը չէր գալիս: Եվ ինչո՞ւ է ինձ լղոզվել: Իսկ նա մի գլուխ խոսում էր իր ծախի լեզվով և կարծես չէր տեսնում, որ իրեն չեմ հասկանում:

Վերջը՝ այս բանն ինձ զզվեցրեց, և ես ձեռքս կամացուկ քաշեցի նրա ափի միջից ու գնացի սև ժայռերի կողմը: Մտալեզուն դեռ շարունակում

էր խոսել հետևիցս, բայց ես ո՛չ լսում էի, ո՛չ էլ հետ նայում: Ուզածս այն էր, որ հեռու գնայի, հանգիստ տեղ գտնեի, պառկեի ու քնեի: Ոտքերս քարշ տվի սև ժայռի մոտ, նստեցի մոխրախառն ավազին և աչքերս փակեցի:

Ոնց որ թե նորից քնեցի: Համենայն դեպս, երբ խելքս գլուխս եկավ, ինձ թվաց, որ աղջամուղջն ավելի է մթնել: Հարկավոր էր վեր կենալ ու մի տեղ գնալ, նայել, թե մոտակայքում բնակավայր կամ ճանապարհ կա՞: Քնից մարմինս ծանրացել էր, դժվարությանք էի շարժվում, ոտքերս հագիվ էի քարշ տալիս: Վերից վար թուլություն էր իջել վրաս: Գլուխս էլ էր վատ աշխատում. խանդարում էր ամբողջ շրջակայքը լցրած այդ նույն միալար տղզոցը: Վիճակս այնպիսին էր, ինչպիսին լինում է ծանր գրիպից հետո, իսկ կուրծքս կսկծացնում էր մի հիվանդագին սուր կարոտ. ասես մեջս մի մեծ տղրուկ էր մտել և ծծում ու ծծում էր...

Հեռվում երկճեղքված գագաթով մի մեծ ժայռ տեսա և որոշեցի այդտեղ գնալ: Ոտքերս հագիվ էի քարշ տալիս քարքարոտ ժանգագույն գետնի վրայով: Չգիտեմ ինչքան ժամանակ էր, որ գնում էի, բայց շատ երկար էր թվում: Մերթ ընդ մերթ կորցնում էի ժամանակի և հենց իմ՝ ով լինելու զգացողութունը: Քայլում էի ոնց որ անգիտակից վիճակի մեջ, հետո խելքումս ինչ—որ բան պարզվում էր, ու այդժամ նորից իմ առաջ տեսնում էի նշան դրածս սև երկժանիքը և նույնիսկ փորձում էի քայլքս արագացնել: Վերջապես հասա ժայռին և դրա առաջ շփոթված կանգ առա. իսկ հիմա ի՞նչ եմ անելու:

Ձահել ժամանակ մի քիչ լեռնարշավ էի պարապել և, ըստ երևույթին, հիշողությանս մեջ որոշ բաներ մնացել էին, պահպանվել էին լեռնագնացի ինչ-ինչ բնագրներ: Ինքնաբերաբար մտքումս նշեցի այն ճեղքերն ու ելուստները, որոնց կառչելով կարելի էր ժայռի գլուխը բարձրանալ: Կանգնեցի—կանգնեցի ու վեր մագլցեցի: Ժայռը հրաբխային ծագում ունեւր: Հողմահարությունից չեչոտացած երեսը միայն ներքևից էր մագլցելու հարմար թվում. տեղ—տեղ այն փշրտվում էր, իսկ սպունգանման խոռոչների եզրերը սուր էին ջարդված վզով շքերի պես: Մի քանի անգամ ոտքիս տակ քարը պոկվեց, բայց ես չզահավիժեցի և բարեհաջող հասա սուր ժանիքների արանքի գոգին: Հենվելով դրանցից մեկին՝ ձգվեցի ու շուրջս նայեցի:

Հետևում երախաբաց անձավը վրան՝ մի սոսկալի բարձր քարե պատ տեսա: Աղտորեն հիշեցի, որ եղել եմ այդ անձավի ներսում, և հետս լուսարձակ ու բարձրաձայն մի էակ կար: Այդտեղ վերադառնալ չէի ուզում և ուրիշ կողմ նայեցի: Բայց որքան էլ տեսողությունս լարեցի, ոչ մի բան չկարողացա տեսնել, բացի միայնակ ցցված ժայռերով դորշ ու ժանգագույն անծայր անապատից: Դրանցից մեկը որպես կողմնորոշիչ առնելով՝ ժայռից իջա և այդ կողմը գնացի:

Չգիտեմ քանի օր, շատ երկար, ժայռից ժայռ էի քաշ գալիս: Ուտելու ցանկությունն չունեի, ասենք ուտելիք էլ չկար, վախենում էի քնել, երբեմն հոգնածությունից գետին էի ընկնում, որոշ ժամանակ առանց շարժվելու և մտածելու պառկում էի, հետո նորից վեր էի կենում և բուժ ու համառ կերպով ինձ ստիպում էի գնալ առաջ, բայց ո՞ւր և ինչո՞ւ ինքս էլ չգիտեի:

Մի օր ամեն ինչ փոխվեց: Մռայլ ժայռերը մոտեցան և անհյուրընկալ լեռների պատ դարձան: Լեռների միջև միգամած նեղ կիրճեր էին, որոնցից ցուրտ էր փչում: «Գուցե առջևում ջո՞ւր կա», — մտածեցի և քայլերս արագացրի:

Ցուրտը սաստկանում էր, կիրճերից փչող քամիները թափանցում էին միջովս՝ ամբողջովին սառեցնելով ինձ, բայց փոխարենը՝ այդքան ժամանակ հոգիս մաշող տրտմալի տղզոցը հիմա խլանում էր ժայռերի մեջ հնչող քամու ոռնոցներից: Բախտաբերի ընտրեցի կիրճերից մեկը և գնացի: Արահետ չկար, բայց ոտքերիս տակ զգացվում էր ցամաքած գետակի հունը. հրաբխաքարի սուր բեկորներին հաջորդում էին խոշոր գլաքարերը: Դրանց վրայով քայլելը դժվար էր, ուստի ստիպված էի քարից քար ցատկել: Սակայն ծանրացած մարմինս ինձ չէր ենթարկվում, և շարունակ ընկնում էի գլաքարերի արանքը:

Ցամաք հունի բարձրանալու հետ քամին պակասում էր և, ի վերջո, կտրվեց: Կիրճն ավարտվեց երկու մուգ լեռնաշղթաների միջև ընկած նեղ հեղեղատով: Բացարձակ լուռության մեջ առջևումս տարածվել էր ծայրեծայր սառած մի լեռնային լիճ, որի հատակին սև գլաքարեր էին երևում: Սառցի վրա տեսա բազմաթիվ մուգ մարմիններ, որոնց սկզբում մեծ քարերի տեղ էի դրել: Ուշադիր նայելուց հետո տեսա, որ դրանք ոչ թե գլաքարեր են,

այլ ջրի հետ սառած մարդիկ, հազար—հազար այր ու կնոջ մեռյալ մարմիններ:

Անվճռականորեն կանգ առա ափին, իսկ հետո ոտքս զգուշ դբի սայթաքուն սառցի վրա: Ամենամոտը երեսնիվայր պառկած մի երիտասարդ կին էր: Շիկակարմիր ներկած մազերը փռված էին մեջքին, երևում էին պլաստմասսայե մեծ գինդ կպցրած սպիտակ ականջը և կարմիր ներկ քսմսած թմբլիկ թշի մի մասը: Կռացա ու շարժեցի ուսը: Ի գարմանս իմ, նա գլուխը թեքեց և մի աչքով ինձ նայեց.

— Ի՞նչ է, էլ տեղ չկա՞, — հարցրեց նա խզվազան ցածր ձայնով:

Նկատեցի, որ կնոջ վիզն անբնականորեն երկարած էր, իսկ վրան կապույտ խոր ակոս կար: Պարանի՞ հետք է: Փորձեցի նրան վեր կացնել, բայց իսկույն հասկացա, որ դա անհնար է. մարմնի կեսը սառույց էր դարձել և ձուլվել լճի սառույցին:

— Ձեռք մի տուր ինձ, գնա... Հեռու գնա ու պառկիր: Բոլորի համար էլ տեղ կա: Պառկիր ու ոչ մի բան մի մտածիր: Այստեղ ամեն ինչի վերջն է: Պառկիր ...

Նրան պառկած թողեցի ու գնացի՝ գննելով սառցալճին ձուլված կերպարանքները: Որքան ափից հեռանում էի, այնքան ավելի շատ էի հանդիպում լրիվ սառույց կտրած մարդկանց: Սակայն ոմանք դեռևս ի վիճակի էին խոսելու: Նրանք բացում էին աչքերը, դանդաղորեն շրջում գլուխները և հետևում ինձ: Շուրջս սվսվում էին նրանց թույլ ձայները.

— Ման մի գա այստեղ, մեզ մի անհանգստացրու... Պառկիր ու քնիր... Հետներս մնա... Ամեն բան վերջացած է ... Միայն այստեղ է ցանկալի հանգիստը... էլ գնալու տեղ չկա...

Այո, այստեղ լավ է, այստեղ ո՛չ ոռնացող քամի կա, ո՛չ էլ զզվելի տրտմաբեր տզոցը: Բայց այդ ինչն՞ ալլևս զնալու տեղ չունենմ: Գիտեմ, որ ինձ գնալ է պետք, և ես պիտի գնամ:

Դժվարությամբ պոկելով սառցին փակչող բորբիկ ոտքերս՝ դեպի ափ շրջվեցի: Չորս կողմից ձայներն սկսեցին դժգոհ ու հուսախաբ խշշալ.

— Ի—զը—զը—ուր ե—ս—ս գը—ը—նում... Հ—ե—ե—տ—ա—ը—ի—ի...

Ափ ելնելով՝ գնացի դեպի սև ժայռերի պատը: Չէի հիշում, թե ո՞ր կողմից էի լճի մոտ եկել, և ինձ համար մեկ էր, թե ուր կգնայի, սակայն այս

լճի մոտից պետք էր հեռու փախչել: Այս բանը հասնում էր նույնիսկ իմ քնակոլով ու ցրտից փայտացած խելքին:

Քաշ էի գալիս այլանդակ ժայռերի պատի երկարությամբ՝ դուրս գալու տեղ փնտրելով: Մեկ էլ ինձ թվաց, թե լճում ինչ—որ շարժում կա: Հետ նայեցի ու տեսա, որ սառույցի վրա երկու հսկայական տարօրինակ գլաքարեր են հայտնվել: Դրանք մի մարմնից մյուսն էին շարժվում, ինչից հետո մարմնի տեղը դատարկ սառույցն էր մնում: Ապա այդ երկուսն սկսեցին ոնց որ թե իմ կողմն ուղղվել: Դրանց շարժումների մեջ ինչ—որ բան ինձ սպառնալի թվաց: Ես կանգնել և ջանում էի հասկանալ սպառնալիքը, իսկ դրանք դեպի ինձ էին սողում: Շուտով այդ «գլաքարերը» երևացին ամենայն մանրամասնությամբ. դրանք այլանդակ ձևան դնչով և դուրս պրծած անթարթ աչքերով մուգ սառցե երկու հրեշավոր լորձանման կակղամորթներ էին: Սողալով սառցին ձուլված մարդկանց մարմինների վրայով՝ լորձնէակները դրանք իրենց մեջ էին քաշում և արագորեն հաստանում:

Վազել չէի կարող, բայց տեղում մնալ իսկի չէի ուզում: Շուռ եկա և գնացի ժայռերի կողմը՝ արդեն քայլերս չդանդաղեցնելով: Ավելի արագ ընթանալու համար սկսեցի քայլելիս ձեռքերս թափով շարժել: Հետ չէի նայում, բայց հետևիցս սառցի խշշոց էի լսում: Այդպիսի ձայն է գալիս, երբ գետը սղոն՝ հալվող սառույցի կտորներ է բերում:

Այլևս ժամանակ չկար փնտրելու այն կիրճը, որով այստեղ էի եկել: Թեքվեցի դեպի ժայռածայրերից մեկով ջոկածս առաջին իսկ կիրճը: Բախտս բերեց: Անկյան հետևը մտնելուն պես մի բավական զառիվայր լայն ճանապարհ տեսա: Շուտով լճի ցուրտ շունչը հետևում մնաց, և գնալը հեշտացավ:

Որոշ ժամանակ անց սկսեցին հանդիպել դիմացից եկող միայնակ ճամփորդներ: Դեմքերը քնաթաթախ էին, իսկ աչքերը՝ դատարկ, ինչպես ջարդած ապակիներով լուսամուտներն են լինում: Նրանք քայլում էին գլխահակ և ոտները քարշ տալով, լուռ անցնում էին կողքովս՝ ջանալով խուսա տալ աչքները աչքիս առնելուց: Միայն մեկը կանգ առավ ու հարցրեց.

— Մինչև Հուսահատության լիճը շա՞տ կա:

Պատասխանեցի, որ հենց այդտեղից եմ գալիս և պետք չէ այնտեղ գնալ. վտանգավոր և կորստաբեր տեղ է:

– Հիմա՛ր կին: Դու չգիտես, թե մենք ՈՐՏԵՂԻՅ ենք գալիս:

Առժամանակ անց կրկին հարթավայր մտա: Ժայռերը մնացել էին հետևում: Հեռվում սկսեց նշմարվել թաց ասֆալտե խճուղու նման մի սև ժայռակեն, այնուհետև դրա ծայրին խլրտացող մարդկանց բազմութունն նկատեցի: Քայլերս արագացրի և շուտով մոտեցա մի կառուցվող ճանապարհի: Այն պատված էր ոչ թե ասֆալտով, այլ սև հրաբխաքարի կոպտատաշ սալերով: Շինողները հալից ընկած, հյուժված կալանավորների պես մարդիկ էին: Նրանց մի մասը մուրճերով ու հատիչներով սև քառակուսի սալեր էր տաշում, մյուսները դրանք պատգարակներով տանում էին ճանապարհի մոտ, երրորդները շարում էին սալերն իրար կողքի և, մեծ մուրճերով խփելով, հագցնում էին ճանապարհի պաստառի մեջ: Թխկթխկում էին մուրճերը, դղրդում էին պատգարակներից գցվող քարերը, հնչում էին աշխատանքի ընթացքին հետևող պետերի կոպիտ բղավոցները:

– Ո՛ւր է տանում այս ճանապարհը, – հարցրի շինարարներին:

– Հուսահատության լիճ:

– Իսկ որտեղի՞ց է սկսվում:

– Հուսահատության լճից:

Ձեռքս թափ տվի ու հեռացա այդ բթամիտներից: Սալապատ ճանապարհով գնալն անշուշտ ավելի հեշտ էր, քան քարերի, ավազի ու մոխրի վրայով քայլելը: Շատ օրերի ընթացքում ոչ մեկին չպատահեցի, ոչ ոք հետևիցս չեկավ, ամբողջ ժամանակ գնում էի մեն-մենակ: Վերջապես հեռվում նորից սև ճանապարհի ծայրին խլրտացող մարդկանց տեսա, որոնց շինած ուղին ընդհատվում էր հենց անապատի մեջ: Նորից ոմանք պատգարակներով քար էին կրում, ոմանք՝ մուրճ ու հատիչով սալիկներ տաշում, մյուսները դրանք շարում էին:

– Ու՛ր է տանում այս ճանապարհը, – հարցրի:

– Հուսահատության լիճ, – պատասխանեցին:

Օղակաձև ուղի՞ են շինում, ինչ է: Հուսահատության լիճ գնալը հեշտ սրտովս չէր, իսկ սրանց շինած ճանապարհով ո՛չ այս, ո՛չ էլ հակառակ կողմը գնալով՝ ուրիշ տեղ չէիր հասնում: Այս բանն ինձ այնպես էր ջղայնացնում, որ ուզում էի քարեր հավաքել և այդ հաստագլուխների վրա

չպրտել այնքան ժամանակ, մինչև որ խելոքանան ու իմանան կարգին պատասխան տալ խելոք մարդկանց հարցերին: Ինձ զսպում էի, որովհետև նրանք շատ էին: Ուստի բոլորին մոլորեցնելու հնար մտածեցի: Ծանապարհով վերադարձա մոտավորապես մինչև կեսը, որտեղ շինարարներ չկային, և ոչ ոք չէր կարող ինձ տեսնել, իսկ հետո ճանապարհից դուրս եկա և անապատի միջով ուղիղ գնացի, ինչպես որ նախքան այդ էի գնացել, այսինքն՝ մի ցցված ժայռից մինչև մյուսը:

Մտածածս ճիշտ էր: Երկար գնացի, ինչպես ինձ թվաց՝ մի քանի օր: Եվ ահա մի օր հորիզոնում բարաքների պես ցածրաչեն գորշ շինություններ տեսա և դրանց մոտ շտապեցի: Տափաստանի լայնքով մեկ փռված մի իսկական բարաքաքաղաք էր:

Դրա ծայրին մոտենալով՝ խամքարից շինված բազմաթիվ ցածրակող ջրհորեր տեսա և հիշեցի, որ շատ վաղուց ջուր չեմ խմել ու չեմ վրացվել: Երբ մի քանի քայլ էր մնում, որ հասնեի դրանցից մեկին, ջրհորի եզրից հանկարծ մի ձեռք ցցվեց, և վրաս քար թռավ: Գլուխս հագլվի փախցրի: Կամաց–կամաց մոտենալով հաջորդ ջրհորին՝ հեռվից գոռացի.

– Հե՛յ: Մեջը մարդ կա՞:

Պատասխանի տեղը քարեր տեղացին վրաս: Երևում է ջրհորաբնակը քարի մեծ պաշար էր տեսել. չպրտում էր առանց ափսոսալու:

Վերջ տուր քարկոծելուդ, լսո՞ւմ ես: Ինձ բան պետք չէ, միայն ուզում եմ հարցնել, թե...

Քարանետումն արագացավ: Սաստիկ ցավ զգացի և, նայելով վնասված սրունքիս, տեսա, որ քարի դիպած տեղը սևացել է: Շտապեցի հեռանալ:

Արդեն անվտանգ հեռավորությունից անցնելով մյուս ջրհորերի կողքով, նկատեցի, որ դրանց բնակիչներն ինձ հետևում են՝ գլուխներն զգուշորեն հանելով իրենց բներից:

Մոտեցա քաղաքի առաջին բարաքներին: Դրանք շինված էին գորշ քարից, լուսամուտ չունեին, դռների տեղը ծակեր էին... Կացարաններն ինձ անհեթեթ թվացին, որովհետև տանիք չունեին: Բայց քանի որ պատերը կային, կարելի էր մեջները թաքնվել վտանգավոր բաներից: Ուզեցի ապաստանել բարաքներից մեկում, սակայն բոլորը լցված էին շատ

անխիղճ մարդկանցով: Ամեն տեղից քշում էին:

– Գնա՛, գնա՛ այստեղից: Տեղ չկա՛, – ինձ տեսնելուն պես բղավում էին նրանք:

Խնդրում էի ներս թողնել, լաց էի լինում, բայց ոչ ոք ինձ չէր խղճում ու ներս չէր թողնում:

Մտնելու հույսը կորցնելով՝ հենվեցի առաջին պատահած բարաքի պատին և աչքերս փակեցի: Լավ բան էր գոնե թիկունքով մի պատսպարան զգալը ամայի հարթավայրում երկար թափառելուց հետո: Քուն մտա:

... Գլխավերևումս վայրենաձայն բռնաց ինչ–որ վիթխարի ու կատաղի բան: Սարսափահար զարթնեցի: Միայն հետո իմացա, որ դա ո՛չ գազան է եղել, ո՛չ էլ դև: Աշխատանքի կանչող առօրյա շչակն էր:

Բարաքներից սկսեցին դուրս գալ մուգ քեռիներ ու մորքուրիկներ: Ապա հայտնվեցին պետի տեսքով չար ու բռի մարդեր՝ ձեռքերին երկաթե մահակներ: Սկսեցին գոռգոռալ և բոլորին քշել, որ շարասյուններ կազմեն:

– Դո՞ւ ինչ ես հստեղ փռկվել:

Ձէի նկատել, թե պետերից մեկն ինչպես էր բարաքի հետևից ելել ու գլխիս տնկվել: Վեր կենալու շարժմանս չնայելով՝ նա մահակը վրա բերեց ուսիս:

– Շո՛ւտ, շո՛ւտ արա, շարժվի՛ր տեղիցդ:

– Բայց ես այստեղացի չեմ:

– Ի՛նչ: Հիմա ցույց կտամ այլտեղացի լինելդ: Շո՛ւտ շարք մտիր: Ա՛–ր–ը–ադ: – Եվ մահակով մի հատ էլ մեջքիս տվեց:

Մորքումս ասի, որ հիմա պետք է ենթարկվել ու շարք կանգնել: Իսկ հետո կմտածեմ, թե ինչպես այստեղից շուտ փախչեմ: Հասկացա, որ կալանավար՝ ճամբար կամ աշխատանքային գաղութ եմ ընկել: Թե որտեղից էին այս բառերն ինձ ծանոթ, չէի կարողանում հիշել, բայց գիտեի, որ գաղութում մարդկանցից շատերն աշխատում են և կոչվում են բանտարկյալներ, իսկ մյուսները, ովքեր նրանց հրամայում են, կոչվում են պետեր: Կան նաև մահակավոր «պահնորդներ»: Սա ճիշտ անվանում չէ, որովհետև դրանք ոչ թե պահում՝ պահպանում են կալանավորներին, այլ հսկում են,

որ չփախչեն: Բայց ես, մեկ է, փախչելու եմ:

Կանգնեցի այն շարքի մեջ, որ պահնորդը մահակով ցույց տվեց: Հրաման տվին, և շարասյունը գաղութի նրբուղիներով ընթացավ դեպի քաղաքի ելքը:

Հասկացա, որ մեզ աշխատանքի են քշում, և ուրախացա: Աշխատելը քեզ ասածն անելն է, ինչի համար հետո մի բան ստանում ես, օրինակ՝ ուտելիք կամ հագնելիք: Աշխատելիս մտածելու կարիք չկա: Մտածում է կարգադրողը: Մտածելն առհասարակ ծանր գործ է: Դրանից գլուխս ցավում է: Բայց ստիպված ես մտածել, այլապես կարող ես կորչել: Երբ մտածում ես, գլխումդ մտքեր են ծագում: Մտքերիցդ իմանում ես՝ ինչ անես, որ ծեծ չուտես:

Մեզ լծեցին ճանապարհաչինուկներով: Ծանապարհն այն է, որտեղով քայլում ու որևէ բանով զնոմ են: Ինձ կցեցին մի չաղ մորքուրիկի և պատգարակ տվին: Քարասալիկներ էինք կրում: Մորքուրիկն ինձ ուշուց էր տալիս: Ձէի հասկանում՝ ինչու: Ախր շատ էի ջանում լավ աշխատել, որովհետև կարծում էի, թե դրա համար մի բան կտան:

Մուլերին պահնորդները փայտով շան ծեծ էին տալիս: Դրանց փայտերը ճանկավոր էին, և այդ ճանկերը մարդկանցից մսի կտորներ էին պոկում: Ձէի ուզում, որ ինձ էլ այդպես անեն: Դրա համար, երբ պահնորդը մոտիկ էր լինում, մորքուրիկին ասում էի. «Արի լավ աշխատե՛ք, որ մեզ չծեծեն»: Իսկ նա քայլում էր հետևիցս և պատգարակով բոթբոթում ինձ: Կարծում էր, թե հիմար եմ և չեմ հասկանում, որ ինքն է բոթողը: Իսկ ես գլխի էի ընկնում: Մորքուրիկը ծույլ ու չար էր: Բայց ես համբերում էի, որպեսզի պահնորդները կարծեն, թե մենք լավն ենք և լավ ենք աշխատում:

Հանգստանալու համար ընդմիջում ունեինք: «Ծխելազաղար» էին ասում: Թե ինչու՞ չգիտեի, որովհետև ոչ ոք չէր ծխում: Ծխելն այն է, երբ բերանիցդ համով ծուխ է դուրս գալիս:

Աշխատանքն ավարտեցինք չչակի դռնչոցով: Մեզ շարք կանգնեցրին ու քաղաք տարան: Բախտս բերեց. ինձ բոլորի հետ բարաք մտցրին: Նստեցի անկյունում, որ ոչ մեկին չխանգարեմ և ինձ փողոց չքշեն: Բայց մեկ է՝ խանգարում էի, որովհետև հրում էին և ասում, որ մի կողմ քաշվեմ: Այս–

տեղ միշտ բոլորը բոլորին խանգարում էին: Մի քեռի բարաքում հետուա-
ռաջ էր անում ու շարունակ ոտքերս կոխում: Տակս քաշեցի, որ չկոխի:

Համարյա թե ամեն ինչ լավ էր: Մշտական աշխատանք ու տուն ունեի:
Ինձ էլ էին ծեծում, բայց ոչ մյուսների չափ շատ:

Սկզբում շատ ցավոտ ու սոսկալի է, երբ մարմինդ ճանկով պոկոտում
են: Հետո տեսա, որ պոկած տեղը լցվում ու լավանում է, և այնքան էլ չէի
վախենում: Ցավին էլ ես սովորում:

Փորձում էի մարդկանց հետ խոսել, թեև այստեղ չէին խոսում, այլ
միայն հայհոյանք էին տալիս: Իսկ ես ահանջ էի դնում հայհոյանքին ու
մտածում: Բայց, չնայած սրան, մեր քաղաքի ամեն ինչը հասկացա:

Այս քաղաքը և ընդհանրապես այս ողջ աշխարհը կառավարում են
«տերերը»: Նրանք մեզ պես չեն, ուրիշ են: Շատ են սարսափելի: Նրանք
երբեմն հայտնվում են ճանապարհի կամ բարաքների վերևում, և այդժամ
ամեն ինչ լռում է: Մարդիկ գլուխներն առնում են ձեռքերի մեջ ու գետին
գցվում: Եվ ամեն մեկը վախենում է, որ այդ օրը հենց իրեն են ճանկելու:
Տերերը ոչ մի անգամ ինձ վրա չեն հարձակվել: Միշտ լավ թաքնվում էի.
գետին չէի ընկնում, այլ երեսս պատին արած կանգնում էի ու աչքերս փա-
կում: Այդպես էլ նրանք ինձ ոչ մի անգամ չտեսան:

Տերերը չափազանց ժլատ են. ո՛չ ուտելիք են տալիս, ո՛չ խմելիք (սրանք
շատ լավ, շատ համով բաներ են): Իսկ իրենք ուտում են: Մե՛զ են ուտում:
Թե բախտդ բերեց՝ միայն մի պատառ կպոկեն, չբերեց՝ լրիվ կխժռեն, բան
չեն թողի: Ուտվողները ճչում են, իսկ մյուսները շուրջը կանգնած նայում
են: Էլ չեն վախենում, որովհետև տերերը միանգամից մեկ բարաքաբնակից
ավելի չեն ուտում:

Տերերից բացի հյուրեր էլ են գալիս քաղաք: Սրանք լավն են: Սպիտակ
մեծ թռչուններ են, հաց են բերում և վերևից գցում: Բոլորը վրա են թափ-
վում, և սկսվում է տուրուղմբոցը: Հաց ձեռք գցողը ջանում է այն խնա-
յել, որ երկար հերիքի: Փախչում է և առանձին ուտում: Այդ հացը երևի
շատ համով ու օգտակար է: Ուտողը հետո ուրախ-զվարթ ման է գալիս,
մարմնի գույնն էլ բացվում է: Մյուսները նախանձում և ատում են նրան:
Իսկ սա գում ուտում է և հետո գառնում բոլորի նման:

Ճանապարհն այսպես ենք շինում: Սկզբում սալերը շարում ենք մի

ուղղությամբ, հետո գնում ենք զցված ճանապարհի մյուս ծայրը: Այստեղ
աշխատանքը լրիվ ուրիշ է, ավելի հեշտ: Այդ ծայրից սկսում ենք շարածը
քանդել: Մեծ մուրճերով սալերը ջարդում ենք, բեկորները լցնում
պատգարակների մեջ և հեռու անապատ տանում: Հետո տեղերը փոխվում
են. այս ծայրից սկսում ենք ճանապարհը շինել, իսկ մյուս ծայրից՝ քան-
դել: Սա լավ աշխատանք է, երբեք չի վերջանում: Առանց աշխատանքի
ձանձրալի է:

Աշխատելիս մեզ կարգադրություններ են անում ավագ հոգեկերները:
Նրանք մեզ պես են, միայն թե ավելի մուգ ու հաստ են: Հաստ են, որով-
հետև սովորել են մեզ ուտել: Տերերը մեկին կրծում են, իսկ կռճոնքը
թողնում են ավագներին: Այդ պատճառով ավագ հոգեկերները չեն վա-
խենում, այլ սիրում են տերերին: Երբ թռչում գալիս են տերերը, նրանք,
միշտ ուրախանում են և վազում են դիմավորելու: Որոշ ավագներ հետզ-
հետե այնպես են ուռչում ու սևանում, որ նմանվում են տերերի, այլ ոչ
թե մարդկանց:

Իսկ մարդիկ անընդհատ իրար հետ վիճում ու կռվում են: Երբեմն այն-
պես են կատաղում, որ ատամներով իրար են բռնում՝ հախուռում: Ոմանք
դիտմամբ են վիճում, որպեսզի կռվելիս մյուսից մի կտոր պոկեն ու լափեն:
Ժամանակի ընթացքում այդպիսիք դառնում են հոգեկերներ, բայց ոչ թե
ավագ, այլ՝ վայրի:

Վայրի հոգեկերները չեն աշխատում և բարաքներում չեն ապրում:
Սրանք ոհմակներ են կազմում և չափչփում քաղաքն ու անապատը:
Մենակ հոգու պատահելիս իսկույն վրա են տալիս ու պատառոտում: Այ
դրա համար հարկավոր է բոլորի հետ լինել, որ չուտեն:

Պատահաբար մի շատ կարևոր բան իմացա: Բոլոր մարդիկ բաժանվում
են երկու տեսակի՝ մյուսներին ուտողի և մյուսներից ուտվողի: Ես երկ-
րորդների մեջ եմ: Մի անգամ աշխատանքի ժամանակ տերերը մեր գլխա-
վերևում մեկին պատառոտեցին: Մի կտոր ոտքերիս մոտ ընկավ: Նայեցի
դրան ու շրջվեցի: Իսկ գուգընկերուհիս վրա պրծավ, հափշտակեց ու կե-
րավ: Եվ շատ կատաղեց վրաս ու ասաց, որ ինձ, միևնույն է, մյուսները
կուտեն: Լավ է՝ ուտեն: Ես չեմ կարող այդպիսի բան ուտել: Այ եթե երկն-
քից ընկնող հացիկի պատառի՛ց լիներ: Բայց ոչ մեկն ինձ հացիկ չի տա-

լիս: Ոչ մի անգամ դրա համը չեմ տեսել: Միայն լսել եմ, թե ինչի հոտ է գալիս: Շատ լավ հոտ ունի: Արևի հոտ:

Որոշ հոգիներ չեն ուզում ապրել ուրիշ մարդկանց հետ: Նրանք լքում են աշխատանքը և քաղաքից հեռանում: Բայց հոգեկերներ չեն, իրենք էլ են դրանցից վախենում: Իրենց համար միտեղանոց բարաք են շինում ու մեջն ապրում: Այդ տեսակներին տեսել եմ քաղաքին մոտենալիս: Վրաս քար նետեցին: Ցավեցրեց:

Ձանձրալի է ապրելը: Մարդիկ շատ են: Բոլորը՝ չար: Ոչ ոք հացիկ չի տալիս: Ինձ հաճախ ծեծում են ու կծում: Երևի շուտով կուտեն: Լսել եմ, որ մի վայր կա, որտեղ ոչ մեկը չի գոռում, չի վիճում և ուրիշին չի ուտում: Դա ինչ—որ լիճ է: Երանի ճամփան իմանայի: Այդ եղավ աշխատելու ժամանակ: Ավագ հոգեկերը հրամայեց հանգստանալ: Մորքուրիկի հետ պատգարակը գետին դրինք: Նա պառկեց, իսկ ես կողքին կանգնած՝ երկնքին էի նայում: Հենց այնպես: Հայտնվեց սպիտակ մեծ թռչունը: Պտույտ գործեց մեր վերևում, և հանկարծ մի մեծ կլոր սպիտակ հաց ընկավ ոտքերիս մոտ: Շուրջնայեցի: Բոլորը քնած էին: Կամացուկ վերցրի հացը և սկսեցի ուտել: Ի՛նչ համով էր: Տաք էր և արևաբույր: Կարողացա միայն կողը կրծել: Ափսոս, բայց պետք էր շտապել: Չէի հասցրել ծամածուս կուլ տալ, երբ գուգրնկերուհիս զարթնեց և ճչալով վրաս հարձակվեց: Հացը ձեռքիցս խլեց ու դեն նետեց: «Սա թո՛ւյն է, — գոռաց նա: — Չհամարձակվե՛ս այստեղ վարակ տարածել»:

Ուզում էի հացս գետնից վերցնել, բայց բարաքաբնականներն արդեն վրա էին թափվել, և հացիկիցս շուտով բան չմնաց: Վիրավորանքից սկսեցի լաց լինել: Ախր, դա ի՛մ հացն էր:

Բայց մյուս օրը սպիտակ թռչունը կրկին եկավ և նորից ինձ հաց գցեց: Ծանկեցի ու ճանապարհից հեռու փախա, ընկա ավազին, հացիկս պահեցի տակս և մինչև վերջ կերա:

Այս պահից կյանքումս ամեն ինչ սկսեց փոխվել: Գլխավորը՝ ինքս էի փոխվում: Խելքս պայծառացավ, ուժերս ավելացան: Սկսեցի խորհել և նույնիս հիշել: Մինչ այդ կարող էի մտածել միայն աչքիս առաջ եղածի մասին: Եթե մարդուն չէի նայում, ապա նա ասես չկար ինձ համար: Իսկ հիմա հիշեցի այնպիսի բաներ, որոնք մոռացել էի: Այն է՝ բնավ էլ միշտ

չէ, որ ապրել եմ այս քաղաքում, միշտ չէ, որ շինել ու քանդել եմ այս ճանապարհը: Հիշեցի, որ երկար ժամանակ քայլել եմ անապատում, որովհետև պետք է մի տեղ գնայի: Միայն թե՛ ո՞ւր:

Սպիտակ թռչունն սկսեց ամեն օր ինձ այդ սպիտակ սքանչելի հացը բերել: Դրանից ոչ միայն խելքս էր հստականում, այլև մարմնիս գույնն էր բացվում՝ պայծառանում: Շատ լավ էր: Նկատեցի, որ հոգեկերները բաց գույնի մարմին չեն սիրում, դրանից չեն ախորժում:

Զուգընկերուհիս նկատեց գույնս բացվելը: Սկսեց վրաս թքել և վատ խոսքերով հայհոյել: Հետո այնպես ջղայնացավ, որ պատգարակը գցեց ու գնաց: Այլևս նրան չտեսա: Տեղն ուրիշ գուգրնկեր տվին:

Սա երկարահասակ էր, նիհար և ցցված հսկայական ականջներ ուներ: Ես էլ անունը Լոշտակ դրի: Չէր նեղանում: Շարունակ նվնվում էր. «Վատ եմ... Բոլորից վատ եմ...»: Բայց չար չէր: Նախանձելով էր նայում, թե ինչպես եմ հացիկս ուտում, բայց ոչ մի անգամ ոչ մի կտոր չխլեց: Ուժ չուներ և վատ էր աշխատում: Որպեսզի կարողանար պատգարակը հետս քարշ տալ, ստիպված երկու սալ առաջվանից պակաս էինք դնում: Բայց ինձ համար նրա հետ աշխատելը հանգիստ էր: Ձանում էի, որ հոգեկեր պետերը մեր արած խորամանկությունը չնկատեն:

Սակայն նրանք, իհարկե, վերջիվերջո նկատեցին և հայտարարեցին, որ մոտ օրերս նրան կուտեն: Վախեցա Լոշտակի համար և սկսեցի մտածել, թե ինչպես օգնեմ: Նոր գուգրնկեր չէի ուզում:

Որոշեցի Լոշտակին մի քիչ սնել: Երբ սպիտակ թռչունն ինձ նորից հաց գցեց, Լոշտակին տվի, իսկ ինքս կանգնել էի կողքին և, մինչ ուտում էր, հետ էի քշում բարաքաբնականներին: Նա հացը լրիվ կերավ և հարցականորեն ինձ նայեց:

— Էլ չկա: Հետո էլի կլինի:

Նա շրջվեց ու գնաց մեր պատգարակի մոտ: Նույնիսկ շնորհակալություն չասաց:

Երբ այդ օրվա՝ սալեր բարձած վերջին պատգարակն էինք տանում, վտանգ զգացի և աննկատ շուրջնայեցի: Երկու ավագ հոգեկեր պահանջներ մի կողմ կանգնած մեզ էին նայում՝ իրար հետ խոսելով:

— Դո՛ւ, — մահակը դեպի ինձ տնկեց դրանցից մեկը: — Պատգարակը

Թող և շարվելու գնա: Իսկ դու տե՛ղդ մնա:

Լոշտակը հնազանդ կանգնեց:

– Պատգարակը գցիր ու շարասյուն վազիր, – շնչացի ականջին: Նա ինձ նայեց, ճպճպացրեց չռված աչքերը և ճղավելով նետովեց դեպի կազմ-վող շարասյունը: Նրան հաջողվեց խառնվել բազմությանը:

Հոգեկերները գազազեցին և, մահակները թափահարելով, վրաս հարձակվեցին: Նրանք ծեծում էին ինձ և մարմինս պոկոտում երկաթե ճանկերով: Տշում ու կոխկրտում էին: Շուտով կորցրի գիտակցությունս:

Երբ ուշքի եկա, լսեցի Լոշտակի հուսահատ աղաղակը.

– Ձե՛մ տա: Հեռո՛ւ քաշվեք, շներ: Ձեմ թողնի նրան կրծեք: Նա լա՛վն է:

Աչքերս բացելով՝ տեսա, որ Լոշտակը կանգնել է գլխավերևումս՝ ձեռքին մեր պատգարակի բռնակը, որով ինձնից դեն էր քշում վայրի հոգեկերներին: Հասկացա, որ գաղութային հոգեկերները զգվել են ինձ լափել և ընկած թողել են ճանապարհին: Վայրի հոգեկերներն էլ հավաքվել են լեշ-խս վրա: Բայց ի՛նչ քաջն է Լոշտակը, որ չի լքել ինձ: Իսկ ջարդած պատգարակի համար հաշիվ պիտի տանք... Կծեծեն:

Տեղիցս մի փոքր բարձրացա, և հոգեկերները տեսան, որ իրենց համար ուտելի չեմ. երկնային հացից մարմնիս գույնը շատ էր բացվել: Լոշտակը ձեռքը տվեց և օգնեց, որ ոտքի կանգնեմ: Հոգեկերները հետ քաշվեցին: Մեզնից քիչ հեռու նստելով՝ նրանք գլուխները տնկեցին և սկսեցին ոռնալ:

– Դու նորից ողջացար, ինչ լա՛վ է, – ասաց Լոշտակը և նիհար ձեռքով ուսս շոյեց: – Շուտ գնանք գաղութ, գուցե դեռ բարաք թողնեն: Այստեղ վախենալու է:

– Ո՛չ մի գաղութ և ո՛չ մի բարաք չենք վերադառնա: Այստեղից գնում ենք: Փայտը հետո վերցրու, ճանապարհին պետք կգա:

Լոշտակը սոված հոգեկերի պես սկսեց ոռնալ:

– Ինչո՞ւ ես ոռնում:

– Վա–խե–նալո՛ւ է:

– Ուրեմն մենակդ վերադարձիր: Ես գնում եմ:

Վերցրի մեր պատգարակի մնացած մասերը և սկսեցի կոտրել: Մտադրածս անելու համար շինանյութ էր պետք: Ափսոս, որ բարաքաբռնակնե-

րը աշխատանքից հետո գործիքները հետներն էին տարել: Տխմար Լոշտակն էլ գլխի չէր ընկնում, որ ինձ օգնի, այլ կանգնել՝ արածիս էր նայում և աչքերը ճպճպացնում:

Ուսիս դնելով ջարդածս պատգարակի տախտակները՝ վճռականորեն քայլեցի մենակյացների ավանի կողմը: Հետևիցս մի աղեկտուր հեկեկախառն ոռնոց հնչեց: Գիտեի, որ կվերադառնամ, եթե Լոշտակը հետևիցս չգա, բայց չէի՛ ուզում:

Հետևս չնայելով՝ գնում էի, բայց լսում էի, որ նրա վնգատոցը հետ չի մնում: Առժամանակ անց կանգ առա, որ Լոշտակն ինձ հասնի. մեկ էլ տեսար մենակ մնալուց վախեցավ ու բարաքներ վերադարձավ: Նա հավասարվեց ինձ ու թևս բռնեց: Մյուս ձեռքով քարչ էր տալիս պատգարակի բռնակը:

– Արի գաղութ վերադառնանք:

– Թո՛ւ քեզ: – Պինդ սեղմեցի ձեռքը և քաշեցի հետևիցս:

Մոտեցանք քարե առաջին ջրհորերին: Դրանցից քարեր ու աղաղակներ թռան:

– Հեռացե՛ք: Այստեղ ամեն ինչ զբաղվա՛ծ է:

Ինչ արած, լավ: Դրա պես պատսպարան ինքներս էլ կշինենք, նույնիսկ՝ ավելի լավը:

Անցանք մենակյացների ավանով և բաց անապատ ելանք: Մի հարմար ժայռ գտա, որի մոտ բավական բեկորներ էին թափված, և բեռս գցեցի:

– Այ այստեղ կապրենք, – ասացի Լոշտակին:

– Վա–խե–նալո՛ւ է:

– Ինչի՞ց ես վախենում, հիմարուկ:

– Կգան: Կուտեն:

– Մի՛ վախենա, որ հետս լինես, չեն ուտի, – թփթփացրի ուսը հովանավորական ձևով: – Լավ տուն կշինենք, և դրանց ուխտ մեզ չի հասնի: Իսկ հիմա սկսիր քար կրել, ընտրիր մեծերը:

Քար քարչ տալը նոր չէր սովորելու: Գաղութում դրան վարժվել էր: Նույնիսկ կարողանում էր այնպիսի հավասար քարաբեկորներ ջոկել, որոնք շարելիս իրար հարմար էին գալիս: Շատ կարևոր էր մեկը մյուսի վրա կիպ նստելը: Մեր տունն ամուր պիտի լինի, որ ամեն հարձակման դիմանա: Այստեղ ամեն կողմից վտանգ կա:

8 – րդ գլուխ

... Բայց ինչո՞ւ չէի կարողանում տեղս նստել: Կարծես թե լավ էինք ապրում, սրտնեղելու պատճառ չունեինք: Պինդ էլ տուն էինք շինել: Ոչ մի մենակյաց նմանը չունեիր: Մերը դուռ ու տանիք էլ ունեիր:

Ձեռն կատակում: Ախր, հետներս պատգարակից պոկած երկու երկար փայտ էինք քարշ տվել: Ահա դրանք էլ հարմարեցրել էինք որպես հեծաններ և վերևից մի ահագին հարթ սալ դրել: Դուան տեղ էին ծառայում պատգարակի չորս տախտակ, որոնցով ներսից փակում էինք մուտքը և մի ծանր քար դեմ տալիս: Կատարյալ ապահովություն: Մի քանի անգամ հոգեկերները փորձեցին ներս խցկվել, բայց այդպիսի դեպքեր համար տանը քարի լավ պաշար էինք տեսել: Հեշտովթամբ խռիկ տվինք:

Տնակը մեծ չէր, այնքան էր, որ երկուսով կարող էինք նստել ու պառկել, իսկ եթե ուզում էինք քայլել կամ կանգնել, ապա դուրս էինք ելնում ու ման գալիս ժայռի մոտ: Հեռու չէինք գնում, վախենում էինք: Լոշտակը ջանում էր միշտ ձեռքիցս բռնած մնալ:

Երկուսով լավ ու հանգիստ էինք զգում: Մեծականջ ընկերս կամ լուռ էր, կամ էլ բախտից բողբոջում: Ես նրան առանձնապես ականջ չէի անում. գայլը մի երգ ուներ, այն էլ թոցրել էր: Լոշտակին այդպես էլ ասացի: Եվ նա պոկ չէր գալիս. «Երգն ի՞նչ է: Գայլն ո՞վ է»: Իբր թե ես գիտեմ: Այդպես են ասում, ահա և վերջ:

Գլխավորն այն էր, որ նա, այդ հիմարուկը, բարի էր, և ես նրան վստահում էի: Ախր, ոչ մեկին չի կարելի վստահել: Իսկ նրան կարելի էր: Գիտեի՝ նա ավելի շուտ կթողնի, որ իրեն ողջ–ողջ խժռեն, քան ինձ կզավաճանի: Այդպիսին էր Լոշտակը: Վախկոտ էր, բայց՝ հավատարիմ:

Արդեն սկսել էինք լցվել՝ կազդուրվել: Սպիտակ թռչունն ամեն օր մեզ հաց էր բերում, որն ուտում էինք երկուսով: Մի ամբողջ հաց երկուսիս համար: Լոշտակի դեմքին շուրթեր հայտնվեցին. թե չէ բերանի տեղը մենակ ձեռք էր: Անգամ ականջներն սկսել էին ավելի քիչ ցցվել:

Գուցե այն պատճառով էի հանկարծ ուզում ուրիշ տեղ գնալ, որ ուժնե՞րս էին ավելացել: Գուցենրս լավ բացվել էին, մուգից համարյա դուրջ էինք դարձել: Շատ սիրուն էր: Լոշտակը հենց այդպես էլ ասաց.

– Դու սիրո՞ւն ես:

– Դու էլ՝ ոչինչ: Եթե քիչ նվնվայիր, անգին կլինեիր:

– Բայց, ախր, ես շատ անբախտ եմ: Ախր դու գիտես, որ ինձնից դժբախտ մարդ չկա:

– Իսկ նրանք, որոնց հոգեկերները լափեցին, ի՞նչ է, քեզնից երջանի՞կ էին:

– Այո: Որովհետև նրանց արդեն կերել են: Եվ նրանք վախենալու բան չունեն:

– Ինչ հիմար ես: Մի՞թե քեզ դուր է դալիս դժբախտ լինելը:

– Իհարկե: Չէ՞ որ դու ինձ խղճում ես:

– Դու ինքդ ես քեզ խղճում, այն էլ՝ շատ: Ինքդ մտածիր, ինչի՞ս է պետք զուր ու ավելորդ աշխատանքը:

Լոշտակը նեղացավ ու լռեց: Հաճախ էր նեղանում: Ինձ համար նա փոքր տղա էր: Թեև հասակով ինձնից բարձր էր, բայց խելքով երեխա էր մնացել: Ես իրենից մեծ էի, և նա այդ բանը հասկանում էր և համարյա միշտ հնազանդվում: Բացի մի անգամից. դա պատահեց այն ժամանակ, երբ նրան ասացի, որ հարկավոր է տունը թողնել, հետներս վերցնել տախտակները և գնալ հեռու:

– Ո՞ւր: Ո՞ւր ենք գնալու: Դու լրիվ հիմար ես, եթե այդպես ես ասում: Ճանապարհին մեզ կուտեն: Էս տեսակ տուն, պատեր, դուռ, տանիք... Էլ ի՞նչ է քեզ պետք: Իսկ հա՞ցը: Ասենք թե ուրիշ տեղ գնացինք, իսկ այդ ուրիշ տեղում հաց կլինի՞, հը՞:

Մղձավա՛նջ է: Լոշտակը դեռ երբեք իրար հետևից այդքան բառեր չէր ասել: Հասկացա, որ նա կվատանա, եթե մեր տնից չզբտեմ թե ուր գնանք, և որոշեցի մնալ:

– Հանգստացի՛ր: Եթե չես ուզում, ոչ մի տեղ չենք գնա:

Լոշտակը կարծես հանգստացավ, միայն թե դեռ երկար շուռուճուճ էր գալիս իր անկյունում ու փնթփնթում. «Ուրիշ տեղ գնանք ... Որ ուտեն ... Տես ի՞նչ է մտածել»:

Բայց որոշ ժամանակ անց գլուխս մի ծրագիր եկավ, որի մասին որոշեցի Լոշտակին դեռևս չասել: Սկսեցի մի կողմ դնել մեր հացի կեսը, որպեսզի վերցնենք ճանապարհի համար: Լոշտակը չէր հասկանում, թե ինչու եմ

այդ անում, և եթե պահած հաց էր գտնում, իսկույն ուտում էր: Դեռ ուրախանում էլ էր և ինձ հյուրասիրում. «Տես ի՞նչ եմ գտել»: Հասկացա, որ այսպես գործն առաջ չի գնա:

Միշտ ես էի դուրս գալիս դիմավորելու հացաբեր սպիտակ թռչունին: Սովորեցի գգալ, թե նա երբ է գալու: Եվ ահա, հացը վերցնելով, կեսը պահեցի մեր տանիքում: Հաջորդ օրը մի լրիվ հաց դրի տանիքին, իսկ Լոշտակին կերցրի կեսը: Այդ հիմարուկը միշտ գլուխը կախ էր ման գալիս, ուստի չէր նկատել, թե ինչ կերպ է տանիքին կուտակվել մի ամբողջ հարստութուն՝ յոթ հատ հաց:

Ինձ հաջողվեց մի բան էլ նախաձեռնել: Զանացի նկատել, թե որտեղից է գալիս հացաբեր թռչունը: Քարեր հավաքեցի և ծայրն այդ կողմն արած սլաք շարեցի: Մի քանի անգամ ստուգեցի, և դուրս եկավ, որ սլաքը ճիշտ ցույց է տալիս այն տեղը, որտեղից սպիտակ թռչունն է գալիս: Այդուհետև արդեն գիտեի, թե ինչ պիտի անեմ, որ գնալիք ճանապարհից չչեղվեմ:

Եվ ահա, երբ պատրաստութուններս ավարտվել էին, Լոշտակին ասացի.

- Վե՛րջ: Այսօր գնո՛ւմ եմ:
- Ես չե՛մ գա: Չե՛:
- Կգա՛ս: Դու մենակդ, առանց ինձ այստեղ կկորչես:
- Կկորչե՛մ: Հա:
- Դե ուրեմն հետս արի:
- Չե՛: Այդ դո՛ւ հետս մնա: Սկսողը դու ես:

Ես էլ դուրս եկա տնից և սկսեցի քանդել այն: Լոշտակը գոռոզում էր և լաց լինում՝ տեսնելով, թե ինչպես եմ խորտակում տանիքը, իսկ հետո՝ դուռը: Նա չմխիթարվեց նույնիսկ այն ժամանակ, երբ ցույց տվի խնայածս հացը: Պատգարակի տախտակներն ու բռնակները Լոշտակի վրա բարձեցի, իսկ բոլոր յոթ հացերը դարսեցի սյան ձևով և ինքս վերցրի: Չէր կարելի հացը նրան վստահել, անպայման կոպակեր՝ կուլ կտար: Տախտակները նրան վստահելն էլ էր վտանգավոր, որովհետև կարող էր կորցնել կամ դեն գցել: Ուստի որոշեցի ճանապարհին ավելի լավ հետևել Լոշտակին:

Թուավ եկավ թռչունը, պտտվեց վրաներս և հաց գցեց: Նա նորից թռավ դեպի այն կողմը, ուր շարածս սլաքն էր ցույց տալիս, հետո ծածկվեց ամպերի հետևում: Բայց հեռվում մի ժայռ նկատեցի, որի վրա նա անհետացավ: Զանացի լավ միտս պահել ժայռը, որ ճանապարհից չչեղվեմ: Դրանից հետո մնում էր միայն ճամփա ընկնել, ինչն էլ արեցի: Իսկ Լոշտակը քարչ էր գալիս հետևիցս՝ հառաչելով ու տրտնջալով:

Բախտներս չբերեց: Հազիվ էինք անցել նշածս ժայռին հասնելու ճանապարհի կեսը, երբ մի փոսից ելան հալից ընկած երեք չոփ մարդ և գոռացին, որ մեր կամքով, հաշտ ու խաղաղ հացն իրենց տանք:

– Չե՛ – է, – սկսեց բղավել Լոշտակը, – սա մե՛ր հացն է:

Նա դեն նետեց տախտակները, ճանկեց բռնակը և պատրաստվեց կովելու:

– Սպասի՛ր, – խստությամբ ասացի նրան: – Սրանք երեքով են և սոված են: Սովածը միշտ ավելի ուժեղ է լինում: Դրանց հաց կտանք և մեր ճամփով կգնանք:

– Ո՞նց թե, – չհավատաց հալից ընկած չոփերից մեկը: – Ձե՛ր ձեռքով կտաք ձեր հա՞ցը:

– Դե հա: Էլ ի՞նչ պիտի անենք: Մենք ձեզ հաց կտանք, որ դուք մեզնից գոռով չխխբեք: Այս հասկանալի՞ է: Ահա, վերցրե՛ք:

Ես գետնին երեք հաց դրի: Նրանք սոսկալի քաղցած էին. այնպես վրատվին հացին, որ մեզ մոռացան: Իսկ ես շտապ բռնեցի Լոշտակի ձեռքը և հեռու քաշ տվի: Ահա այսպես կորան մեր տախտակները: Դրանք հավաքելու ժամանակ չկար: Միայն պատգարակի բռնակը մնաց Լոշտակի ձեռքին: Էլի լավ է, ինչքան չլինի՝ գենք է:

Երբ վազելով անվտանգ տարածության չափ հեռացանք ու հետ նայեցինք, տեսանք, որ իզուր ենք փախել. այդ երեք չոփերը նստել էին դուռնչները հացի մեջ կոխած. իսկի իրար չէին նայում, էլ ուր մնաց թե մեզ:

– Ես պիտի հե՞տ դառնամ ու տախտակները վերցնե՞մ, – տրտնջալով խոսեցի հարցրեց Լոշտակը:

– Թող կորչեն: Ուրիշները կճարենք, – ասացի ես, որպեսզի շատ դարդ չանի:

Իսկ նա իսկի էլ դարդ չէր անում: Գլուխը թեքելուն պես մոռացավ

դրանց մասին և սկսեց ձեռ ու ոտ ընկնել, որ հաց տամ:

– Էդպես է, հա՞, օտար մարդկանց տալիս ես, իսկ ինձ՝ ափսոսում:

Ստիպված մի կտոր տվի, հետո՝ էլի, էլի... ինչպես որ սովորաբար լինում է: Կանգ առնել չի կարող, մինչև վերջը չտա: Ծանապարհի համար ընդամենը երեք հաց էր մնացել, իսկ մենք տնից հագրիվ էինք հեռացել:

Բայց երբ բախտդ սկսում է չբերել, այդպես էլ գնում է: Նոր էինք մոռացել լղար եռյակի մասին, երբ դեմներս ելավ մի պառավ աղջիկ: Քայլում էր ոտքը հագրիվ փոխելով, ամբողջովին կեռացած, իսկ դեմքը ջահելի էր: Միայն թե այնպիսի դժբախտ ու վհատ արտահայտություն ուներ, որ վրան նայելն իսկ ցավեցնում էր:

Մեզ հավասարվելով՝ նա կամաց հարցրեց.

– Որտե՞ղ է Հուսահատություն լճի ճանապարհը:

– Ինչի՞ դ է պետք այնտեղ գնալը:

– Որ քուն մտնեմ... Վիճակս շա՛տ դժվար է:

Անխոս նրան հաց մեկնեցի: Լոշտակն ինձ բան չասաց: Ուրեմն ինքն էլ խղճաց... Հացն աղջկան պիտի օգնի. չէ՞ որ նա ոչ թե խլեց, այլ նվեր ստացավ:

Էլի հանդիպումներ ունեցանք: Մեզ պատահում էին այն երեքի նման չոփեր: Լոշտակից էլ վատ տեսք ունեին: Յուրաքանչյուրին՝ մի պատառ, յուրաքանչյուրին՝ մի պատառ...

Վերջը, երբ մոտեցանք նշան դրած ժայռին, մեզ ընդամենը կես հաց էր մնացել: Կերանք: Ժայռի մոտ թիկունք-թիկունքի նստեցինք, որ հանկարծակի հեշտ որս չդառնանք, և քնեցինք: Ծա՛տ էինք հոգնել:

Արթնացա թարմ հացի բուրմունքից: Մտածեցի՝ երազ է: Աչքերս բացեցի. առաջ հաց է դրած, իսկ վրաներս սպիտակ թռչունն է պտտվում ու չի հեռանում: Նա այդպես էլ պտտվեց, մինչև որ բոթելով Լոշտակին չարթնացրի, և հացի կեսը չծամեցինք: Իսկ մյուս կեսը պահեցի, չէ՞ որ պաշարատես եմ:

Հետո վեր կացանք, որ ճանապարհներս շարունակենք: Իսկ այդ սպիտակ թռչունը կարծես հասկանում էր. առաջ թռավ: Մենք էլ հետևից գնացինք և առջևում մի ժայռ նկատեցինք, որի հետևում նա ծածկվեց:

Ահա այդպես, հաց առ հաց, ժայռից ժայռ գնալով՝ ես ու իմ ընկեր

Լոշտակը հասանք ուղիղ ծովի մոտ: Ծո՛ւղի՛ մոտ:

Սկզբում քամին մի տեսակ անծանոթ էր, թաց էր, ինչ է... Հետո ձանձրացրած տրտմալի տզոցի փոխարեն լսեցինք՝ խըշշ-շ-շ... խըշշ-շ-շ... խըշշ-շ-շ... Իսկ հետո սկսվեցին ավազաբլուրները: Բարձր չէին, բայց քայլելը դժվար էր. ոտքներս խրվում էին ավազի մեջ: Ապա բարձրացանք մի բլրի վրա, առաջ նայեցինք. դիմացը ջուր էր տարածվում: Ծա՛տ: Այստեղ էլ հիշեցի.

– Լոշտակ, գիտե՞ս ինչ է սա:

– Ջուրիկ:

– Իսկ անո՞ւնն ինչ է:

– Ինքդ ասա:

– Ծով է անունը, դժբո:

– Ծով... Իսկ ես գիտեմ. ծովը պիտի կապույտ լինի:

– Ի-ի՞նչ:

– Կապույտ ծով...

Այ քեզ ծուռ:

– Դու ինչ է, չե՞ս տեսնում: Այն գորշ է, ինձ ու քեզ պես գորշ: Բան ես հնարել՝ կապույտ: Ի՞նչ է կապույտը:

– Չգիտեմ...

– Ուրեմն լուր:

– Լուռ եմ: Միայն թե ինձ այստեղ մենակ չթողնես: Մի բարկանա:

Տես, է: Դե դժբոն դժբո էլ մնում է. սրանից ի՞նչ ուզես: Ծովը խմել չսկսեցինք, վախեցանք: Բայց մոտ գնացինք, մո՛տ—մոտ, և սկսեցինք լվացվել: Ծատ վաղուց չէինք լվացվել: Դուրներս եկավ: Ուղածիդ պես լվացվեցինք: Լոշտակը լվացվելուց հետո նույնիսկ սիրունացավ:

– Դու հիմա նապաստակի նման ես:

– Ո՞վ է, ի՞նչ բան է, — հարցրեց նա կասկածաբեկ:

– Նապաստակը: Դե գորշ՝ մոխրագույն կենդանի է, երկար ականջներ ունի:

– Չի՞ կծում:

– Չէ:

– Ուրեմն լավ է: Նման կլինեմ:

Այնուհետև ծովի մոտ մի մեծ քաղաք տեսանք և մոտ գնացինք: Շուտ հասանք, որովհետև հեռվից շատ էինք հավանել: Մոտիկից էլ պակաս դուրեկան չէր: Քաղաքի տները գաղութային բարաքներից գեղեցիկ էին, նույնիսկ մեր տնակից էլ գեղեցիկ: Դրանք շատ պատուհաններ ունեին, դռներ ու նաև այսպիսի բաներ... պատշգամբ են ասում: Նույնպես գեղեցիկ են, երկաթյա: Մտանք այս քաղաքը և սկսեցինք ապրել:

Քաղաքի մարդիկ լավն էին: Իրար հետ համարյա թե չէին կռվում, եթե խոսքակռվից առաջացած տուրուզմիտքը չհաշվենք: Ճիշտն ասած՝ հաճախ էին խոսքակռիվ անում: Բայց հենց այնպես, անառիթ, այն էլ անծանոթների վրա, գրեթե չէին հարձակվում: Գլխավորն այն է, որ ոչ մեկը յուրայիններին չէր ուտում: Այն նույն տերերը, որ մեր գաղութում վայրագություններ էին անում, այստեղ էլ էին թռչում—գալիս և մեկնումեկին ճանկերով բռնած տանում էին: Բայց որ մեկին բոլորի աչքի առաջ կրծե՞ն, չէ, այդ բանը չի եղել: Վերջը, նույնիսկ Լոշտակը համաձայնեց, որ այստեղ մեր գալը շատ ճիշտ էր:

Մենք տուն ունեցանք, զի՛լ տուն: Այստեղ լիքը դատարկ տներ կան, զբաղեցրու՜ որն ուզում ես, ոչ ոք չի ավստսի: Ահա դրանցից մեկը հավանեցինք ու զբաղեցրինք: Տունն ուներ երկաթյա իսկական կտուր, պատուհաններ, իսկ ներսում՝ սեղան ու երկու հատ այն բանից, որին նստում են: Զիլ է: Սկզբում իմ ու Լոշտակի արածն այն էր, որ նստում էինք դրանց վրա: Ոտքերիդ համար շատ հարմար է, և ձեռքերդ կարող ես սեղանին դնել: Նստում ենք, իրար նայում և հանգստանում:

Ոչ ոք մեզ չէր խանդարում: Երբեմն քաղաքաբնակներից մեկը նայում էր լուսամուտից, մեզ տեսնելով՝ քֆուր էր տալիս ու ցվրվում: Դրանցից այնքան էլ չէինք վախենում. մենք ավելի պինդ էինք և բռնակ ունեինք, նաև նստելիքներ: Սրանցով էլ կարելի էր պաշտպանվել: Իսկույն հասկացա այդ:

— Այստեղ մի՞շտ ենք ապրելու, — հարցնում էր Լոշտակը:

— Տեսնենք, — պատասխանում էի: — Բայց ինքս էլ էի կարծում, որ ավելի լավ տեղ չենք գտնի:

Հաճախ էինք ծով գնում նայելու: Նստում էինք ափին ու նայում: Հացաբեր սպիտակ թռչունը մեզ տեսավ ու սկսեց հացն այստեղ բերել: Նա գալիս էր ծովի հետևից, իսկ հետո նորից այնտեղ էր թռչում: Գիտեի, որ

մի հացը մի օր է: Լոշտակին այդպես էլ ասացի: Նա, ինչպես միշտ, բան չհասկացավ, միայն ծոր տվեց.

— Շա՛տ խելքով ես:

Խելքը լինելը լավ բան է, այս նույնիսկ նա էր հասկանում:

Իսկ քաղաքի մարդիկ հիմար էին, բոլո՛րը: Եվ բոլորը քուֆուրկան, խոսքահաչ տվող էին: Մարդ էին փնտրում, որ հետը կռիվ անեն:

... Փողոցով գնում ես, իսկ դիմացից մեկն է գալիս: Նրան չես էլ նայում, իսկ նա կպչում է՝ կռիվ է ուզում.

— Ի՞նչ ես իմ փողոցով անցնում: Հիմա էնպես կտամ գլխիդ որ...

Բայց ես հո խելոք եմ, առանց բռնակիս փողոց չեմ ելնում: Դրանով սպառնում եմ, և շառտը պոկ է գալիս:

Իսկ իրար հետ նրանք միշտ խոսքակռիվ էին տալիս: Կանգնում էին իրար դիմաց և սկսում.

— Ի՞նչ է ասածդ:

— Քո՞նը ինչ է: Հիմա՛ր:

— Ինքդ ես հիմարը, ես քո...

Իրար էին կառչում և այնպես էին ձեծկվում, որ բաբուլները օդ էին թռչում: Երկուսն էլ հիմար են: Ես դրանցից իսկույն հեռու էի փախչում, իսկ Լոշտակը առհասարակ չէր սիրում փողոցում ման գալ: Վախենում էր: Բայց մեկ է, լավ քաղաք էր: Գուցե այստեղ էլ մնայինք, եթե ամբարտակը չլիներ:

Այն տեղից, որտեղ ամեն օր դիմավորում էինք հացաբեր թռչունին, երևում էր ծովի ողջ երկար ափը: Մի կողմում ոչինչ չկար, միայն ավազ էր: Իսկ ահա մյուս կողմում ամեն օր մարդիկ էինք տեսնում, որոնք ափին և ծովի մեջ ինչ—որ բան էին անում: Սրանց արածն ինձ հետաքրքրեց:

— Արի գնանք նայենք, — մի անգամ ասացի Լոշտակին:

Պետք չէ, — նվնվաց նա սովորականի պես: — Այնտեղ մարդիկ կան:

Բայց նրան համոզեցի, և գնացինք: Երբ մոտեցանք, տեսանք, որ ափին ինչ—որ բան են կառուցում: Դարձյալ մահակավոր հոգեկեր պահանջներն էին բոլորին ղեկավարում: Թո՛ւ, թակարդն ընկանք: Մեզ վռազ բռնեցին ու ստիպեցին քար քար չտալ:

— Դո՛ւ ես մեղավորը ... Լավ կլինեի տանը մնացած լինեի, և դու մե-

նակդ աշխատանքի գնայիր, — փնփնթում էր Լոշտակը:

Իսկ աշխատանքն ինձ սկզբում դուր եկավ: Ափից քառակուսի քարեր էինք վերցնում և ուղիղ ծովի մեջ տանում ու այնտեղ պատ շարում: Ամբարտակ է կոչվում: Զիլ բան է: Շուրջը ջուր է, իսկ հենց մեջը՝ պատ: Երբ վրայով քայլում ես, ասես ծովի վրա քայլելիս լինես: Միրում եմ, երբ կառուցում են: Ջանազան բաներ են դուրս գալիս՝ տներ, ճանապարհներ, ասածս ամբարտակը... Սա ճիշտ գործ է:

Այստեղ մի հետաքրքիր բան իմացա: Երբ քարը տանում ես ամբարտակի ծայրը, և այնտեղ ուրիշ քարեր են շարված լինում, բերածդ պարզապես վրաներն ես դնում ու վերջ: Իսկ երբ վերևի բոլոր քարերն այնտեղ դրված են լինում, ուրեմն մյուսները հարկավոր է դնել ծովի հատակին: Ջրից վեր կանգնած հոգեկերները մահակով ցույց էին տալիս, թե որտեղ դնես: Իսկ մենք աշխատում էինք ջրի տակ: Եվ մեզ բան էլ չէր լինում: Ջրի մեջ մուժ էր, բայց պատն ու քարերը, այնուամենայնիվ, երևում էին: Սկզբում ես ու Լոշտակը վախենում էինք ջրի տակ իջնել, իսկ հետո վարժվեցինք: Ինձ նույնիսկ դուր եկավ. աշխատում ես, հետն էլ խմում ու լողանում: Զիլ բան է:

Երբ հոգեկերները հրամայում էին նստել ու հանգստանալ, շինարարները նստոտում էին զատ—զատ՝ ափի երկանքով երկա՛ր—երկար շղթա կազմած: Իրարից հեռու էին նստում, որ միմյանց չհայհոյեն ու չկռվեն, բայց մեկ է, չէր հաջողվում: Մեկնումեկը անպայման կողքինին շատ մոտ էր նստում, և սկսվում էր հայհոյանքը, իսկ հետո՝ կռվաբանքը: Ես ու Լոշտակը միշտ բոլորից ջոկ էինք նստում: Դա վատ էր, որովհետև չէիր կարող մեկին մոտենալ ու հետը խոսել: Իսկ Լոշտակի հետ ի՞նչ խոսես:

Ահա թե ինչ եղավ հետո: Երբ մեր ամբարտակը պատրաստ էր, մեզ կարգադրեցին քանդել: Ես կարծեցի, թե ինչ—որ բան ճիշտ չենք արել: Ինչ արած, հարկավոր է ուղղել: Վերցնում էինք իրար վրա դրված քարերը, հատակից բարձրացնում և ափ տանում: Այնտեղ մյուս շինարարները դրանք դարսում էին մեծ կույտերի ձևով: Թող այդպես լինի:

Երբ ողջ ամբարտակը քանդեցինք, մեզ իսկույն հրամայեցին այն կառուցել առաջվա պես: Մղձավա՛նջ է: Չգիմացա, մոտեցա մի քեռու և հարցրի.

— Լա՛վ, ամբարտակը կկառուցենք, իսկ հետո՞ ի՞նչ:

— Իսկ դու չգիտե՞ս ինչ, գարշելի լիրբ: Ձե՞ռ ես առնում: Հիմա էնպես կտամ, որ...

— Իսկ դու ձեռքիս փայտը տեսնո՞ւմ ես: Ավելի լավ է ասես, թե հետո ինչ ենք անելու:

— Քանդելու եք, այ թե ինչ եք անելու, ապուշ կնիկ:

Ասես գլխիս խփեիր: Ամեն ինչ այնպես լավ էր դասավորել: Մեր տունը շատ լավն էր, տանիք ու պատուհաններ ուներ, մեջը՝ սեղան ու երկու նստելու բան: Թռչունն ամեն օր մեզ հաց էր բերում: Աշխատանքն էլ էր օգտակար. ծովի մեջ ամբարտակ էինք կառուցում: Նաև երկուսով էինք՝ ես ու Լոշտակը: Եվ ամեն ինչ ինձ համար միանգամից զգվելի դարձավ. ավար չեմ կարող նույն բանը անվերջ շինել ու քանդել: Ձե՛մ կարող, չե՛մ ուզում, վե՛րջ*:

— Գնալու ենք, — ասացի Լոշտակին:

Սկզբում նա սկսեց թնգթնգալ, հետո կռիվ սարքեց.

— Գնա՛: Մենա՛կդ գնա... Ինձ համար ուրիշ կնիկ կճարեմ:

Որտեղի՞ց գիտի այս խոսքը: Որոշ ժամանակ լռեց, իսկ հետո մտախոհ ասաց.

— Իսկ ուրիշը հացիկ չի տա...

Ցնդելու բան է: Ա՛յ քեզ մեծականջ ոչուփուջ: Ի վերջո հանդարտվեց, սսկվեց, ապա մռթմռթաց.

- Ե՞րբ ենք գնում:
- Վաղը: Թռչունը հաց կբերի, կուտենք ու հետևից կգնանք:
- Ո՞նց թե՛ հետևից: Ախր նա ծովի վերևով է թռչում:
- Մենք էլ ծովով կգնանք:
- Հենց ջրի վրայո՞վ: Բայց ծովը բաց է, մեզ կտեսնեն: Կբռնեն ու կծեծեն, կամ էլ տերերին կտան:
- Մի՛ վախենա, չեն տեսնի: Մենք ծովի հատակով կգնանք:
- Կմոլորվենք: Այնտեղ մուժ է:
- Ձենք մոլորվի: Հետո էլ մեզ համար մեկ է, թե ուր կգնանք, միայն թե այստեղից հեռու մնանք:
- Այստեղ Լոշտակս ինձ զարմացրեց, շա՛տ զարմացրեց: Հանկարծ ասաց.
- Իսկ հացը ջրի մեջ կթրջվի: Զուրը թաց է:
- Բայց չէ՞ որ հացը կերած կլինենք:
- Ձենք լինի: Մենք շատ հաց ունենք: Միանգամից ուտել չի լինի:
- Այդ որտեղի՞ց շատ հաց ունեցանք:
- Կերածներիս պատառիկները պահում էի: Գիտեի, որ շատ անմիտ ես, և նորից ես ուզելու մի տեղ գնալ, գիտեմ, որ ինձ հանգիստ չես թողնի: Ճանապարհին էլ մեր հացը բաժանելու ես ուրիշներին, բոլորին: Քեզ լավ գիտեմ: Իրա համար էլ շատ պատառիկներ եմ հավաքել: Տանն եմ պահել:
- Ապշելու բան է: Զարմացրեց, ո՞նց զարմացրեց: Ի՛նչ տափուկն է: Գործատեղից տուն եկանք, և նա ցույց տվեց անկյունում գցված հին խսիրը, որի տակ հացի փոքրիկ կտորների մի կույտ կար: Հացի չորացած կտորներին պաքսիմատ են ասում: Շատ համով են:
- Այստե՞ղ ենք թողնելու, – հարցրեց նա և սկսեց կտորներն իրար հետևից բերանը գցել:
- Ձէ մի:
- Վերցրի վրան նստելու բանը, շուռ տվի, և այն դարձավ տեղափոխելու բան: Վրան դարսեցի բոլոր պաքսիմատները և դրի սեղանին:
- Ձեռք չտաս, որ շատ ուտելուց չտուգես, ես էլ ստիպված չլինեմ քեզ այստեղ մենակ թողնել:
- Ասածս վրան ազդեց: Այլևս ոչ մի պաքսիմատ չվերցրեց, բայց

նվնվում էր՝ նայելով սեղանին:

Ես մտածել էի, թե ինչ պիտի անեմ, որ ամբարտակի մարդիկ հետևե՞նք իրեն չընկնեն ծովի հատակով մեր գնալու ժամանակ: Երկյուղ ունեի, որ հոգեկերները նրանց կուղարկեն մեզ հետապնդելու:

Մյուս օրը սովորականից շուտ գնացինք ծովափ: Մարդիկ արդեն հավաքվում էին ամբարտակի մոտ, իսկ հոգեկերները դեռ չէին հայտնվել: Նրանք միշտ ավելի ուշ էին գալիս: Կանգնեցի ամբարտակի ծայրին և գոռացի.

– Ո՞վ է հաց ուզում: Ուզողը թող մոտ գա:

Սկզբում ոչ ոք չհավատաց: Հետո մեկը մոտեցավ, նայեց, ապա հանկարծ բռունցքները բարձրացրած հարձակվեց վրաս.

– Հա՞ց ես ասում: Քարերը հացի տե՞ղ ես մեզ տալիս: Հիմա քեզ ցույց կտամ ձեռ անելու ձևը:

– Դու հա՛մը տես: Մի հատ վերցրու, մի՛ վախենա:

Նա ձեռքը մեկնեց ու վերցրեց: Աչքերը զարմանքից չուղեցին: Միանգամից կլանեց պաքսիմատը, հետո խլեց հացի պատգարակս ու, պո՛ւկ, փախավ՝ վազելով ծովափի երկայնքով: Մյուսները վայնասունով հետևից ընկան: Շա՛տ լավ է: Մտածածիս պես եղավ:

Արագ բռնեցի Լոշտակի ձեռքը և նրան քաշ տվի դեպի այն տեղը, որտեղ միշտ սպասում էինք մեր թռչունին: Ճիշտ ժամանակին հասանք: Նա արդեն պտտվում էր ափի վրա:

Այստեղ լավ բան եղավ. մի հացի տեղը թռչունը երկուսը գցեց: Սկսեցինք արագ–արագ ուտել, իսկ թռչունը պտտվում էր մեր վերևում ու չէր հեռանում այնքան ժամանակ, մինչև որ լրիվ կերանք ու գնացինք ջրի մոտ: Իրար ձեռք բռնեցինք ու մտանք ջուրը:

Լոշտակը, իհարկե, հեկեկում էր, բայց շուտով ձայնը կտրվեց, որովհետև ջուրը մեզ գլխովին ծածկեց:

Քայլում էինք ավագ գորշ հատակով, շուրջբոլորը մուգ ջուր էր, իսկ մեր գլխավերևում, ջրի վրա մի սպիտակ ու փոքրիկ խաչ էր լողում: Այդ մեր թռչունն էր թևածում՝ մեզ ցույց տալով ճանապարհը:

Շատ երկար և շատ դժվարությամբ քայլում էինք ծովի հատակով: Խավար էր, տխուր էր, խլովյուն էր: Տիրում էր մեռելական լուռություն:

Մղձավա՛նջ, մղձավա՛նջ, մղձավա՛նջ...

Ես ավելի վատ էի գգում, քան Լոշտակը: Տեսնում էի, որ նա քայլելիս դեմքին վշտալի տեսք է տալիս, հաստ պռոշները բաց ու խուփ անելով՝ քրթմնջում ու բողբոջում է: Նրա համար գնալը այդպիսով հեշտանում էր: Ձեր հասկանում, որ ջրի մեջ իրեն չեմ լսում:

Երկար ժամանակ գնում էինք լիակատար խավարի մեջ: Բայց մեկ է՝ գնում և ձեռքից բռնած քաշ էի տալիս Լոշտակին: Հետո մեր վերևում նորից հայտնվեց նախ՝ սպիտակ կայծր, ապա՝ սպիտակ խաչիկը: Մեր թռչունը մեզ չէր լքել: Նշանակում է՝ մթնոլորտի մեջ չենք շեղվել և ամբողջ ժամանակ ուղիղ ենք գնացել: Ամեն քայլս դժվարություններ էի փոխում և քիչ էր մնում ընկնել: Բայց արդեն երևում էր, որ գնալու շատ ճանապարհ չի մնացել: Ջրի մոլթ գույնը բացվեց՝ գորշացավ, և վերևում սահող խաչիկը նորից թռչուն դարձավ:

Եվ ահա մեր գլուխները (սկզբում՝ Լոշտակինը, հետո՝ իմը) ցցվեցին ջրի միջից: Շուրջբոլորը տակն ու վրա էր լինում: Վիթխարի ալիքները հետևից վրա էին տալիս, տակն առնում մեզ, իսկ հետո շարժում քարքարոտ հատակին: Այնպիսի զարհուրելի աղմուկ էր տիրում, որ գլուխս դնում էր:

Հանկարծակի մի շատ բարձր ալիք վրաս փլվեց և Լոշտակից պոկեց:

– Դիմացի՛ր և ա՛փ ելի՛ր, – հասցրի գոռալ նրան:

Այդ պահին գլուխս խփվեց քարերին... Թե ինչ եղավ հետո, արդեն չեմ հիշում:

9 – րդ գլուխ

Ուշքի եկա, բայց աչքերս չբացեցի: Հետևում աղմուկում էր ծովը: Դուրս է գալիս, որ կամ ինքս եմ կարողացել ազատվել (բայց թե ինչպես, չեմ հիշում), կամ էլ փոթորիկն է մերձափնյա ավազի վրա շարտել արդեն ուշագնաց վիճակում: Գլխավերևումս ինչ–որ թռչուններ էին ծղրտում: «Որորներ են...», – հիշեցի ու աչքերս բացեցի:

Երեսիս մոտ մի փոքրիկ սարդ մագլցում էր չոր խոտի վրայով: Դրան հարցրի. «Շարունակելո՞ւ ենք ապրել»: Մի քիչ էլ պառկած մնացի և վեր կացա: Իմ աջ ու ձախ կողմերում մի ընդարձակ ավազոտ լողափ էր տարածվում, իսկ հետևումս գետնամած սոճիներով ու թփերով պատված ավազաբլուր կար: Երկինքը մոխրագույն կապույտ էր, արևը ծածկված էր մշուշաքողով, բայց դեմքիս գգում էի ջերմությունը:

Իսկ ո՞ւր է իմ մեծականջ հրեշիկը: Վեր ցատկեցի և շուրջս նայեցի: Ոչ մի տեղ մարդ չէր երևում: Ափի երկայնքով քայլեցի՝ կանչելով. «Լոշտակ, որտե՞ղ ես: Ձայն հանիր»: Գնացի մի ուղղություն, ապա՝ մյուս: Փոթորիկն ափին թողել էր աղբի մի թումբ, որի մեջ երևում էին նաև խոշոր առարկաներ՝ ծառերի բեկորներ, վրան ջրիմուռներ կպած թփեր, սատկած ձկներ: Սակայն ոչ մի այնպիսի բան չկար, որ գոնե հեռավոր կերպով հիշեցներ ընկերոջս:

Քայլեցի ջրեզերքով՝ նայելով այն քարերի արանքի փոսերի մեջ, որոնց բախվելով՝ ցրվում էին մարած փոթորկի դեռևս պղտոր ալիքները: Մարդու մարմնածև ունեցող որևէ բան չտեսա: Մի՞թե խեղդվել է և փոթորկից քշվել բաց ծով:

Բարձրացա ավազաբլրի վրա, սակայն այդտեղից էլ մարդանման բան չտեսա ամայի ափին: Չգիտեմ ինչքան ժամանակ շրջում էի ծովափում՝ կանչելով նրան և խղճահարուցությունից լալով: Իմ միակ ընկերը, որի հետ անցել եմ այդքան փորձությունների միջով: Այնքա՛ն հիմարիկ, անօգնական և հավատարիմ ընկերս: Հիմա որտե՞ղ ես, Լոշտակիկ:

Սոճու անտառում մի նեղ արահետ գտա ու գնացի: Որոշ ժամանակ անց այն ինձ հասցրեց մի խճուղու: Սրա երկու կողմերով սլանում էին ավտոմեքենաները, իսկ կողքից ձգվում էր հետիոտների նեղ ճանապարհը, որը եզրված է փոշուց գորշավուն դարձած դափնեվարդի թփերով:

Իսկապե՞ս փոշոտ էին, թե ոչ, սակայն վարդազույն ու սպիտակ իսկա-
կան, կենդանի ծաղիկներ էին: Թփերի միջև քարե նստարաններ կային:
Նստեցի դրանցից մեկին, հենվեցի թիկնակին և աչքերս փակեցի: Դափ-
նեկարդի ու բենդինի, շիկացած ասֆալտի ու ծովի հոտ էր գալիս: Ի՞նչ
լավ է այստեղ: Բայց նա ինչպե՞ս «սիրտ արեց» զոհվել այսպիսի լավ ամփի
մոտ:

– Ներողութուն, դուք վա՞տ եք զգում: Չե՞մ կարող ձեզ մի բանով
օգնել:

Աչքերս բացեցի: Կողքիս, կարեկցաբար վրաս թեքված, մի արևառ
երիտասարդ էր կանգնել, հագին՝ ջինս և սպիտակ շապիկ:

– Հավանաբար կարող եք: Ընկերս փոթորկի ժամանակ սուզվեց ու
կորավ: Այստեղ ոստիկանութուն կա՞, որ հայտնեմ նրա մասին և խնդ-
րեմ, որ որոնումներով զբաղվեն:

– Մոտակայքում ոնց որ թե ոստիկանութան ցուցանակ եմ տեսել:
Եթե թույլ տաք, ձեզ կուղեկցեմ:

– Շատ շնորհակալ կլինեմ: Չէ՞ որ տեղացի չեմ:

Գնացինք հետիոտնի ճանապարհով և շուտով հայտնվեցինք քարե պա-
րիսպներով և թուղածույլ ցանկապատերով շրջափակված առանձնատնե-
րի մոտ: Դրանց կողքին աճում են էին արմավենիներ ու տատասկաթգե-
նիներ, արմավաշուշաններ ու կենաֆներ և բազում վարդեր: Բոլորն էլ
ծաղկուն էին, բայց փոքր–ինչ փոշոտ:

– Դուք հեռո՞ւ տեղից եք եկել մեր քաղաքը, – հարցրեց անձանոթը:

– Ծովի մյուս կողմից:

– Ինքնաթիռո՞վ, թե՞ շոգենավով:

– Կարծեմ՝ նավարկում էինք: Բայց ստույգ ասել չեմ կարող: Ծամ-
փորդական վազվուտուքը մտքիցս թռցրել է:

– Այդ պատահում է: Դուք և ձեր ընկերը այստեղ եք եկել և ամիջա-
պես լողալո՞ւ գնացել անձանոթ տեղում, այն էլ փոթորկի՞ ժամանակ:

– Կարծում եմ, որ այդ նրա՛ ցանկութունն էր: Նա երազուն բնավո-
րութուն ունի:

– Նա ձեր մոտի՞կ ընկերն էր:

– Միա՛կ ընկերը: Բայց տես՝ խեղդվեց, կորավ... Շա՛տ է ցավոտ:

– Իսկ ես այս քաղաքում ամենևին ընկերներ չունեմ:

– Դուք վաղո՞ւց եք այստեղ ապրում:

– Ինձ հիշելու ժամանակվանից:

Այսպես զրուցելով՝ հասանք բազմահարկ տներով և մեծ խանութ-
ներով կառուցապատված մի լայն փողոցի: Մեզ ընդառաջ և մեր մոտով
քայլում էին շքեղ հագնված, անհոգ և ոչ մի տեղ չչտապող մարդիկ:
Շատերի ձեռքին կային լողափի պայուսակներ, հովանոցներ և եղեգնյա
խսիրների գալարակներ: Հանգստացողների տիպական հասարակութուն
էր:

Արդեն ուշ առավոտ էր, և ամպաքուլաների միջից ելած արևն սկսեց
տաքացնել օդը: Այսպիսի առավոտյան տանից պետք է դուրս գալ բաց
գույնի զգեստ հագած և ծղոտե գլխարկ դրած: Մենք էլ այդ պահին
անցնում էինք մի հագուստի խանութի մոտով, որի ցուցափեղկում
հայելիներ ու մանեքեններ էին դրված: Ուղեկցիցս աննկատ աչքս գցեցի
իմ արտացոլանքին և հանգստացա. պատշաճ ձևով էի հագնված: Վրա-
յինս պարզ, բայց շատ բաց և միաժամանակ համեստ ու նրբաձև սպիտակ
չրջագզեստ էր, իսկ ծղոտե լայնեզր գլխարկս միանգամայն սազում էր
դրան: Աչքերս խոնարհեցի և ինձ գովեցի շատ բաց բոկոտիկներ ընտրե-
լուս համար:

– Դուք ոչ մի տեղ չե՞ք շտապում: Գուցե մի–մի գավաթ սո՞ւրճ
խմենք:

– Հաճույքով: Թվում է թե տան գործերով ընկած լինելով՝ չհասցրի
այդ անել:

– Դուք դրանք արդեն վերջացրե՞լ եք:

– Որոշեցի հետաձգել: Ըստ էութան՝ դրանք այնքան էլ կարևոր չեն:

– Եկեք նստենք, – ասաց նա:

Մենք արդեն հասել էինք մայթի վրայի փոքրիկ սրճարանի մոտ դրված
սեղանիկներին: Նստեցինք, և նա որոշեց շարունակել ծանոթանալը:

– Ի՞նչ է ձեր անունը:

Արժե՞ արդյոք ասել անունս: Բայց այդ ի՞նչ նշանակութուն ունի...

– Ժաննա: Իսկ ձե՞ր անունն ինչ է:

– Ժորժ:

Երբեք չէի հանդիպել այդ անունով մեկին:

– Կրկնակի՞ էսպրեսո*, – հարցրեց Ջորջը:

– Այո, ինչպես միշտ:

Իր համար նա պատվիրեց մեծ բաժակով սովորական սուրճ: Մենք նստած սրճում էինք և նայում փողոցի դիմացի տների արանքից երևացող ծովին:

Սուրճա խմեցի վերջացրի և մտածեցի, որ վատ չէր լինի զբոսնել առափնյակում:

Տներից մեկի վրա տեսա «Ոստիկանութուն» ցուցանակը: Չգիտեմ ինչու ինձ մի պահ թվաց, թե ինչ-որ դործ ունեմ այդ հիմնարկում, բայց քանի որ միանգամից չհիշեցի՝ հատկապես ի՞նչ, մտածեցի, որ այդ պիտի որ դատարկ բան լինի, ուստի չարժե այս հանգիստ առավոտը վրան վատնել: Անցա ոստիկանութան մոտով և շուտով հասա առափնյակ: Լողափին արդեն լիքը արևառվողներ կային: Ոմանք լողում էին ծովում, երիտասարդները զբաղված էին ալիքասահճով** կամ գնդակախաղով, բայց մարդկանց մեծ մասը պարզապես զբոսնում էր առափնյակում:

Քամուց խշշում էին փրչոտ ու տակառած և բներով գորշականաչ ցած-լիկ արմավենիները: Նախշուն կրպակներում պաղպաղակի, ըմպելիքի, հուշանվերների և լողափնյա մանր-մունր բաների առևտուր էին անում:

Մոտեցա առափնյակը լողափից բաժանող բազրիքին, հենվեցի վրան և սկսեցի նայել ծովին: Գլխավերևումս ծղրտում էին որորները, ռեստորանից լսվում էր բլյուզի հանդարտ մեղեդին: Ինձնից քիչ հեռու կանգ առան լողազգեստով երկու աղջիկ և սկսեցին որորներին կերակրել հացի կտորներով:

Վերևիցս մի մեծ սպիտակ թռչուն սուրաց (կարծես ալբատրոս էր) և հանկարծ ինչ-որ բան գցեց ուղիղ ոտքերիս մոտ: Գլուխս իջեցրի և տեսա, որ կլոր փոքրիկ հաց էր: Սկզբում այն ոտքիս ծայրով անփութորեն դեն շպրտեցի, բայց հետո վերցրի և նույնպես սկսեցի որորներին կերակրել:

Հետո, երբ թռչուններն ինձ ձանձրացրին, նորից զբոսնում էի առափնյակում՝ կանգ առնելով կրպակների մոտ և դիտելով հուշանվերները:

Առափնյակի վերջում սկսվում էր զբոսայգին: Որոշեցի այդտեղ մտնել:

Զբոսայգու մոտ կապույտ ջինսով ու սպիտակ շապիկով մի բարձրահասակ երիտասարդ պատահեց: Նրա արևառ գեղեցիկ դեմքն աղոտ կերպով ծանոթ թվաց: Ինձ հավասարվելով՝ նա քայլերը դանդաղեցրեց և մի տեսակ անորոշաբար խոնարհ գլուխ տվեց: Ես քաղաքավարի ու հանդարտ գլխով արի:

– Ներեցեք, – կանգ առնելով ասաց նա, – ձեզ ամիջապես չճանաչեցի: Իրո՞ք այդ դուք եք:

– Այո: Իսկ այս դուք եք: Դեռ հեռվից ձեր դեմքը ծանոթ երևաց: Վաղո՛ւց է, ինչ չենք տեսնվել:

– Լսել էի, որ լրիվ կորել եք: Տե՞ղ էիք մեկնել:

– Այո, այստեղից բավական հեռու էի:

– Ծամփորդո՞ւմ էիք:

– Ոչ, այդ ճամփորդութուն չէր:

– Գործնակա՞ն ուղևորութուն էր:

– Նման մի բան: Բայց չեմ ցանկանում այդ հիշել: Դրա ժամանակ ինչ- ինչ անախորժություններ եղան:

– Իսկ հիմա ինչ-որ տե՞ղ եք շտապում:

– Ոչ: Պարզապես դուրս եմ եկել առափնյակում զբոսնելու:

– Կարելի՞ է ձեզ ընկերակցել: Վաղո՛ւց չենք տեսնվել...

– Ես միայն ուրախ կլինեմ: Ինձ արդեն ձանձրացրել է մենակ զբոսնելը: Ասենք, դուք հո գիտեք, որ ես միշտ ձանձրանում եմ... – Նա գալիս էր հետո: – Դուք ծով սիրո՞ւմ եք, – հարցրի, որպեսզի մեր լռությունը տաղտկալի չթվար նրան:

– Այո: Իսկ դո՞ւք:

– Նույնպես: Այն մարդը, որին սիրում էի ու կորցրի, ծով շատ էր սիրում: Կապույտ ծովը:

– Ի՞նչ էր նրա անունը:

– Ձեր ինչի՞ն է պետք այդ իմանալը: Դա բոլորովին կարևոր չէ: Եղածն այնքան վաղուց էր, որ ինքս եմ մոռացել անունը:

Լռեցինք:

– Ես էլ մի կնոջ էի սիրում և նրան կորցրի: Իմ կնոջը: Մահացավ:

– Ցավալի է:

Զբոսայգի մտանք և մոտեցանք մի լճի՝ մեջը տարօրինակ կանաչ կարապներ: Կողքի մեծ կլոր տաղավարում սրճարան կար:

– Ձե՞ք ցանկանում մի գավաթ սուրճ խմել:

– Այո, հաճույքով: Կարծես թե այսօր առավոտյան չհասցրի տանն այդ անել:

Սեղանի մոտ այնպես նստեցինք, որ ծառերի արանքներից տեսներինք ծովը: Մեզ մոտեցավ մի դեռատի մատուցողուհի:

– Կրկնակի էսպրեսո՞, – հարցրեց ուղեկիցս:

– Այո, ինչպես միշտ:

Իր համար նա վերցրեց մի մեծ բաժակ սովորական սուրճ: Հիշեցի, որ նա միշտ խմում էր մեծ քանակությամբ կաթ ու շաքար խառնած սովորական սուրճ: Մեզանից քիչ հեռու երաժշտության հնչյունների ներքո պտտվում էր բաց թեթև խցիկներով շրջադիտակ անվակարուսելը: Անմիտ հափշտակությամբ նայում էի դրան:

– Ի՞նչ է ձեր անունը, – հարցրեց նա:

Արժե՞ անունս ասել: Իսկ ինչու չասե՞մ որ:

– Էնն: Իսկ ձե՞րը:

– Եգոր:

Երբեք այդ անունով մեկին չէի հանդիպել:

– Դուք վերջերս եք եկել, չէ՞, այս քաղաքը, – հարցրեց Եգորը:

– Այո, վերջերս: Բայց այն արդեն հասցրել է ինձ ձանձրացնել:

– Իսկ ուզո՞ւմ եք վերևից հիանալ նրանով: Ձեզ հավատացնում եմ, որ քաղաքն արժե դրան:

– Հաճույքով:

Վճարեցինք, ոտքի ելանք ու դնացինք անվակարուսելի մոտ: Փայտե աստիճաններով բարձրացանք տախտակամած, որտեղ խցիկները մի պահ կանգ էին առնում, որ մարդիկ կարողանային տեղեր զբաղեցնել: Ամեն խցիկ մի մարդու համար էր: Ծանոթս ինձ առաջ թողեց, իսկ ինքը նստեց հաջորդի մեջ: Անվակարուսելը շարժվեց, և իմ խցիկը, թեթևակի ցնցվելով ու ճոճվելով, վեր լողաց:

Քաղաքը վերևից բավական շքեղ տեսք ուներ, մի քանի մեծ զբոսայգի-

ներն ու առանձնատներն օղակող այգիները այն շատ էին գեղեցկացնում: Քաղաքին առանձին շուք էին տալիս քաղաքն ու ծովախորշը շրջապատող բլուրների վրայի հնամենի դղյակները: Սակայն այդ բոլորն ինձ անչափ հոգնեցրել ու ձանձրացրել էին: Ըստ էության՝ ծովափնյա առողջարանա-յին բոլոր քաղաքներն իրար նման են:

Անվակարուսելը կանգնեց, և իմ խցիկը կախված մնաց ամենավերևում: Այստեղից երևում էր ողջ ծովախորշը: Մի կողմից այն շրջափակում էին բարձր, տեսքից միանգամայն անմատչելի թվացող ժայռերը, որոնք ուղիղ ծովի մեջ էին ձգվում, մյուս կողմից հեռու՝ մինչև հորիզոն տարածվում էր դեղին լողափերի շերտը: Դրա երկայնքով նշմարվում էր համարյա նույն-քան երկար առափնյա ծանծաղուտների շերտը: Քաղաքային լողափերը տեղ–տեղ կտրտվում էին սոճու անտառով պատված ավազաբլուրներով: Բավական ձանձրալի բնապատկեր էր:

Խցիկս ներքև ընթացավ և շուտով դիպավ տախտակամածին: Բացեցի դռնակը, ելա տախտակամած, իջա աստիճաններով և դնացի դեպի զբոսայ-գու ելքը: Հոգնել էի և ուզում էի վերադառնալ պանսիոն*, կանգնել ցնցու-ղի տակ և անկողին մտնել:

Պանսիոնի դռնապանը, ինձ տեսնելով, բանալիների տախտակից լռել-յայն վերցրեց սենյակիս բանալին և ինձ մեկնեց:

– Ինձ համար փոստ չի՞ եղել:

– Ոչ, տիկին: Այսօր չի եղել:

Բարձրացա սենյակս, հանվեցի, կանգնեցի ցնցուղի տակ և անկողին մտա: Որոշեցի քնից առաջ հեռուստացույց նայել. մահճակալի պահարա-նիկի վրայից վերցրի հեռակառավարման վահանակն ու սկսեցի անմիտ կերպով սեղմել ստեղները: Բոլոր ծրագրերով կատարյալ անհեթեթու-թյուններ էին ցուցադրում, և ես ոչնչի վրա չկարողացա կենտրոնացնել ուշադրությունս: Այդժամ վերցրի քնաբերը և երկու հաբ ընդունեցի, որպեսզի անմիջապես և հաստատ քնեմ: Միտք առկայծեց. չխմե՞մ արդյոք սրվակի բոլոր հաբերը (տեսնես մեջը քանի՞ հատ է մնացել), որ վաղը չարթնանամ և չսկսեմ ևս մի երկար ու անպետք օր: Այս մտքի վրա էլ ննջեցի:

Առավոտյան ուշ արթնացա. մարմինս տնքում էր, գլուխս ծանրացել էր: Որոշեցի, որ այլևս այսպես չարուհնակել չի կարելի: Պետք է ուշքս գլուխս հավաքեմ ու խելքը գլխին բոլոր մարդկանց պես հանգստանամ: Ձէ՞ որ տխրության ու տագնապի համար ոչ մի հիմք չկա:

Որոշելն իհարկե լավ է, բայց որտեղի՞ց ուժ գտնեմ: Որպես սկիզբ՝ գանգոցի դռնապանին և պատվիրեցի նախաճաշ բերել, իսկ ինքս գնացի ցնցուղվելու: Միայն գոլ ջուր էր գալիս. որքան էլ ծորակները պտտեցի, ո՛չ սառը ջուր եկավ, ո՛չ էլ տաք: Այնպես որ ինձ չհաջողվեց շվեդական ցնցուղ ընդունել: Մինչ չարչարվում էի, որ ցնցուղը կարգավորեմ, սուրճս սառեց: Ինչ վերաբերում է ախորժակիս, ապա չունեի էլ: Այլևս անպետք դարձած նախաճաշով սեղանիկը միջանցք հրելով՝ նստեցի հայելու մոտ, որպեսզի գոնե մի կերպ ինձ կարգի բերեմ:

Հայելու մեջ երևացող դեմքս ինձ անկասկած դուր էջր գալիս: Իհարկե, այն հարթ էր, վրան ոչ մի կնճիռ կամ բիծ չկար: Առաջ աչքերս երկնագույն էին, իսկ հիմա դարձել էին մանուշակագույն: Փոխվել էր նաև աչքերիս գծվածքը. դրանք դարձել էին ավելի խոշոր և փոքր-ինչ ձգվել էին դեպի քունքերս: Մազերս բաց խարտյաչից դարձել էին շիկակարմրին սովոր սևեգույն, ընդ որում՝ բնական կերպով, առանց ներկի օգնության: Ինձ քսանյոթ տարեկանից ավելի համարել չէր կարելի, սակայն այդ արտասովոր մանուշակագույն աչքերում մի այնպիսի թախծալի հոգնածություն էր սառել, որ ինքս անգամ դրանց նայել չէի ուզում: Ես դանդաղ ու խնամքով սանրում էի իմ փարթամ մազերը՝ աչքերս կտրելով հայելու միջի ինչ-որ օտար և ինձ բոլորովին չհետաքրքրող արտացոլանքից:

Հետո այդօրվա զբոսանքի համար երկար ժամանակ ընտրում էի զգեստ, դրան սազող կոշիկ, զարդեր ու պայուսակ: Վերջապես պատրաստ էի, և նոր օրն ինչպես սպանելու հարցը իմ առաջ հառնեց իր անլուծելի լինելու ողջ համոզուածությամբ:

Լսելով դռնապանի այն հերթական պատասխանը, թե՛ «Ձեզ համար, տիկին, այսօր բան չկա», ես գլխով արի, բանալին դրի կանգնակին և դուրս եկա պանսիոնից:

Որոշեցի նախ անցել Գլխավոր փողոցով, որն առափնյակին զուգահեռ ձգվում էր ամբողջ քաղաքի միջով: Զննում էի շքեղ ցուցափեղկերը, բայց

ոչ մի բան չէի գնում: Հետո ինձ հանկարծ հրապուրեց ավստրալիական ծիածանաքարի ազուլցներով արծաթյա պստիկ ճպուռը, որը պատրաստված էր արդիական ոճով: Բացեցի պայուսակս, որ տեսնեմ, թե մոտիս փողը կբավականացնի՞: Միայն մանր էր: Բայց բանկաքարտ ունեի: Կարելի էր ավտոմատից փող վերցնել: Համարը հիշում էի, շատ հեշտ էր՝ 666: Կարելի էր ճպուռը գնել քարտով: Ոսկերչական խանութի ցուցափեղկի առաջ կանգնած խորհելիս հանկարծ նկատեցի, որ ցուցափեղկում արտացոլվում է դիմացի մայթը, իսկ այնտեղ մի պարոն է կանգնել և ակնհայտորեն ինձ է դիտում: Շրջվեցի ցուցափեղկից և արագ հեռացա: Ինձ միայն փողոցային ծանոթություննե՛րն էին պակասում:

Պարոնը խաչմերուկում հասավ ինձ և ձեռք տվեց ուսիս.

– Ներողություն, ինձ չե՞ք ճանաչում:

Նրա դեմքն ինձ աղոտ կերպով ծանոթ թվաց, իսկ մնացած ամեն ինչով նման էր հարյուրավոր մյուս անցորդներին. բավական բարեձև էր, սպորտային կազմվածքով, հագինը ջիմս ու սպիտակ անթև շապիկ էին:

– Մենք իրար ինչ-որ տեղ հանդիպե՞լ ենք:

– Ըստ իս՝ այո: Ես արդեն երկար ժամանակ է, ինչ գալիս եմ ձեր հետևից և ջանում եմ հիշել, թե այդ որտեղ ու երբ է եղել:

– Ուրեմն դուք ինձ հետամտո՞ւմ եք:

– Ձէ՛, ինչ եք ասում: Ինչո՞ւ եք այդպես սպառնաբար արձագանքում: Պարզապես ուզում էի տեսնել ձեր դեմքը և ջանում մտաբերել, թե որտե՞ղ ենք իրար հանդիպել: Ի՞նչ է ձեր անունը:

– Իսկ ձեր մտքով չի՞ անցնում, որ ինձ պարզապես ձեր իսկական ծանոթներից մեկնումեկին եք նմանեցրել:

– Ոչ: Ահա դուք խոսում եք, իսկ ես նաև ձեր ձայնից եմ զգում, որ մենք շատ լավ ծանոթներ ենք եղել: Ես ճանաչում եմ ձեր խոսքի բոլոր հնչերանգները, դրանք ասես թե լսում եմ նախքան այն պահը, երբ բացում եք ձեր բերանը ինձ նախատելու համար:

– Ես ձեզ չեմ նախատում: Բայց կարծես հիշեցի, թե որտեղ ենք իրար հանդիպել:

– Որտե՞ղ: Շուտ ասեք, խնդրում եմ:

– Դուք երեկ եղե՞լ եք քաղաքային զբոսայգում:

– Այո, կարծեմ... Ես հաճախ եմ անցնում զբոսայգու միջով, դա լողափից հյուրանոց գնալու ճամփա է:

– Իսկ երեկ դիտանիվ կարուսելով չե՞ք պտտվել:

– Միանգամայն ճիշտ է: Երեկ հանկարծ մտքովս անցավ քաղաքին նայել հավթի թռիչքի բարձրությունից:

– Ուրեմն ահա այդտեղ էլ տեսնվել ենք: Ես էլ եմ երեկ պտտվել այդ անվով և, կարծեմ, ես ևս նկատել եմ ձեզ:

– Չափազանց շոյված եմ: Ինձ թվում է, որ այդ առթիվ արժե սրճարան մտնել և մի–մի սկահակ շամպայն խմել:

– Առավոտվանի՞ց: Լսել եմ, որ ռուսներն ասում են, թե առավոտվանից շամպայն են խմում միայն ձիերը:

– Այդ դեպքում գուցե՝ սո՞ւրճ:

– Սուրճից չեմ հրաժարվի: Մանավանդ որ այսօր ինձ չհաջողվեց տանը սուրճ խմել:

– Ձեր սպասուհին գործադրո՞ւ է անում:

Ես ծիծաղեցի:

– Ոչ մի սպասուհի չունեմ և երբեք չեմ ունեցել:

Գնացիք փողոցով և շուտով հասանք հրապարակ, որտեղ շատրվանի շուրջը դրված էին բազմաթիվ թեթև սեղանիկներ՝ հյուսկեն ավտոներով հանդերձ: Նստեցինք և սուրճ պատվիրեցինք: Ես՝ կրկնակի էսպրեսո, իսկ նա՝ կրկնակի չափաբաժին կաթ ու շաքար լցրած մեծ բաժակով սովորական սուրճ:

– Գիտե՞ք, – ասաց նա, իր սոսկալի ըմպելիքը գդալիկով խառնելով,

– մարդու հավատը չի գալիս, որ երբեք սպասուհի չեք ունեցել: Դուք հագնված եք և խոսում եք բարձրաշխարհիկ կնոջ պես:

– Ավա՛ղ, ես շատ սովորական կին եմ:

– Իսկ ձեր ամուսինը, ո՞վ է նա:

– Ես ամուսին չունեմ: Արդեն վաղուց չկա:

– Դուք այրի եք: Հիմա հասկանում եմ, թե որտեղից է ձեր աչքերի այդքան տխրությունը:

– Մի՞թե չեմ կարող պարզապես լքված կին լինել և այդ պատճառով տխրել:

– Դո՞ւք: Երբե՛ք: Այսպիսի կանանց չեն լքում:

Սա հո սովորական լուվելաս* է... Միանգամից ձանձրություն իջավ վրաս: Բայց նա այդ չնկատեց և շարունակեց խոսելը.

– Եկեք իսկապես ծանոթանանք: Ի՞նչ է ձեր անունը:

Արժե՞ նրան հայտնել անունս: Թեև այդ ինչ նշանակություն ունի...

– Խուսիտա: Իսկ ի՞նչ է ձեր անունը:

– Ժորժ:

Երբեք այս անունով մեկին չէի հանդիպել: Եվ զուր սկսեցի այս ծանոթությունը: Պետք է վերջ տալ:

– Տեսնո՞ւմ եք այնտեղ՝ անկյունում կանգնած աղջկան, որ վարդ է վաճառում: Խնդրում եմ, ինձ մի սպիտակ վարդ բերեք:

Ոչ մի բառ չասելով՝ նա վեր կացավ և ուղղվեց աղջկա կողմը: Ես նույնպես ոտքի ելա, բայց ուրիշ կողմ գնացի:

Չանձրալի և միանգամայն պարապ օր անցկացրի: Ջրոսնեցի առափնյակում, լսեցի փողոցային նվագախմբի շինձու նվագը, հետո իջա լողափ, ննջաթոռ վերցրի և նույնիսկ մի քիչ լողացի: Ջուրը գոլ էր, սառած թեյի նման, ուստի լողալը զգվանքից բացի ինձ ուրիշ ոչինչ չպատճառեց:

Ննջաթոռիս պառկած նիրհում էի, իսկ կողքիս երկու երիտասարդուհի բարձրաձայն զրուցում էին: Բոլորովին չցանկանալով՝ սկզբից մինչև վերջ լսեցի նրանց անկապ խոսակցությունը:

– Թանկագինս, այնքան ուրախ եմ քեզ տեսնելու համար: Դու գո՞հ ես, որ վերջապես քեզ գտա այս համաշխարհային պառկելարանում:

– Ոչ, հենց նոր եկա:

– Արդեն լող տվե՞լ ես:

– Այո: Եվ առափնյակում էլ նախաճաշել եմ: Այնտեղ, հույների խորտկարանում, ծովապտուղներից պատրաստած շատ համեղ աղցաններ են տալիս: Նո՞ր լողագրեստ է վրադ:

– Իհարկե: Ես նրան այդպես էլ ասացի, որ լողափին սիրում եմ լինել մենակ կամ ընկերուհիներիս հետ: Գիտես, նա ինձ արդեն բավականին ձանձրացրել է:

– Քեզ ո՞վ հասցրեց պատմել: Ես ու նա այսօր որոշեցինք, որ վաղվա-
նից տեղափոխվում ենք մի պանսիոն և երկու հոգու համար սենյակ ենք
վարձում: Նա շատ զվարճալի մարդ է:

– Ի՞նչ սոսկալի է: Ձեմ հավատում... Թեև գիտես, թանկագինս, ար-
վեստի ստեղծագործություններ գնելիս միշտ այդպես է, նախատեսում ես
բարձր գին և ակնկալում մեծ վարպետի վրձնի գործ ստանալ, իսկ քո
ձեռքն են տալիս խզբզանքը մի թերուս սկսնակի, որը, ինչպես պարզվում
է, պատկերասրահի տնօրենի քրոջ որդին է:

– Լիովին համաձայն եմ քեզ հետ: Համենայն դեպս ես իմ մատնահարգա-
րի անունը երբեք չեմ գովազդում, որ հետո հերթի մեջ չհայտնվեմ այն մարդ-
կանց հետևում, որոնց հիմարաբար տվել եմ նրա հեռախոսահամարը:

– Դու իրավացի ես: Բոլոր տղամարդիկ խաբեբաներ են, նրանցից ոչ
մեկին չի կարելի հավատալ:

Նրանց դատարկախոսությունից գլուխս սկսեց սաստիկ ցավել, և ես
հեռացա լողափից: Գտա արտաքուստ հարմարավետ մի փոքրիկ ռեստո-
րան և որոշեցի ընթրել: Գուցե պարզապես սոված եմ, և այդ պատճառով
է գլուխս այսպես ցավում:

Նստեցի դահլիճի անկյունում դրված ազատ սեղանի մոտ, պատվիրեցի
սոխապուր, խեցգետնի խորոված և սրան վայելող սպիտակ գինի: Նոր էի
վերջացրել ապուրը, երբ կողքիս բազմեց կիսատ–պուստ սափրված, մարմ-
նին կաշի քաշած ու վրայից էլ երկաթակտորներ կպցրած մի կերպարանք
և իսկույն գրոհ տվեց.

– Ձանձրանո՞ւմ ես, կատվիկ:

– Ես չեմ ձանձրանում, ես ընթրում եմ: Այս սեղանը, ի միջի այլոց,
արդեն զբաղված է:

– Այդ լավ է: Ես էլ եմ մենակ: Մենք երկու մենակությունները կլց-
նենք մի գավաթի մեջ և փոքր–ինչ կուրախանանք:

– Դուք չէի՞ք կարող ինձ հանգիստ թողնել:

– Դրա համար մի՛ անհանգստացիր, մանկիկ: Այսօր շատ փող ունեմ:
Ձիարշավում եմ շահել: Քեզ՝ շամպայն, ինձ՝ վիսկի:

– Դուք, ինչ է, պարզ խոսքը չե՞ք հասկանում:

– Դու ի՞նչ գործ ունես անունիս հետ: Ինքս էլ չեմ հիշում, թե անունս ինչ է:

Եվ սկսեց խրխնջալ ռեստորանով մեկ: Մատուցողը լսեց և մեզ մոտեցավ:

– Ի՞նչ եք կամենում:

– Այս երիտասարդն առանց հրավերի նստեց իմ սեղանի մոտ: Դուք
չէի՞ք կարող նրան մեկ ուրիշը տրամադրել:

– Այս բոլորն, տիկին: Կրկանկի էսպրեսո... Էլի մի բան կցանկանա՞ք
իբրև աղանդեր:

– Խնդրեմ՝ հաշիվը:

Նա այս լսեց: Ես հաշիվը վճարեցի քարտով: Այդ ընթացքում լկտի
կերպարանքը աթոռին վսեմ տեսքով փոկված և հայացքը դեմքիս
սևեռած՝ ինձ էր գննում: Ես ոտքի ելա, նա էլ իսկույն ոտքի կանգնեց՝
ակնհայտորեն ինձ հետևելու պատրաստությամբ:

– Որտե՞ղ է ձեր գուգարանը, – շշուկով հարցրի մատուցողին:

Նա ցույց տվեց խորտկարանի կանգնակի անկյան հետևի դուռը: Ես
գնացի գուգարանի կողմը, իսկ լպիրշ կերպարանքը ինձ սպասելու մնաց
ռեստորանի ելքի մոտ:

Անցա գուգարանի կողքով և բախտաբերի հրեցի վրան նշան չունեցող
մի դուռ: Այն բացվեց, և դիմացս տեսա արկղներով ու տակառներով լց-
ված մի նեղ բակ: Վազքով արագ կտրելով այն՝ հայտնվեցի մյուս փողոցը
դուրս բերող դարպասի մոտ: Այս քաղաքում այլևս մենակ ռեստորան չեմ
գնա նույնիսկ վաղ առավոտյան:

Պանսիոնին մոտեցա, երբ արդեն սկսել էր մթնել: Սակայն այստեղ էլ
էին ճանապարհս պահում: Մուտքի մոտ կանգնել էր մի անծանոթ մարդ՝
ձեռքին սպիտակ վարդ: Ինձ տեսնելով՝ նա ժպտալով մոտեցավ և մեկնեց
վարդը:

– Ահա ձեր վարդը:

– Ի՞նչ վարդ: Ցնորվե՞լ եք:

– Դեռ ոչ: Դուք խնդրել էիք սպիտակ վարդ բերել ձեզ, ես էլ բերել
եմ: Համեցեք:

– Ո՞վ եք և ի՞նչ եք ուզում ինձնից: Հիմա կկանչեմ դռնապանին, իսկ
նա ոստիկան կկանչի:

– Մի՛ բարկացեք, հիմա ամեն ինչ կբացատրեմ:

– Լավ, բացատրեք: – Ես բարձրացա սանդղամուտք և մատս դրի

զանգի կոճակին, բայց չսեղմեցի: – Դե, ի՞նչ էիք ուզում ինձ բացատրել: Խոսեք: Ձեզ երեք ընկեր եմ տալիս:

Անծանոթի դեմքին այնպիսի դժբախտ ու չփոթահար արտահայտություն երևաց, որ նրան խղճացի: Ընդ որում նրա դեմքն ինձ աղոտ կերպով ծանոթ թվաց:

– Ես չեմ կարող ձեզ բացատրություն տալ փողոցի մեջտեղը: Գուցե ուեստրա՞ն գնանք և ընթերցեք միասին:

– Ես արդեն ընթերցել եմ: Ընդամին ինձ թվում է, որ դուք այսօր թե երեկ մոտեցել եք ինձ և նույնիսկ առանց հրավերի բազմել սեղանիս առաջ: Վե՛րջ տվեք ինձ հետամտելուն:

– Խնդրում եմ մինչև վերջ լսեք ինձ:

Նրա ձայնը դարձավ աղերսական և ինձ անկեղծ թվաց:

– Լավ, թող ձեր ուզածով լինի: Մինչև վերջ կլսեմ ձեզ: Բայց դրա համար կգնանք իմ պանսիոնի բարը, սուրճ կպատվիրենք, և խմելիս ինձ կպատմեք, թե ինչ իրավունքով եք շարունակ հայտնվում իմ ճանապարհին: Համաձայն եք:

– Շնորհակալ եմ ձեզնից:

Մտանք ճեմասրահ, և ես հարցականորեն նայեցի դռնապանի աչքերին: Նա գլխով արեց և ինձ տվեց համարի բանալին: Պայուսակիս մեջ դրի և ուղղվեցի բարի կողմը, հետամտողս էլ՝ իմ հետևից:

Նստեցինք վաճառասեղանի առջևի բարձր աթոռակներին, որոնց վերևում մի հսկայական հայելի էր կախված, և սուրճ պատվիրեցինք. ես՝ կրկնակի էսպրեսո, նա՝ կաթ ու շաքար խառնած մեծ բաժակով սովորական սուրճ:

– Ես լսում եմ ձեզ:

– Ի՞նչ է ձեր անունը:

Արժե՞ ասել անունս: Իսկ ինչու՞ ոչ...

– Աննի: Իսկ ձե՞րը:

– Յուրի:

Երբեք չէի հանդիպել այդ անունով մեկին:

– Ի՞նչ էիք ուզում ինձ պատմել:

– Ոչ թե պատմել, այլ հարցնել. որտե՞ղ կարող էինք իրար հանդիպած

լինել: Ինձ այնքա՛ն ծանոթ է ձեր դեմքը:

– Ինձ նույնպես ծանոթ է ձեր դեմքը: Մենք հանդիպել ենք փողոցում: Վերջերս: Եվ՝ ոչ մեկ կամ երկու անգամ: Ոչ, ոչ թե հիմա, այլ առաջ: Իսկ առաջ որտե՞ղ եք ապրել:

– Ես ուրիշ երկրում էի ապրում: Բայց չեմ հիշում՝ ինչ երկիր էր և ինչ էի այնտեղ անում: Ամուսնացած էի մի գեղեցիկ ու խելամիտ կնոջ հետ: Քանի դեռ նա ողջ էր, ամեն ինչ հիանալի էր, բնականոն կյանքով էի ապրում և երջանիկ էի:

– Երեխաներ ունեի՞ք:

– Այո, տղա: Սակայն նա կնոջս մահից հետո անհետացավ: Հնարավոր է, որ նրան դաստիարակություն տակ առած լինեն կնոջս կամ իմ ազգականները: – Նա տրորեց ճակատը: – Ձէ, ստույգ չեմ հիշում:

– Ի՞նչ էր ձեր կնոջ անունը:

– Իսկապես, ի՞նչ էր անունը: Լիզզի՞, Մարյանա՞, Հռո՞ւթ: Ձէ, չեմ կարողանում հիշել...

– Ինչո՞ւլ եք զբաղվում այս քաղաքում:

– Ոչ մի բանով: Պարզապես ջանում եմ որքան հնարավոր է ուրախ անցկացնել ազատ ժամանակս:

– Իսկ առաջ ինչո՞ւլ եք զբաղվել:

– Ոնց որ թե նավաստի կամ ձկնորս եմ եղել: Հաճախ եմ երազումս տեսնում սառն ու անհյուրընկալ պողպատագույն մի ծով: Իսկ ափը տափակ է և ավազոտ:

– Դա կարող է Բալթիկ ծովը լինել:

– Դուք այնտեղ եղե՞լ եք:

– Ոչ, կարծեմ դրա մասին ինչ–որ տեղ կարդացել եմ: Հիմա ձեր հարցնելու հերթն է:

– Արդեն գիտեմ, որ այրի եք: Իսկ որևէ զբաղմունք՝ աշխատանք ունեի՞ք նախքան այս քաղաքն ընկնելը:

– Ձեմ հիշում, որ երբևէ ստիպված եմ եղել աշխատել: Բայց հետաքրքրվել եմ արվեստով, ցուցահանդեսներ եմ գնացել և, թվում է, կինո շատ եմ սիրել:

– Իսկ ո՞ւլ էր ձեր ամուսինը: Կարծում եմ, որ ունևոր մարդ է եղել:

– Ձեռն հիշում: Ամենայն հավանականությունը՝ այո: Բայց նա գործարարությունը չէր զբաղվում: Բարի ու թույլ մարդ էր:

– Երեխաներ ունե՞ր:

– Ոչ, երեխա չկար:

– Իսկ նա ինչպե՞ս է գոհվել:

– Կործանվել էր այն ինքնաթիռը, որով տունն էր թռչում: Կամ էլ խորտակվել էր այն նավը, որով տունն էր լողում: Կարծեմ ինձ այդպես էլ մանրամասնությունները չհայտնեցին:

– Ասացիք, որ սիրել եք արվեստը: Իսկ ո՞ր ճյուղը, օրինակ, երաժշտություն:

– Բախ, Վիվալդի, Հայդն...

– Դուք խոսեցիք կինոյից: Ի՞նչ նկարներ եք հիշում:

– Լեհական հին կինոնկարները. «Մոխիր և արմաստ», «Բնապատկեր ճակատամարտից հետո», «Ջրանցք»: Հիշում եմ, ինձ մի ժամանակ ժամանակ դուր էր գալիս ուսուսուս ուսուսուս Ծարկովսկին. «Ստալկեր», «Սոլյարիս»...

– Գուցե դուք ու՞զ եք կամ լե՞զ:

– Հաստատ՝ ո՛չ: Ես ինձ Արևմտյան Եվրոպայի բնակիչ եմ զգում: Ռուսիան ինչ–որ հեռավոր ու օտար բան է: Սրա հետ կապված ինչ–ինչ տհաճ գոլգորդություններ են մեջս հառնում:

– Իսկ անցյալ կյանքից ի՞նչ բնապատկեր է մնացել ձեր հիշողության մեջ:

Աչքերս փակեցի և սկսեցի մտաբերել:

– Բնապատկեր... Գիտե՞ք, ես էլ եմ ավազաբլուրներով եզերված գորշ ծով հիշում:

– Ուրեմն Մերձբալթիկան է կամ Հյուսիսային Գերմանիան: Ես և դուք իրար հետ հանդիպել ենք Բալթիկ կամ Հյուսիսային ծովի ափերին: Եվ բացեք, խնդրում եմ, ձեր աչքերը: Ինձ այնպե՞ս է դուր գալիս դրանց նայելը: Ձեզ որևէ մեկն ասե՞լ է, որ արտասովոր մանուշակագույն աչքեր ունեք:

Դե սա պարզապես առողջարանային նրբաճաշակ լուվելաս է, եթե ոչ՝ բողբոջ:

– Բավական է, վերջացրե՛ք, – ես բարկացա և դիտմամբ նրան նայե-

ցի շագանակագույն աչքերով:

– Ինչո՞ւ այդ արեցիք: Խնդրո՞ւմ եմ, վերադարձրեք ձեր աչքերի բնական գույնը:

Ո՞նց ինձ հոգնեցրեց այս մարդը: Աչքերի բնական գույնը... Իսկ ինչու՞ ոչ: Գուցե մնացած բաներն էլ հե՞տը: Դե ինչ, այդ նույնիսկ զվարճալի կլինի:

Շրջվեցի բարի վաճառասեղանի կողմը, որ տեսնեմ արտացոլքս, երբ դեմքս փոխվեր, և, աչքերս փակելով, կենտրոնացա: Երբ բացեցի, հայելու մեջ տեսա մի պառավի հոգնատանջ ու անշրթունք երեսը: Նրա բորբոքված աչքերը խունացած մոխրագույն էին, դգգգված սպիտակ մազերը կախվել էին փոս ընկած այտերի երկարությունը:

– Դո՞ւ ես: Գտա՞ք եզ:

Շրջվեցի զրուցակցիս կողմը: Նա ինձ էր նայում երջանիկ աչքերով:

– Ինձ չե՞ս ճանաչում: Այս ե՛ս եմ, ե՛ս: Դու ինձ Լոշտակ էիր ասում: Նայի՛ր:

Մի պահ նա փակեց աչքերը: Նրա դեմքը ծռուվեց, սկսեց ալիքվել և ապա վերածվեց հսկայական ցից ականջներով ու վրան մազաղաթանման մաշկ քաշած գանգի: Բացեց իր հիմարական ակաները, որոնցից գլոր-գլոր արցունքներ թափվեցին:

– Լոշտակի՛կ: Իմ անգի՛ն հրեշիկ: Ո՞ւր էիր քշվել:

Մենք վեր թռանք և, աթոռները տապալելով, իրար գիրկ նետվեցինք:

Բնակութունն հաստատեցինք ծովից քիչ հեռու բարձրացած բլրի վրայի սպիտակ առանձնատանը: Այլևս իրարից չէինք բաժանվում:

Յերեկը թափառում էինք քաղաքում, ման էինք գալիս զբոսայգիներում և դնում լողափ: Մարզիկի կառուցվածքով գեղեցիկ տղամարդու և փափկասուն լեզվի կերպարանքները վրաներիցս թոթափեցինք որպես ձանձրալի դարձած դիմակահանդեսային զգեստներ, և քաղաքի փողոցներում շրջում էինք մեր իսկական տեսքով՝ ծերանոցից փախած երկու պառավների պես: Անցորդները մեզ զարմանքով էին նայում, ոմանք էլ բացահայտ ծիծաղում էին և մատով ցույց տալիս: Այս քաղաքում, որտեղ ամեն մեկը կարող էր ուզած արտաքինն ընդունել և այն նույնքան հեշտութայնք փոխել, ինչպես կինոաստղն է փոխում իր զգեստները, նման տեսք չէին առնում: Բայց մեր նախկին պատկերը մեզ համար թանկ էր նաև այն պատճառով, որ դրա հետ վերադարձել էր մեր հիշողությունը:

– Դու շատ սիրուն ես, – օրը տասն անգամ ասում էր ինձ Լոշտակը, և նրա գորտային բերանը խանդաղատանքով ձգվում էր մինչև ականջները, իսկ աչքերը փայլում էին աստղերի նման: Եվ ինձ համար ընտանի ու թանկ էր նրա անճոռնի ականջների ամեն մի ծալքը:

Երեկոները, հաճախ էլ գիշերվա լրիվ կեսը, հյուսկեն բազկաթոռներին նստած անց էինք կացնում մեր ծածկապատշգամբում՝ նայելով ներքևում շողողացող քաղաքին և հիշելով անցյալը: Մենք նորից ու նորից էինք մտաբերում զարհուրելի գաղութը, որտեղ ճանաչեցինք իրար, փախուստն ու սև ժայռի մոտի քարե խղճուկ հյուղակում ապրած վտանգներով լի կյանքը, հետո անապատով երկար ճանապարհ գնալը և գորշ ծովի մոտի գորշ քաղաքում վհատ ու տխուր ապրելը:–

– Հիշո՞ւմ ես, թե ինչպես բարկացար, երբ ասացի, որ ծովը պետք է կապույտ լինի:

– Իսկ դու հիշո՞ւմ ես, թե ինչ ծիծաղելի անուն էինք տալիս ավթոռին. «այն, որին նստում են», կամ «նստելու բանը»:

Ծովի հատակով կատարած վտանգավոր անցումը հիմա արդեն այդքան սարսափելի չէր թվում. չէ՞ որ ի վերջո ամեն ինչ լավ ավարտվեց: Լոշտակը պատմեց, որ ինքն այն ժամանակ կարողացել է մի կերպ ափ ելնել և ինձ

էլ գրկած դուրս հանել: Հանել է, պառկեցրել ավազին և փորձել է ուշքի բերել, բայց հետո միտքը շեղվել է ու հեռացել՝ ինձ մոռանալով ափին: Դրա համար շատ էր զղում:

Լոշտակը սիրեց իմ պատմությունները Դրախտի, Հովտում հոսող կյանքի, իմ դրախտական ընտանիքի մասին: Նա կարող էր դրանք անվերջ լսել, և ես ստիպված էի բազմիցս կրկնել:

– Բայց այստեղ էլ է լավ, ճի՞շտ է (դրախտի մասին զրույցները նա միշտ այսպես էր ավարտում): – Հիմա մենք երբեք չենք բաժանվի և հավիտյան կապրենք այս քաղաքում, ճի՞շտ է:

Սակայն նրա աչքերում տազնապ կար: Ես նրան հանգստացնում էի կարողացածիս չափ: Լոշտակը հասկանում էր, որ ինձ բոլորովին դուր չի գալիս այս չքեղ ու բարգավաճ քաղաքը: Եթե Լոշտակը չլիներ, վաղուց այստեղից գնացած կլինեի՝ ուր աչքս կտրեր: Օրինակ, կարող էի հետախուզել, թե ինչ կա ծովախորշը մի կողմից եզերող ժայռերի հետևում, կամ ուղևորություն կսկսեի ծովի կողքով, կանցնեի քաղաքային և վայրի լողափերի շղթայից այն կողմ: Բայց այդ մասին խոսակցություն սկսել անգամ վախենում էի:

Թե՛ այս քաղաքը, թե՛ նորած կահույքով, պարտեզով ու լողավազանով այս առանձնատունը ինձ թատրոնի բեմահարդարանք էին թվում: Ինձ դուր չէին գալիս նաև քաղաքի բնակիչները: Նրանք ջանում էին հաճույքներ վայելել, նրանց համար մատչելի էր այն ամենը, ինչ պարունակում էր «գեղեցիկ կյանք» սպառողական հասկացությունը, նրանք տնօրինում էին անգամ սեփական տարիքն ու արտաքինը: Նրանք չէին հիվանդանում և չէին մեռնում, սակայն մաշվում էին ձանձրանալուց և ոչինչ չանելուց, համատարած ամեն ինչի և ամենքի նկատմամբ անտարբերությունից: Այստեղ ոչ ոք ոչ մեկին չէր սիրում:

Զույգերն ասես պատահաբար և առանց մտածելու հանդիպում էին, երբեմն ինչ-որ ժամանակ ապրում էին միասին՝ երկուսով տաղտկությունից տառապելով և ծուլորեն վիճաբանելով, ապա դարձյալ անակնկալ ու անառիթ կերպով բաժանվում էին, իսկ հաջորդ օրը փողոցում հանդիպելիս իրար արդեն չէին ճանաչում: Ոչ ոք ոչինչ չէր հիշում ո՛չ իր մասին, ո՛չ էլ ուրիշների: Առհասարակ ոչ մի բան չէին հիշում:

– Տեսնում եմ, որ քեզ ինչ–որ բան է անհանգստացնում, – տագնապում էր ընկերս: – Ասա ինձ, ինչի՞ պակաս ունես: Ախր գիտես որ, քեզ համար ամեն ինչ կանես, քեզ համար ամեն ինչ կճարես:

Ես այդ գիտեի: Այստեղ ամեն մեկը կարող էր «ճարել» ուղած բանը. բավական էր դրա մասին պարզապես մտածել:

Մի անգամ ասացի, որ գրքերի պակաս ունեմ:

– Բայց մենք գրադարան ունենք, ահա՛, – ուրախ բացականչեց Լոշտակը:

Նա իսկույն վեր թռավ, արագորեն բռնեց ձեռքս և տարավ մի դռան մոտ, որը մինչ այդ համարում էի հյուրերի համար նախատեսված սենյակներից մեկի դուռը, և լայն բացեց: Պարզվեց, որ գրադարան է. պատերի երկայնքով շարված էին գրապահարանները, պատուհանները մեծ էին, մեջտեղում դրված էին մի սեղան, մոտը՝ երկու հարմարավետ բազկաթոռներ:

Մի պահարանում գետեղված էին լրտեսական ու կոռուպցիոնական վեպեր, երկրորդում՝ մարմնի և մաշկի խնամքի ձեռնարկներ, մերսման դասագրքեր, նորածնություն ամսագրեր, խոհարարական գրքեր և այլ անպետքություն: Մի ամբողջ պահարան զբաղեցրել էին պոռնկագրական հրատարակությունները: Այդ ինձ բոլորովին չզարմացրեց: Արդեն վաղուց էի նկատել, որ այս քաղաքում հոգիները, գրկված լինելով մարմնով մեղանչելու հնարավորությունից, շատ հաճախ աչքի էին ընկնում մի չափազանցված առերևույթ վավաշոտություն: Իսկ և իսկ տարիասեր և անզոր ծերունիներ ու պառվուկներ էին:

Ինձ ապշեցրեց անկյունում գտնվող փորագրովի փոքրիկ պահարանի պարունակությունը: Պահարանն ուներ երկու բաժին. մեկում խիտ շարված էին ոսկով դրոշմատպված կաշեկազմ հնամյա մեծադիր գրքեր, մյուսում՝ բարալիկ գունեղ բրոշուրներ: Երկուսն էլ սև մոգուլյան ու կախարողության ձեռնարկներ էին, ոգեհարցուկների*, նշանավոր գուշակների ու գրբացների երկասիրություններ:

Ես սկսեցի կնոջական սիրավեպերը կարդալ, իսկ Լոշտակը՝ գաղտնի գործակալների արկածները: Այս ընթացիկները մեզ զբաղեցրեց բազում երկար երեկոներ: Հետո փոխանակեցինք. ես սկսեցի արկածները

կարդալ, իսկ Լոշտակը ջանասիրաբար ուսումնասիրում էր սիրավեպերը: Արդյունքն այն եղավ, որ նա շուրջ երկու շաբաթ ինձ իր սերն էր խոստովանում մոտավորապես հետևյալ կերպ.

– Թանկագինս, դու միանձնորեն թագավորում ես իմ հոգում: Դու իմ երազած կինն ես: Ինձ դուր է գալիս նայելը, թե դու ինչպես ես հավերժ կանացի շարժումով հարգարում մագերդ: Ես երբեք հասու չեմ լինի կանացի հոգուդ ծածուկ ոլորաններին: Ես քեզ սիրում եմ այնպես, ինչպես թռչունն է երկինքը սիրում: Միայն մահը է կարող մեզ իրարից բաժանել:

Նա չէր հասկանում, թե ինչու եմ քրքրում՝ լսելով իր նրբին հաճոյախոսությունները: Ախր, շա՛տ էր ջանում տեսնել հոգուս թաքուն ոլորքները, այսինքն՝ հասկանալ իմ էությունը:

Ի վերջո այս ընթացիկները էլ ձանձրացրեց: Մի անգամ առավոտվանից, չկարողանալով դիմանալ մահացու տաղտկությունը, սկսեցի կարդալ սև մոգուլյան դասագրքերը: Գրքերից մեկի մեջ տեսա մի հինավուրց փորագրանկար, որը պատկերում էր «Լյուցիֆերի հաղթանակը»: Կարծես գլխիս բամփեյին: Ես տեսել էի այդ նողկալի մոուլթը. տեսել էի ոչ թե գրքում, այլ կենդանի՝ իրական կերպով. կինոյում էր, թե՞ հեռուստատեսություն: Սակայն իմ տանն այն չե՛մ ուզում պահել: Գրքի այդ էջը պոկեցի և շուռ եկա Լոշտակի կողմը.

– Մոտդ լուցկի կա՞:

– Ինչ է, ծխե՞լ ես ուզում: Բայց դու ծխող չես:

– Մի՛ հարցրու, պարզապես գտիր և ինձ տուր:

Նա նստած էր հենց ծխելու սեղանիկի մոտ, որին դրված էին սիգարներ, սիգարեթներ, ծխամորձեր. ուստի դրանց կողքին լուցկի էլ պիտի լիներ: Նա գտավ և սեղանի վրայով ինձ շարտեց: Ճմուլեցի էջը, դրեցի մոխրամանի մեջ ու կրակը կպցրի: Թուղթը բռնկվեց, և բոցը մի ակնթարթում վեր սուրաց, ապա առաստաղի վրայով նետվեց պատուհանի կողմը և պարուրեց մետաքսե թեթև վարագույրները:

Ես ճանկեցի Լոշտակի ձեռքը.

– Փախա՛նք: Արա՛գ, թե չէ կայրվենք:

Հազիվ հասցրինք առանձնատան դռնից դուրս ցատկել: Հրդեհը մեզ

Հետապնդում էր հրեղեն վիշապի պես: Փախանք ծածկապատշգամբ և քարե աստիճանով ներքև սլացանք դեպի դարպասը, որի մոտ կանգնած էր մեր ավտոմեքենան: Դեռ սաստիճանի կեսին էինք, երբ թնդյուն լավեց, և ներքևից մեզ վրա փչեց տապը: Մեր «կրայսլերն» էր, որ բռնկվեց ու պայթեց:

Լոշտակն ինձ գիրկն առավ ու, ճաղաշարի վրայով թռչելով, վարդի թփերի միջով շեշտակի հեռու վազեց աստիճանից, որով տան դռնից բռնոցով վիժում էր հրե զանգվածի հոսանքը:

Նա կարողացավ հասցնել: Խանձվել էին սոսկ ունքերս ու թարթիչներս և զգեստիս փեշը, իսկ ինքը միայն քերծոտվել էր վարդերի փշերից, և թեթևակի խանձվել էր սպիտակ կոստյումը: Մենք վազելով ջրին մոտեցանք՝ մեր տեսքով վախեցնելով լողափի ժողովրդին, և թափով ծովը նետվեցինք: Ջրի մեջ վրաներիցս դեն նետեցինք խանձված հազուստներս և մեզ համար շտապ լողազգեստներ սարքեցինք: Ապա դուրս եկանք լողափի մյուս կողմը:

— Այս ի՞նչ արեցիր: Ինչի՞ց խելքիդ փչեց հրկիզել մեր տունը, — հարցրեց Լոշտակը, երբ ավազին պառկել հանգստացել էինք, և ուշքներս գլուխներս էր եկել: Նրա ձայնի մեջ լսվեցին շատ վաղուց մոռացված նվնվան հնչերանգները:

— Ինչ է, ափսոսում ես:

— Այն էլ ինչպե՛ս: Մենք այլևս երբեք այդպիսի տուն չենք ունենա:

— Դու միշտ էլ այդպես ես ասում: Իսկ հետո պարզվում է, որ ամեն ինչ նախկինից լավ է...

Նա լռեց, իսկ հետո մի խելամիտ առաջարկություն արեց, որից նույնիսկ զարմացա:

— Ես ոստիկանությունից եմ վախենում: Ձե՞ որ մենք հրդեհ ենք սարքել: Արի նորից առնենք այն տեսքը, որով հանդիպեցինք այստեղ:

— Հիանալի՛ բան մտածեցիր:

Մենք արագ վերադարձրինք մեր երիտասարդությունն ու գեղեցկությունը, ես նույնիսկ չմոռացա վերականգնել իմ մանուշակագույն աչքերը: Լոշտակն ինձ նայեց ու դեմքը կնճռոտեց:

— Քեզ ի՞նչ եղավ:

— Դու գտած բոզի տեսք ունես:

— Իսկ դու նման ես առողջարանային բողբոջի: Այնպես որ իրար հարմար զույգ ենք:

— Պետք է հեռանալ այս քաղաքից. — ասաց նա: — Այստեղ բոլորը հիշում են այն երկու ծիծաղելի ծերուկներին, որ մենք էինք:

— Վա՛հ, ինչպիսի՛ առաջընթաց:

Իսկ նա տեղնուտեղը բացատրեց.

— Չեմ կարող քեզ հանդուրժել անառակի այս տեսքով:

— Իսկ իմ հոգու ծածուկ ոլորաննե՞րը, թաքուն անկյուննե՞րը: Այս տեսքը միանգամայն համապատասխանում է կնոջական վեպերի հերոսուհիներին:

— Թող գրողի՛ սատանայի ծոցը կորչեն դրանք:

— Ս—ս—ս, կամա՛ց:

— Ինչի՞ց վախեցար:

— Ինչո՞ւ այդպես ասացիր: Միայն թե չկրկնես: Պարզապես մտածիր ու ասա, թե ինչո՞ւ կնոջական վեպերի հերոսուհիներին այդ հասցեով ուղարկեցիր:

— Չգիտեմ: Պարզապես այդպես են ասում, եղած-չեղածն այս է:

— Ո՛չ: Դու որոշակի անձի անուն տվեցիր: Միայն թե նորից դրա անունը չտաս: Ես ստույգ գիտեմ, որ այդ վտանգավոր է: Ու նաև, կարծես, սկսում եմ կռահել մի շատ կարևոր փաստ...

— Նորի՞ց բան հնարեցիր:

Լոշտակի հետ քայլելիս մտքի տունն ընկա: Նա մի քանի անգամ փորձեց հետս խոսել, բայց ես ձեռքս էի թափ տալիս, թե՛ մի՛ խանգարիլ, թող մտածեմ:

Հետո որոշեցինք սուրճ խմել և նստեցինք փողոցի սրճարանի սեղանիկի առաջ: Լոշտակն ինձ համար կրկնակի էսպրեսո վերցրեց, իսկ իր համար՝ կաթ ու շաքար խառնած մի մեծ գավաթ սովորական սուրճ: Վերջապես, երբ սուրճը խմվեց, նա չհամբերեց.

— Հիմա՞ ինչի մասին ես մտածում: Նոր ճամփորդության երթուղի՞ն ես ուրվագծում:

— Դատարկ բան ես ասում: Ահա թե ինչ եմ մտածում: Դու հիշո՞ւմ

ես գաղուծի ու գորչ քաղաքի հոգեկերներին:

– Հլա չհիշեի: Իհարկե հիշում եմ:

– Իսկ հիշո՞ւմ ես, որ նրանք այնտեղ իրենց իշխանակարգությունն ունեին:

– Այո: Ոմանք մանր՝ ստորադաս էին. հոգեկերների էին փոխակերպվել առանձնապես չար բարաքաբնակներից, իսկ մյուսները, ամենասարսափելիները, ինչ–որ տեղից էին գալիս: Կային նաև վայրի հոգեկերներ:

– Դրանց մասին չէ խոսքը: Հիմա գիտեմ, թե ով էր դրանց գլխավորը, ով է այս բոլոր կողմերի՝ անապատի, Հուսահատության լճի, գաղուծի և գորչ քաղաքի տերը...

– Բայց ոչ՝ այս քաղաքի, չէ՞, – չնչին հույսով հարցրեց նա՝ արդեն իմանալով պատասխանը:

– Այս քաղաքինը ևս, – անողոքաբար պատասխանեցի ես:

– Ի՞նչ սոսկալի է:

– Այո, բայց բանն այդ չէ, այլ այն, որ պիտի լինի նաև աշխարհի մի ուրիշ կողմ, և նրա՝ ուրիշ տեր: Ականջ դիր. գոյություն ունեն չար ու չարիք, որոնք ունեն իրենց տերը, տիրակալը: Սակայն ես ու դու ամբողջ ժամանակ զգում ենք, որ այն մեր հանդեպ թշնամական ուժ է, որ մենք չենք ուզում ապրել չարի իշխանության ներքո: Այդպե՞ս է:

– Դիցուք այդպես է:

– Եվ մեզ համար միանգամայն պարզ է, որ չարից ու չարիքից բացի գոյություն ունի նաև Բարին ու բարիքը: Այդպե՞ս է:

– Միայն թե վերջինս շատ քիչ է:

– Այժմ այդ չէ կարևորը: Ինձ լսիր: Եթե չարն ու չարիքը ենթակա են նրան, ում անունը քիչ առաջ ակամա տվիր (իսկ նա այն նույն էակն է, որի նկարը վառեցի), ապա ես ու դու գիտենք, որ այդ սարսափելի ուժ է:

– Ավելի լավ է դրա մասին չմտածենք:

– Պետք է մտածենք, Լոշտակ, պետք է: Սրանից ի՞նչ է եզրակացվում: Եթե կան չար ու չարիք և դրա շինողը, և կա Բարի ու բարիք, ուրեմն սրանք ավելի հզոր տիրակալ պիտի ունենան:

– Ինչո՞ւ:

– Հենց այն պատճառով, որ նույնիսկ այստեղ, որտեղ բացահայտորեն

թագավորում է չարը, երկու հիմարիկներս ձգտում ենք հասնելու սիրո և բարու: Հասկանալի՞ է:

– Ոչ այնքան, բայց միևնույն է՝ հրաշալի է: Դու շա՛տ խելացի ես:

– Վերջ տուր: Հիմա պետք է մտածենք, թե ինչպես գտնենք Նրան, Ով կառավարում է Բարուն ու բարիքը: Միայն թե կարողանայինք հիշել՝ ո՞վ է Նա և ի՞նչ է Նրա անունը: Այդժամ կփրկվեինք:

– Իսկ ինչպե՞ս ենք իմանալու:

– Չգիտեմ: Կփորձենք հարցնել քաղաքի մարդկանց: Գուցե մեկն իմանա՞:

Փութով անելիքներիս ծրագիրը կազմեցինք և գնացինք քաղաք: Սկսեցինք շրջել փողոցներում ու զբոսայգիներում՝ մոտենալով տարբեր մարդկանց և տալով նույն հարցերը.

– Մենք մեր քաղաքի բնակիչների շրջանում հասարակագիտական հարցում ենք կատարում: Ասացեք, ձեզ այստեղ դո՞ւր է գալիս: Դուք չե՞ք ձանձրանում: Կուզենայի՞ք այստեղից գնալ:

Իրենց անձը ուշադրության առարկա դառնալու համար խելքները թռցնող քաղաքացիները հաճույքով հարցախուզվում էին: Մարդկանց մեծամասնությանը այս քաղաքում ապրելը լիովին գոհացնում էր, բայց ոմանք բողոքում էին ձանձրույթի դեմ: Լոկ մի երիտասարդ ինչ–որ հուսատու բան ասաց.

– Լսել եմ, որ կան ուրիշ վայրեր, որոնցում մարդիկ այսքան անտարբեր չեն իրար հանդեպ: Իսկ թե որտե՞ղ են, չգիտեմ:

– Իսկ կուզենայի՞ք իմանալ:

– Ինչի՞ համար: Ես սովորել եմ այստեղ ապրել, ունեմ տուն, մեքենա և շատ աղջիկներ: Ձե՛, տեղափոխվելու միտք չունեմ, կներեք:

Եվ նա հապճեպ հեռացավ՝ ակնհայտորեն վատ բան կասկածելով:

Այն հարցին, թե ո՞վ է կառավարում այս քաղաքը, և հարցվողներն արդյո՞ք գոհ են այդ կառավարումից, համարյա բոլորը պարզապես ուսերն էին վեր քաշում, կամ ասում էին, որ այդ իրենց չի հուզում: Միայն մի կնոջ հետ մեզ հաջողվեց հասնել մեր «հարցաթերթիկի» համարյա վերջին հարցերին: Նա դժգոհ էր բոլորից և ամեն ինչից.

– Մեր կառավարությունը նույնպես բանի պետք չէ:

– Իսկ դուք որեւէ բան գիտե՞ք ուրիշ տեղ ուրիշ իշխանություն լինելու մասին:

– Այո՛, գիտեմ: Եթե այնտեղ իմանային, թե այստեղ ինչ է կատարվում, ապա ՄԱԿ-ի գործեր ուղարկել կտային, որոնք այս անիծյալ քաղաքի վրա ջրածնային ռումբ կգցեին:

Սրա հետ խոսակցությունը շարունակելն անիմաստ էր: Մեր ապարդյուն շրջագայության վերջում հասանք պանսիոնիս փողոցին:

– Արի մտնենք՝ հարցնենք, թե ինձ համար փոստ կա՞:

– Իսկ դու որեւէ մեկից նամա՞կ ես սպասում: Այդ մասին ինձ ոչինչ չես ասել:

– Ձէ, որոշակի բան չեմ սպասում: Պարզապես ազոտ զգացողություն ունեմ, որ մի գեղեցիկ օր փոստով կարևոր ուղերձ եմ ստանալու:

Ճեմասրահ մտանք: Ինձ տեսնելով՝ դռնապանը ժպտաց.

– Վերջապես, տիկին: Ձեզ համար փաթեթ կա: Ստացեք, խնդրեմ:

Ապուշ կտրած՝ նրա ձեռքից վերցրի փոքրիկ ծանրոցը: Պանսիոնից դուրս եկանք և նստեցինք փողոցի նստարանին: Սրտատրոփ բացեցի փաթեթի թուղթը: Մեջը առասանով կապած փայտե տուփ կար: Կապն արձակելով և տուփը բանալով՝ մի փոքրիկ կլոր սպիտակ հաց տեսա, որի իրար կպած երկու բոբոնիկներից վերեւինի վրա դրոշմված էր Մանուկը կողքին Կնոջ պատկեր:

– Գիտե՞ս ով է, – շշուկով հարցրի Լոշտակին:

– Ոչ: Իսկ դո՞ւ:

– Ես գիտեմ: Այս Կինը Աստվածածինն է, իսկ սա՝ նրա Որդին:

– Ի՞նչ են նրանց անունները:

– Ձեմ հիշում: Բայց կարծում եմ, որ գլխավորն այդ չէ: Մենք նրանց պիտի օգնության կանչենք:

– Ինչպե՞ս, հենց այստե՞ղ՝ փողոցո՞ւմ: Մեզ ոստիկանություն կտանեն հասարակական կարգը խախտելու համար:

– Դու ճիշտ ես, – ասացի և վճռականորեն վեր կացա՝ փակելով տուփը: – Գնանք, ես գիտեմ ինչ պիտի անենք:

– Պարզ է, դարձյալ ինչ–որ տեղ ենք գնալու: Դե՛հ, ինչ արած, գնանք... Բայց սա վերջին անգամը լինի:

– Հուսամ, որ այդպես էլ կլինի:

– Եվ ո՞ւր ենք գնալու:

– Արի գնանք ծովեզերքով և փորձենք դուրս գալ քաղաքից:

Ասելն ավելի դյուրին դուրս եկավ, քան անելը: Ուղղվեցինք դեպի ծովածոցի այն ծայրը, որտեղ քաղաքային լողափին հաջորդում էր վայրի լողափը, և մինչև հորիզոն ձգվում էր մերկ ավազի շերտը: Լողափնյա կրպակից հետներս վերցրինք միայն մի մի շիշ հանքային ջուր և հացիս տուփը:

Սկզբում պարզապես դժվար էր ավազի վրայով քայլելը. շատ էր մանր, և ոտքներս մինչև կոճերը խրվում էին մեջը: Անցանք վերջին լողափը և առաջ գնացինք: Մեզ հետապնդող չկար: Մի քանի անգամ նստեցինք, ջուր խմեցինք, ու հանգստացանք, բայց քայլելը գնալով ավելի դժվարանում էր: Երկու կիլոմետրի չափ անցնելով շիկացած ավազի վրայով՝ հասկացանք, որ փորձանքի մեջ ենք ընկել:

Ոտքներս սկսեցին ավելի խորը խրվել: Սկզբում իսկույն չհասկացա, որ մահաբեր տեղ ենք ընկել: Կողքերս նայելով և տեսնելով, որ շուրջը լորը գորշակապույտ կոշտ խոտով ծածկված ավազաթմբեր կան, ասացի.

– Կարելի է թմբից թումբ ցատկել, մինչև որ պինդ տեղ կանգնենք:

Փորձեցինք և սկզբում հաջողում էինք, բայց հետո, երբ Լոշտակը միանգամից մինչև ծունկը խրվեց, հասկացանք, որ բաններս բուրդ է:

– Սորուն ավազնե՛ր են, – ճչացի: – Պետք է հետ գնալ:

Բայց արդեն անհնար էր: Զգեստիս կրծքի բացվածքից հացի տուփը մտցրի ծոցս, որպեսզի ձեռքերս ազատեմ: Լոշտակին օգնեցի դուրս գալ, բայց նույն պահին ինքս մինչև գոտկատեղ խրվեցի:

– Մի փայտ գտիր: Դատարկ ձեռքով մոտ չգաս: Նայիր, ահա այնտեղ ինչ–որ թփեր կան: Դրանց մոտ գնա, բայց միայն զգուշ, ճիմաթմբերի վրայով: Փորձիր դրանց մոտենալ: Ճյուղեր ջարդիր և այնտեղից կողքս նետիր: Միայն թե զգուշ գնա, մի՛ շտապիր:

Այդ դմբոն հապճեպ թփերի կողմը նետվեց և, դրանց մի քանի քայլ չհասած, խրվեց մինչև կուրծքը:

– Վե՛րջ: Տե՛ղ հասանք, – գոռաց նա: – Ախր, քեզ զգուշացնում էի, որ ոչ մի տեղ էլ պետք չէ գնալ:

Այո, երևի մեր երկար ճանապարհորդութունն ավարտվեց: Բայց մնում էր ևս մի՝ վերջին հույսը... Քանի դեռ ձեռքերս ազատ էին, ծոցիցս դուրս բերի տուփը և հանեցի նվիրական հացը: Նայելով դրոշմված պատկերին՝ շնչառեցի:

– Թանկագին Աստվածածին, փրկիր ինձ և իմ ընկերոջը: Խնդրո՞ւմ եմ, փրկիր մեզ:

Սկզբում ոչինչ չկատարվեց, բայց հետո ինձ թվաց, թե ոտքերս ամուր հողի դիպան. համենայն դեպս ավելի խոր չխրվեցի: Բայց Լոշտակն աչքիս առաջ ավազի մեջ էր խորանում: Այդժամ ամբողջ ուժով գոռացի.

– Փրկի՛ր մեզ: Կործանվո՞ւմ ենք:

– Վերջ տուր աղաղակելուդ, մեզ ոչ ոք չի լսում, – խոխուալով ասաց Լոշտակը: – Ավելի լավ է ինձ նայես և հրաժեշտ տաս:

Աստված՝ իմ, նրանից հիմա միայն ահանջները կմնան: Ինչ ասացի՞... «Աստված՝ իմ»: Աստված իմ՝ ահա Ով կարող է մեզ փրկել: Գլուխս երկինք բարձրացրի և գոռացի.

– Աստված՝ իմ: Մե՛ր Աստված: Մե՛ր Փրկիչ: Փրկի՛ր մեզ:

... Երկնքի բարձունքում վրաներս մի սպիտակ թռչուն էր պտտվում: Այս տեսարանը իմ ու Լոշտակի առաջվա համատեղ կյանքից ինչ-որ բան հիշեցրեց: Նայեցի կործանվող ընկերոջս: Նա տարուբերում էր գլուխը և հետ քաշում, որ ավազը քիթը չփակեր, բայց խոսել արդեն չէր կարող. ավազը ծածկել էր բերանը: Աչքերը սարսափով էին լցված: Ապա դրանք փակվեցին ու սուզվեցին ավազի մեջ: Նրանից մնաց միայն մի փոքր ձագարափոս, որի եզրով արդեն սողում էր մեջքը սև պուտերով մի դարչնագույն բզեզ: Հիմա սա ցած կընկնի և նույնպես կծածկվի ավազով: Կրծքիս սեղմեցի Աստվածամոր պատկերով հացը և աչքերս փակեցի...

Եվ այս պահին գլխավերևումս թևաբախության ձայն լսեցի: Սպիտակ թռչունը, արագորեն խոշորանալով, սրընթաց գետին իջավ և սկսեց թևերով ինձնից մի կողմ տալ ավազը և հեռու թափել: Ավազափոշին ծածկել էր աչքերս, գրեթե կուրացել էի:

– Նրա՛ն, նրա՛ն փրկիր, – գոռում էի ես՝ հսկայական թռչունին ցույց տալով այն կողմը, որտեղ քիչ առաջ Լոշտակն էր գտնվում:

Սակայն նա նախ ինձ ազատեց, և այդժամ ինքս սողացի Լոշտակին

ազատելու: Մի հուժկու շարժումով թռչունն ինձ կանխեց ու թևերով ավազամբրիկ բարձրացրեց: Եվ ահա ողջ ու անվնաս Լոշտակը պառկել է ավազին, իսկ մեր գլխավերևում կանգնել է Հրեշտակը: Իմ թանկագին, իմ սիրելի՛, իմ անձնակա՛ն պահապան Հրեշտակը: Ես մոտը նետվեցի, երեսս թաղեցի նրա փայլուն փեշի մեջ և սկսեցի բարձրաձայն լալ:

Հրեշտակն ինձ, իսկ հետո անզգա Լոշտակին տեղափոխեց ու պառկեցրեց ինչ–որ մացառուտի մեջ, որտեղ ավազահատիկները կապված էին փշաթփերի արմատներով: Այդտեղ կարելի էր նույնիսկ կանգնել: Հետո նա մտահոգ ասաց.

– Պետք է շտապենք, քանի դեռ ինձ չեն նկատել: Սա օտարի տարածք է, իսկ ես դրա մեջ եմ: Ձեզնից միայն մեկին կարող եմ տանել: Ընկերոջդ ուզած–չուզած այստեղ ենք թողնելու:

– Ոչ, նրա՛ն վերցրու: Նա փոքր է և ինձնից թույլ:

– Աննա՛: Դու համոզված ես, որ նրա համար պատրաստ ես քեզ գոհաբերելու: Ձէ՞ որ մենակ ոչ մի կերպ չես կարող այստեղից դուրս պրծնել:

– Հրեշտակ՝ իմ, երբ նա անվտանգ տեղում լինի, նրան ասա, որ իրեն շատ եմ սիրելի: Շու՛տ տար նրան, տա՛ր: Թե չէ ուշքի կգա, և այնպիսի բան կսկսվի որ...

– Դու՛ գիտես: Ինքդ այդպես որոշեցիր:

Նա համբուրեց ճակատս, վեր բարձրացրեց Լոշտակին և թռավ ծովի կողմը: Փոքրիկ առագաստի պես նա փայլվիլեց կապույտ հարթության վրա, իսկ հետո անհետացավ հեռվում:

Այ հիմա կարելի էր նաև լաց լինել:

11 – րդ գլուխ

Մենակ մնացի կուլ տվող ավազով շրջապատված պատլիկ կղզում: Ջուր չկար, սակայն գիշերները երբեմն մանրամաղ անձրև էր գալիս: Երկնային մի այլ պարգև էլ ունեի՝ Հրեշտակիս բերած հացը: Ամեն օր մի փշուր պոկում էի՝ ջանալով չվնասել Աստվածամոր պատկերը կրող «տանիքը»:

Շուրջ միայն մերկ ու չոր թփեր էին, տակերը՝ ոչ մի դալար խոտ: Մանր ավազի վրայով վազվզում էին գորշ սարդերը, այս ու այն կողմ էին պոկվում ճարպիկ մողեսները: Ծովի վրա վեր ու վար էին խոյանում ճղճղան որորները, սակայն այս կողմ չէին գալիս: Մենություն էր:

Առաջին օրերին մանրագնին տնտղում էի կղզյակիս եզրի թփերը՝ փորձելով դրա սահմանից դուրս ամուր հող գտնել, սակայն շուտով համոզվեցի, որ բոլոր կողմերից այն շրջապատված է կորստաբեր սորուն ավազով:

Թփերից տեղ–տեղ ջրիմուռների չորացած ծվեններ էին կախ ընկել: Երևում է, որ փոթորկվելիս ծովն այստեղ է հասնում և ողողում կղզյակը: Այդ ժամանակ կարելի կլինի փորձել այստեղից դուրս պրծնել լողալով կամ ծովի հատակով գնալով, ինչպես որ Լոշտակի հետ էինք հեռացել գորշ քաղաքից:

Սկզբում հուսահատվում էի և աղաչաձայն Աստծուն դիմում:

– Տե՛ր իմ, Տե՛ր: Ինչո՞ւ ինձ հենց հիմա լքեցիր, երբ Քեզ հիշեցի: Ինչո՞ւ չես ուզում ինձ օգնել:

Հետո խաղաղվեցի՝ մտածելով, որ դրուժյունս բնավ է վատթարագույններից չէ: Ես վաղուց մեռել եմ և մահից վախենալու բան չունեմ: Դո՞ւր է գալիս ինձ, թե ոչ, առջևումս հավիտենությունն է, որի մեջ պիտի գոյատևեմ: Ես կարող էի այն անցկացնել Հուսահատություն լճի սառույցի մեջ կամ զաղուժում, ծովի մյուս ափին գտնվող սոսկալի ու գորշ քաղաքում կամ էլ մոտերքիս ձանձրություն քաղաքում: Կարող էի ընդմիջտ չպրտվել այստեղ, ուր դեներն են թագավորում, և նրանցից թաքնվելու տեղ չէր լինելու: Գաղուժում ես արդեն գոմբի* էի դարձել, իսկ հիմա ինձ, ըստ երևույթի, ինքնագիտակցություն կորուստ չի սպառնում: Եվ բացարձա-

կապես ոչինչ չգիտեմ դժոխքի՝ խավարում գտնվող ամենասարսափելի խորքերի մասին:

Իսկ այս կլանող սորուն ավազնե՛րը: Ոտքով–գլխով սուզվելու–գնալու էի դրանց մեջ՝ ընդ որում մնալով ողջ ու անվնաս: Հար ու հավիտյան մնալ անշարժ կանգնած, բոլոր կողմերից կաշկանդված, անկարող՝ շարժվելու, բառ իսկ ասելու, աչքերս բացելու... Եվ դեռ բողոքո՞ւմ էլ եմ:

Հենց որ համակերպվեցի վիճակիս, կղզումս իսկույն բազմաթիվ գործեր ու հոգսեր ծագեցին իմ առաջ: Հետևում էի սարդերին, մողեսիկներին սովորեցնում էի ինձնից չվախենալ: Երբ անշարժ նստում էի, դրանք տաքանում էին ոտքերիս վրա՝ շարվելով ցանկապատին մեկընդմեջ թառած արջնագուռների պես:

Թփերի մեջտեղում մարմնիս չափով մի լերկ տեղ ջոկելով՝ ճյուղեր կտրատեցի և, դրա շուրջը կիպ–կիպ խրելով, պատ սարքեցի: Թփերից հավաքեցի ջրիմուռների չոր ծվենները և դրանցով փոքրիկ բարձ հարդարեցի: Եվ այսպես ինձ համար նոր տուն շինեցի:

Առավոտյան, երբ արևը նոր–նոր էր սկսում ելնել ծովի վրա, դեմքս դրան դարձրած՝ ոտքի էի կանգնում և աղոթում՝ դիմելով Աստծուն, Աստվածամորը, իմ պահապան Հրեշտակին և ճանաչածս միակ սուրբին՝ Պապիս՝ Հայր Եվգենիին: Ես Աստծուց ողորմածություն էի խնդրում Լոշտակի համար՝ որտեղ էլ որ նա լիներ:

Հետո նստում էի ավազին և խորհրդածում: Ինչի՞ մասին: Այն ամենի մասին, ինչ կատարվել էր ողջ կյանքումս՝ ինձ հիշելու պահից սկսած: Այն բանը, որ անմտորեն ու սխալ եմ ապրել, վաղուց էի հասկացել, հա՛րկ էր, որ հասկանայի: Սակայն հիմա ինձ ժամանակ էր տրվել, որպեսզի նորից, այն էլ ոչ մեկ անգամ, քայլ առ քայլ գնամ անցած կյանքիս ուղիով: Եվ որքան շատ էի այդ անում, այնքան քիչ էր կյանքս ինձ դուր գալիս: Այնպես էի մեղքերով այն այլանդակել, որ մնում էր միայն զարմանալ Աստծո ողորմածություն վրա: Մի՞թե արժանի էի, որ գլխավերևիս երկինք լիներ, որ նույնիսկ հեռվից լսեի որորների ծղրտոցը, ալբախուժության ձայնը, կողքիս տեսնեի անմեղ ու կենդանի էակներ՝ սարդիկներ ու մողեսիկներ:

Զարմանալի՛ բան է: Բոլոր հոգեբանները, Ֆրեյդից սկսած, մեզ սովո-

րեցրել են խոստափել ինքնամեղադրումից՝ ինքնադատապարտումից, որպեսզի հոգեկան բարդույթներ և ընկճախտ չուենենանք: Բայց որքան շատ և խիստ էի ինձ մեղադրում ու զղջում մեղքերիս համար, այնքան թեթև ու հանգիստ էի գգում: Շատ հաճախ, որևիցե զանցանքի համար ինձ դատապարտելով, հանկարծ սկսում էի ուրախանալ ինչ—որ բանից: Գուցե հին իրավապաշտպանիս բնորոշ արդարամտությունն զգացողման էր գործում մեջս:

Նաև վերհիշում էի բոլոր նրանց, որոնց սիրել եմ Երկրի վրա և հասցրի սիրել Դրախտում: Երկրաբնակ ընկերներիս ու հարազատներիս առաջ մտովի զղջում էի նրանց անտեսելու և վիրավորելու համար, «զանցակիցներիցս» ներողություն էի խնդրում միասին գործած մեղքերի համար: Դրախտի իմ թանկագին ազգակիցներին շնորհակալություն էի հայտնում և մտովի նրանց խնդրում աղոթել ինձ համար:

Օրական մի փշուր ուտելով՝ աննկատելիորեն կերա ամբողջ նշխարս: Մնաց միայն «տանիքը», որը վճռեցի ամեն գնով պահպանել. այն ինձ համար Աստվածամոր պատկերի տեղ էր: Երբ վհատությունը վրա էր տալիս (ինչը թեև հազվադեպ, բայց պատահում էր), դրոշմվածքը ափիս դնելով՝ նայում էի Մանուկը կողքին Աստվածամոր հագիվ երևացող պատկերին և աղոթում. «Սրբասուրբ Աստվածածին, փրկի՛ր մեզ»: Եվ այս աղաչանք—աղոթքը կրկնում էի հարյուր ու հազար անգամ: Ու վհատությունս անցնում էր:

Ես ներողություն էի խնդրում բոլոր նրանցից, որոնց սակավ կամ սխալ էի սիրել, որոնց բարեք չէի արել, ինչը կարող էի անել, հիշատակում էի Երկրի վրա չկատարած պարտավորություններս: Եվ ո՛չ միայն Երկրում ստանձնածներս: Այ, օրինակ, մեծ մամիկս՝ գեղեցկուհի Օլգան (կամ վարյազերեն Հելգան), խնդրել էր գտնել իր սիրելի ամուսնուն: Ճիշտ է, եթե նա իմանար, թե որքան վիթխարի ու բազմակերպ է դժոխքը, ինչո՞ւ պիտի խնդրեր գտնել իր ամուսնուն, որի մի աչքը չկա, բայց դրա փոխարեն մյուսը երկնքից էլ կապույտ է, ձախ ձեռքի երկու մատները պակասում են, քիթը կտրված է, իսկ մազերն ու մորուքը շիկակարմիր են. կարճ ասած՝ կարմրամորուս Օլաֆ գեղեցիկին: Միծաղելի է: Բայց ինձ մեղավոր էի գգում ոչ թե այն բանի համար, որ Օլաֆին չէի գտել, այլ այն բանի,

որ խոստացել էի փնտրել նրան, բայց չէի փնտրել:

Ա՛յ մամիկս, մե՛ծ մամիկս: Ինքդ էր չիմանալով՝ այս ամբողջ ժամանակ ինձ լավ էլ օգնել ես: Եթե քեզ հանդիպած չլինեի, չէի կարողանա այսքան երկար պահպանել Աստծո ողորմածությունս հույսս: Երբ արդեն Աստծո անունն էլ էի մոռացել և կորցրել Նրա մասին ամեն պատկերացում, ի՞նչն էր իմ մեջ պահպանում հուսալու և անհույսանն ընդդիմանալու ուժը: Այդ բանը հո՛ւյսն էր, որը դու էիր ինձ ներշնչել: Ինչպե՛ս էիր կարողանում սպասել և հուսալ: Երկո՛ւ հազար տարի: Պատկերացրո՛ւ հապա: Իսկ ես դեռ նոր եմ սկսել իմ հավերժությունը ...

Որքան շատ էի աղոթում, այնքան դյուրին էր դառնում աղոթելը: Եվ աղոթքներս ավելի ու ավելի շնորհակալական էին դառնում: Տիրոջը շնորհակալություն էի հայտնում Լոշտակին փրկելու և այն բանի համար, որ եթե նույնիսկ սորուն ավազների տակն անցնեմ, միևնույն է, իմ վերջին խոսքը կլինի. «Փա՛ռք Աստծուն գլխիս եկած ամեն ինչի համար»:

Ես շնորհակալություն էի հայտնում այն բանի համար, որ անցնելով մահվան, դժոխքի ու Դրախտի միջով, ճանաչեցի ոգիների աշխարհը, իմացա, որ կա սատանա, և կա Աստված: Եվ ես ընտրեցի Աստծուն, իսկ սատանային մերժեցի, անիծեցի և հետն էլ վառեցի նրա պիղծ նկարը: Իհարկե, սա սատանայի դեմ տարած հաղթությունն չէր, սա մի փոքրիկ եռամաստ՝ հայհոյանչան էր, որը նա կարող էր իսկի էլ չնկատել: Չնկատե՞լ: Բայց էլ ինչո՞ւ քիչ էր մնացել ինձ Լոշտակի հետ վառեր, եթե արածս նրա վեջը՝ պետքը չէր: Նրա հպարտության պարագայում այդպիսի պատիվ ծակոցն էլ կարող էր զգալի լիներ: Նա պիտի հասկանար, որ ես նրա ստրուկներից չեմ: Եվ այդ էլ բավական էր: Դրա համար փա՛ռք Աստծուն: Ամեն ինչի համար փա՛ռք Աստծուն:

Հրաշքը կատարվեց, երբ դրան ամենևին չէի սպասում: Մի անգամ գիշերն անձրև եկավ, թեթև ու տաք անձրև: Ու հանկարծ ծաղիկների բուրմունք փչեց: Կարծեցի, թե քամին է հեռու տեղից բերել: Ես պառկած էի խոնավ ավազին և մտածում էի Դրախտի ծաղիկների մասին: Միտքս եկավ Բյուրեղյա հովիտն ու այն ծաղիկը, որը ես ու Ալյոշան մեծ մամիկ Օլգայի հետ նվեր էինք տարել Աստվածամորը:

Անձրևն ուժգնացավ և շուտով տեղատարափի վերածվեց, իսկ ծաղիկ-

ների սքանչելի բուրմուռները սաստկացավ: Նստեցի և ձեռքս անձրևի շիթերի տակ պահեցի և ապա դեմքիս մոտեցրի: Այո, այն նույն բույրն էր, մարդկանց հանդեպ Աստծո Մոր սիրո անուշ բույրը:

Լույսը բացվեց: Անձրևը դադարեց: Շուրջբոլորն անուշ բուրում էր: Փշոտ չոր թփերը պատվեցին կանաչ տերևներով ու սպիտակ ծաղիկներով: Վեր կացա: Ոտքերիս տակի ավազը խոնավ ու պինդ դարձավ: Հասկացա, որ հիմա վրան կարելի է քայլել, և գնացի:

Զգուշությամբ ոտք դնելով կղզյակիս սահմաններից դուրս և համոզվելով, որ ավազն ինձ մեջը չի քաշում՝ վրայով գնացի ծովի երկարու-թյամբ և ուղղվեցի դեպի քաղաքի հակառակ կողմը:

Համարյա չզարմացա, երբ շուտով ափին տեսա ինձ սպասող Պահապանիս: Միայն ուրախացա:

– Ահա և վերջ, Աննա, – ասաց նա: – Շնորհակալություն հայտնիր Աստծո Մորը քեզ ցույց տված ողորմածություն համար: Դու հասկացա՞ր, որ այս հրաշք էր:

– Իհարկե: Ձե՞ որ նույնիսկ մեռած փշերը մի գիշերվա մեջ ծաղկեցին ու տերևակալեցին:

Նա ինձ գիրկն առավ, և ես գլխուխս դրի ուսին: Երկինք թռանք:

– Ուզո՞ւմ ես որպես հրաժեշտի ողջուն՝ քաղաքին նայել, – հարցրեց Պահապանս:

– Այո, եթե դու ես ուզում:

Հրեշտակը թռավ ծովախորշի կողմը: Մեր ներքևում ոչ մի քաղաք չկար: Յնդեղ էին բլուրների վրայի առանձնատները, ծառազարդ զբոսայգիները, խայտաբղետ լողափը: Մեր ներքևում թափոնի լեռներով պատված մի հսկայական աղբանոց էր տարածվում: Վերևից կարելի էր զանազանել ավտոմեքենաների ժանդոտած կմախքներ, պսպղացող դատարկ շշեր, ցելոֆանե բազմազույն տոպրակներ, կոտրտված արկղեր և քաղաքային այլ հնոտի: Աղբասարերի արանքում շրջում էին գորշ ու կորաքամակ տղամարդիկ ու կանայք, որոնք քլջում էին թափոնները և ինչ-որ իրեր հավաքում ու լցնում ցելոֆանե կեղտոտ պայուսակների մեջ:

Երբեմնի երկնագույն ծովախորշը պատված էր մազուկ թաղանթով, որի վրա բարձրից անգամ երևում էին դատարկ շշեր, պլաստմասսայի

աղբ և կոյուղային զանազան աղտեղություն: Այդ ամբողջ քայքայվածքի գլխին դես ու դեն էին թռչում որորները՝ կատվի զզվելի ձայներ հիշեցնող ծղրտոց հանելով:

– Այս ամենը այսպես էլ ընկալում ու տեսնում էի, – ասացի Հրեշտակիս: – Ոչ թե աչքով, այլ իմ հույսով՝ ներքուստ: Այս քաղաքի ամեն ինչը ինձ միշտ խաբեություն էր թվում:

– Սա միշտ էլ այսպես է եղել: Ձե՞ որ գիտես ով է Հիշողությունից զուրկ «երջանիկների» այս քաղաքի ճարտարապետն ու շինարարը, որ ստի հայրն է ու խաբկանքների վարպետը: Եթե պատրանքների քողը վրաններից քաշենք, երկրային շատ քաղաքներ սրանից լավ տեսք չեն ունենա: Թռչենք, այստեղ այլևս նայելու ոչինչ չկա:

Եվ մենք աղբաքաղաքից հեռու թռանք:

12 – րդ գլուխ

Գլուխս իմ Հրեշտակի լայն ուսին դրած՝ դիտում էի ներքևում ալիք-վող անապատը, որը հորիզոնի ամբողջ շրջագծով տարածվում էր մեր ներքևում: Բլուր–բլուր ավազը ծովի հատակ էր հիշեցնում: Անապատով մեկ պտտվում էին դեղին մրրկահողմերը: Այս էր եղած կյանքը: Ուրիշը չկար:

– Իսկ հիմա՝ ո՞ւր, – սիրտ արի տալ մտատանջող հարցը:

– Այնտեղ, ուր մինչև Ահեղ դատաստանը կենում են այն մեղավորների հոգիները, որոնց վերաբերյալ դեռ որոշում չկա:

– Դու ինձ այնտե՞ղ ես թողնելու:

– Ոչ: Քո մասին որոշումն արդեն կա:

– Որոշում այն մասին, որ ես մնում եմ անորոշությա՞ն մեջ:

– Ուրիշ որոշում է: Սակայն այդ մասին՝ հետո: Դու նախ պիտի հանդիպես մեկի հետ:

– Լոշտակի՞:

– Ես չգիտեմ այդպիսի ուղղափառական անուն՝ Լոշտակ: Համբերու՞թյուն ունեցիր, արդեն հասնում ենք:

Հորիզոնի փակ շրջագծի առջևից կարծես մի կանոնավոր կիսաշրջանաձև դեղին շերտ կտրեցին, և այդտեղ երկնքի սպիտակավուն կապույտը լցրեց ասես լարով հատած անապատի մի մասը: Այդտեղ էլ թռչում էինք:

Սկզբում մեր տակի անապատն ընդհատվեց, և մենք մտանք մի անընդգրկելի կապույտ տարածություն: Դրա մեջ մի պտույտ գործելով՝ նորից թռանք դեպի գետին: Զարմանալի տեսարան բացվեց:

Անապատի կտրված շերտը դեղնասպիտակավուն միակտուր պատ էր, որն այնքան էր խորանում, որ ստորին ծայրը սուզվում էր ծխագույն կապույտի մեջ, որտեղ աչքն այլևս անկարող էր որևէ բան զանազանել:

Պատով մեկ աստիճանաձև նեղ քիվեր էին ձգվում, որոնք անդունդից անջրպետված էին այդ նույն բաց գույնի քարե բավական բարձր պատնեշներով: Այդ քարեղեն ստորասրահների երկայնքով սևին էին տալիս անձավների մուտքերը: Եթե քիվերը հարյուրավոր էին, ապա անձավները, հավանաբար, հազար–հազար էին: Վերևից նշմարում էի ստորաս-

րահներով երթևեկող փոքրիկ մուգ կերպարանքներ:

Երբ մոտ թռանք և իջանք քիվերից մեկին, տեսա, որ այն բավական լայն է՝ մոտավորապես քաղաքային փողոցի չափ: Նմանությունը մեծանում էր այն հանգամանքով, որ մուգ կերպարանքները, որոնք իրենց սև հագուստով ու կեցվածքով շատ նման էին վանականների, ման էին գալիս աջակողմյան անցուղարձ պահպանելով:

– Սա վա՞նք է, – հարցրի Պահպանիս:

– Ի՞նչ ես ասում: Այստեղ ի՞նչ վանք: Մենք դեռևս դժոխքի եզրին ենք: Թեև այստեղ վանականներ կան, սակայն շատ քիչ են: Սրանք բոլորը չորոշված հոգիներ են, այսինքն՝ սրանց վերաբերյալ առայժմ որոշում չկա: Ճիշտ է, սրանց կարելի է «մոնթ»* ասել. խստակյաց են՝ խիստ կյանք են վարում և մշտապես աղոթում են, բայց, իհարկե, զուրկ են իսկական վանական կյանքի երանությունից և ուրախություններից:

Մեզ տեսնելուն պես մոտերքում գտնվող մոնթերը մեր կողմը նետվեցին՝ հուզված գոչելով.

– Աստծո հրեշտակը: Եղբայրներ և քույրեր, տեսե՛ք, մեզ մոտ է եկել Երկնքի պատգամաբերը: Տեսե՛ք, մեզ մոտ հրեշտակ է իջել:

Նրանք մեզ շրջապատեցին խիտ բազմությամբ և ձեռքերը մեկնեցին Պահպանիս.

– Օրհնի՛ր: Օրհնի՛ր մեզ, հրեշտակդ Աստծո:

Հրեշտակն օրհնեց բոլորին և յուրաքանչյուրին՝ սիրով և ժպտադեմ նրանց նայելով:

– Դու մեզ Բարի լո՞ւր** ես բերել, Աստծո հրեշտակ, – հարցրեց մի ծեր «մոնթ»:

– Ոչ այն լուրը, որին սպասում է այլևորդ: Սակայն ձեզ համար լավ լուր ունեմ: Արդ լսեք: Ռուսիայում վերահաստատվում և ծլարձակում է եկեղեցական աղոթքը, հայտնվել են միլիոնավոր նոր ուղղափառ քրիստոնյաներ, և նրանք բոլորն աղոթում են նաև ձեզ համար:

– Փա՛ռք Աստծուն, – ուրախ բացականչեցին Հրեշտակիս լսողները:

– Իսկ հիմա, եղբայրներ և քույրեր, մեզ ուղեկցեք վերապատիվ

Մարիամ Եգիպտացու* տաճարը: Այդտեղ նշանակված հանդիպում ունենք:

Մեզ տարան ստորասրահով: Ճանապարհին Պահապանս օրհնում էր մոտով անցնող բոլոր եղբայրներին ու քույրերին: Մոտեցանք անձամբնե-րից մեկին ու ներս մտանք:

Անձավի օդը շատ չոր էր, մեղրամոմի և քարափոշու հոտ էր դալիս: Պատերին մարդահասակ բարձրություն վրա իրարից հավասար հեռավորու-թյամբ փորված որմնախորշերում բարակ մոմեր էին վառվում: Յուրա-քանչյուր որմնախորշի վերևում կոպտատաշ պատին մրով սև խաչ էր պատկերված: Տեղ-տեղ հանդիպում էին կողամուտքեր, որոնց մոտ քա-րե նստարաններ էին դրված:

– Այդտեղ եղբայրների ու քույրերի խցերն են, – ասաց Հրեշտակս:

Մի քանի անգամ որմափոր խցիկներ ընկան աչքներովս, որոնց դռնե-րը, համարյա մինչև գլուխը, քարերով փակված էին: Դրանցից մեկի շար-վածքի վրայից ներս նայեցի: Պլպլում էր մոմի կրակը, և այդ երեքացող լույսով մի աղոթող մոնթի թիկունք տեսա:

– Ճգնավոր է, – պարզաբանեց Պահապանս: Ապա ականջ դրեց և ավելացրեց, – արդեն երկու հարյուր տարուց ավելի է, ինչ փակվել է ճգ-նարանում: Զորացրու սրան, Տեր:

Երկար միջանցքով հասանք մի փոքր դահլիճի: Ժայռափոր եկեղեցի էր: Քարե ցածրադիր սյունիկաձև մոմակալների վրա վառվող բազմաթիվ մոմերը բավական լուսավոր էին դարձրել սրահը: Դիմացի պատը զարդա-րում էր մի շատ նիհար, կարճամազ ու ցնցոտիավոր ծեր կնոջ բարձրա-քանդակը: Գլխավերևում ցայտուն շրջանակ էր փորագրված:

– Վերապատվելի Մարիամ Եգիպտացին է, – ասաց Հրեշտակս:

Ես խաչակնքվեցի և խոնարհվեցի պատկերի առաջ: Պատերին տեսա ուրիշ սրբերի բարձրաքանդակները, բայց թե ո՞ւմն էին՝ չգիտեի: Սրանց

տակ պատի երկայնքով նեղ նստարաններ էին փորված, որոնցից մեկին գլխահակ և մտախոհ մի մարդ էր նստել: Մեր ոտնաձայնը լսելով՝ նա վեր կացավ և մեզ ընդառաջ եկավ:

Մինչ նա դանդաղորեն մեզ էր մոտենում, ես աչքերս էի ճպճպացնում և գլուխս տարուբերում. ո՛չ, չի կարող պատահել: Լինելու բան չէ: Բայց նա մոտենում էր, և ես հասկացա, որ չեմ շփոթել: Այդ իսկապես իմ ամուսինն էր:

– Գեորգի՛:

– Աննա՛:

Իրար մոտեցանք, կանգ առանք և ցնցված՝ լուեցինք: Տիրող լուռությու-նը, որի մեջ միայն այրվող մոմերի ճրթճրթոցն էր լսվում, խախտեց Պա-հապանս.

– Ձեզ իրար հետ առանձին խոսել է պետք: Աննա, քեզ դրսում կսպա-սեմ:

Նա հեռացավ, իսկ մենք, աչքերս իրար հառած, շարունակում էինք լուել: Վերջապես Գեորգին ասաց.

– Արի նստենք, գլուխս ուրախությունից պտտվում է: Երբվանի՛ց իրար չենք տեսել:

Նստեցինք:

– Որտեղի՞ց լույս ընկար, Ժորկա, – ուչքի գալով՝ հարցրի:

– Ես քեզից շուտ մեռա: Իմ ինքնաթիռը խորտակվեց Մյունխենից թռչելուն պես:

– Աստված իմ: Հուսով եմ՝ իսկո՞ւյն մեռար, չտանջվեցի՞ր:

– Ակնթարթային մահ էր:

– Հա՛... և ահա մոսկովյան մի աղջկանից մյուսը թռչելով՝ վերջապես տեղ հասար:

– Աննա, ես, ախր, աղջիկների մոտ չէի թռչում...

– Գեորգի՛, մի՞թե հիմա էլ ես ինձ սուտ ասելու: Ուչքի՛ արի:

– Ես չեմ ստում, Աննուչկա: Լսիր ինձ, հիմա քեզ պիտի ասեմ ամբողջ ճշմարտությունը: Ես աղջկա մոտ չէի թռչում, այլ տղայի: Ռուսաստա-նում որդուս էի թողել: Քեզնից գաղտնի էի պահում:

– Դու միշտ էլ ինձնից մի բան պահում էիր, – աղիողորմ ձայնով ասացի ես:

Անկեղծ ասած՝ շփոթվեցի: Ամենևին պատրաստ չէի այդպիսի նորու-
թյան, նույնիսկ չգիտեի՝ ինչպես արձագանքեմ դրան:

– Գաղտնի էի պահում: Այո: Որովհետև, եթե քեզ ճշմարտությունն
ասեի, նորից պիտի սկսեիր ամեն ինչ բոլորի տեղը և քո ուզածի պես որոշ-
ել: Դու մի՛շտ այդպես էիր անում: Այդ դու՛ որոշեցիր Պիտերից Մոսկվա
տեղափոխվել, և մենք տեղափոխվեցինք: Այդ դու՛ էիր այլախոհություն
անում, բայց ինձ էին բշտբշտում՝ «դեկաբրիստուհի»* կոչելով: Այդ քո՛
պատճառով ստիպված եղանք լքել հայրենիքը և... Դե էլ չեմ խոսում
մնացյալի մասին:

– Ես մեղավոր չեմ, որ ոչ մի բանում քեզ չէր կարելի ապավինել, որ
դու չէիր կարողանում որոշումներ ընդունել: Իսկ եթե ես այդքան վատն
էի, ինչո՞ւ ինձնից չէիր բաժանվում:

Չէի կարողանում լեզվիս առաջն առնել: Թվում էր՝ վաղուց էի զղջացել
ամուսնական բռնակալությանս համար, հարյուր անգամ փոշմանել էի, Գե-

որգիին երեխայի տեղ դնելու և իմ ուզածով նրան շարժելու ջանքիս հա-
մար: Բայց տես որ նրան հանդիպելը և այս ցնցող նորությունը, ինձ հան-
կարծակիի բերելով, այնպես շփոթեցրին, որ սկսեցի նորից դուրս տալ: Ես
և՛ ատում էի ինձ, և՛ չէի կարողանում լեզուս ինձ քաշել:

– Աննա՛: Ես քեզ սիրել եմ թե՛ մեռնելուցս առաջ, թե՛ մեռնելուցս
հետո: Ախր դու էլ գիտես:

– Ես միայն այն գիտեմ, որ ոչինչ չեմ իմացել տղայիդ մասին:

– Ես հո գիտեի, թե դու ինչպես էիր տառապում, որ չենք կարող երե-
խա ունենալ: Իսկ մենք բժշկի մոտ չէինք դնացել ստուգվելու, և ես չէի
ուզում, որ դու իմանայիր, որ չբերության համար ե՛ս չեմ մեղավորը, այլ՝
դու: Ես արդեն վաղուց որդի ունեի:

– Իսկ ո՞վ է որդուդ մայրը: Ինչի՞ համար էիր նրան սիրում:

– Ես նրան չէի սիրում: Այդ պատահական կապ էր: Կինոարշավ՝
գավառ, գյուղի աղջիկ, որ շքմել է սոսկ այն բանին ծանոթանալուց, թե
իրականում ինչպես է կինոն սարքվում: Դու էլ գիտես, թե կինոյի աշխա-
տողները նման պարագայում ինչ են անում... Դե ես էլ... Իսկ աղջիկը
գյուղական քահանայի դուստր էր և, փառք Աստծուն, չուզեց երեխայից
ազատվել: Ես էլ չկարողացա նրան հակառակը համոզել: Արդյունքը եղավ
Ալեքսանդր որդիս:

– Քանի՞ տարեկան է:

– Տասներկու:

– Աստվա՛ծ իմ: Եվ այդ բոլոր տարիներին դու նրանց հետ կա՞պ էիր
պահպանում և ինձ խաբո՞ւմ էիր:

– Այո: Ներիք ինձ, եթե կարող ես:

– Այսպիսով՝ դուրս է գալիս, որ չեն եղել քո անվերջանալի սիրավե-
պերը, որոնց համար դու ներողություն էիր խնդրում, իսկ ես ներում էի:

– Չեն եղել: Ներիք ինձ:

– Ուրեմն ինչո՞ւ էիր ինձ այդքան երկար ժամանակ խաբում, Գեոր-
գի: Ինչո՞ւ ինձ ուղղակի չպատմեցիր եղելությունը: Ես կհասկանայի և
բաց կթողնեի քեզ:

– Այ հենց դրանից էլ վախենում էի: Ես քեզ գիտեմ, չէ: Դու ինձ
անպայման կուղարկեիր որդուս մոտ:

- Հավանաբար՝ այո... Երեխան ոչ մի բանի համար մեղավոր չէ:
- Դե այդ պարզ է: Ես էլ որդեգրել եմ նրան:
- Տղայի վիճակը դրանից թեթևացա՞վ: Ասենք՝ արտասահմանցի գրոսաշրջիկ–հայրիկ ունեցավ:
- Դու միշտ այդպիսի բաներ ես ասում: Ավելի լավ է ասես՝ ներո՞ւմ ես ինձ, թե ոչ:
- Իսկ այստեղ ներելու ի՞նչ կա: Համենայն դեպս պարզվեց, որ դու կարծածիցս լավն ես: Աստվա՛ծ կների:
- Գուցե և ների: Բայց եթե դու չես ներել, ապա Նրա ներելուն ապավինե՞ն այստեղ ի՞նչ գործ ունի: Ես, ախր, մոտ տասներեք տարի ոչ թե Աստծուն եմ խաբել, այլ քեզ:
- Այո՛, պատմությունը...
- Դեռ ամբողջը չէ, Աննուշկա: Այն ժամանակ ես Տատյանայի՝ որդուս մոր թաղմանն էի թոչո՛ւմ: Նա մահացել էր, և որդիս գյուղում մնացել էր հիվանդ տատի՝ այրի երեցկնոջ հետ: Չեմ պատկերացնում՝ նրանք այնտեղ հիմա ի՞նչ օրի են...
- Լուեցի, որովհետև ասելիք չունեի:
- Աննա, հիշո՞ւմ ես՝ մեկս մյուսիս համար ապահովագրություն ձևակերպեցինք:
- Այո, նման բան եղել է: Բայց հիմա այդ ի՞նչ նշանակություն ունի:
- Այն, որ ես դրա մեջ էլ եմ քեզ խաբել: Ապահովագրությունը հետո վերաձևակերպել եմ Սաշայի անունով:
- Ճիշտ էլ արել ես:
- Հիշո՞ւմ ես, սենյակիս գրադարակում Սաղուլի* «Կինոյի պատմությունը» կար: Սրա երկրորդ հատորում պահում էի Սաշայի ծննդյան վկայականը, լուսանկարը և իմ ապահովագիրը:
- Ըհը, հիմա կվազեմ փնտրելու: Իսկ Տատյանան հիմա որտե՞ղ է:
- Իհարկե՞ Դրախտում: Չէ՞ որ ողջ կյանքում՝ մինչև մեռնելը աղոթելով մեր ընդհանուր մեղքն էր քավում: Նա իրեն մեղավոր էր գգում նաև քո առաջ, քեզ համար միշտ աղոթում էր, որ հավատքի գաս: Նա շատ լավն էր, հանդարտ ու հեզ:

- Մահից հետո նրան տեսե՞լ ես:
- Որտե՞ղ կարող էի տեսնել: Խնդրում եմ, գոնե հիմա մի խանդիր:
- Իսկ ի՞նչ է, դու Դրախտում ամենևին չե՞ս եղել:
- Բոլորը չէ, որ քեզ պես երջանիկ են, և բոլորին չէ, որ սրբերի կարգում պապիկ ունենալ է վիճակվել: Եվ մեռա էլ այնպես, ասես ջաղացքարով գլխիս տված լինեին: Մի ակնթարթ, ու ես ուշքի եկա դեերի օղակի մեջ: Զարհուրելի էր: Ախր երբեք չէի մտածել մահվան մասին և բացարձակապես պատրաստ չէի դրան:
- Հա՛, պատկերացնում եմ: Իսկ մեղսակայաններով ինչպե՞ս անցար:
- Լավ կլինի չհարցնես: Չեմ ուզում հիշել: Դրանք մինչև վերջ չանցա, և դեերն ինձ դժոխք նետեցին:
- Հապա սպասիր: Իսկ որտեղի՞ց գիտես, որ սուրբ պապիկ ունեմ:
- Ինքդ ես պատմել:
- Ե՞րբ: Ի՞նչ ես դուրս տալիս:
- Երբ, երբ... Վերջերս, երբ նստած էինք մեր առանձնատան պատշգամբում, գինի էինք խմում, և դու պատմում էիր քո դրախտական արձակուրդի մասին:
- Ի՛նչ–ի՞նչ:
- Ա՛յ հենց ա՛յդ: Հլա կտեսնենք, թե ով է ում դավաճանել. «Լոշտակի՛կ, Լոշտակի՛կ»:
- Չես էլ ամաչում: Խանդել ինձ՝ այն էլ երեխայի վերաբերմամբ: Բայց նրա մասին որտեղի՞ց գիտես:
- Աննա՛, ինչ է, ինձ բոլորովին չե՞ս ճանաչում: Իսկ ականջնե՞րս:
- Տե՛ր Աստված: Ո՞նց թե... Ապուշ կտրած՝ աչքերս հառեցի ամուսնուս դեմքին: Ապա ճչալով վզովն ընկա:
- Լոշտակի՛կ: Իմ աննամա՛ն հրեշիկ:
- Երբ մի կուշտ լացեցի ու խնդացի, Լոշտակ Գեորգին հարցրեց.
- Ուզո՞ւմ ես տեսնել իմ աշխատանքը:
- Իհարկե:
- Տեսնո՞ւմ ես եկեղեցու մուտքի վերևի անավարտ զարդանախշը: Իմ աշխատանքն է: Դե, իհարկե, ոչ միայն իմը: Դեռ միայն ուղիղ գուլերն ու կեռագծերն եմ փորագրել սովորել: Տեսնո՞ւմ ես, ա՛յ այնտեղ:

Ես չկարողացա բարդ գարգանախչի մեջ ջոկել ժորկայի կեռագծերը, բայց իր համար շատ ուրախացա:

– Հրաշալի՜ գարգանախչ է: Ինչ լա՛վ է, որ աշխատում ես եկեղեցու համար: Իսկ որտե՞ղ ես ապրում: Քո անկյունն այստեղ ունե՞ս:

– Խոց՝ ինչպես բոլորը: Գնանք՝ ցույց տամ:

Եկեղեցուց ելանք մի լայն միջանցք, որտեղից Գեորգին ինձ տարավ կողամուտքերից մեկը: Սա նեղ միջանցք էր, որի երկու կողմերում բազմաթիվ փոքրիկ ու ցածրառաստաղ անձավներ կային: Դրանք անդուռ էին, անգամ վարագուրված չէին որևէ բանով: Մի քանիսում մուժ էր, մյուսներում մոմեր էին վառվում: Կողքներով անցնելիս տեսնում էինք եղբայրների և քույրերի, որոնք աղոթում կամ քարե նստարաններին նստած խորհում էին:

– Այս էլ իմ խուցը, – ասաց ամուսինս՝ ինձ մոտեցնելով վերջին խցերից մեկին:

Պատիկ անձավ էր, ավելի ճիշտ՝ պարզապես քարե պատի մեջ փոս ընկած տեղ: Խորշում վառվում էր բարակ մոմը, իսկ դիմացի պատի մեջ փորված նստարանի գլխին մրով ուղղափառ եկեղեցու մեծ խաչ էր նկարված: Ինչ—որ տեղից խմբերգ էր լսվում.

– Սո՛ւրբ Աստված, Սո՛ւրբ և Հզոր, Սո՛ւրբ և Անմահ, ողորմյա՛ մեզ:

Երգում էին տղամարդիկ ու կանայք, երգում էին կամաց ու շատ տխրածայն:

Ուրեմն հիմա ա՞յս է լինելու մեր վերջին տունը: Ինչ արած, սա ինձ ավելի է դուր գալիս, քան իմ ու Գեորգի Լոշտակի ունեցած բոլոր տները: Այստեղ կարելի է աղոթել, այստեղ եկեղեցի կա: Երբեմն էլ Պահապանս կթուչի կգա...

– Հրեշտակս ինձ է սպասում: Արի գնանք մոտը:

– Այստեղ դուրդ չի՞ գալիս:

– Դուրս գալիս է, թեև անսովոր է: Այստեղ հա էլ ապրելու ենք, դեռ կհասցնեմ վարժվել, իսկ Հրեշտակիս հետ չգիտեմ մեկ էլ երբ կտեսնվեմ:

– Ինչ է, նա քեզ ոչինչ չասա՞ց:

– Ինչի՞ մասին:

– Ուրեմն ես էլ չեմ ասի: Դե ինչ, գնանք քո պահապան Հրեշտակի մոտ:

Դուրս եկանք անձավից: Հրեշտակս, ոտքերը անդուռի վրա կախած, նստել էր քիվապատին և ինձ էր սպասում:

– Իրար հրաժեշտ տվի՞ք, – հարցրեց նա:

Ես սարսուցի:

– Ամուսինդ ինչ է, քեզ ոչինչ չասա՞ց:

Գլուխս տարուբերեցի:

– Աննա, դու վերադառնում ես Երկիր՝ քո մարմնի մեջ, քո կյանքին:

Ես լռում էի:

– Ուրախ չե՞ս:

– Չգիտեմ: Տե՞րն այդպես որոշեց:

– Այո: Քանի որ քո մարմինն այնտեղ՝ Երկրի հիվանդանոցում շարունակում է կենդանի մնալ, Պապը Տիրոջն աղաչեց քեզ վերադառնալու և մինչև բնական վախճանդ ապրելու հնարավորություն տալ: Նա խնդրեց հաղորդել, որ այդ ուրիշ կյանք պիտի լինի: Դու հիմա գիտես՝ ինչպիսի:

Ես գլխով արի:

– Ի՞նչ ես լռում, Աննա:

Մի քիչ էլ գլուխս վերուվարեցի ու տարուբերեցի, իսկ հետո մի կերպ արտաբերեցի.

– Ի՞նչ կարող եմ ասել. միայն մի բան՝ փա՛ռք Աստծուն ամեն ինչի համար:

Հրեշտակս ժպտաց: Ինչպե՛ս եմ սիրում նրա ժպիտը: Մի՞թե Երկրի վրա նրան իսկի՛—իսկի չպիտի տեսնեմ մինչև հաջորդ մահս: Ուրեմն՝ դունե պիտի ջանամ, որ նա ինձ նայելիս միշտ ժպտա: Թեկուզև չեմ կարողանալու այդ տեսնել, բայց կջանամ կռահել՝ ժպտո՞ւմ է ինձ իմ Հրեշտակը, թե՛ ոչ:

– Դե ինչ, խոնարհությունդ համար պարզև էլ ունես: Մարիա, մեզ մոտեցիր, մի՛ վախենա:

Մի կողմի վրա խաղաղ երամով կանգնել էին եղբայրներն ու քույրերը և հիացական ժպիտով նայում էին Հրեշտակիս: Նրանց մեջ հանկարծ տեսա...

– Մայրի՛կ:

Իրար կողմ նետվեցինք, բախվեցինք ու գրկախառնվեցինք: Տե՛ր, հի-

մա էլ ա՛յս... Ի՛նչ առատաբաշխ ձեռքով, չէ, երկո՛ւ ձեռքով ես Դու պարզեաներ բաժանում, երբ ներում ես մեզ:

Պարզվեց, որ մայրիկս ու Գեորգին անմիջապես հանդիպել են, երբ Հրեշտակը Գեորգիին այստեղ է բերել: Իհարկե, նրանք ուրախացել են իրար տեսնելով: Մայրիկս նրան պատմել էր հիվանդանոցում տեղի ունեցած մեր հանդիպման մասին: Գեորգին էլ, իհարկե, նրան պատմել էր դժոխքի անապատներով ու ապատներով մեր միատեղ թափառումների մասին: Կարելի էր պատկերացնել, թե մայրիկս ինչպե՛ս է աղոթել սորուն ավազներից ազատվելու համար: Շատ ուրախացա, որ Գեորգին և մայրիկս միասին են ու այստեղ, թեև փոքրիկ, բայց ընտանիք ունեն:

– Մայրիկ, ես Երկիր եմ վերադառնում:

– Գիտեմ: Տես որ նախկին սխալներդ չկրկնես: Եվ աղոթի՛ր, աղոթի՛ր քեզ և մեզ համար: Հույս ունեմ, որ հիմա արդեն կկարողանաս մահվանն այնպես պատրաստվել, ինչպես վայել է քրիստոնեուհուն, և երբ քո իսկական ժամանակը հասնի, դու Դրախտ կընկնես, այլ ոչ թե այստեղ:

– Մի՞թե այստեղ այդքան վատ է:

– Ձե՛, ոչ: Իհարկե, այստեղ ո՛չ ծիտիկ կա, ո՛չ էլ ծեղ ու ծաղիկ, սահայն, Տե՛ր իմ, ախր մենք այս ողորմությանն էլ արժանի չենք, որ ապրենք աղոթքով, եկեղեցու հետ, իսկ գլխավորը՝ դեերից հեռու: Մեկ–մեկ էլ հրեշտակնե՛րն են մեզ այցելում:

Մեր զրույցն ընդհատեց փայտը փայտին խփվելու մի հավասարաչափ ու տարօրինակ ձայն:

– Այս ի՞նչ է, մայրիկ:

– Կոչնակն է, – պատասխանեց նա: – Այսպես են մեզ երեկոյան ժամերգության կանչում:

Մայրս ինձ հրաժեշտ տվեց և, արցունքները թաքցնելով, մյուս մոնթերի հետ գնաց անձավակեղեցի:

Գեորգին ինձ մոտեցավ և ուսերս գրկեց:

– Բո՛ շնորհիվ այստեղ հայտնվեցի: Դու չլինեիր, կա՛մ դեերն ինձ գաղութում կլսափեին, կա՛մ էլ ինքս կգնայի Հուսահատության լիճ և այնտեղ կկորչեի:

– Սխալվում ես, Գեորգի, – մեջ մտավ Պահապանս: – Աննան քեզ

փրկել է վատթարագույն վիճակից: Հոգիներն անմահ են: Այն անձերը, որոնց դեերն ուտում են դժոխքի մի շրջափակում՝ պարունակում, այդ կերպ նրանց միջոցով փոխադրվում են մի ուրիշ՝ առավել սոսկալի պարունակ:

– Դե տեսնում ես, Աննուշկա: Ի՞նչ եմ լինելու առանց քեզ: Դու երկրային կյանք կվերադառնաս և գուցե երկար–երկար ապրես... Բայց ինձ չե՞ս մոռանա, չե՞ս լքի ինձ, չե՞: Հիշի՛ր, խնդրում եմ, որ այրը կնոջով է փրկվում: Ինձ համար աղոթիր այնտեղ:

– Այդ ի՞նքը հնարեցիր, որ այրը կնոջով է փրկվում, – հարցրի՛ աղամայից ժպտալով:

– Ոչ, այստեղ են այդպես ասում: Ասա, մի բան կանե՞ս Սաշայիս համար:

– Հարցնելու բա՛ն է: Եթե այնտեղ լրիվ հաշմանդամ չլինեմ, ապա, հենց որ կարողանամ, նրան հյուր կգնամ: Ու քեզ համար կաղոթեմ: Եվ, Գեորգի, եկեղեցուց դուրս չեմ գա: Եվ վա՛նք կգնամ: Կուսակրոնություն՝ կընդունեմ:

Աննա, մի՛ ոգևորվիր, – կասեցրեց ինձ Պահապանս: – Գնա, Գեորգի, արարողության գնալու ժամանակն է: Այլապես Աննան մինչև Երկրորդ գալուստը պատրաստ չի լինի Երկիր վերադառնալու:

Ես ու ամուսինս վերջին անգամ գրկախառնվեցինք, և Գեորգին գնաց մայրիկիս հետևից: Մնա՛ս բարով, Լոշտակս:

– Ժամանակն է, Աննա, – ասաց Հրեշտակս:

– Հրեշտա՛կ իմ: Ջանի՛կս: Իսկ չէի՞նք կարող մի քիչ հետ մնալ և դժոխքի խորխորատները թռչել: Իհարկե՞ ո՛չ ամենավտանգավոր տեղերը:

– Այդ ի՞նչ ես ասում, Աննա:

– Շա՛տ եմ ուզում գոնե փորձել գտնելու Կարմրամորուս Օլաֆին: Ասա, այդ սկզբունքորեն հնարավո՞ր է:

Որևէ մեկը երբևիցե շփոթված պահապան հրեշտակ տեսած կա՞: Ես տեսել եմ:

– Ահ, Աննա, քեզ հետ չե՛ս ձանձրանա: Այսպիսի սանուհի դեռ չեմ ունեցել: Սպասիր, դրա համար թույլտվություն պիտի ստանամ:

Իր հագուստի ծալքերից Պահապանս մի կլոր փոքր առարկա հանեց,

որն ինձ հայելի թվաց: Մոտեցրեց բերանին և ինչ—որ բան ասաց ինձ ան-
ծանոթ լեզվով և հետո երկար սպասեց պատասխանի: Վերջապես, ըստ
երևույթին, պատասխանը եկավ:

— Թոչու՞մ ենք, — ասաց Հրեշտակս և ձեռքերն ինձ մեկնեց:

Մեր վարյազին, ինչպես սպասելի էր, գտանք ծովի ափին: Միայն թե
այս ծովը մագուլթի պես սև էր, շուրջն էլ աղջամուղջոտ ու մերկ էր: Ափին
սև քարեր էին ցցված, և եթե Հրեշտակս չհուշեր, գլխի չէի ընկնի, որ դրան-
ցից մեկը մարդ է: Ինքն էլ, մագերն ու մորուքն էլ սև էին: Կարմիր թիկ-
նոցն էլ վրան չէր, հագինը սոսկ քարացած քուրջեր էին: Մի աչք ունեւր,
և ձախ ձեռքի երկու մատները չկային:

— Օլա՛ֆ, — ձայն տվի նրան:

Քարե կերպարանքը երկար ժամանակ անշարժ մնաց: Ապա մուգ կո-
պր բարձրացավ, և աչքը փայլեց, սևեռվեց վրաս և երկար այդպես նա-
յեց: Հետո Օլաֆը, կպած շուրթերը դժվարությամբ իրարից պոկելով, շշն-
ջաց.

— Հելգա՛:

— Ոչ, ես Հելգան չեմ: Ես նրա թոռնուհին եմ: (Տոհմաբանության ման-
րամասների մեջ խորանալու կարիքը չկար. նա չէր էլ հասկանա):

— Իսկ Հելգան որտե՞ղ է:

— Հելգան Դրախտում է:

— Ուրեմն նա փրկվե՞ց:

— Այո, որովհետև նրան Փրկիչն էր առաջնորդում: Հավատա՛ Փրկչին,
Օլաֆ: Նրան խնդրի՛ր փրկության համար: Հելգան սիրում և սպասում է
քեզ: Հիշի՛ր՝ այրը կնոջով է փրկվում:

Նա նորից փակեց իր միակ աչքը և ընկղմվեց ծանր քնի մեջ: Գուցե
հիմա երագում տեսնի՞ Հելգային:

— Այստեղ այլևս ոչինչ չի կարելի անել, — ասաց պահապան Հրեշ-
տակը: — Մեր դնայու ժամանակն է, Աննա:

Կիսամեռ ու չարչարված մարմնիս մեջ վերադառնալը ծանր ու
տանջալի էր: Մեջը ցուրտ էր, նեղվածք էր, ցավոտ էր: Դեռ երկա՛ր—երկար
օրեր պառկած էի այն դիրքով, երբ մահը վրա էր հասել: «Խեղացի» սար-
քերն աշխատեցնում էին սիրտս ու թոքերս՝ թթվածին և արյուն մղել

տալով դեպի նիրհած ուղեղս: Ներսից համբերությամբ ականջ էի դնում
մարմնիս գործարաններին: Սկզբում որսացի սրտիս թրթիռը, որը ներդաշ-
նակ չէր մեքենայի պարտադրած պարբերականությանը: Բժիշկներն այդ
նկատեցին միայն մի քանի ժամ անց: Հետո սկսեցի ինքնուրույն շնչել:
Գիտակցությունս սկզբում աղոտ էր, հետո այդ էլ պարզվեց՝ արթնացավ:
Ես ամեն ինչ հիշեցի և աչքերս բացեցի: Հիվանդանոցում իսկական իրա-
րանցում էր:

Հլա չլինե՛ր. մոտ կես տարի մահաքնի* մեջ էի եղել: Բժիշկները վազե-
լով իրար մոտ հավաքվեցին և սկսեցին միմյանց շնորհավորել: Մեկը գլխի
ընկավ, որ ինձ էլ է պետք շնորհավորել: Երբ կարողացա խոսել, առաջին
խոսքս եղավ.

Խնդրում եմ՝ քահանա կանչեք մոտս...

Վերջերգ

Այսօր բոլորեց հետմահու ճամփորդությունս տասը տարին: Հիմա նստած եմ որդուս գրասեղանի առաջ՝ հուշատետրս ձեռքիս տակ դրած: Հանդիպակաց պատին փակցված է Ուղղափառ եկեղեցու պոկովի օրացույցը. վրան 2000 թվականի հուլիսի 21 օրաթիվն է, հին տոմարով՝ հուլիսի 7-ը, ուրբաթ: Այսօր մեր ընտանեկան տոնն է՝ Աստվածամոր Կազանյան պատկերի հայտնություն օրը: Պատկերը գետեղված է դաշտային ծաղիկների պսակով զարդարված փեղկավոր շրջանակի մեջ:

Որդիս՝ Սաշենկան, այլոց համար՝ քահանա և հայր Ալեքսանդրը, արդեն տաճար է գնացել. պետք է արարողություն պատրաստվի, քանզի այսօր շատ հաղորդվողներ են լինելու: Իմ հարս Զինան էլ հետը գնաց: Հարսս շատ է ջահել, ընդամենը քսանմեկ տարեկան է, բայց և այնպես երեցկին է, տանտիկին, և եկեղեցու տնտեսական բոլոր գործերը նրա վրա են: Թեև Ռուսիո Նորավկաների մեր գյուղական տաճարը մեծ չէ, բայց երեցկնոջ հոգսերն էլ փոքր չեն:

Այսօրվա առավոտն անչափ հրաշալի է, պարտեզը լցվել է ծաղկով ու մշուշով: Մեր գետից է այդ մշուշը բարձրացել: Յերեկը շոգ է լինելու, ուստի կարելի է Տանեչկային ու Նաստենկային գետ տանել և լողացնել: Նրանք սիրում են չոփ-չոփ անել: Ուրախություն ու պահակություն համար հետներս կտանենք մեր շանը՝ Ֆրանսիական բուլդոգ Դանիլային: Սրան ես ու Սաշենկան էինք Մոսկվայի կայարանում գտել Մյունխենից վերադառնալիս:

Դեռ վաղ է եկեղեցի գնալը, աղջիկներն էլ քնած են: Ուստի հուշատետրս հանել եմ, որ այսօր իսկ ավարտեմ պատմությունս, քանի դեռ տանն աղմուկ չկա: Կարթնանան Տատյանկան ու Նաստենկան, և տատիկն այլևս հանգիստ չի ունենա: Եթե այսօր՝ իմ առաջին մահվան տասներորդ տարելիցին էլ գրառումներս չավարտեմ, էլ ե՞րբ կանեմ:

Հա, ուր էինք հասել... Ես Ռուսաստան մեկնեցի՝ հենց որ կարողացա առանց անթացուպերի քայլել: Ժորժ Սաղուլի «Կինոյի պատմություն» գրքում գտա ոչ միայն Սաշենկայի բոլոր փաստաթղթերը, այլև հորն ուղարկած նրա նամակը, որի ծրարին գրել էր իր հասցեն:

Եկա այստեղ և բոլորին գտա ահավոր վշտի մեջ: Երկու տարի առաջ

վախճանվել էր Տատյանայի հայրը՝ մեր եկեղեցու քահանան: Նույն տարին սպիտակարյունությունից մեռել էր ինքը՝ Տատյանան, և ավիավթարից զոհվել էր Սաշայի հայր և իմ ամուսին Գեորգին: Տաներկուամյա որբ երեխան տանը մնացել էր հազիվհազ քայլող տատիկի՝ քահանայի այրու հետ: Հարեաններն արդեն խոսում էին, որ տղային պետք է մանկատուն տալ, իսկ տատին տեղավորել ձերանոցում: Գյուղական բամբասանքներն ինձ բացատրեցին, որ հարեաններին վաղուց էր դուր եկել հանգուցյալ տերհոր մշակած մրգատու գեղեցիկ այգին, իսկ տատը պատրաստ էր ո՛րևէ գնով տունը վաճառել, քանի որ բոլորովին փող չունեի: Ի՞նչ կենսաթոշակ պիտի ունենար գյուղական տերտերակինը իննսուն թվին: Կերակրվում էին այգու և բանջարանոցի տվածով, բայց դրանք մշակել էր պետք: Իսկ ո՞վ էր անողը. տասներկու տարեկան երեխա՞ն, թե՞ հաշմանդամ տատը:

Մեկ էլ այստեղ Գերմանիայից հայտնվում է անծանոթ ազգականուհիս և հարեանների ծրագրերը զլխիվայր շուռ տալիս: Սաշենկային որդեգրեցի, նույնիսկ ազգանունը փոխելու հարկ չեղավ: Անմիջապես սիրեցինք իրար: Ես նրան՝ Գեորգիի պատճենը, նույն լոշտակը լինելու հանար, նա էլ՝ ինձ. վշտից գլուխը կորցրած տղայիկը մեկին պիտի ապավիներ, չէ՞: Ահա նա էլ ինձ փարվեց:

Տունը վերաշինեցի, տատիկին լավացրի, և նա յոթ տարի էլ ապրեց: Վախճանվեց Սաշենկայի երեց ձեռնադրվելուց հետո կարճ ժամանակ անց: Սաշան էլ տատի վերջին օժուժը* և հուղարկավորման կարգը կատարեց, որովհետև մեր գյուղում էր մնացել պապի փոխարեն սպասավորելու: Հիմա նա սպասավորում է նոր եկեղեցում, որը կառուցել ենք Գեորգիի ապահովագրությունից ստացած փողով և նվիրել Ռուսիո Նորավկաների հիշատակին: Իսկ հին՝ Գեորգիեյան՝ ս. Գեորգ եկեղեցին սկսեց ծառայել որպես գերեզմանատան մատուռ: Այդտեղ հոգեհանգիստ ենք կատարում մեր բոլոր ննջեցյալների համար:

Ես ու Սաշենկան համարյա ամեն տարի թուշում ենք Մյունխենն՝ այցելելու Գեորգիի շիրիմին: Նա թաղված է Ռուսիո Նորավկաների ուսական մայր տաճարի կողքի գերեզմանատանը (այս տաճարը երկրորդ վայրն է, որտեղ կարող եմ աղոթել իմ Պապին՝ նորավկա ավագերեց Եվգենիին): Շիրիմը միշտ կարգին վիճակում է, եթե մենք նույնիսկ երկար ժամանակ չենք այցելում: Խնամողը մյունխենյան իմ սիրելի ընկերուհի Նատաշան է, այն նույնը, որն իմ մասին բամբասում էր հիվանդանոցի միջանցքում: Իսկ սիրելի է այն պատճառով, որ այդ նա էր Պատարագի վերջում կատարվող հոգեհանգստին ինձ համար նշխար* տալիս, ինչը պահապան Հրեշտակս ինձ էր բերում հենց դժոխքում. այն «հացիկը», որն ինձ ու Գեորգիին ուժ է արիություն էր տալիս, սնուցում է փրկում էր:

Ես, Իհարկե, չեմ ջահելանում, բայց թոռնիկներս էլ ինձ առանձնապես ծերանալ չեն թողնում: Նրանց հետ չես ձանձրանա, ինչպես ասում էր իմ պահապան Հրեշտակը: Բայց և այնպես (երբ նրանք մեծանան) խորհում եմ հետզհետե հոգուս մասին հոգալու, մահվանը նախապատրաստվելու մասին: Այստեղ մոտեքում կա Սուրբ Աստվածածնի կանանց վանքը, իսկ նրանում՝ Աստվածամոր մյուռոնածոր պատկերը: Ի միջի այլոց՝ Կազանյանի ընդօրինակությունն է: Երբ այդտեղ ուխտ եմ գնում, ինձ միշտ թվում է, որ հրաշագործ պատկերի մեռոնը նույն հոտն է բուրում, ինչ թանկագին մեծ մամիկիս ծաղիկը, որ նա ստեղծել էր Աստվածածնին նվիրելու համար: Իսկ չէ՞ որ ես էլ էի դրա կերտմանը մի քիչ մասնակցել... Այնպես որ, եթե Նրա սուրբ կամքը լինի...

... Ահ, ոնց որ թե աղջնակներն արթնացան: Դե վերջ, տատիկ, հուշագրություններդ ավարտելու ժամանակն է: Գալի՛ս եմ, արդեն գալիս եմ, ջանիկներս...

Եվ փա՛ռք Աստծուն ամեն ինչի համար:

Հեղինակուհու և գրքի մասին

Յուլյա Վոզնեսենսկայան ծնվել է 1940-ին, 1980-ին վտարանդվել է Խորհրդային Միությունից: Այժմ ապրում է Ֆրանսիայում (Նորմանդիա) գտնվող Լեսնայի Սուրբ Աստվածածնի (Սվյատո-Բոգորոդիցկայա) կուսանոցում, որը պատկանում է Ռուս Ուղղափառ եկեղեցուն:

Այս կուսանոց վանքը հիմնվել է 1885 թ. Գրոգնոյի նահանգի (Բելո-ուուսիա) Լեսնա գյուղի մոտ, որտեղ գտնվում էր Աստվածամոր «Լեսնիսկայա» կոչվող հրաշագործ պատկերը: 1915 –ին վանքը տարահանվել է Ռուսաստանի խորքերը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ Սերբիա, ապա 1950 –ին՝ Ֆրանսիա:

Մայրապետի օրհնությունը Յուլյա Նիկոլաևնան վանքի տարածքում վերականգնել է այգետնակը, որտեղ էլ ապրում է հիմա՝ աշխատելով որպես պարտիզպանուհի և կարողացածի չափ մշակելով ու գեղեցկացնելով վանքի պարտեզն ու ծաղկանոցը:

«Իմ հետմահու ճամփորդությունը» Յուլյա Նիկոլաևնան սկսել է գրել անցյալ դարի 90 –ական թթ. վերջին՝ մայրապետ Աֆանասյայի օրհնությունը: Ուշագրավ է, որ սատանայի հետ վիպակի գլխավոր հերոսուհու ունեցած առաջին հանդիպման նկարագրությունն անելը ոգեշնչել է նրա հոգևոր մայրը՝ այժմ ննջեցյալ մայրապետ Աֆանասյան: Սրա՛ն էր հայտնվել չարքը, երբ եղել էր գիտաբուժական (կլինիկական) մահվան վիճակում: Գրքի հերոսուհի Աննային հայտնված սատանայի կերպարանքը վերարտադրվել է մայր Աֆանասյայի պատմածին ճշտիվ համապատասխան:

Աննայի ճակատագիրը բացարձակ մտացածին բան չէ. այն հոգևոր իրականության մասին խորհրդանշական պատմություն է, որն ամրապնդված է սուրբ հայրերի գրվածքների իմացությունը, Ուղղափառ եկեղեցու ավանդությունը և մայրապետի դաստիարակչական թևակցությունը, այլև արդյունքն է հեղինակուհու անձնական խորհրդածությունների:

Դրախտի ճանապարհին Աննայի անցած մեղքերի ու սոսկումի կայանները, դժոխքում նրա կրած տառապանքներն ու տանջանքները բնականից արված լուսանկար չեն, ոչ էլ անհիմն հնարանք: Տվյալ դեպքում սա ավելի շուտ խորհրդանշան է:

*Թարգմանեց և ծանոթագրեց Վարազդատ Ավագյանը
Շարեցին Սուսաննա Գալստյանը, Արմինե Խաչատրյանը
Աննա Ներկարարյանը
Էջագրեց Էդիկ Վերդյանը*